

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ
ԹՈՒՅԼ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ**

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022



Այս ուսումնասիրությունը իրականացվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ապահովել հանրային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման փաստափոխ և մասնակցային գործընթացը: Ծրագիրն իրականացնում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՂԿ) հասարակական կազմակերպությունը՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» հասարակական կազմակերպությունների (ՀԿ) գործընկերությամբ:

Սույն զեկույցը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Չեկույցի բովանդակության համար պատասխանատու է հեղինակը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Ամփոփագիր	6
Ներածություն	8
1. Մեթոդաբանություն	10
2. Ժողովրդավարությունը և խորհրդարանական վերահսկողությունը	18
3. Խորհրդարանական վերահսկողությունը Հայաստանում	21
3.1. Ժողովրդավարության վիճակը Հայաստանում	27
3.2. Բյուջետային գործընթացի մասնակցայնությունը	30
3.3. Բռնությունը Հայաստանի Ազգային ժողովում	33
3.4. 2015թ. սահմանադրական փոփոխությունները	35
3.5. Խորհրդարանի ձևավորում և կառուցվածքը	36
Դեպքի նկարագրություն N°1. «Պարզևատրում»-«աշխատավարձ» գլուխկոտրուկ	43
4. ԱԺ վերահսկողական գործիքները	45
4.1. ԱԺ քննիչ հանձնաժողովները	47
4.2. Բյուջետային գործընթացի նկատմամբ վերահսկողությունը	50
4.2.1. Կենտրոնական բանկի եզրակացությունները	50
4.2.2. Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները	50
Դեպքի նկարագրություն N°2. ՀՊ եզրակացության արձանագրումներ	54
Դեպքի նկարագրություն N°3. ՀՊ կողմից ԿԳՄՍ նախարարությունում հայտնաբերված անհամապատասխանությունները	54
Դեպքի նկարագրություն N°4. Գնումների համակարգում իրավիճակի վերաբերյալ ՎՊ բացահայտումները	56
4.3. Գրավոր հարցեր	59
4.4. Բանավոր հարցեր	62
4.5. ՀՀ կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը	63
4.6. Լսումներ	65
4.7. Դիմում Սահմանադրական դատարան	67
5. ԱԺ պատգամավորները, աշխատակազմը և գործավարությունը	77
5.1. ԱԺ պատգամավորը	78
Դեպքի նկարագրություն N°5. Պատգամավորների մասնակցությունը ոլորտային քաղաքականություններին	80
5.2. ԱԺ նիստերը	81
Դեպքի նկարագրություն N°6. ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեի կատարման ընթացքում կատարվող «վերաբաշխումները»	83
Դեպքի նկարագրություն N°7. «Չկանխատեսված» եկամուտներ	86

5.3.	Մշտական հանձնաժողովների նիստերը	87
	Դեպքի նկարագրություն N°8. Վերահսկողություն հանրակրթության կառավարման համակարգի փոփոխությունների նկատմամբ.....	90
	Դեպքի նկարագրություն N°9. Մաքսային սահմանի հատման կանոնների խախտում	91
5.4.	Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերը	92
5.5.	ԱԺ աշխատակազմի գործունեությունը	97
5.6.	Բյուջետային գրասենյակի աշխատանքը	98
	Դեպքի նկարագրություն N° 10. Կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին միջոցառման շրջանակներում հատկացումների տվյալները	99
	Դեպքի նկարագրություն N° 11. Վերահսկողություն հանրակրթության ոլորտի բաղաբականության նկատմամբ	100
	Դեպքի նկարագրություն N° 12. Վերահսկողություն իրականացվող փորձնական (պիլոտային) ծրագրերի նկատմամբ	103
	Դեպքի նկարագրություն N° 13. Վերահսկողություն հանրակրթության ոլորտի ֆինանսական կառավարման նկատմամբ	104
	Դեպքի նկարագրություն N° 14. «Պարտքից պետք չէ վախենալ»	122
	Դեպքի նկարագրություն N° 15. Տոնոյանի «դոկտրինան»	129
6.	Եզրակացություններ	131
7.	Առաջարկություններ	138
	Հավելվածներ.....	146

Օգտագործված հապավումների ցանկ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԺ	ՀՀ Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՍՀ	Աշխատանքի և սոցիալական հարցերի (նախարարություն)
ԲԳԿ	Բյուջետային գլխավոր կարգադրիչ
ԲՀԿ	Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԶՈՒ	Զինված ուժեր
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԻԶԴ	Իմ քայլը դաշինք
ԼՀԿ	Լուսավոր Հայաստան կուսակցություն
ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (նախարարություն)
ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ԿՀՑ	Կատարողական հիմնական ցուցանիշների
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետական կուսակցություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՀՅԴ	Հայ յեղափոխական դաշնակցություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԲԳ	Միջազգային բյուջետային գործընկերություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՆԱ	Ներքին աուդիտ
ՇՄ	Շրջակա միջավայրի (նախարարություն)
ՊԲԿՀ	ԱԺ մշտական հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված պետական բյուջեին վերաբերող հարցերի թվաքանակը
ՊԲԿՆՎԿՀ	ԱԺ մշտական հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված պետական բյուջեին կատարման նկատմամբ վերահսկողությանը վերաբերող հարցերի թվաքանակը
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՎՊ	Վերաքննիչ պալատ
ԶՀ	ԱԺ քննիչ հանձնաժողով
ԶՀԿ	Զաղաքացիական հասարակության կազմակերպություն (կամ ՀԿ)
ԶՊ	Զաղաքացիական պայմանագիր կուսակցություն
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
COVID 19	Coronavirus disease of 2019
GRECO	Group of States against Corruption

Ամփոփագիր

Գործադիրի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասն է: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն (այսուհետ՝ ԱԺ) ունի անհրաժեշտ լիազորություններ և գործիքներ իր վերահսկողական գործառնություններն իրականացնելու համար, սակայն դրանք բավարար չափով չի օգտագործում: ԱԺ-ն պարբերաբար դարձել է բռնության թատերաբեմ: 21-րդ դարում ձևավորված բոլոր գումարումների ԱԺ-երում իշխող ուժը մշտապես մեծ ներկայություն է ունեցել: Իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների մեծ մասն այս կամ այն ձևով իրենց անվերապահ հավատարմությունն են արտահայտել առաջնորդին, ինչը նրանց դարձրել է նվազ անկախ իրենց գործողություններում և որոշումներում: 2015թ. սահմանադրական փոփոխություններից հետո ենթադրվում էր, որ վարչապետը գտնվելու է խորհրդարանական վերահսկողության ներքո: ԱԺ խմբակցությունների թվի նվազումը նվազեցրել է նաև դաշինքներ կազմելու հարցում խմբակցությունների մասնակցությունը և հնարավորությունը և դրդել է իրարից խիստ տարբերվող դիրքեր զբաղեցնել:

ԱԺ-ն հիմնականում չի իրականացնում իր վերահսկողական գործառնությունը: Այն դեպքերում, երբ ԱԺ-ն իրականացրել է իր վերահսկողական գործառնությունը դա արել է պետական քաղաքականությունների համատեքստից դուրս: Հայաստանը «կիսակոնսոլիդացված ավտորիտար կառավարման» համակարգ ունեցող երկրից փորձում է վերածվել ժողովրդավարական երկրի: Կառավարության կողմից տարվող քաղաքականությունները մասնակցային չեն և ԱԺ-ն չի հետևում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված օրենսդրական նախագծերի հանրային քննարկումներ իրականացնելու պահանջի կատարմանը:

Հասարակությունը չի տեսել 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների ԱԺ-երի կողմից ձևավորված 10 քննիչ հանձնաժողովների գործունեության շոշափելի արդյունքներ: Բյուջետային գործընթացի նկատմամբ վերահսկողությունը խիստ թույլ է: Պատգամավորները սահմանափակ ուշադրություն են դարձնում բյուջեի նախագծին կից ներկայացվող Կենտրոնական բանկի և բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությանը կից ներկայացվող Կենտրոնական բանկ և Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները, չնայած դրանցում առկա կարևոր և հետաքրքիր տեղեկություններին և բացահայտումներին:

Պատգամավորների գրավոր հարցերի և ստացած պատասխանների հաշվառումը բավարար չէ, դրանց զգալի մասը չի հրապարակվել ԱԺ կայքում: Իշխանական պատգամավորների զգալի մասը կառավարությանը գրավոր հարցեր չի ուղղում և իրեն հուզող հարցերի պատասխանները ստանում է մասնավոր կարգով, ինչը չի բավարարում բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու և ներառական կառավարման սկզբունքներին:

Բանավոր հարցեր տալու հնարավորությունը իշխանական պատգամավորներն օգտագործում են ընդդիմադիր պատգամավորներին սուր հարցեր տալու հնարավորությունից զրկելու, կամ ընդդիմադիրների տված սուր հարցերը տարրալուծելու նպատակով: Իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների տակտիկական պայքարից տուժում է ԱԺ կողմից կառավարության վերահսկողությունը:

Գրավոր հարցապնդմանը տված պատասխանի քննարկման արդյունքով խմբակցությունը կարող է ՀՀ վարչապետին առաջարկել քննարկել կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը կամ անվստահություն հայտնել վարչապետին: 7-րդ գումարման ԱԺ ընդդիմադիր խմբակցության կողմից կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցի վերաբերյալ առաջարկությունները գրեթե միահամուռ կերպով

մերժվել են իշխող խմբակցության կողմից: Չնայած որոշ ժամանակ հետո ՀՀ վարչապետը պաշտոնից ազատել է նախարարներին իշխանական պատգամավորները չեն հետաքրքրվել իրենց միահամուռ պաշտպանությանն արժանացած նախարարների պաշտոնանկության պատճառներով:

Լսումները չեն դարձել խորհրդարանական վերահսկողության արդյունավետ գործիք: Հասարակությանը հայտնի չեն կազմակերպված լսումների արդյունքները: 8-րդ գումարման ԱԺ պատգամավորներն սկսել են ավելի հաճախ դիմել Սահմանադրական դատարան ԱԺ որոշումների, ՀՀ նախագահի հրամանների և կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցը պարզելու համար:

ԱԺ նիստերի և մշտական հանձնաժողովների, մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի աշխատանքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ նիստերի ժամանակ չի կատարվում կարևոր վերահսկողական աշխատանք: ԱԺ աշխատակազմն ու բյուջետային գրասենյակը կարողությունների զարգացման կարիք ունեն:

Անհրաժեշտ է ամրապնդել պատգամավորների անկախությունը, վերականգնել բյուջեն չկատարելու համար ՀՀ կառավարությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական դրույթը, վերահսկողություն սահմանել կառավարության կողմից բյուջեում կատարվող վերաբաշխումների և չկանխատեսված եկամուտների օգտագործման նկատմամբ, հստակեցնել և կանոնակարգել կառավարության անդամների և ԱԺ պատգամավորների աշխատանքի վարձատրության համակարգը, հստակեցնել պետական բյուջեի նախագծի առանձին բաժինների հաստատման գործում մշտական հանձնաժողովների պատասխանատվությունը, բարելավել ԱԺ, պատգամավորների, մշտական հանձնաժողովների և խմբակցությունների հաշվետվողականությունը, փոխել հանձնաժողովների նիստերի դահլիճի կառուցվածքն այնպես, որ վերահսկողն ու վերահսկվողը գտնվեն միմյանց դիմաց, ԱԺ աշխատակազմում նախատեսել հայոց լեզվի մասնագետի հաստիք, որպեսզի ԱԺ փաստաթղթերը գերծ լինեն սխալներից և վրիպակներից:

Ներածություն

Հայաստանի Անկախության հռչակագիրն ավետել է 1918թ. ստեղծված անկախ Հայաստանի ժողովրդավարական ավանդույթները զարգացնելու և ժողովրդավարական, իրավական հասարակարգ ստեղծելու Հայաստանի ժողովրդի միասնական կամքի մասին: Ժողովրդավարությունը ենթադրում է ինչպես իշխանության մարմինների ազատ և արդար ընտրություններ, այնպես էլ իշխանության տարբեր թևերի լիազորությունների հավասարակշռման և փոխզսպման մեխանիզմներ և գործադիր իշխանության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն:

Գոյության առաջին 27 տարիների ընթացքում Հայաստանի քաղաքացիները պայքարում էին ազատ և արդար ընտրությունների իրենց իրավունքն իրացնելու համար: 2018թ. այդ պայքարը վերջապես պսակվեց հաջողությամբ: Սակայն ինչպես նախորդ տարիներին, շարունակում է խնդիր մնալ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության հարցը: Հայաստանի և աշխարհի ժողովուրդների պատմությունը վկայում է, որ իշխանությամբ օժտված մարդիկ կարող են խախտել օրենքը կամ սխալվել:

Գործադիր իշխանության հնարավոր հանցանքներից և սխալներից քաղաքացիներին պաշտպանելու համար Սահմանադրությունը խորհրդարանին օժտել է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ: Հայաստանի պատմությունը վկայում է, որ խորհրդարանը բավարար չափով չի իրացրել իր այդ լիազորությունը:

Ենթադրվում էր, որ 2018թ. հեղափոխությունից հետո խորհրդարանական վերահսկողության հետ կապված իրավիճակը պետք է բարելավվի: Հեղափոխությունից հետո իշխանության եկած ուժի ներկայացուցիչները կատարել են մի շարք հայտարարություններ, որոնց հիմքերի և որոնց հետ կապված աշխատանքների վերաբերյալ հանրությունը տեղեկացված չէ: Մի շարք ոլորտների հրատապ բարեփոխումներ չսկսվեցին: Տպավորություն կա, որ գործող իշխանության կարծիքով անարդարության և կոռուպցիայի հետ կապված մարտահրավերները ոչ թե համակարգային թերությունների, այլ նախկին կառավարիչների անձնական վատ հատկանիշների հետևանք են և որ անձնական լավ հատկանիշներով օժտված կառավարիչները կարող են ապահովել միջավայր, ուր հանրությունը կապի ավելի բարեկեցիկ, անվտանգ և ապահով կյանքով:

Ավաղ, մի քանի խոշոր ծախսողումներ, այդ թվում 2020թ արցախյան պատերազմի արդյունքները Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում առկա լրջագույն թերությունների և բացերի նշան են: Մինչև այժմ այդ թերությունների և բացերի համակարգային և համակարգված հետազոտություն չի կատարվել:

Այս հետազոտությունը խորհրդարանական վերահսկողության առկայության և դրա թերությունների ու բացերի ուսումնասիրության փորձ է:

Շնորհակալություն եմ հայտնում

Մի շարք պետական մարմինների աշխատակիցների, ովքեր բովանդակային և իմաստային պատասխաններ են տրամադրել www.e-request.am համակարգի միջոցով իրենց հղված հարցերին: ՀՀ Ազգային ժողովի, Հաշվեքննիչ պալատի, Նախարարությունների և գերատեսչությունների պատասխանները, առանձին բացառություններով, շատ օգտակար են եղել:

Մի քանի պետական մարմինների առանձին աշխատակիցներ բանավոր պատասխանել են ընթացակարգային բնույթի հարցերին: Պետական մարմինների աշխատակիցները դրսևորել են բարձր արհեստավարժություն և տեղեկատվություն են տրամադրել միայն ընթացակարգային հարցերի վերաբերյալ, առանց գնահատականներ տալու և կարծիքներ հայտնելու:

Շնորհակալություն եմ հայտնում ներկա և նախկին այն պատգամավորներին, լրագրողներին, փորձագետներին, դիտորդներին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր կարծիք են հայտնել խորհրդարանի վերահսկողական գործառնությունների, խորհրդարանի և պատգամավորների անկախության մասին և մի շարք այլ հարցերի:

Շնորհակալություն եմ հայտնում գործընկերոջս, Հովհաննես Մարգարյանցին, ով ուսումնասիրել է ՀՀ Ազգային ժողովի ինտերնետային կայքի 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների մշտական հանձնաժողովների գործունեության վերաբերող էջերը և շատ օգտակար տեղեկատվություն է հավաքել, որը ներկայացված է այս հաշվետվության հավելվածում և կարող է օգտագործվել հետագա ուսումնասիրությունների և վերլուծությունների ժամանակ: Գործընկերս օգնել է նաև մի շարք հանդիպումների կազմակերպման հարցում և մասնակցել է այդ քննարկումներին:

Այս հետազոտությունը կատարվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (այսուհետ՝ ԹԻՀԿ) կողմից իրականացվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում: Հետազոտությունը նախապես վերնագրվել է «*Խորհրդարանի կողմից ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ թույլ վերահսկողության պատճառների և հետևանքների վերհանում պետական բյուջեի մասին օրենքի ընդունման և բյուջեի կատարման մասին հաշվետվության հաստատման օրինակով*»: Հետազոտության համար տրամադրվող դրամաշնորհի վերաբերյալ հաղորդագրությունը ԹԻՀԿ ինտերնետային կայքում հրապարակվել է 2021թ. նոյեմբերի 26-ին¹:

1. Մեթոդաբանություն

Իրականացված հետազոտության շրջանակներում փորձ է արվել պարզել, թե ինչպես է ՀՀ Ազգային ժողովն (այսուհետև՝ նաև՝ ՀՀ ԱԺ) իրականացնում իր վերահսկողական գործառնությունը, ունի արդյոք բավարար գործիքներ և կարողություններ այդ գործառնություն իրականացնելու համար: Հետազոտության շրջանակներում փորձ է արվել գտնել մեկ հիմնական և մի քանի ածանցյալ հարցերի պատասխաններ: Հետազոտության հիմնական հարցը հետևյալն է.

Ունի՞ արդյոք ՀՀ Ազգային ժողովն անհրաժեշտ լիազորություններ և բավարար կարողություններ ու գործիքներ իր վերահսկողական գործառնություն իրականացնելու համար:

Հիմնական հարցից բխող ածանցյալ հարցերն են.

- Ի՞նչ է ենթադրում վերահսկողությունը:
- Ի՞նչ վերահսկողական լիազորություններ է ՀՀ օրենսդրությունը վերապահում ՀՀ Ազգային ժողովին:
- Վերահսկողության ի՞նչ գործիքներ և մեխանիզմներ ունի ՀՀ ԱԺ-ն:
- Արդյոք ՀՀ Ազգային ժողովն իրացնում է իր վերահսկողական լիազորությունները և իրականացրե՞լ է վերահսկողական իր գործառնությունը:

Վերը նշված հարցերը ենթադրում են, որ հետազոտության շրջանակներում դիտարկվելու են ոչ միայն ԱԺ-ին հասու վերահսկողական գործիքները, այլ նաև ԱԺ-ի, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների և պատգամավորների լիազորություններն ու կարողությունները: Այդ համատեքստում դիտարկվել է, թե ինչ վերահսկողական լիազորություններ, իրավասություններ, կարողություններ և գործիքներ ունեն ԱԺ նիստերը, մշտական հանձնաժողովները և պատգամավորները: Խորհրդարանը վերահսկողություն է իրականացնում կառավարության գործունեության և կառավարության կողմից օրենքների կատարման նկատմամբ: Խորհրդարանական վերահսկողությունը ենթադրում է կառավարության կամ նրա անդամների քաղաքական պատասխանատվություն: Այս հետազոտությունը չի ուսումնասիրել մինչև 2018թ. գործած Հայաստանի կառավարությունների և նրա առանձին անդամների քաղաքական պատասխանատվության հարցը: Մինչև 2018թ. գործած Հայաստանի կառավարությունների և նրա առանձին անդամների քաղաքական պատասխանատվության և պաշտոնանկությունների պատճառների ուսումնասիրությունն այլ հետազոտության առարկա կարող է դառնալ: Հետազոտությունն անդրադարձել է մինչև 2018թ. տեղի ունեցած առանձին իրադարձությունների, որոնք կարող էին ԱԺ-ում քննարկման նյութ հանդիսանալ:

Այս հետազոտությունն առաջնորդվել է այն ենթադրությամբ, որ մինչև 2018թ. կառավարությունների և դրանց առանձին անդամների փոփոխությունները տեղի են ունեցել ոչ թե խորհրդարանական վերահսկողության կատարված բացահայտումների, այլ ներիշխանական պայքարի արդյունքում: Վերը նշված ենթադրության հիման վրա այս հետազոտությունը փորձել է պարզել 2018թ. հետո Հայաստանի կառավարության կառուցվածքի և դրա անդամների փոփոխությունների, Հայաստանի կողմից առերեսվող կարևորագույն մարտահրավերներին դիմակայելու գործում Հայաստանի խորհրդարանի և նրա վերահսկողական գործառնության լիարժեք օգտագործման հետ կապված հարցերը: Մասնավորապես, կարևոր է հասկանալ, թե արդյոք ԱԺ-ն իրեն տրված լիազորությունները և

հասու գործիքներն օգտագործում է, որպեսզի երաշխավորի, որ Հայաստանի կառավարության կողմից ընդունվող որոշումները, կառավարության անդամների և նրանց տեղակալների հայտարարությունները, կառավարության կառուցվածքի և դրա անդամների փոփոխությունները նպատակաուղղված են Հայաստանի կողմից առերեսվող կարևորագույն մարտահրավերներին Հայաստանի դիմակայունության բարելավմանը:

Աժ վերահսկողական գործառույթի իրականացման փաստեր հայտնաբերելու նպատակով ուսումնասիրվել են մի շարք փաստաթղթեր և օգտագործվել են տեղեկատվություն ստանալու տարբեր գործիքներ: Չնայած հետազոտությունը կենտրոնացել է բյուջեի և բյուջետային գործընթացի նկատմամբ Աժ վերահսկողության իրականացման վրա, առանձին դեպքերում այն անդրադարձել է նաև կառավարության գործունեության այլ ոլորտներին նկատմամբ խորհրդարանական վերահսկողության վրա նաև այն պատճառով, որ կառավարության ու վարչապետի որոշումների, նախարարների հրամանների բացարձակ մեծամասնությունն ազդեցություն ունի պետական բյուջեի վրա: Հաշվետվության հիմնական մասը չձանրաբեռնելու նպատակով ուսումնասիրված նյութերը ներկայացվել են հավելվածներում: Հաշվետվության հիմնական մասում ներկայացվել է վերլուծությունը, եզրակացությունները և առաջարկությունները:

Այս հետազոտության տեսակետից խորհրդարանական վերահսկողությունը նշանակում է, որ ցանկացած հարցի անդրադառնալիս Աժ-ն համոզվում է, որ.

- Առկա է ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ հանրության լայն շրջանակների մասնակցությամբ կատարված խորքային, համակարգված և փաստաթղթավորված վերլուծություն (ախտորոշում), առանձնացված են կարգավորում պահանջող առաջնահերթ հարցերը: 2018թ. նորընտիր վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարում էր. «Էս փուլի ամենակարևոր գործողությունը ախտորոշումն է, թե ինչ վիճակում է մեր երկիրը»¹: Հայաստանում չկատարվեց ստեղծված իրավիճակի և նախկինի արատավոր պրակտիկայի համակարգային ախտորոշում և կառավարության անդամների և նրանց տեղակալների առանձին ելույթներում հնչած քննադատությունից այն կողմ նախկինի վերլուծությունն առաջ չանցավ:
- Հանրային քննարկում անցած, կառավարության, վարչապետի կամ նախարարի կողմից հաստատված փաստաթղթով սահմանվել են ոլորտում տարվող քաղաքականության երկարաժամկետ՝ 5-10 տարվա ռազմավարական նպատակները և դրան բնութագրող չափորոշիչները:
- Մշակվել են ծրագրեր, որոնք նախանշում են ներկա իրավիճակից ապագայի ցանկալի իրավիճակ տանող միջոցառումների ժամանակացույցը: Պետական և ծառայողական գաղտնիք չպարունակող ծրագրերը հրապարակվել են: Ծրագրերը քարին գրված սեպագիր արձանագրություններ չեն և ժամանակ առ ժամանակ, իրավավիճակի փոփոխությամբ պայմանավորված, համոզիչ փաստարկների և հիմնավորումների առկայության դեպքում կարող են ենթարկվել փոփոխությունների: Հանրության լայն շրջանակները մասնակցում են ծրագրերի մշակման և դրանցում փոփոխությունների կատարման աշխատանքներին: Մշակված ծրագրերը ներկայացնում են փոփոխությունների կառավարման (change management) գործընթացը:
- Կատարվել է ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական, ֆինանսական, տեխնիկական և այլ ռեսուրսների գնահատում և առկա է

հիմնավորված կարծիք, որ դրանք բավարար են ռազմավարության և ծրագրերի նպատակներին հասնելու համար:

- Բացահայտվել են ծրագրի իրականացմանը սպառնացող ռիսկերը, ներդրվել են մեխանիզմներ, որոնք թույլ կտան բացահայտել ապագայում ի հայտ եկող հնարավոր ռիսկերը, առկա է ռիսկերի գնահատման մեխանիզմ, որը թույլ է տալիս առանձնացնել դրանցից առավել մեծերը, մշակվել են ռիսկերի կառավարման գործիքներ:
- Ներդրվել են ներքին հսկողական համակարգեր, որոնք երաշխավորում են, որ նախարարությունների և գերատեսչությունների աշխատակիցները հետևում են հաստատված ընթացակարգերին, իսկ ղեկավարությունը ժամանակին տեղեկատվություն է ստանում ընթացակարգերից և նպատակային ցուցանիշներից շեղումների մասին:
- Ներդրվել են հաշվետվական մեխանիզմներ, որոնք հանրությանը պարբերաբար, ժամանակին, ամբողջական, բովանդակային՝ առնվազն եռամսյակային և տարեկան հաշվետվություն են ներկայացնում որոշակի կոնկրետ օրվա դրությամբ ծրագրի առաջընթացի վերաբերյալ: Հաշվետվությունը փաստացի ցուցանիշները ներկայացնում է ծրագրային ցուցանիշների լույսի ներքո: Առանց ծրագրային ցուցանիշների փաստացի ցուցանիշների ներկայացումը հանդիսանում է ոչ թե հաշվետվություն, այլ տեղեկատվություն կամ տեղեկանք: Հաշվետվողականությունը ենթադրում է, որ հաշվետվությունը ներկայացնողը և հաշվետվությունն ընդունողը նայում են միմյանց աչքերի մեջ, ինչը նշանակում է, որ նրանք նստում են դեմ դիմաց, այլ ոչ կողք-կողքի:
- Ներդրվել են մշտադիտարկման մեխանիզմներ, որոնց օգնությամբ նախարարության կամ գերատեսչության ղեկավարները պարբերաբար (հաշվետվություններից ավելի հաճախ) տեղեկատվություն են ստանում ծրագրերի ընթացիկ արդյունքների վերաբերյալ:
- ՀՀ կառավարությունը պարբերաբար գնահատում է ծրագրերի ընթացքը, ճշտումներ և ճշգրտումներ կատարում դրանցում, հրապարակում է ռազմավարություններում և ծրագրերում հանրային քննարկումների արդյունքում կատարվող փոփոխությունները, դրանք բնութագրող չափորոշիչներն ու ցուցանիշները:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է խորհրդարանական վերահսկողության փորձը տարբեր երկրներում: Ուսումնասիրության արդյունքները գրանցված են Հավելված 1-ում:

Ուսումնասիրվել է խորհրդարանական վերահսկողությունը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը, այդ թվում Սահմանադրությունը, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքը (այսուհետ՝ կանոնակարգ), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ պետական բյուջեի մասին տարբեր տարիների օրենքները և ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները, այլ փաստաթղթեր: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ԱԺ այն վերահսկողական գործիքները և դրանց հետ կապված ընթացակարգերը, որոնք սահմանվել են ՀՀ Սահմանադրությամբ, ԱԺ կանոնակարգ օրենքով և ԱԺ աշխատակարգովⁱⁱⁱ: Այս ուսումնասիրության տեսակետից բյուջեի կատարման կամ ցանկացած այլ գործունեության **հաշվետվությունը** որոշակի հաշվետու ժամանակահատվածի համար պետական մարմնի

կամ պետական բարձրաստիճան պաշտոնյայի ներկայացրած գրավոր փաստաթուղթն է հանրությանը, որը ներկայացնում է կատարած աշխատանքների վերաբերյալ փաստացի ցուցանիշների մեծությունը սահմանված պլանային կամ ծրագրային ցուցանիշների համեմատ: Այն փաստաթուղթը, որը ներկայացնում է պետական մարմնի կամ պետական բարձրաստիճան պաշտոնյայի գործունեության փաստացի ցուցանիշները, սակայն դրանք չի համեմատում պլանային կամ ծրագրային ցուցանիշների հետ, այս ուսումնասիրության տեսակետից հաշվետվություն չի դիտարկվում (համարվում է տեղեկանք կամ այդ բնույթի այլ փաստաթուղթ): Այս ուսումնասիրության տեսակետից հաշվետվություն չի համարվում նաև ոչ հանրային փաստաթուղթը: Վեր են հանվել օրենսդրական բացերը, վերլուծվել են դրանց պատճառները և հետևանքները: Ուսումնասիրվել են ՀՀ պետական բյուջեի տեքստային մասերում տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք լրացուցիչ լիազորություններ և իրավասություններ են փոխանցել ՀՀ կառավարությանը: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրված իրավական ակտերի ցանկը և ուսումնասիրությունը ներկայացված է հավելված 2-ում:

Կառավարության գործունեության և վերջինիս կողմից օրենքների կատարման նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը հանդիսանում է ժողովրդավարության հասարակության ձևավորման անհրաժեշտ, սակայն ամենևին ոչ բավարար պայման: Ժողովրդավարության հասարակության ձևավորման գործում խորհրդարանական վերահսկողության կարևորությունն ընդգծելու նպատակով ուսումնասիրվել և վերլուծվել են իշխանության ձևավորմանը վերաբերող առանձին հարցեր:

Առաջնորդվելով այն ենթադրությամբ, որ խորհրդարանական վերահսկողություն կարող են իրականացնել միայն անկախ պատգամավորները, ներկայացվել են խորհրդարանական վերահսկողությունը սահմանող ՀՀ օրենսդրությունը, պատգամավորների, հանձնաժողովների և ԱԺ անկախությանը վերաբերող սահմանադրական և օրենսդրական կարգավորումները: Ներկայացվել են նաև Հայաստանում ժողովրդավարության վիճակին վերաբերյալ միջազգային կառույցների տված գնահատականներ: 2022թ. բյուջետային գործընթացի օրինակով ուսումնասիրվել է դրա մասնակցայնությունը (հավելված 3), ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքներում վերջին տարիներին կատարված փոփոխությունները (հավելված 4), բյուջեի կատարողականի քննարկումները (հավելված 5), բյուջեի քննարկումների ժամանակացույցերը (հավելված 6), բյուջեի նախագծի քննարկումները (հավելված 7): Ուսումնասիրվել են ինչպես ԱԺ-ում, այնպես էլ պատգամավորների նկատմամբ բռնության դեպքերը: Դիտարկվել են 2015թ. սահմանադրական փոփոխությունները: Կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործում իշխող ուժի պատգամավորների կարևոր դերը հաշվի առնելով ուսումնասիրվել են խորհրդարանական վերջին հինգ ընտրությունների հիմնական ցուցանիշներ:

Ուսումնասիրվել են ԱԺ վերահսկողական հետևյալ գործիքները.

- պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, իրավունքի ուժով ձևավորվող ԱԺ քննիչ հանձնաժողովը,
- պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդի ստորագրությամբ օրենքների, ՀՀ նախագահի, հրամանների և կարգադրությունների, ԱԺ, կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով ՀՀ Սահմանադրական դատարան,

- ՀՀ կառավարության անդամներին ուղղվող գրավոր հարցերը,
- ՀՀ կառավարության անդամներին ուղղվող բանավոր հարցերը,
- ՀՀ կառավարության անդամներին խմբակցությունների կողմից ուղղվող գրավոր հարցապնդումները,
- Աժ նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովների և խմբակցությունների որոշմամբ հրավիրվող խորհրդարանական լսումները:

Աժ վերահսկողական գործիք է հանդիսանում նաև պետական բյուջեի և դրա կատարման վերաբերյալ հաշվետվության ընդունումը, Աժ հանձնաժողովների կողմից օրենքների և ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողությունը: Բյուջետային գործընթացի դեպքում ուսումնասիրվել են նաև Կենտրոնական բանկի և Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվող եզրակացությունները:

Վերը նշված գործիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ինչպես Աժ կայքում, այնպես էլ մամուլում և տարբեր ուսումնասիրություններում և հետազոտություններում առկա տեղեկությունները: Վիճակագրական տվյալներ ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել Աժ աշխատակազմ:

Ուսումնասիրվել են Աժ պատգամավորների, աշխատակազմի և վերջինիս աշխատանքի կազմակերպման հետ կապված հարցեր: Աժ պատգամավորների կողմից կատարվող աշխատանքի վերաբերյալ կարծիք կազմելու նպատակով դիտվել է Աժ, Աժ մշտական հանձնաժողովների և մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի մի քանի ժամ տևողությամբ տեսաձայնագրություններ, առկայության դեպքում ուսումնասիրվել են սղագրություններ: Ուսումնասիրվել են Աժ աշխատակազմի և բյուջետային գրասենյակի գործունեություն կարգավորող օրենսդրությունը և գործունեության տեսանելի արդյունքները:

Վերը նշված բոլոր ուսումնասիրությունները վերաբերում են Աժ, Աժ պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների, աշխատակազմի և բյուջետային գրասենյակի կողմից կատարած աշխատանքին: Սակայն մի շարք դեպքերում Աժ-ն լիարժեք չի օգտագործել իրեն հասու խորհրդարանական վերահսկողության գործիքները: Նման մի շարք դեպքեր ներկայացված են դեպքի նկարագրություն կոչվող բաժիններում:

Համեմատական վերլուծության են ենթարկվել վերջին տարիների պետական բյուջեների տեքստերը (ոչ ծախսային հոդվածները): Ուսումնասիրվել են 2005-2020թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների քվեարկության վերաբերյալ նյութերը: Ներկայացվել է հաշվետվությունը հաստատելու օրվա, հաշվետվությունը հաստատելուն «կողմ», «դեմ» և «ձեռնպահ» ձայների թվի, հաշվետվության հաստատմանը վերաբերող ինտերնետային էջի հղումը: Ուսումնասիրվել է ՀՀ պետական բյուջեի ընդունման և պետական բյուջեի կատարման վերաբերյալ քննարկումների հետ կապված Աժ գործունեությունը: Մասնավորապես, ուսումնասիրվել են պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծերի նախնական քննարկումների և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունների նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկերը հաստատող որոշումների օրերը, համարները և ինտերնետային հղումները: Որպես օրինակ, ներկայացվել է Աժ խորհրդի կողմից հաստատված 2022թ. ՀՀ պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և ՀՀ կառավարության կողմից փոփոխություններ կատարելու

Ժամանակացույցը, ինչպես նաև 2020թ. ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամանակացույցը: Ներկայացվել են նաև 2005-2021թթ. պետական բյուջեի ընդունման և 2005-2021թթ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում բյուջեի մասին օրենքի ընդունման կամ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու որոշման ընդունման օրը, ՀՀ պետական բյուջեի մասին օրենքին կամ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելուն «կողմ», «դեմ» և «ձեռնպահ» ձայների թիվը, ԱԺ ինտերնետային էջի հղումը: Բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության տեսակետից ուսումնասիրվել է նաև ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից կատարված աշխատանքները, կայացված որոշումները և այլ գործունեություն:

Պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության քննարկումները տեղի են ունենում հանձնաժողովների համատեղ նիստերում: Այդ նիստերի սղագրություններ, արձանագրություններ և որոշումներ առկա չեն: Ուսումնասիրվել է ԱԺ մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների 18 ժամ տևողությամբ տեսաձայնագրություն: Արձանագրվել են զեկույցների մոտավոր տևողությունը, ինչպես նաև պատգամավորների կողմից տրվող հարցերը: Ուսումնասիրվել են միայն ճյուղային նախարարներին տրվող հարցերը, քանի որ դրանք են օգնում բացահայտել առանձին ճյուղերում տարվող քաղաքականության նկատմամբ վերահսկողության առկայությունը (ճյուղային քաղաքականությունների դեպքում ՀՀ ֆինանսների նախարարը պատասխանում է ֆինանսական բնույթի հարցերին): Պատգամավորների կողմից տրվող հարցերը գնահատվել են խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացման տեսանկյունից: Նախարարությունների և գերատեսչությունների, ինքնավար մարմինների պաշտոնյաների պատասխանները չեն ուսումնասիրվել, եթե պատգամավորի հարցը կապ չունի խորհրդարանական վերահսկողության հետ (օրինակ, նախորդ տարվա բյուջեի կատարողական քննարկման ժամանակ տրված հարցը վերաբերում է տվյալ կառույցի տեսլականին, այսինքն ոչ թե նախորդ տարի կատարված փաստացի գործարքներին, այլ ապագային): Եթե հարցը տեղին է, ապա սույն հաշվետվության մեջ այն արձանագրվել է որպես խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացմանը միտված: Եթե պատասխանը չի բավարարել պատգամավորին, վերջինս կարող էր արձագանքի միջոցով արձանագրել այդ փաստը և հետագա հարցերի միջոցով փորձել պարզել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Ուսումնասիրվել է 2022թ. բյուջեի նախագծի քննարկումների նպատակով կազմակերպված մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի մոտավորապես 30 ժամ տևողությամբ տեսաձայնագրություն:

Վերը նշված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում կուտակված հարցերի վերաբերյալ նախկին և ներկա պատգամավորների հետ զրուցելու նպատակով կազմվել է ուղղորդող հարցաշար: Պատրաստված հարցաշարի վերջնական տարբերակը, զրուցակիցների ցանկը, խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ զրույց ունենալու խնդրանքով 8-րդ գումարման ԱԺ երեք խմբակցություններին ուղղված գրությունների պատճենները ներկայացված են հավելված 8-ում: Չրուցակիցները հնարավորություն են ունեցել ներկայացնել նաև տեսակետներ և դիտարկումներ, որոնք կարող են դուրս լինել հարցաշարում ներառված հարցերի շրջանակից:

Ներկա և նախկին պատգամավորների, փորձագետների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են խորհրդարանական վերահսկողության օրենսդրությունն ու դրա կիրարկումն իրական կյանքում: Հանդիպում և հարցազրույց ունենալու առաջարկով գրություն է ուղարկվել ԱԺ 8-րդ գումարման բոլոր երեք խմբակցությունների ղեկավարներին և քարտուղարներին, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին, Բյուջետային գրասենյակին, անհատ պատգամավորների:

Խորհրդարանական վերահսկողության սահմանադրական գործառույթի շրջանակներում բյուջետային գործընթացի նկատմամբ ԱԺ մշտական հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողության դեպքերը և փաստերը վերհանելու նպատակով ուսումնասիրվել են ԱԺ վերջին երեք՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների մշտական հանձնաժողովների նիստերի վերաբերյալ տեղեկատվությունները՝ նիստերի օրակարգերը և սղագրությունները: Մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրությունների պետական բյուջեի նախագծի, պետական բյուջեի կատարման ընթացքի կամ պետական բյուջեի կատարման պարբերական կամ տարեկան հաշվետվությունների քննարկումների վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել: ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների նիստերի, արձանագրությունների և որոշումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է 9-11 աղյուսակներում:

Հավելված 9-ում ներկայացված են խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացմանը վերաբերող մամուլի որոշ հրապարակումներ:

Ուսումնասիրվել են այն երեք դեպքերը, երբ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի հոդված 121-ի մաս 11-ի առաջին կետով նախատեսված կարգով ԱԺ յոթերորդ գումարման «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն առաջարկել է ընդունել կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը ՀՀ վարչապետի քննարկմանը ներկայացնելու մասին ԱԺ որոշում: ԱԺ համապատասխան նիստերի քննարկումները և որոշումների արդյունքները ներկայացված են հավելված 10-ում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի^{iv} և ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն^v տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել պետական կառույցներ:

Վերը նշված ուսումնասիրությունների հիման վրա կատարվել են եզրակացություններ և ներկայացվել են առաջարկություններ:

Հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի և նախորդ տարվա պետական բյուջեի կատարման վերաբերյալ ԱԺ-ում կազմակերպվող քննարկումներին ծանոթանալու նպատակով դիտվել է համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների 18 և 2022թ. բյուջեի նախագծի քննարկումների նպատակով կազմակերպված մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի մոտավորապես 30 ժամ տևողությամբ տեսաձայնագրություն: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ երբ փաստացի ցուցանիշները ներկայացվում են առանց ծրագրային կամ պլանային ցուցանիշների, ապա դա ընդամենը տեղեկատվություն է, այլ ոչ հաշվետվություն:

Ուսումնասիրությունն առերեսել է մի շարք ռիսկեր: Հիմնական ռիսկը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանն առերեսում է դժվարագույն, գլոբալ, տարածաշրջանային և ներպետական մարտահրավերներով լի ժամանակաշրջան և խորհրդարանական վերահսկողությունն ամենայն հավանականությամբ առաջնահերթություն չէ քաղաքական

գործընթացներում ներգրավված մի շարք կողմերի համար: Այդ ռիսկը նվազեցնելու նպատակով ընդլայնվել է ուսումնասիրության շրջանակը: Մասնավորապես, ուսումնասիրվել են ԱԺ նախորդ գումարումների կողմից քննարկված փաստաթղթեր, բյուջեների նախագծերի և բյուջեների կատարման, Հաշվեքննիչ և վերստուգիչ պալատների հաշվետվություններ, հարցազրույցներ են իրականացվել ԱԺ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարման պատգամավորների հետ, ուսումնասիրվել են մեծ ծավալով նիստերի սղագրություններ, արձանագրություններ և տեսաձայնագրություններ:

Հաջորդ ռիսկը կապված է «խորհրդարանական վերահսկողություն» հասկացության ընկալման և տարընթերցումներ հետ: Այս հետազոտությունը ներկայացրել է «խորհրդարանական վերահսկողության» այն սահմանումը, որի վրա հիմնվում է հետազոտությունը:

Չնայած հաշվետվությունն անդրադառնում է նաև ավելի վաղ տեղի ունեցած իրադարձությունների, այն կենտրոնանում է վերջին գումարումների ԱԺ-ի կողմից վերահսկողական գործառնության իրականացմանը և նկատված բացթողումներին:

Այս հետազոտությունը կենտրոնանում է ԱԺ-ի, որպես ժողովրդավարական պետության կարևորագույն հաստատությանը: ԱԺ վերահսկողական գործառնության վերաբերյալ կարծիքներ կարող են հայտնել, կամ դրա շրջանակներում գործունեություն կարող են ծավալել անհատ պատգամավորները: Անձերի վրա ուշադրությունը չկենտրոնացնելու նպատակով մի շարք դեպքերում կարծիքներ արտահայտած պատգամավորների անունները ներկայացված են հղումներով:

Այս հետազոտությունը պետական ֆինանսական կառավարման համակարգը դիտարկում է միայն ժողովրդավարական զարգացումների համատեքստում, ինչը նշանակում է, որ կարևոր են ոչ միայն բյուջետային միջոցների «արդյունավետությունը», այլ նաև բյուջետային գործընթացի մասնակցայնությունը, առաջնահերթությունների որոշումը, այլ հարցեր:

Կառավարության անդամների և նրանց տեղակալների, պատգամավորների խոսքին անդրադառնալիս, հետազոտությունն անդրադառնում է միայն հանրային դաշտում պատգամավորների գործունեության մասին է: Թե մասնավոր, փակ դռների հետևում կայացող հանդիպումների և քննարկումների ժամանակ կառավարության անդամներն ու նրանց տեղակալները և պատգամավորներն ինչ են անում, դա այս հետազոտության տեսակետից կարևոր չէ:

2. Ժողովրդավարությունը և խորհրդարանական վերահսկողությունը

«Ժողովրդավարություն» բառը հունարեն *dēmokratia* բառի թարգմանությունն է, որը ձևավորվում է «*dēmos*»՝ ժողովուրդ և «*kratos*»՝ իշխանություն բառերից: Ժողովրդավարական համակարգում քաղաքացիները ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով ձևավորում են իշխանություն, որը.

- երաշխավորում է, որ ոչ մի եթևիկ, ռասայական, տարածաշրջանային, սոցիալական, գործարար կամ այլ խմբերի շահեր չեն գերակայում,
- կառավարության քաղաքականությունները վայելում են հանրության մեծամասնության վստահությունը,
- խորհրդարանը վերահսկում է կառավարության գործունեությունը, երաշխավորելով, որ հանրային բարիքն օգտագործվում է ի շահ բոլորի և հատկապես ի շահ դրա կարիքն ունեցողների և ոչ ի շահ իշխանությամբ օժտված առանձին անհատների և խմբերի,
- մարդու իրավունքներն ու սեփականությունը պաշտպանված են,
- ընդունված օրենքները և կնքված պայմանագրերը գործում են,
- օրենքները և պայմանագրերը խախտողները պատասխանատվության են ենթարկվում դատարանի կողմից,
- մամուլն ազատ է կուտակված հարցերը բարձրաձայնելու գործում:

Կարևորագույն հարցերից մեկը, որի պատասխանը փնտրում են մտածողները ժողովրդավարությունն ուսումնասիրելիս, վերաբերում է իշխանության ձևավորման եղանակին: Արիստոտելը նշում էր, որ պետությունը կարող են ղեկավարել միապետները, բռնապետները, օլիգարխները, արիստոկրատները կամ քաղաքացիները^{vi}: Արիստոտելյան համակարգում.

- Միապետն ու փոքրամասնությունն հանդիսացող արիստոկրատները ձգտում են ընդհանուր բարեկեցության,
- Բռնապետը և փոքրամասնությունն հանդիսացող օլիգարխները առաջնորդվում են սեփական շահերով,
- հասարակության լայն խավերի, միմյանց հանդեպ հարգանք տածող հարուստների և աղքատների կամ անկազմակերպ «ամբոխի» կողմից ձևավորված և նրանց կողմից ընտրված, լավագույն հատկանիշներով օժտված կառավարությունը գործում է հօգուտ ամբողջ հասարակության:

Միապետությունը, Արիստոտելի կարծիքով լավագույն կառավարման համակարգը, հազվադեպ է հանդիպում: Անսահմանափակ իշխանությունը «փչացնում» է միապետին և մեծացնում բռնապետի վերածվելու ռիսկը:

Տարածված կարծիք է, որ Պլատոնը մերժել է ժողովրդավարությունը, առաջարկելով, որ հասարակությունը ղեկավարեն առաքինի, անձնագոհ, հասարակ և հանրային կյանքով ապրող ընտրյալ «փիլիսոփա» արքաներն ու թագուհիները, պնդելով, որ փիլիսոփաները լավ կառավարիչներ կարող են լինել, քանի որ հետաքրքրված չեն քաղաքական իշխանությամբ, չեն չարաշահի այն և վստահելի են: Տարբեր, հեղափոխականներ (հատկապես մարքսիստ) այս մոտեցումն օգտագործել են հանրության բարեկեցությամբ մտահոգվածի անձնագոհ-անսխալական-ընտրյալ փիլիսոփաների իրենց կերպարը ձևավորելիս:

Կառլ Պոպերը Պլատոնին համարում է ժողովրդավարության թշնամի և նշում, որ մեծ մարդիկ կարող են մեծ սխալներ թույլ տալ^{vii}:

Ժողովրդավարության թերությունները բացահայտելիս Ալեքսիս դը Թոքվիլը (Alexis de Tocqueville) «մեծամասնության բռնապետության» վտանգ է տեսնում^{viii}: «Մեծամասնության բռնապետությունը» Թոքվիլը սահմանում է որպես մի վիճակ, երբ մարդկանց մի փոքր խումբ անարդար վերաբերմունքի է արժանանում, քանի որ տարբերվում է մեծամասնությունից: Ժողովրդավարական հասարակությունում հանրային կարծիքը կարող է ստանալ գերբնական ուժ, ինչի հաշվին մեծամասնությունը բռնության կենթարկի փոքրամասնության որոշակի «անընդունելի» խմբերի և անհատների: Հանրային կարծիքի վրա կառուցվող միջխմբային հարաբերությունները կարող են վտանգավոր դառնալ կրթական ցածր մակարդակ ունեցող հասարակությունների դեպքում:

Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդրի լուծումը կարելի է գտնել Ջոն Ռոլզի «անտեղյակության շղարշի» օգնությամբ^{ix}: Շղարշի դիմաց բոլոր մարդիկ ռացիոնալ, ազատ և բարոյական են: Ոչ ոք չգիտի իր գրաված դիրքի, ունակությունների, կարողությունների, հակումների մասին, քանի որ հասարակությունը շղարշի մյուս կողմում է: Անձը ձևավորում է իր ցանկալի հասարակությունում գերակայող կանոնները: Ռացիոնալ անձնավորությունը կառաջարկի այնպիսի կանոններ, որոնք պաշտպանում են մարդու իրավունքները, արժանապատվությունն ու սեփականությունը: Այլապես, շղարշը մի կողմ քաշելուց հետո անձը կարող է հայտնվել անբարենպաստ վիճակում, եթե օրինակ, առաջարկի ճնշել կրոնական փոքրամասնություններին, իսկ շղարշը քաշելուց հետո պարզվի, որ ինքը դավանում է փոքրամասնության կրոնը:

Վերը ներկայացվող տեսակետներն ու տեսությունները հիմնվում են որոշ ենթադրությունների վրա, որոնց ուսումնասիրությունը դուրս է այս հետազոտության շրջանակներից: Իրական կյանքում «անտեղյակության շղարշի» բացակայությունը, տեղեկատվության ասիմետրիկությունը և այլ հանգամանքներ առանձին մարդկանց հնարավորություն են տալիս ժամանակին «ճիշտ» կողմնորոշվելու ունակության հաշվին մշտապես գտնվել մեծամասնության շարքերում, այսինքն իշխանության մեջ: Նույն հմտությունները հնարավորություն են տալիս նաև դուրս մնալ վերահսկողությունից:

Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով ձևավորված խորհրդարանը ժողովրդավարական երկրներին բնորոշ կարևորագույն պետական հաստատություններից մեկն է: Արևմտյան Եվրոպայի երկրներում ձևավորված parliament-ներն իրենց անունը ստացել են ֆրանսերեն parler՝ «խոսել» բառից: Խորհրդարանն այն վայրն է, որտեղ ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչները խոսում են երկրի առջև ծառացած մարտահրավերներից, երկրի հասարակական-քաղաքական-տնտեսական կյանքի կանոնակարգման նպատակով ընդունում են պարտադիր կատարման ենթակա օրենքներ, վերահսկողություն են իրականացնում կառավարության կողմից այդ օրենքների կատարման նկատմամբ, կատարում են այլ հարակից գործառնություններ:

Խորհրդարանական վերահսկողության բացակայությունը «չարամիտ» գործադիր իշխանությանը հնարավորություն է տալիս իր տրամադրության տակ առկա հանրային բարիքն օգտագործել անձնական-խմբային նպատակներով: Խորհրդարանական վերահսկողության բացակայության պայմաններում «բարի» գործադիր իշխանությունը զրկված է իր հնարավոր սխալներն ու վրիպումները «նկատող» և ժամանակին դրանք ուղղելու հարցում օգնող «երկրորդ աչքից»: Հասարակության լայն խավերի կողմից ընտրված, անկախ պատգամավորների կազմված խորհրդարանը կարող է երաշխավորել խմբային՝ տարածաշրջանային («երևանցիների», «գյումրեցիների», «լոռեցիների», «ապարանցիների», «ղարաբաղցիների», այլ), տնտեսական (հարուստների, աղքատների, գործարարների և եկամուտների այլ մակարդակ ու աղբյուր ունեցող քաղաքացիների), գաղափարական

(կոմունիստների, ազատականների, սոցիալիստների, այլ) և այլ շահերի գերակայության զսպումը:

Խորհրդարանական վերահսկողության բացակայությունը նվազեցնում է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով ձևավորված իշխանության գործունեության նպատակային, արդյունավետ, խնայողական և մասնակցային գործունեության արդյունքներն ըմբռնելու հնարավորությունը:

Հուսալի վերահսկողությունը պահանջում է, որպեսզի վերահսկողն անկախ լինի վերահսկվողից և չլինի վերջինից կախված: Կանադայի խորհրդարանը հատուկ ընդգծում է պատգամավորների անկախության կարևորությունը*:

Խորհրդարանական վերահսկողությունը պետք է ունենա միայն քաղաքական հետևանքներ և այն չպետք է վերածել իրավական վերահսկողության, որն իրականացվում է իրավապահ մարմինների և դատարանների կողմից:

Խորհրդարանական կառավարումը ենթադրում է քաղաքացիների որոշակի կրթական մակարդակ: Կրթությունը, գիտելիքները, հմտությունները և քննական մտածողությունը ընտրողին հնարավորություն են տալիս վերլուծել քաղաքական ուժերի կողմից ներկայացվող ծրագրերը, այդ ուժերի և նրանց առանձին անդամների անցած ճանապարհը և ընտրել այն իշխանությունը, որը կապահովի իր ընտանիքի անվտանգությունը, բարեկեցությունը և երեխաների զարգանալու հնարավորությունը: Վերջին 20-25 տարիներին Հայաստանում տարվող քաղաքականության արդյունքում աղետալի կերպով ընկել է քաղաքացիների կրթական մակարդակը: «Չարգացած սոցիալիզմի» փուլում գրեթե լիակատար գրագիտության հասած Հայաստանում 2019թ. 10 տարեկան երեխաների 30^{xi} և 19-20 տարեկան երիտասարդների 10^{xii} տոկոսը կարդալու և կարդացածը հասկանալու ոչ բավարար կարողություն ունեն: Դա իր ուղղակի ազդեցությունն է ունեցել նաև քաղաքական դաշտի, խորհրդարանի և պետական կառավարման համակարգի աշխատանքի վրա: Ամբոխահաճ, ականջահաճո և ազգայնական հայտարարությունները, հայիոյանքը սովորական երևույթներ են ժամանակակից Հայաստանի քաղաքական դաշտում

3. Խորհրդարանական վերահսկողությունը Հայաստանում

«Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»^{xiii}: ԱԺ-ն գործում է Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն և ընդունում է օրենքներ, որոնք ի թիվս այլ նպատակների, կարգավորում և սահմանափակում են ՀՀ կառավարության, վարչապետի, նախարարների և այլ պաշտոնյաների իրավունքներն ու լիազորությունները: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով (Սահմանադրության հոդված 6):

ԱԺ-ն ընդունում է օրենքները և պարտավոր է վերահսկել ՀՀ կառավարության կողմից դրանց կատարումը: «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառնություններ» (Սահմանադրության հոդված 88): Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը (հոդված 89): Ի թիվս այլ գործառնությունների ԱԺ մշտական հանձնաժողովները պարտավոր են իրականացնել խորհրդարանական վերահսկողություն (հոդված 106): ԱԺ-ն «վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ» (հոդված 111): ՀՀ նախագահը նորընտիր ԱԺ լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին (հոդված 149): ՀՀ կառավարությունը կազմված է վարչապետից, երկու փոխվարչապետից և նախարարներից^{xiv}: Սպառնալիքների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը պետության քաղաքականության հիմնական նպատակներից են (հոդված 86):

Վերահսկողությունն անկախություն է պահանջում: Վերահսկողը չի կարող իրականացնել իր գործառնությունները, եթե կախված է վերահսկվողից, ունի վերահսկողության հետ անհամատեղելի շահեր: «Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով» (Սահմանադրություն հոդված 94): ԱԺ խմբակցություններում ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները (հոդված 105): Խմբակցությունը նպաստում է ԱԺ քաղաքական կամքի ձևավորմանը: Պատգամավորն իրավունք ունի դուրս գալու խմբակցությունից: Խմբակցության որոշումներն ընդունվում են անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Սահմանադրությունը և կանոնակարգը չեն սահմանում, թե արդյոք խմբակցության որոշումների կատարումը պարտադիր է պատգամավորի համար, չեն նախատեսում պատգամավորի կողմից հաշվետվությունների ներկայացում և պատգամավորի գործունեության գնահատում:

Կարևոր է հասկանալ, թե ինչ են ենթադրում «գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն» և «պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն» հասկացությունները: Այս հետազոտության շրջանակներում «գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն» նշանակում է, որ պատգամավորները, հանձնաժողովները և խմբակցություններն.

- ունեն անհրաժեշտ լիազորություններ,

- վերլուծում են պետական քաղաքականությունները (հայեցակարգեր, տեսլականներ, ռազմավարություններ, զարգացման ծրագրեր, այլ), հաստատված քաղաքականության կոնտեքստում ՀՀ կառավարության, վարչապետի և փոխվարչապետների որոշումները, նախարարների, նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների և ինքնավար մարմինների անդամների որոշումներն ու հրամանները, ելույթները, հայտարարությունները և վարքը,
- պետական քաղաքականությունների նպատակային ցուցանիշներից եական շեղումների դեպքում քաղաքական գնահատական են տալիս ՀՀ կառավարության, վարչապետի և փոխվարչապետների, նախարարների, նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների և ինքնավար մարմինների անդամների որոշումներին, հրամաններին, ելույթներին, բանավոր և գրավոր հայտարարություններին և վարքին:

«Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն» նշանակում է, որ պատգամավորները, հանձնաժողովները և խմբակցությունները հետամուտ են ռազմավարական աշխատանքի հետևյալ փուլերի հետևողական իրականացմանը.

- ՀՀ պետական քաղաքականության երկարաժամկետ և միջնաժամկետ հեռանկարի, պետական պարտքի կայունության և այլ փաստաթղթերի տեսակետից ուսումնասիրում են ԱԺ ներկայացրած պետական բյուջեի նախագիծը, վերլուծում են առաջարկվող առանձին հատկացումների նպատակայնությունը, արդյունավետությունը, խնայողականությունը, տարվող պետական քաղաքականության մասնակցայնությունն ու ներառականությունը, շեղումների պատճառները պարզելու նպատակով ԱԺ են հրավիրում ՀՀ վարչապետին, փոխվարչապետներին, նախարարներին, նրանց տեղակալներին, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարներին և ինքնավար մարմինների անդամներին, կայացնում են քաղաքական որոշումներ:
- Տարվա ընթացքում ստանում են բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային, բյուջետային ծրագրերի մշտադիտարկման, գնահատման և այլ հաշվետվություններ, ուսումնասիրում և վերլուծում են դրանք, շեղումների ի հայտ գալու դեպքում ծրագրերի ընթացքը գնահատելու նպատակով ԱԺ են հրավիրում ՀՀ վարչապետին, փոխվարչապետներին, նախարարներին, նրանց տեղակալներին, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարներին և ինքնավար մարմինների անդամներին, կայացնում են քաղաքական որոշումներ:
- Ուսումնասիրում են պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, վերլուծում են փաստացի կատարված ծախսերի նպատակայնությունը, արդյունավետությունը, խնայողականությունը և քաղաքականությունները գնահատում են մասնակցայնության և ներառականության տեսակետից, կայացնում են պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ քաղաքական որոշումներ:

Վերը նշված կոնտեքստում.

- *Նպատակային* նշանակում է, որ հատկացված միջոցներն օգտագործվում են ՀՀ ԱԺ կողմից սահմանված նպատակին համեմատաբար:

- *Արդյունավետ* նշանակում է, որ սահմանված ժամկետներում նպատակներին հասնելու, հանրությանը պահանջվող որակի և քանակի մեկ միավոր ծառայություն մատուցելիս, աշխատանք կատարելիս և ապրանք ձեռք բերելիս օգտագործվում է պահանջվող ռեսուրսների նվազագույն անհրաժեշտ ծավալը, կամ հատկացված ռեսուրսներով ձեռք է բերվում մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, ձեռք բերվող ապրանքների որակի և քանակի առումով առավելագույնը:
- *Խնայողաբար* նշանակում է, որ նպատակին հասնելու համար ՀՀ կառավարությունը և պետական մարմիններն օգտագործում են նվազագույն անհրաժեշտ մարդկային, նյութական, տեխնիկական, տեխնոլոգիական, ֆինանսական և այլ ռեսուրսներ:

Այս հետազոտության տեսակետից ԱԺ ուսումնասիրության առարկա պետք է հանդիսանան կառավարության անդամների, նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա կառույցների ղեկավարների հայտարարությունները: Այս պնդումը հիմնվում է երկու ենթադրությունների վրա.

1. Պետական քաղաքականությունները պետք է հիմնվեն կառավարության ռազմավարությունների և զարգացման ծրագրերի վրա: Ցանկացած հայտարարություն, որ համահունչ չէ ռազմավարությունների և ծրագրերի հետ պետք է դառնա ԱԺ ուսումնասիրության առարկա:
2. Կառավարության անդամները, նրանց տեղակալները, կառավարությանը և վարչապետին ենթակա կառույցների ղեկավարները անկախ վերլուծաբաններ չեն: Նրանք ուղղակի ազդեցություն ունեն տարվող պետական քաղաքականությունների վրա: Կառավարության ռազմավարությունների և զարգացման ծրագրերի հետ ոչ համահունչ հայտարարությունները կարող են նշանակել, որ այդ պաշտոնյաներն այլ գործով են զբաղված, կամ կառավարությունը շեղվել է ռազմավարությամբ սահմանված նպատակներից:

Կառավարության անդամների, նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա կառույցների ղեկավարների ուսումնասիրության արժանի մի քանի հայտարարություններ ներկայացված են այս հետազոտության դեպքերի նկարագրություն վերնագրված բաժիններում:

Վերը նշված սահմանումները նաև ենթադրում են, որ խորհրդարանական վերահսկողության տեսակետից ՀՀ ԱԺ-ն հանդես է գալիս որպես մեկ միասնական մարմին և վերահսկողությունը չի բաժանվում «իշխանականի» և «ընդդիմադիրի»:

Պատգամավորների անկախության հարցը ուղեկցել է բոլոր գումարումների ԱԺ-երին: Նախահեղափոխական Հայաստանում իշխող ուժի մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների մեծ մասը գործարարներ էին^{xv}, որոնց վրա ճնշում կարող էր գործադրվել հարկային մարմինների միջոցով:

Հայտնի են դեպքեր, երբ առանձին պատգամավորներ, ենթադրաբար իշխանությունների ճնշման ներքո, արագ լքել են խմբակցությունը, երբ վերջինիս ղեկավարը խնդիրներ է առերեսել իշխանությունների հետ: Այդ երևույթն ստացել է «առնետավազ» անունը: Երբ 2006թ. մի շարք պատգամավորներ լքեցին «Օրինաց երկիր»-ը, խմբակցության քարտուղարը պնդել էր, որ պատգամավորներին ճնշել, ուղղորդել, թելադրել են, սակայն չէր նշել, թե ով և ինչու^{xvi}: 2015թ. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ ԲՀԿ) ղեկավարի հասցեին Սերժ Սարգսյանի և Հայաստանի Հանրապետական կուսակցության (այսուհետ՝

ՀՀԿ) ղեկավարների կողմից հնչեցրած կոշտ գնահատականներից հետո ԲՀԿ-ից հեռացան մի քանի պատգամավոր^{xvii}:

Պատգամավորների անկախության վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով ուսումնասիրվել են վերջիններիս առանձին հայտարարություններ: Իշխանական պատգամավորը^{xviii} պատրաստ է ՀՀ վարչապետի վստահել և կողմ քվեարկել, եթե կառավարության ծրագրում գրված լինեն «մեկ նախադասություն՝ «Ամեն ինչ շատ-շատ լավ է լինելու»^{xix}: Իշխող խմբակցությունից պատգամավորի դուրս գալու^{xx}, բայց մանդատը վայր չդնելու փաստի հետ կապված իշխող խմբակցության մեկ այլ պատգամավոր գրառում էր կատարել^{xxi}, որ «Եթե իր հետ նույն ընտրատարածքում նույն քվեաթերթիկի վրա գրված լինեն «Նիկոլի ուսապարկ», ինքը վստահաբար մեկ հորիզոնական ցածր տեղ կգրադեցներ»^{xxii}: Մեկ այլ դեպքում, միայն ռազմական դրությունը հանելու օգտին իշխող խմբակցության կողմ քվեարկելու վերաբերյալ խմբակցության ղեկավարի հայտարարությունից հետո պատգամավորները վերջինից իմացան «իրենց» դիրքորոշման մասին^{xxiii}: Ռազմական դրությունը հանելու անհրաժեշտության մասին ԱԺ նախագահին «ասել էին» ՀՀ կառավարությունից:

ԱԺ պատգամավորները կատարում են գործադիր գործառույթներ կամ մասնակցում են գործադիրում՝ իրենց վերահսկողության օբյեկտ հանդիսացող մարմիններում կազմակերպվող քննարկումներին և խորհրդակցություններին: Հայ-թուրքական բանակցություններում հայկական կողմի ներկայացուցիչը ԱԺ նախագահի տեղակալն է^{xxiv}: ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահները մասնակցում են ՀՀ կառավարությունում և նախարարություններում կազմակերպվող քննարկումներին (հիմնականում՝ նրանց նստելու տեղ են հատկացնում ՀՀ վարչապետից հետո): Օրինակ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը պարբերաբար մասնակցում է ՀՀ կառավարությունում և ԿԳՄՍ նախարարությունում կազմակերպվող քննարկումներին^{xxv}:

Հայաստանի իշխանությունները ժամանակ առ ժամանակ անդրադարձել են խորհրդարանական վերահսկողությանը: Անդրադարձը հիմնականում կատարվել է միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակներում: 2017թ. Հայաստանի իշխանությունները միջազգային փորձագետների հետ քննարկում էին զինված ուժերի (այսուհետ՝ ՉՈՒ) գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության հետ կապված հարցեր^{xxvi}: Տարբեր երկրների խորհրդարաններում պաշտպանության համար պատասխանատու հանձնաժողովի լսումների հիմնական թեման պաշտպանության ոլորտի զնումներն են, քանի որ դրանք մեծ տեղ են գրավում բյուջեում և կոռուպցիայի տեսակետից խոցելի են^{xxvii}: Առանձնացնում են բյուջետային վերահսկողության երեք հիմնական տարրեր^{xxviii}. (1) ֆինանսական հաշվետվողականություն, (2) ներքին ֆինանսական վերահսկողություն և ներքին աուդիտը, և (3) արտաքին վերահսկողության մեխանիզմներ, ինչպիսիք են՝ խորհրդարանական վերահսկողությունը և արտաքին աուդիտը: 2019թ.-ի մայիսից զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնը, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ, անվտանգության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը բարելավելուն նպատակաուղղված ծրագիր է իրականացնում Հայաստանում^{xxix}:

Հայաստանում կատարված սեփականաշնորհումների և ներդրումների վերաբերյալ 2020թ. կատարված ուսումնասիրությունը եկել էր այն եզրակացության, որ անկախություն ձեռք բերելուց ի վեր ԱԺ-ն ձախողել է պետական սեփականության կառավարման և մասնավորեցման, ինչպես նաև պետական բյուջեի կատարման նկատմամբ

վերահսկողությունը^{xxx}: 2018թ. հետո իրավիճակն էականորեն չի փոխվել: ՀՀ կառավարությունը շարունակում է մեծ քանակով և ծավալներով փոփոխություններ կատարել ԱԺ կողմից ընդունված պետական քյուջեներում: Բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկման ժամանակ պատգամավորների բացարձակ մեծամասնությունը չի հետաքրքրվում դրանց հիմքերի, ծավալների, քանակների, պատճառների, ազդեցության, հատկացված միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործման և այլ հարակից հարցերով:

Խորհրդարանական վերահսկողության Սահմանադրական գործառույթի ընկալում չկա գործադիր և օրենսդիր մարմնում աշխատող բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասի շրջանում: Բնապահպանության նախարարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառույցների մասին պատգամավորի^{xxxi} հարցին պատասխանելիս ՀՀ արդարադատության նախարար Արտակ Չեյնայանը թվարկում է իր կարծիքով վերահսկող կառույցները. «Հստակ պատասխանում եմ. բնապահպանության նախարարության գործունեությունը վերահսկելու են իրավապահ մարմինները, պալատը, Կառավարությունը, վերահսկողության ծառայությունը»^{xxxii}: ՀՀ արդարադատության նախարարի պատասխանում վերահսկող կառույցների շարքում բացակայում է ԱԺ-ն:

Խորհրդարանական վերահսկողության հարցին ԱԺ-ն անդրադարձել է կառավարության կառուցվածքի փոփոխությունների քննարկման ժամանակ: «Իմ քայլը» հեղինակ էր ընդդիմադիր պատգամավորի դիտարկումը^{xxxiii}, որ կառավարության կառուցվածքի առաջարկվող տարբերակում պետական կառավարման մի մեծ հատված դուրս է մնում ԱԺ վերահսկողությունից^{xxxiv}: Մեկ այլ ընդդիմադիր պատգամավորի կարծիքով պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ ՊԵԿ) «շարունակում է դուրս մնալ խորհրդարանական վերահսկողական մեր գործառույթից»^{xxxv}: 2020թ. ապրիլի 28-ին իր ելույթում որևէ խմբակցությունում չընդգրկված անկախ պատգամավորը^{xxxvi} նշում էր, որ ՀՀ կառավարության կողմից «առաջարկվող նախագծով խորհրդարանից, ըստ էության, վերցվում է կարելուագույն լիազորություններից մեկը՝ գործադիր իշխանության ծախսերը վերահսկելու լիազորությունը»^{xxxvii}: Մեկ ուրիշ ընդդիմադիր պատգամավոր^{xxxviii} իշխանական պատգամավորին^{xxxix} քննադատում էր, քանի որ վերջինս հայտարարել էր, որ կառավարության գործունեության կարգը որոշողը կառավարությունն է: Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 147 հոդվածին ընդդիմադիր պատգամավորը պնդում էր, որ կառավարության գործունեության կարգը սահմանվում է օրենքով և որ իր հայտարարությամբ իշխանական խմբակցության ներկայացուցիչը հերթական անգամ առիթը բաց չի թողնում «զնդակահարել խորհրդարանական վերահսկողության ինստիտուտը»: Մեկ ուրիշ իշխանական պատգամավոր^{xl} հայտարարում էր, որ ՀՀ կառավարության ներկայացրած նախագիծը «Կառավարության աշխատանքներն արդյունավետ դարձնելու մասին նախագիծ է եւ չի վերաբերում ԱԺ վերահսկողական գործիքներն ավելացնելուն»: Մեկ այլ ընդդիմադիր հարցնում էր^{xli}, թե «քանի որ նախկինը մերժելով՝ ներկայի մասին ենթ խոսում, ընդդիմությանը նույն նախկին տված լծակները՝ վերահսկողության առումով, նոր Կառավարությունն ի՞նչ նոր լծակներ է նախատեսում ընդդիմությանը վերահսկողության առումով»: Մեկ այլ ընդդիմադիր^{xlii} արձանագրում էր. «...», որ խորհրդարանական վերահսկողության այդ դաշտը ձեւակերպելու գործընթացում, կներեք, բայց Կառավարությունը, կարծես թե, դիտորդի կարգավիճակ ունի, եւ ամբողջ պատասխանատվությունը խորհրդարանի վրա է դրվում, որովհետեւ, մասնավորապես, մեր գործընկերները եւս մատնանշեցին, որ Կառավարությունն ընդամենը պետք է կառուցվածքային փոփոխությունները ներկայացնի: Վերահսկողության վերաբերյալ մնացած գործընթացները մենք պետք է անենք»: Մեկ այլ ընդդիմադիր արձանագրում էր^{xliii},

որ ընդդիմադիր տարիներին Ն. Փաշինյանը հաճախ քննադատում էր իշխանություններին ընդդիմությանը վերահսկողական լծակներից զրկելու համար և առաջարկում էր վերջիններիս տեղեր հատկացնել տարբեր մարմիններում:

Իշխանությունները սովորաբար «արձանագրել են» խորհրդարանական վերահսկողության բնագավառում իրենց նվաճումները: 2018թ. հունվարին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդարանի աշխատանքի որակի աճ էր արձանագրել^{xliv}: Նրա կարծիքով Հայաստանին պետք է այնպիսի խորհրդարան, որը ոչ միայն կընդունի բոլոր անհրաժեշտ օրենքները, այլև կիրականացնի արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն: Սերժ Սարգսյանը կարծիք էր հայտնել, որ այդ առումով ԱԺ-ն ճիշտ ճանապարհին է և որ ԱԺ «աշխատակազմը նաև պետք է փորձագիտական աջակցություն տրամադրի ոչ միայն օրենսդրության մշակման, այլ գործադիր իշխանության հանդեպ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ»:

2019թ. ՀՀ վարչապետը հայտարարում էր, որ «Միանշանակ է, որ պետական մարմինները պետք է լինեն խորհրդարանական վերահսկողության ներքո»^{xlv}: «Բարգավաճ Հայաստան»-ի պատգամավորի^{xlv}, գործադիր պաշտոնյաների և ԱԺ պատգամավորների միջև հաղորդակցության վերաբերյալ հարցին ի պատասխան վարչապետը հայտարարում էր, որ խորհրդարանական վերահսկողությունը պետք է լիարժեք գործի: Հակակշիռների և փոխգապումների մասին «Լուսավոր Հայաստան»-ի պատգամավորի^{xlvii} հարցին վարչապետը պատասխանում էր. «Ինչ վերաբերում է սուպերվարչապետական համակարգին, ես հույս ունեմ, որ դուք նկատում եք, որ ՀՀ-ում խորհրդարանի դերը եւ վերահսկող գործառույթները մեծանում են: Եթե պետք են կոնկրետ օրինակներ, ես կարող եմ բերել կոնկրետ օրինակներ: Համենայն դեպս, այն ակտիվությունը, որով կառավարության անդամները եւ առընթեր մարմինների անդամները շփվում են եւ հաշվետու են լինում խորհրդարանական խմբակցություններին, կարծում եմ, որ եթե աննախադեպ չի, աննախադեպ է ժամկետի եւ խտության առումով, եւ այդ ճանապարհը, այդ խտությունը միանշանակ գնալով կմեծանա: Այսինքն՝ կառավարության եւ անձամբ իմ շահագրգռությունն է, որ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմներն առավել գործուն լինեն, որովհետեւ դա, ըստ էության, օգտակար է նաեւ կառավարության ղեկավարության համար, որպեսզի մենք լիարժեք տիրապետենք, թե ինչ է տեղի ունենում պետական կառավարման համակարգում»^{xlviii}:

ՀՀ-ում խորհրդարանի դերի և վերահսկող գործառույթների մեծանալու վերաբերյալ իշխանության ներկայացուցիչների ընդհանրական հայտարարությունները կոնկրետ դեպքում հակադրվում են ԱԺ-ին ոչ հարիր գործելաոճի և բառամթերքի հետ: 2020թ. մայիսի 6-ին ԱԺ-ն արժանացավ «Ինչ որ պետք է, այն էլ բանակցում ենք», կամ «Մեզ ոչ մեկը չի կարող ասել՝ հա՛, այդ ի՞նչ եք բանակցում» տեսակի պատասխանների^{xlix}: Նմանապես, 2022թ. հունվարի 17-ին, ԱԺ Նախագահի տեղակալը, ով որպես հայ-թուրքական բանակցություններում հայկական կողմի ներկայացուցիչ կատարում է գործադիր պարտականություն, ԱԺ նիստի ժամանակ հայտարարեց^l, որ կանի այն ինչ կուզի, ապա լքելով Նախագահությունը գնաց ընդդիմադիրների հետ «հաշիվ պարզելու»^{li}:

8-րդ գումարման ԱԺ գործունեության ընթացքում հնչած առանձին հայտարարություններից տպավորություն է ստեղծվում, որ ԱԺ մեծամասնությունը ցանկանում է վերահսկողություն իրականացնել ոչ թե գործադիր, այլ խորհրդարանական փոքրամասնությունների նկատմամբ: ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահը^{lii} հայտարարում էր. «Մենք ուզում ենք, որ Սեյրան Օհանյանը գա Պաշտպանության հանձնաժողովի նախագահի տեղակալի կարգավիճակով, որովհետեւ շատ ինֆորմացիայի է տիրապետում, և մենք շատ հարցեր ունենք հենց Սեյրան Օհանյանին»^{liii}:

խորհրդարանի մշտական հանձնաժողովի նախագահը չի ասել, որ ինքը հարցեր ունի իր կողմից ղեկավարվող մշտական հանձնաժողովի ոլորտի գերատեսչություններին, այլ ընդդիմության ներկայացուցչին: Եթե հաշվի առնենք, որ նախկինում հանձնաժողովի նախագահին հետաքրքրող հարցը վերաբերում էր ենթադրաբար ընդդիմադիր պատգամավորին^{iv} պատկանող առանձնատանը^{lv}, ապա կարելի է ենթադրել, որ նրա հարցերը վերաբերում էին ոչ թե պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտներին, այլ նախկինում կատարված առերևույթ հանցագործությունների, որոնք պետք է լինեն ոչ թե ԱԺ մշտական հանձնաժողովի, այլ իրավապահների ուսումնասիրության առարկա:

ԱԺ իշխանական խմբակցության ներկայացուցիչները տարանջատում են «սեփական» վերահսկողությունն «ընդդիմադիրների» վերահսկողությունից: Իշխանական պատգամավորներից մեկը հայտարարում էր^{lvi}, որ «իր» վերահսկողական գործառույթի շրջանակներում իշխանական խմբակցությունը պետական պաշտոնյաներին հրավիրում է քննարկումների և ընդդիմադիր խմբակցություններին առաջարկում էր նույնն անել: Նմանապես, ԱԺ նախագահն ընդդիմադիրներին առաջարկում էր^{lvii}, որ կառավարության կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՊՈԱԿ) կրճատումից հետո «կվերահսկեք, կտեսնեք՝ ով էր ճիշտ, որ ՊՈԱԿ-ն արժեք պահել, որը՝ չէ»: Իշխանական խմբակցության մեկ այլ պատգամավոր տարբերակում է «իշխանական» և «ընդդիմադիր» վերահսկողությունը և առաջարկում^{lviii}, որ «Մենք Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում եթե տեղ ունենք բարելավելու, ընդդիմության գործիքակազմը պետք է բարելավենք: Կառավարող ուժը այնուամենայնիվ հենարանն է: Մենք նույն կուսակցության անդամներն ենք»^{lix}: Մեկ այլ իշխանական պատգամավոր ընդգծում է^{lx}, որ արտաքին քաղաքականության մշակումը գործադիր իրավունքը և պարտականությունն է, ընդգծելով, որ այդ գործում խորհրդարանն անելիք չունի, սակայն չի նշում խորհրդարանի վերահսկողական գործառույթի մասին, որը տարածվում է նաև արտաքին քաղաքականության վրա^{lxi}: 2020թ. մայիսի 6-ին ընդդիմադիր պատգամավորի^{lxii} հարցին ՀՀ վարչապետի պատասխանը վկայում է, որ գործադիրը ևս համարում է, որ արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերից մեկի հետ կապված ԱԺ-ն անելիք չունի^{lxiii}:

3.1. Ժողովրդավարության վիճակը Հայաստանում

2021թ. անցումային տնտեսություններում ժողովրդավարության վիճակի վերաբերյալ իր տարեկան գեկույցներում Freedom House-ը Հայաստանը դասակարգում էր «կիսակոնստիդացված ավտորիտար կառավարման» համակարգ ունեցող երկրների շարքին^{lxiv}: «Կիսակոնստիդացված ավտորիտար կառավարման» համակարգ ունեցող երկրները փորձում են քողարկել իրենց ավտորիտար բնույթը, անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում ժողովրդավարական հաստատությունների և պրակտիկայի հանդեպ: Այդ երկրները չեն բավարարում ինքնակառավարման և ժողովրդավարության նվազագույն պահանջները և բնութագրվում են հետևյալ կերպ.

- Իշխանությունը կենտրոնացած է, իշխանության կենտրոնական և տեղական մարմինները ժողովրդավարական և հաշվետու չեն:
- Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործունեականիզմներ գոյություն չունեն: Կայունությունն ապահովվում է ոչ ժողովրդավարական եղանակներով:

- Չնայած կառավարությունը խրախուսում է կարևոր սոցիալական դեր ունեցող հասարակական կազմակերպությունների գործունեությունը, այն թշնամաբար է տրամադրված քննադատության նկատմամբ:

Չնայած վերը նշվածը բնութագրել է Հայաստանի կառավարման համակարգը, խորհրդարանական ընդդիմությունը հազվադեպ է մարտահրավեր նետել կառավարությանը: Հայաստանի կառավարությանը անվստահություն հայտնելու փորձ «հրաշալի քառյակի» կողմից արվել է 2014թ.^{lxv}:


Անցումային տնտեսություններում ժողովրդավարության վիճակի վերաբերյալ իր տարեկան զեկույցներում ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող երկրների շարքին դասակարգելիս, Freedom House-ը հաշվի է առնում կառավարման համակարգերի կայունությունը, ժողովրդավարությունը և հանրության առաջ հաշվետվողականությունը, և թե արդյոք գոյություն ունի՞ զսպումների և հակակշիռների համակարգ^{lxvi}:

Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով քաղաքացիների կողմից ընտրված իշխանությունը, գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատումը, գործադիրի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը, մարդու, քաղաքական փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը, ազատ մամուլը երկիրը ժողովրդավարական լինելու համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմաններ են: Ժողովրդավարությունը չի ենթադրում մեծամասնության իշխանություն փոքրամասնության կամ փոքրամասնության իշխանություն մեծամասնության նկատմամբ:

Հանրությունը պետք է վստահ լինի, որ կառավարությունը գործում է խորհրդարանի կողմից ընդունված օրենքներին համապատասխան և նպատակային, արդյունավետ ու խնայողաբար է օգտագործում հատկացված ռեսուրսները: Ընտրած ներկայացուցիչների միջոցով գործադիր իշխանության նկատմամբ քաղաքացիների վերահսկողությունը ժողովրդավարության առանցքային առանձնահատկություններից մեկն է: Ավտորիտար երկրներում քաղաքացիները չեն վերահսկում իշխանությունների գործունեությունը: Ընդհակառակը, առանց որևէ վերահսկողության իրենց կողմից տնօրինվող ռեսուրսները իշխանություններն օգտագործում են քաղաքացիների կյանքի և գործունեության նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար:

2022թ. ապրիլին^{lxvii} և փետրվարին^{lxviii} Freedom House-ը Հայաստանը դասեց անցումային կամ հիբրիդային ռեժիմ ունեցող երկրների շարքին և ճանաչեց մասամբ ազատ (համապատասխանաբար պատկեր 1 և պատկեր 2): Անցումային կամ հիբրիդային կառավարման ռեժիմ ունեցող երկրի իշխանությունը սովորաբար ընտրված է, սակայն երկրի ժողովրդավարական հաստատությունները փխրուն են և քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության հարցում լրջագույն մարտահրավերներ կան^{lxix}:


Պատկեր 1. Հայաստանը 2022թ. հիբրիդային ռեժիմ ունեցող երկրների շարքին դասելու վերաբերյալ Freedom House-ի կայքէջի պատկերը



Աղբյուր. Freedom House

Հայաստանը հիբրիդային ռեժիմ ունեցող երկրների շարքին դասելիս Freedom House-ը 4 հնարավորից 1-ական միավոր է շնորհել դատական համակարգի ազատության և դատարանների գործունեության համար: Կազմակերպությունը 2-ական միավոր է շնորհել կառավարության և օրենսդիր իշխանության ընտրության, ընտրությունների ժամանակ արձանագրված առանձին դեպքերի (ծայների գնում և վարչական լծակների օգտագործում), բնակչության տարբեր խմբերի իրավունքների և հնարավորությունների, պետական քաղաքականությունների վերաբերյալ ինքնուրույն և ազատորեն որոշումներ կայացնելու կառավարության կարողության (երկու մեծահարուստ գործարար խորհրդարան են անցել իշխող ուժի ցուցակով, ինչպես նաև մեծացել է Ռուսաստանի ազդեցությունը), կոռուպցիայի դեմ պայքարի (GRECO-ի կարծիքով ՀՀ կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության մեջ առկա լուրջ թերություններ կան), կառավարության գործունեության թափանցիկության, մամուլի, կրոնական և սոցիալական ազատությունների, կրթական համակարգի քաղաքական միջամտությունից ազատ լինելու և ակադեմիական ազատությունների, ոստիկանության կողմից բռնաճնշումների ենթարկվելու, ազատ տեղաշարժվելու հնարավորությունների և կրթություն ստանալու (բարձրագույն կրթության համակարգում կաշռակերության պատճառով), հավասար հնարավորությունների և տնտեսական շահագործումից պաշտպանվածության աստիճանի (թրաֆիքինգի դեմ պայքարը բավարար չէ) համար: Freedom House-ը 4 հնարավորից 3-ական միավոր է շնորհել ընտրական օրենսդրության և կիրարկման, կուսակցություններ ձևավորելու և ընդդիմության իշխանության գալու իրատեսական հնարավորությունների, անհատական կարծիք հայտնելու, հավաքների ազատության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և արհմիությունների գործունեության, գործարարությամբ զբաղվելու և սեփականությունն ազատ տնօրինելու համար:

Պատկեր 2. Freedom House-ի 2022թ. Հայաստանում ժողովրդավարական իրավիճակի գնահատման վերաբերող էջի պատկերը



Աղբյուր. Freedom House

Մոտավորապես նույն գնահատականներով Freedom House-ը Հայաստանը դասակարգեց մասամբ ազատ երկրների թվում^{lxx}:

Բաց կառավարության գործընկերության^{lxxi}, Human Rights Watch-ի^{lxxii}, Արժույթի Միջազգային Հիմնադրամի^{lxxiii}, GRECO-ի^{lxxiv} և այլ միջազգային նախաձեռնությունների, կազմակերպությունների և կառույցների զեկույցները, հաշվետվությունները, գնահատականները և առաջարկությունները լրացնում են վերը նշված սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական և այլ համակարգերի կայուն և հուսալի աշխատանքի վերաբերյալ պետական մարմինների կողմից խորհրդարանին ներկայացվող հաշվետվությունները և տեղեկատվությունը:

3.2. Բյուջետային գործընթացի մասնակցությունը

Ժողովրդավարությունը ենթադրում է իշխանությունների ձևավորում ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով: Այն նաև ենթադրում է հանրային մասնակցություն կարևորագույն քաղաքական փաստաթղթերի քննարկմանը: Աժ մշտական հանձնաժողովները վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ (կանոնակարգի հոդված 122): «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման: Հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (<https://www.e-draft.am/>) հրապարակման եղանակով^{lxxv}: Նախարարությունը համակարգում է միասնական կայքի աշխատանքներն ու իրականացնում է մշտադիտարկում: Այս ուսումնասիրությունը չի հայտնաբերել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի մշտադիտարկման որևէ հաշվետվություն: Աժ-ն օրենսդրական նախագծերի քննարկման միասնական հարթակում չի տեղադրում Աժ-ում հեղինակված նախագծերը և դա հիմնավորում է համապատասխան իրավական կարգավորումների բացակայությամբ^{lxxvi}:

Չի հաջողվել գտնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված օրենսդրական նախագծերի հանրային քննարկումներ իրականացնելու պահանջի իրականացման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության վկայություն: ՀՀ կառավարության կողմից մշակված, հանրության լայն շերտերին վերաբերող մի շարք օրենքների նախագծեր չեն անցել հանրային քննարկում: Հանրային քննարկում չէր անցել 2020թ. հունիսի 25-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը^{lxvii}: Հանրային քննարկում չի անցնում նաև ՀՀ կառավարության որոշումների էական մասը^{lxviii}:

Չնայած ՀՀ վարչապետի որոշման պահանջին, հանրային քննարկում չեն անցել պետական մարմինների մեծ մասի 2022թ. բյուջետային հայտերը: ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 18-ի №35-Ա որոշման հավելվածի 19-րդ կետերով նախատեսվում էր, որ բյուջետային հայտ ներկայացնող պետական մարմինները պետք է մինչև մարտի 15-ը ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ ՀՖՆ) ներկայացրած իրենց 2022-2024թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և 2022թ. պետական բյուջեի հայտերը հրապարակեն իրենց ինտերնետային կայքում: Նույն որոշման հավելվածի 24 կետը պահանջում էր, որպեսզի հայտատուները բյուջետային հայտերի շուրջ քննարկումներ կազմակերպեն իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ ԶԿ-ների հետ և քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը, ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթեթը ներկայացնեն ՀՀ ՀՖՆ:

ՀՀ ՀՖՆ ներկայացրած ամփոփաթեթերի վերաբերյալ հարցումներ են ուղարկվել բոլոր նախարարություններին և մի շարք ԶԿ-ների, որոնց պատասխան գրությունների պատճենները ներկայացված են հավելված 11-ում և 12-ում: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ ԱԳՆ) հայտնել է, որ 2021թ. մարտի 29-ին իր ինտերնետային կայքի միջոցով շահագրգիռ ՀԿ-ներին հրավիրել է մասնակցելու ՄԺԾԾ և ՀՀ 2022թ. պետական բյուջեի մշակման աշխատանքների շրջանակներում ՀՀ ԱԳՆ բյուջետային հայտի շուրջ քննարկումներին: ՀՀ ԱԳՆ-ն չի հրապարակել հայտը, չնայած դա մինչև մարտի 15-ն անելը ՀՀ վարչապետի որոշման պահանջ էր: ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ ԲՏԱՆ) հայտնել է, որ «2022-2024թթ. ՄԺԾԾ ամփոփ հայտը ՀՀ ՀՖՆ ներկայացնելուց հետո, համաձայն ՀՀ վարչապետի հունվարի 18-ի №35-Ա որոշման հավելվածի 19-րդ կետի՝ տեղադրվել է ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում» սակայն ոլորտի շահագրգիռ ԶԿ-ների կողմից դիտողություններ և առաջարկություններ չի ստացել: ԿԳՄՍ նախարարությունը հայտնել է, որ 2021թ. մարտի 18-ին հայտերը տեղադրել են նախարարության պաշտոնական կայքում, սակայն «քաղաքացիական հասարակության շահագրգիռ կազմակերպությունների կողմից որևէ առաջարկություն չի ներկայացվել»: ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ քննարկումներ չեն եղել զաղտնիության պատճառով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (այսուհետ՝ ԱՍՀ) նախարարությունը գրությանը պատասխանել է բոլոր նախարարություններից ու: 2022թ. հունվարի 18-ի հարցմանն ի պատասխան ուղարկված գրությունը թվագրված է 2022թ. փետրվարի 19-ով, իսկ էլեկտրոնային փոստում ստացվել է 2022թ. փետրվարի 21-ին: ԱՍՀ նախարարությունը հայտնել է, որ մի քանի ԶԿ առաջարկել են առնվազն պահպանել 2021թ. ֆինանսական ցուցանիշները: ՀՀ արդարադատության նախարարությունը քննարկումներ չկազմակերպելը հիմնավորել է համավարակով:

Բյուջետային գործընթացն սկսելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշման հանրային քննարկումներ իրականացնելու և դրա վերաբերյալ ՀՀ ՀՖՆ ներկայացված

տեղեկատվությունը տրամադրելու խնդրանքով գրություն է ուղղվել ՀՀ ՖՆ, որը հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք պետք է կատարվի: Մի քանի պետական մարմնից տեղեկատվություն է ստացվել, որ ՀՀ ՖՆ-ն գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որն իր հերթին շրջաբերական գրությամբ հայտատու մարմիններին հանձնարարել է քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ՖՆ: Դա նշանակում է, որ 2021թ. ապրիլին ՀՀ ՖՆ-ն չի ստացել հանրային քննարկումների վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշմամբ նախատեսված տեղեկատվությունը և միջոցներ չի ձեռնարկել այդ ուղղությամբ: Երբ ՀՀ ՖՆ-ն տրամադրել է հայտատու մարմինների պատասխանը, պարզվել է, որ բոլորը, բացառությամբ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ԱՍՀ նախարարության, հանրային քննարկումներ չեն կազմակերպել:

3.3. Բռնությունը Հայաստանի Ազգային Ժողովում

Մի շարք դեպքերում գաղափարական բանավեճի հարթակ ծառայելու փոխարեն Հայաստանի խորհրդարանը դարձել է բռնության թատերաբեմ:

1996թ. սեպտեմբերի 22-ին կայացած նախագահական ընտրությունների արդյունքներից դժգոհ մարդկանց խումբը, հետևելով նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանի «եթե քսան րոպեից չվերադառնամ, եկեք իմ հետևից» կոչին, ներխուժեց ԱԺ և ծեծի ենթարկեց ԱԺ նախագահ Բաբկեն Գուրգենի Արարքեցյանին («Հանրապետություն») և փոխնախագահ Արա Հակոբի Սահակյանին («Հանրապետություն») ^{lxxxix}։ Սեպտեմբերի 26-ին ընդդիմադիր պատգամավորներն ԱԺ-ում ծեծի ենթարկվեցին, որի ժամանակ բռնության ենթարկվեցին Սեյրան Մարտիրոսի Ավագյանը և Շավարշ Միքայելի Զոհարյանը («Ազգային ժողովրդավարական միության»), Պարույր Արշավիրի Հայրիկյանը («Ազգային ինքնորոշում միավորում») և Ռուբիկ Կարապետի Հակոբյանը ^{lxxx}։

1999թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատմության ամենասարսափելի ոճրագործությունը ^{lxxxi}։ ՀՀ կառավարության անդամներին բանավոր հարցեր ուղղելիս տեղի ունեցած ահաբեկչության զոհ դարձան ԱԺ նախագահ Կարեն Սերոբի Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Չավենի Սարգսյանը, ԱԺ նախագահի տեղակալներ Յուրի Գուրգենի Բախշյանը և Ռուբեն Խաչիկի Միրոյանը, պատգամավորներ Միքայել Խաչիկի Զոթանյանը, Արմենակ Մինասի Արմենակյանը և Հենրիկ Հայրիկի Աբրահամյանը, փոխվարչապետ Լեոնարդ Գեորգիի Պետրոսյանը ^{lxxxii}։

ՀՀ ԱԺ-ում բախում եղավ 2002թ. հունիսի 10-ին, երբ ԱԺ նախագահ Արմեն Ավագի Խաչատրյանը («Միասնություն») հրաժարվեց «Հոկտեմբերի 27»-ի գործով ժամանակավոր հանձնաժողովի մայիսի 29-ի եզրակացության հիման վրա օրակարգ մտցնել նախագահ Զոհարյանի պաշտոնանկության գործընթաց սկսելու մասին «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության առաջարկը ^{lxxxiii}։ Դեմ էին «Միասնություն»-ը, «Օրինաց Երկիր»-ը, Հայ հեղափոխական դաշնակցությունը (այսուհետ՝ ՀՀԴ) և Ազրոարդյունաբերողները։ Պատգամավորների մի խումբ հորեն թռչունի Սարգսյանի («Հայաստանի կոմունիստական կուսակցություն»), «Ժողովրդի ձայն»-ից Արամայիս Չալիբեկի Բարսեղյանի, Ստեփան Հրաչիկի Չաքարյանի և Մանուկ Հովհաննեսի Գասպարյանի, Ալեքսան Համբարձումի Կարապետյանի («Իրավունք և միաբանություն») ու Ղուկաս Իշխանի Ուլիխանյանի («Հայաստան») գլխավորությամբ զավթեց ամբիոնը։ Բախումը շարունակվեց հաջորդ օրը, 2002թ. հունիսի 11-ին, երբ մեծամասնությունը, բնապահպանության նախարար Վարդան Այվազյանի և Սուբիաս Հեգեյի Ավետիսյանի («Միասնություն») գլխավորությամբ պաշտոնանկություն պահանջողներին մոտ չթողեց ամբիոնին։ Երբ Լեոն Հրաչի Սարգսյանը («Ժողովրդական պատգամավոր») բռնաբեկ հարվածեց Արամայիս Բարսեղյանին ^{lxxxiv}։ Հակոբ Վարդանեսի Հակոբյանը («Հայաստան») սկսեց հայհոյել ^{lxxxv}։ Ռոբերտ Զոհարյանը չէր բացառել խորհրդարանի լուծարումը ^{lxxxvi}։

Հայաստանի խորհրդարանում բռնությունները շարունակվեցին նաև 2018թ. թավշյա հեղափոխությունից հետո։ 2020թ. մայիսի 8-ին Սասուն Մեխակի Միքայելյանը («Իմ քայլը») հարվածեց Էդմոն Հրաչիկի Մարությանին («Լուսավոր Հայաստան»), ինչից հետո դա հիմնում ձեռնամարտ սկսվեց ^{lxxxvii}։

2020թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության վարչապետը, Ադրբեջանի Հանրապետության նախագահը և Ռուսաստանի Դաշնության նախագահը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ամբողջական հրադադարի և ռազմական

գործողությունների ավարտի մասին հայտարարություն տարածեցին^{lxxxviii}։ Հայտարարությունն անսպասելի էր հանրության զգալի մասի համար, քանի որ այդ օրն ավելի վաղ Արցախի պաշտպանության բանակը և ՀՀ պաշտպանության նախարարությունը հաղորդում էին Շուշի-Քարին տակ հատվածում ընթացող ինտենսիվ մարտերի, ադրբեջանական կորուստների և նահանջի մասին^{lxxxix}, իսկ վարչապետ Փաշինյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում էր կատարել Շուշիի համար շարունակվող մարտերի վերաբերյալ^{xc}, չնայած այն հանգամանքին, որ Արցախի նախագահի խոսնակը գրառում էր կատարել Շուշին հայկական վերահսկողությունից դուրս լինելու մասին^{xci}։ Նույն օրը մարդկանց մի խումբ ներխուժեց ԱԺ շենք^{xcii}։ ԱԺ նախագահ Արարատ Սամվելի Միրզոյանը («Իմ քայլը») գիշերը դաժան ծեծի ենթարկվեց փողոցում^{xciii}։

2021թ. օգոստոսի 24-ին ԱԺ նիստերի դահլիճում ծեծկռտուք սկսվեց, երբ ԱԺ նախագահը որոշեց դահլիճից հեռացնել Աննա Արայի Մկրտչյանին («Պատիվ ունեմ») ^{xciv}։ Օգոստոսի 25-ին երկու անգամ ծեծկռտուք տեղի ունեցավ իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների միջև, որոնցից առաջինն սկսվեց, երբ Սեյրան Մուշեղի Օհանյանը («Հայաստան») իրեն «արա» արտահայտությամբ դիմելու համար շիշը նետեց Հայկ Չարեհի Սարգսյանի («Քաղաքացիական պայմանագիր») վրա^{xcv}, իսկ երկրորդը, երբ Վահագն Հովսեփյանը («Քաղաքացիական պայմանագիր») Վահե Ալբերտի Հակոբյանին («Հայաստան») հարվածեց անհասկանալի արտահայտությամբ («այ տվա») դիմելու համար^{xcvi}։

Միջազգային հանրապետական ինստիտուտի պատվերով 2021թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 5-ը հեռախոսային հարցազրույցների մեթոդով հանրային կարծիքի ուսումնասիրություն էր իրականացվել 18 տարին լրացած 1512 անձանց շրջանում^{xcvii}։ Հարցվածների 50%-ն «ընդհանրապես բավարարված չէ», 17%-ը «բավարարված չէ» և միայն 7%-ն է «լիովին բավարարված», իսկ 24%-ը «որոշ չափով բավարարված» ԱԺ աշխատանքով։

3.4. 2015թ. սահմանադրական փոփոխությունները

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց Անկախության հռչակագիրը^{xcviii}։ 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի հանրությունը քվեարկեց Անկախության համար։ 1995թ. հուլիսի 5-ին քաղաքացիները հավանություն տվեցին Սահմանադրությանը, որով Հայաստանը դարձավ Նախագահական Հանրապետություն։ 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով Հայաստանը դարձավ կիսանախագահական Հանրապետություն։ 2015թ. դեկտեմբերի 6-ի Սահմանադրական հանրաքվեից հետո Հայաստանը կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարեց խորհրդարանականի։

2015թ. սահմանադրական փոփոխությունների նախագծի հեղինակների կարծիքով կիսանախագահական կառավարման համակարգում իշխանությունը գերանձնավորված է, ինչը թույլ չի տալիս հասնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման, բացակայում է գործադիր իշխանության նկատմամբ գործուն քաղաքական վերահսկողությունը^{xcix}։ Նախագծի հեղինակները կարծում էին, որ ԱԺ-ն ունի գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործուն միջոցներ և պնդում էին, որ «Խորհրդարանի երկրորդ մեծ քաղաքական ուժը, ունենալով վերահսկողության նոր և մեծ լծակներ, կկարողանա իր քննադատության և այլընտրանքներ առաջարկելու միջոցով հակադրվել քաղաքական մեծամասնությանը, ազդել հասարակական կարծիքի վրա և հող նախապատրաստել կառավարական պատասխանատվությունն ստանձնելու համար»։ Նախագծի հեղինակները նաև կարծում էին, որ «Վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք, բայց նա, ի տարբերություն գործող համակարգում Հանրապետության նախագահի, մշտապես գտնվում է պառլամենտական վերահսկողության ներքո»։ ԱԺ ղեկավար կազմի հետ հանդիպման ժամանակ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը կարծիք էր հայտնել, որ ԱԺ-ն պետք է իրականացնի արդյունավետ վերահսկողություն և այդ առումով այն ճիշտ ճանապարհի վրա է^c։

2018թ. իշխանափոխությունը տեղի ունեցավ ոչ թե Սահմանադրությամբ նախատեսված ընտրությունների, այլ փողոցներում պայքարի և իշխանության վրա ճնշման եղանակով։ 2018թ. դեկտեմբերին և 2021թ. հունիսին գործող վարչապետի ղեկավարած քաղաքական ուժը հաղթեց խորհրդարանական ընտրություններում։

3.5. Խորհրդարանի ձևավորում և կառուցվածքը

ԱԺ-ն ձևավորվում է ընտրությունների միջոցով: Չնայած ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների ընդհանուր թվի աճին, քվեարկությունների մասնակիցների թիվը նվազման միտում ունի: Եթե 2007-2017թթ. ԱԺ ընտրություններին մասնակցել է ընտրողների 60-63 տոկոսը, ապա 2018թ. և 2021թ. ընտրություններին մասնակցել է 49 տոկոսը (աղյուսակ 1):

21-րդ դարում ձևավորված բոլոր գումարումների ԱԺ-երում իշխող ուժը մշտապես մեծ ներկայություն է ունեցել: Մինչ այժմ կայացած ԱԺ բոլոր ընտրություններում հաղթել է Հայաստանում առավել մեծ իշխանություն ունեցող պաշտոնյայի ղեկավարած կամ նրա աջակցությունը վայելող քաղաքական ուժը: Եթե մինչև 2018թ. առավել մեծ իշխանությամբ օժտված էր ՀՀ Նախագահը, ապա 2018թ. ապրիլից՝ ՀՀ վարչապետը: Բոլոր դեպքերում իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների մեծ մասն այս կամ այն ձևով իրենց անվերապահ հավատարմությունն են արտահայտել առաջնորդին:

Աղյուսակ 1. 2007-2021թթ ԱԺ ընտրությունների մի քանի հիմնական ցուցանիշներ (2-4 սյունյակներում՝ մարդկանց թիվը)

	Ընտրող-ների թիվը	Մասնակից-ների թիվը	Հաղթողի թիվը	Նստավայրերի թիվը	Հաղթող ուժի ձայների տեսակարար կշիռը	
					Ընտրող-ների թիվում	Մասնակիցների թիվում
2021թ. ^{ci}	2,591,316	1,281,997	688,761	ԶԴ	27%	54%
2018թ. ^{cii}	2,591,276	1,261,105	884,864	ԻԶԴ	34%	70%
2017թ. ^{ciii}	2,585,134	1,575,786	770,441	ՀՀԿ	30%	49%
2012թ. ^{civ}	2,501,597	1,573,053	664,440	ՀՀԿ	27%	42%
2007թ. ^{cv}	2,319,722	1,391,540	458,258	ՀՀԿ	20%	33%

Աղբյուր. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք

Ծանոթություն. 2007թ. և 2012թ. դեպքում օգտագործվել են միայն համամասնական

ընտրություններին վերաբերող արձանագրության տվյալները

ԶԴ՝ Քաղաքացիական պայմանագիր, ԻԶԴ՝ Իմ քայլը դաշինք, ՀՀԿ՝ Հայաստանի

Հանրապետական կուսակցություն, Ընտրողների թիվը՝ Ընտրողների ցուցակներում

ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը, Մասնակիցների թիվը՝ Քվեարկության

մասնակիցների ընդհանուր թիվը, Հաղթող ուժը՝ Ամենաշատ ձայներ ստացած ուժը, Հաղթողի

ձայները՝ Ամենաշատ ձայներ ստացած ուժի ձայների թիվը

Նվազում է ԱԺ-ում գործող խմբակցությունների թիվը: Եթե 3-րդ գումարման ԱԺ-ում գործում էր 8 խմբակցություն, ապա 5-ում՝ 6, 6-ում՝ 4, իսկ 7-րդ և 8-րդ գումարման ԱԺ-երում՝ 3-ական խմբակցություն: Խմբակցություններում չընդգրկված պատգամավորները, որոնք հաճախ գործարարներ էին, սովորաբար «օժանդակում» էին կառավարությանը:

ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքացիների տեսակարար կշիռը վկայում է, որ հասարակության մի ստվար մասը չի մասնակցում ԱԺ ձևավորմանը:

Ելրակացություն

Աշխարհի ժողովուրդների պատմությունն արձանագրել է պետական իշխանության լծակներին տիրապետողների կողմից այդ իշխանությունը չարաշահելու, սեփական շահադիտական նպատակներով օգտագործելու, սխալվելու բազմաթիվ դեպքեր (դրանց ուսումնասիրությունը դուրս է այս հետազոտության շրջանակներից): Այդ իսկ պատճառով անհրաժեշտ և պարտադիր է, որպեսզի քաղաքացիները վերահսկողություն ունենան կառավարության նկատմամբ: Խորհրդարանի միջոցով գործադիր իշխանության նկատմամբ հանրության վերահսկողությունը ժողովրդավարության անբաժանելի մասն է: ՀՀ քաղաքացիները կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողությունը պատվիրակել են ՀՀ Ազգային ժողովին: Գործադիր իշխանության նկատմամբ ԱԺ վերահսկողությունը ժողովրդավարական պետություն ունենալու համար անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Հայաստանը փորձում է վերափոխել մինչև 2018թ. գոյություն հունցող «կիսակոնսոլիդացված ավտորիտար կառավարման» համակարգը և դառնալ լիարժեք ժողովրդավարական երկիր: Հայաստանը հանդիսանում է անցումային՝ հիբրիդային ռեժիմ ունեցող երկիր: Հիբրիդային ռեժիմների ժողովրդավարական հաստատությունները փխրուն են: Այդ երկրները լրջագույն մարտահրավերներ են առերեսում իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության հարցում: Հայաստանը դեռևս չի կարողանում երաշխավորել իր բոլոր քաղաքացիների, այդ թվում պատգամավորների անկախությունն ու ազատությունը: Ոչ անկախ, ճնշման ենթարկվող պատգամավորները չեն կարող իրականացնել ԱԺ վերահսկողական գործառնությունը:

Եթե խմբակցության որոշումների կատարումը պարտադիր է նրա կազմում ընդգրկված պատգամավորների համար և նրանք պետք է քվեարկեն համաձայն խմբակցության որոշման, ապա 100 և ավելի պատգամավորի առկայության կարիք չկա: Խմբակցության ղեկավարը կարող է քվեարկել և նրա ձայնը կունենա ԱԺ պատգամավորների ընդհանուր թվում խմբակցության պատգամավորների թվի տեսակարար կշիռը: Խմբակցությունից հեռացած պատգամավորի վերաբերյալ իշխանական պատգամավորի վերը հիշատակված գրառումը վկայում է, որ իշխող խմբակցության պատգամավորների մի մասի կարծիքով իրենց որոշ գործընկերը կամ գործընկերուհիներ պատգամավոր է ընտրվել ոչ թե իր գործունեության, գիտելիքների, հմտությունների և կարողությունների, այլ հիմնականում Նիկոլ Փաշինյանի հեղինակության հաշվին և հետևաբար պարտավոր է հավատարիմ լինել վերջինիս: Պարտավորվածության «զգացում» է, որ խորհրդարանին թույլ չի տալիս գործել լիովին անկախ: Պատգամավորների մի մասը կառավարությանը դիտարկում է որպես վերադաս և առանձին դեպքերում առաջնորդվում է կառավարության «առաջարկներով»:

Կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ցանկության և պատրաստության բացակայության վկայություն է նաև «ամեն ինչ շատ-շատ լավ է լինելու» ձևակերպմամբ ՀՀ վարչապետին վստահելու և սատարելու պատրաստակամությունը: Անորոշ է, թե ինչի նկատմամբ և ինչպես են ԱԺ-ն և պատգամավորը վերահսկողություն իրականացնելու ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ, եթե առկա չեն գործունեության արդյունքների կոնկրետ նպատակային ցուցանիշներ: Չկան վկայություններ, որ Հայաստանում օրենսդիր և գործադիր իշխանությունները դե ֆակտո բաժանվել և հավասարակշռվել են և ԱԺ-ն գործուն քաղաքական վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ինչը 2015թ. սահմանադրական փոփոխությունների նախագծի հեղինակների

կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի անցնելու հիմնական փաստարկներից մեկն էր:

Պատգամավորների և կառավարության անդամի վերը ներկայացված հայտարարությունները վկայում են, որ Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանության համակարգում խորհրդարանական վերահսկողության գործառույթի ըմբռնումը միանշանակ չէ: Խորհրդարանական վերահսկողության գործառույթի կարևորում չկա նույնիսկ ԱԺ ղեկավարության շրջանում: Դա է վկայում ՊՈԱԿ-ների կրճատման հարցի քննարկման ժամանակ ԱԺ նախագահի ընդդիմադիրներին ուղղված առաջարկությունը:

Սահմանադրությունը չի տարբերակում իշխանության և ընդդիմության կողմից վերահսկողությունը: «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ»: Սահմանադրության 149 հոդվածի տրամաբանությունից բխում է, որ ՀՀ կառավարությունը ցանկացած պարագայում պետք է ունենա ԱԺ մեծամասնության աջակցությունը: ԱԺ-ն կարող է կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնել, միայն եթե դրան մասնակցի իշխանական խմբակցությունը: Այլապես, խորհրդարանը ձախողում է իր սահմանադրական գործառույթներից մեկի իրականացումը: Իշխանական պատգամավորների կողմից որևէ հիմնավորմամբ գործադիրի նկատմամբ վերահսկողություն չիրականացնելը վտանգում է իշխանությունների տարանջատման և փոխզսպումների միջոցով պետական կառավարման կայուն համակարգ հաստատելու հնարավորությունը: Սա հատկապես վտանգավոր է, հաշվի առնելով կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման սահմանադրական պահանջը: Վերջին տարիներին Հայաստանում կուտակած փորձը և քվեարկությունների մի մեծ մասի արդյունքները վկայում են, որ խորհրդարանական մեծամասնությունը հակված չէ փոխհամաձայնությունների:

Վերահսկողությունը ընդդիմության գործառույթ դիտարկելու և կառավարության հենարան հանդիսանալու հիմնավորմամբ խորհրդարանական մեծամասնության կողմից վերահսկողության գործառույթը չկատարելու վտանգավորությունը հատկապես ակնհայտ է դառնում սահմանային դեպքերը դիտարկելիս: Եթե ընդդիմադիր խմբակցությունները որոշեն օգտվել քաղաքական պայքարի այնպիսի գործիքից, ինչպիսին բոյկոտն է, իսկ իշխանական խմբակցությունը, կառավարության հենարան հանդիսանալու հիմնավորմամբ չկատարի ԱԺ վերահսկողական գործառույթը, կառավարությունը կհայտնվի անվերահսկելի վիճակում: Իշխանական պատգամավորների կողմից կառավարության վերահսկողության իրենց գործառույթի ընկալումն ու դրա հետ կապված պրակտիկ աշխատանքների իրականացումը խիստ կարևոր է:

ԱԺ կանոնակարգը խմբակցություններին վերահսկողական գործառույթ չի վերապահում: Եթե մշտական հանձնաժողովների դեպքում կանոնակարգը հստակ սահմանում է, որ ի թիվս այլ գործառույթների մշտական հանձնաժողովներն ստեղծվում են խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար (հոդված 10, 12, 122), ապա կանոնակարգի խմբակցություններին վերաբերող 4-րդ գլխում «վերահսկողություն» բառն ընդհանրապես չի օգտագործվում:

Արդեն երկու տասնամյակ Հայաստանում գոյություն ունեցող պրակտիկայի համաձայն իշխանական խմբակցության պատգամավորները կառավարության և նրա առանձին անդամների հետ հարաբերվելու ավելի շատ հնարավորություններ ունեն, քան ընդդիմադիր խմբակցությունն ու նրա առանձին պատգամավորներ: Խորհրդարանական վերահսկողության գործառույթը ոչ թե իշխանական կամ ընդդիմադիր խմբակցությունների,

այլ ՀՀ Ազգային ժողովի գործառույթն է: Եթե որևէ խմբակցություն չի իրականացնում վերահսկողություն, նշանակում է իր վերահսկողական գործառույթը չի իրականացնում ամբողջ ԱԺ-ն:

ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահները մասնակցում են ՀՀ կառավարությունում և նախարարություններում ու գերատեսչություններում տարբեր հարցերի քննարկմանը: ՀՀ կառավարությունում ոլորտային հարցերի քննարկմանը մասնակցելուց հետո ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների համար դժվար կլինի անաչառ վերաբերմունք դրսևորել ԱԺ վերահսկողական գործառույթն իրականացնելիս: Ստացվում է, որ նրանք վերահսկողություն են իրականացնում այն որոշումների կատարման նկատմամբ, որոնց քննարկմանն ու կայացմանը իրենք մասնակցել են: Սովորաբար, եթե պաշտոնյաները պատասխանատվությամբ են մոտենում իրենց գործառույթներին, դա դժվար է իրականացնել:

«Վերադասից» ստացվող «առաջարկություններով» առաջնորդվելու օրինակ է ռազմական դրությունը հանելու վերաբերյալ հարցի քվեարկության ժամանակ արձանագրված դեպքը: Գործադիրին «վերադաս» դիտարկելու մեկ այլ նշան է հայ-թուրքական բանակցություններում հայկական կողմի հատուկ ներկայացուցչի գործառույթը ԱԺ նախագահի տեղակալին վերապահելը: ԱԺ-ն և առանձին պատգամավորները չեն կարող ԱԺ վերահսկողական գործառույթն իրականացնելիս անկախ գործել, եթե մասնակցել են գործադիրում որոշման կայացման քննարկմանը կամ իրենք են կատարել գործադիրի տվյալ գործառույթը:

ԱԺ-ն դիրքորոշում չի հայտնել ՀՀ կառավարության և պետական մարմինների կողմից օրենքների նախագծերի հանրային քննարկում իրականացնելու օրենսդրական պահանջի չկատարման վերաբերյալ: Չնայած կանոնակարգը նախատեսում է, որ ԱԺ մշտական հանձնաժողովները պետք է վերահսկողություն իրականացնեն օրենքների կատարման ընթացքի նկատմամբ, չի հաջողվել հայտնաբերել դեպքեր, երբ ԱԺ մշտական հանձնաժողովները բարձրաձայնեն և ՀՀ կառավարությունից պահանջեն իրականացնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված օրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկում: Հաշվի առնելով այն, որ ԱԺ-ն է ընդունում ՀՀ օրենքները, համապատասխան իրավակարգավորումների բացակայության հիմնավորմամբ օրենսդրական նախագծերի քննարկման միասնական հարթակում ԱԺ-ում հեղինակված օրենքների նախագծերը հանրային քննարկման չներկայացնելը ԱԺ կողմից ցանկության և կամքի բացակայության վկայություն է:

2022թ. բյուջետային հայտերի հանրային քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը մի քանի եզրակացությունների է հանգեցնում.

- ԱՍՀ նախարարությունից 2022թ. հունվարի-փետրվարին մեկ ամիս է պահանջվել հայտնելու համար, որ 2021թ. մարտ-ապրիլին 4 ԶՀԿ առաջարկել են 2022թ. համար առնվազն պահպանել 2021թ. ֆինանսական ցուցանիշները: Եթե այս տեղեկատվությունն առկա էր նախարարությունում, այն ուղարկելուն մեկ ամիս ժամանակ հատկացնելը կարող է վերահսկողների մոտ հարցեր առաջացնել նախարարությունում աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:
- ՀՀ արդարադատության նախարարությունը քննարկումներ չկազմակերպելը հիմնավորել է համավարակով: Նախարարությունը հաշվի չի առել այն հանգամանքը, որ իր որոշմամբ հանրային քննարկման պահանջ սահմանելիս ՀՀ վարչապետը ևս տեղյակ էր համավարակի առկայության մասին: Ի լրումն,

Էլեկտրոնային կառավարումը քաջալերող և խրախուսող պետական մարմիններից մեկը չի փորձել կազմակերպել առցանց քննարկումներ:

Հայտատու մարմինների կողմից 2022-2024թթ. ՄԺԾԾ և 2022թ. բյուջետային հայտերի հանրային քննարկումներ չկազմակերպելը և այդ մասին ՀՀ ՖՆ-ին տեղեկատվություն չտրամադրելը ՀՀ պետական մարմինների կողմից համակարգային ծախսողում է: ԱԺ-ն չի իրականացրել վերահսկողություն այդ գործընթացի նկատմամբ: Համաձայն այս տրամաբանության, 2018թ. հեղափոխությանը ակտիվորեն մասնակցած ԶՀԿ-ները չեն հետաքրքրվում պետական բյուջեի նախագծով: Դա իրականությանը չի համապատասխանում: ՀՀ պետական մարմինները չեն հետաքրքրվում դրա պատճառներով:

Եթե ճիշտ է այն պնդումը, որ ԶՀԿ-ներն առաջարկություններ չեն ներկայացրել, չնայած նախարարություններն իրենց բյուջետային հայտերը հրապարակել են իրենց ինտերնետային կայքերում, նշանակում է ԶՀԿ-ները չեն հետևում ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների ինտերնետային կայքերին: Նշանակում է ինտերնետային կայքերը չեն կատարում հանրային իրազեկման իրենց գործառույթը: Հնչում են կարծիքներ, որ նման ծանր ժամանակաշրջանում տեղին չէ հետևել «ձևական» գործընթացներին: Հենց նման ծանր ժամանակաշրջանում է անհրաժեշտ բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու և մասնակցային կառավարման միջոցով փարատել բյուջետային միջոցների ոչ նպատակային, անարդյունավետ և ոչ խնայողական օգտագործման հետ կապված հանրության մտահոգությունները:

Լրացուցիչ ուսումնասիրություն է հարկավոր պարզելու համար, թե ինչու ԶՀԿ-ները չեն հետաքրքրվում պետական բյուջեի նախագծով, կատարմամբ և հաշվետվություններով: Դա կարող է պայմանավորված լինել պետական մարմինների ձևական մոտեցմամբ (ԶՀԿ-ները չեն ցանկանում ներգրավվել անիմաստ քննարկումներում), վատ իրազեկմամբ (ԶՀԿ-ները չեն հետևում պետական մարմինների ինտերնետային կայքերին), կամ այլ հանգամանքներով:

ԱԺ-ն չի դարձել քաղաքական բանավեճի հարթակ: Միմյանց ծաղրելը, վիրավորելը, ձեռնամարտը սովորական երևույթ են ԱԺ-ում: Վերջին քառորդ դարի զարգացումները հուշում են, որ Հայաստանը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, մինչև ընտրողն իր քվեն որևէ քաղաքական ուժի կտա առաջնորդվելով ոչ թե զգացմունքներով և հույզերով, այլ գաղափարախոսությամբ, ծրագրերով և գաղափարներն ու ծրագրերն առաջարկող անձանց անբասիր կենսագրությամբ: Միայն քաղաքական օրակարգով ձևավորված ԱԺ-ն է ընդունակ կատարել իր բոլոր հիմնական գործառույթները, այդ թվում վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության նկատմամբ:

ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների թիվը տարիների ընթացքում կրճատվել է, ինչը նվազեցրել է նրանց բոլորի մանևրելու հնարավորությունը: Խմբակցությունների թվի կրճատումը նվազեցնում է ԱԺ-ում տարբեր հարցերի շուրջ դաշնակիցներ գտնելու հնարավորությունը վերջիններիս մղելով ավելի ծայրահեղ և անզիջում դիրքեր: ԱԺ ընտրություններին մասնակցողների բացարձակ և հարաբերական թվերի կրճատումը և ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների թվի կրճատումը նշանակում է, որ հասարակության մի սովորական զանգվածի տեսակետները երկրի բարձրագույն մարմնում ներկայացված չեն: Շատ կարևոր է, որպեսզի հասարակության լայն զանգվածներին չներկայացնող իշխանության նկատմամբ գործուն վերահսկողություն լինի: ԱԺ-ում իշխող ուժի մեծ տեսակարար կշիռը, ՀՀ կառավարության գործունեության արդյունքների չափեփոխության հետ կապված դժվարությունները և վերահսկողական մեխանիզմների անկատարությունը նպաստում են ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ թույլ վերահսկողությանը:

1991թ. անկախություն հռչակելուց ի վեր Հայաստանում չի եղել ընտրությունների միջոցով իշխանությունն ընդդիմությանը փոխանցելու դեպք: Ընտրություններում մշտապես հաղթել է գործադիր իշխանության ղեկավարի առաջնորդած կամ նրան սատարող ուժը կամ ուժերը: Անցած 30 տարիներին խորհրդարանը լիարժեք չի իրականացրել իր վերահսկողական գործառնությունը, ինչը հանգեցրել է իշխանության չարաշահման, սեփականության անարդար բաշխման և վերաբաշխման, կասկածելի ծագում ունեցող ներդրումների, մեծածավալ ֆինանսական միջոցների արտահոսքի և Հայաստանը կանգնեցրել է մի շարք մարտահրավերների առաջ:

Կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն անհրաժեշտ է, որպեսզի վերջինիս անդամները չչարաշահեն հանրության կողմից իրենց տրված իշխանությունը: Ի լրումն վերահսկողությունն օգնում է հանրությանը պաշտպանել անհատների սխալներից: Յուրաքանչյուր ոք ունի սխալվելու իրավունք և ինքն է վճարում իր սխալների համար: Կառավարության և նրա անդամների սխալների համար վճարում են քաղաքացիները: Քաղաքացիները և բնակիչները վճարում են ոչ միայն իրենց բարեկեցությամբ, եկամուտներով, այլ նաև իրենց և իրենց հարազատների կյանքով և առողջությամբ: Քաղաքացիների իրավունքները պաշտպանելու, պետական բարձրաստիճան պաշտոնյաների հնարավոր սխալներից քաղաքացիների կորուստները և վնասները նվազեցնելու նպատակով պետությունը ձևավորում է կառավարության անդամների և նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա կառույցների գործունեության և որոշումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառույցներ և մեխանիզմներ: Սպառողների շահերի պաշտպանությունը ենթադրում է նաև կայուն և կանխատեսելի քաղաքականություններ պետական կառավարման բոլոր ոլորտներում և բնագավառներում: Աժ-ն կարող է և պետք է հետամուտ լինի, որ կառավարությունն ունենա պետական կառավարման բոլոր ոլորտների և բնագավառների զարգացման ռազմավարություն և որպեսզի կառավարության, նրա անդամների և նրանց տեղակալների, կառավարությանը և վարչապետին ենթակա կառույցների որոշումները, հրամանները և գործողությունները համահունչ են զարգացման ռազմավարության հետ և որ կառավարության քաղաքականությունը համապատասխանում է Սահմանադրության 86-րդ հոդվածի պահանջներին:

Առանձին կարգավորումներ են նախատեսվում պետության պաշտպանության և անվտանգության համար պատասխանատու կառույցների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու համար: Բոլոր երկրների բանակներում ծառայող քաղաքացիների իրավունքները համեմատաբար սահմանափակ են քաղաքացիական կյանքով ապրող իրենց հայրենակիցների համեմատ: Երկրները միջոցներ են ձեռնարկում, որպեսզի առանձին պաշտոնյաներ չօգտվեն իրավունքի այդ սահմանափակումից և զինված ուժերն ու առանձին զինվորականների ծառայեցնեն սեփական շահերին: Նաև այդ հանգամանքը հաշվի առնելով է ՀՀ Սահմանադրությունը նախատեսում, որ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գործում են քաղաքացիական վերահսկողության ներքո (հոդված 14):

Խորհրդարանական վերահսկողությունը ոչ միայն հանրությանը պաշտպանում է կառավարության անդամների կողմից իշխանության չարաշահումից, այլ նաև սխալներից^{Cvi}: «Ինչ որ պետք է, այն էլ բանակցում ենք», «Մեզ ոչ մեկը չի կարող ասել» «կանեմ են, ինչ որ կուլեն» և նման այլ արտահայտությունները ազդակ են, որ կառավարության անդամները չեն զգում խորհրդարանական վերահսկողության ազդեցությունը:

Կառավարության անդամներն ունեն ընթացող գործընթացների և ընդունվելիք որոշումների վրա ազդելու հնարավորություն: Ներդրողները, լրագրողները և հանրության այլ ներկայացուցիչներ կառավարության անդամների խոսքը դիտարկում են ոչ թե որպես վերլուծություն, այլ կայացվող որոշումների ժամանակ արտահայտված կամ արտահայտվելիք դիրքորոշում: Չի կարելի թույլ տալ, որպեսզի քաղաքացիների, լրագրողների, ներդրողների, միջազգային գործընկերների մոտ տպավորություն ստեղծվի, որ իշխանությունը կամ նրա առանձին անդամներ վերահսկողությունից դուրս են:

Կառավարության ղեկավարների և առանձին անդամների որոշումներ, հրամանների, գործողություններ և հայտարարություններ խնդրահարույց են եղել:

Աժ կողմից ուսումնասիրության արժանի հայտարարություններով աչքի է ընկել վարչապետ Կարեն Կարապետյանը, ով մեկ հայտարարում էր, որ ուրիշի բիզնեսը չեն խլելու^{cvi} (ինչը ենթադրում է, որ նախկինում նման դեպքեր եղել են), այնուհետև, որ Հայաստանի տնտեսությունը չափազանց ծանր վիճակում է^{cvi}, «որ ապրիլյան դեպքերի ժամանակ մենք ունեինք բազմաթիվ դեպքեր, երբ մեր ռազմական տեխնիկան չէր աշխատում հենց դրա պատճառով» (նկատի ունեն անորակ վառելիքը)^{cix}, անում էր այլ հայտարարություններ:

Աժ և մշտական հանձնաժողովների ուսումնասիրության առարկա կարող էր դառնալ ՀՀ դիվանագիտական անձնագրերի տրամադրման հարցը: 2018թ. սեպտեմբերին ԱԳՆ-ն հայտնեց 254 դիվանագիտական անձնագիր չեղարկելու մասին^{cx}: Դիվանագիտական անձնագրեր էին ստացել բարձրաստիճան պաշտոնյաների կանայք, զավակները, հարսները, թոռները, խնամիկները, եղբորորդիները և վերջիններիս հետ փոխկապակցված այլ անձինք^{cx}:

Այս և նման դեպքերի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ոչ թե իրավական, այլ քաղաքական պատասխանատվության տեսակետից: Նման դեպքերի ուսումնասիրությունը նաև անհրաժեշտ է տարվող քաղաքականությունները և դրանց իրականացման մեխանիզմները և դրանց իրականացման նկատմամբ հսկողության և վերահսկողության մեխանիզմները կատարելագործելու համար:

Որպես անմիջապես Հայաստանի քաղաքացիների կողմից ընտրված, առաջնային մանդատ ունեցող մարմին, խորհրդարանն ուղղակի և անմիջական պատասխանատվություն է կրում Հայաստանի պետական կառավարման համակարգի գործունեության բոլոր բաղկացուցիչների համար: Աժ-ն պետք է վերահսկի և համոզվի, որ պետական մարմինները քաղաքականությունների մշակման ժամանակ խորհրդակցում են հանրության հետ, բացահայտում և գնահատում են քաղաքականությունների հետ կապված ռիսկերը, մշակում են այդ ռիսկերի բացասական ազդեցությունը զսպող և նվազեցնող գործիքներ, քաղաքականությունների շրջանակներում մշակում և իրականացնում են ծրագրեր, դրանց ընթացքի և ավարտի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում, կատարում են այլ գործողություններ և աշխատանքներ, որոնք երաշխավորում են Հայաստանի ինքնիշխանությունը, ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական և այլ համակարգերի կայուն և հուսալի աշխատանքը:

Դեպքի նկարագրություն № 1. «Պարզևատրում»-«աշխատավարձ» գլուխկոտրուկ

Պետական քաղաքականության վերաբերյալ հանրային հետաքրքրություններ կայացնող ցանկացած հարց պետք է ԱԺ ուսումնասիրության առարկա դառնա: Վերջին չորս տարիներին Հայաստանի հանրության մի ստվար մասի համար խնդրահարույց է եղել կառավարության անդամներին՝ փոխվարչապետների, նախարարների, փոխնախարարների և պատգամավորների «պարզևավճարների» հարցը: Կառավարության անդամների աշխատավարձի վերաբերյալ ՀՀ վարչապետը կայացրել է քաղաքական որոշում: Կառավարության անդամներին տրվող ամսական աշխատավարձ-պարզևավճարների խնդրին «Հետքը»^{cxii}, «Ազատություն»^{cxiii} ու փաստերի ստուգման հարթակն^{cxiv} անդրադարձան 2019թ.:

2020թ. մայիսի 5-ին ԱԺ-ում իր ելույթի ժամանակ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը նշել է^{cxv}. «Ինչո՞ւ պարզևավճարների համակարգով և ոչ աշխատավարձերի համակարգով, որովհետև գործող աշխատավարձերի համակարգը, որն այսօր գործում է, իր ստեղծման առաջին օրից դեֆորմացված է, և այսօր հանրային ծառայության բարեփոխումների շրջանակում այս ողջ պրոցեսը, որը մենք հիմա իրականացնում ենք՝ դե ֆակտո որպես աշխատավարձ, դե յուրե որպես պարզևավճար, կտրանսֆորմացնենք ձեր հաստատմամբ և աջակցությամբ՝ որպես աշխատավարձի համակարգ»: Վարչապետ Փաշինյանն արձանագրել է, որ ինքն իր որոշմամբ «դե ֆակտո» բարձրացրել է փոխվարչապետների, նախարարների և փոխնախարարների աշխատավարձը:

«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» (Սահմանադրության հոդված 6, առաջին մաս): Կառավարության անդամների և նրանց տեղակալների աշխատանքի վարձատրությունը սահմանվում է օրենքով^{cxvi}: ՀՀ վարչապետը լիազորված չէ որոշումներ կայացնել կառավարության անդամների և նրանց տեղակալների «դե ֆակտո» աշխատավարձի վերաբերյալ:

Կառավարության անդամների և նրանց տեղակալների աշխատանքի վարձատրության հետ կապված ՀՀ վարչապետը կայացրել է գաղտնի որոշում: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն կառավարության անդամների և նրանց տեղակալների աշխատանքի վարձատրությունը և պարզևավճարները պետական գաղտնիք չեն համարվում:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի առաջին մասի 3-րդ կետը **պարզևատրումը** սահմանում է որպես «միանվագ վճար, որը պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին տրվում է ծառայողական գործունեության գնահատման և(կամ) հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքների կատարման համար»: Օրենքի համաձայն պարզևատրումը միանվագ վճար է և անհրաժեշտ է դիտարկել ամեն ամիս վճարվող «պարզևատրման» պարբերականության համապատասխանությունը օրենքով տրված սահմանման «միանվագության» պահանջին: «Պարզևատրումը» նաև պահանջում է գործունեության գնահատում: Հանրություն տեղյակ չէ կառավարության անդամների գործունեության ամսական գնահատման վերաբերյալ: Ավելին, պատասխանելով պատգամավորի հարցին^{cxvii}, վարչապետ Փաշինյանը հայտնել էր, որ չգիտի, գոհ է, թե գոհ չէ նախարարների աշխատանքից: Կառավարության անդամները տարեկան մեկ անգամ են բանավոր հաշվետվություններ կայացնում հանրությանը, սակայն

պարզևատրում ստանում են յուրաքանչյուր ամիս: Գործունեությունը պետք է գնահատվի ոչ թե նախապես, ինչպես ենթադրում է «նշանակված» ամսական «պարզևատրումը», այլ պոստ ֆակտում, կառավարության անդամների և նրանց տեղակալների գործունեությունն իրականացնելուց և այն գնահատելուց հետո: Ի տարբերություն կառավարության անդամների և նրանց տեղակալների, քաղաքացիական ծառայողների աշխատանքը պարբերաբար գնահատվում է^{cxviii}: Հատուկ առաջադրանքի կատարման հիմնավորմամբ կառավարության անդամների պարզևատրումը խնդրահարույց է, քանի որ պետական բարձրաստիճան պաշտոնյաների պարտականությունները սահմանվում են օրենքներով և համապատասխան կառույցների կանոնադրություններով: Ինչպես արդեն նշվել է վերևում, Սահմանադրության հոդված 6-ի առաջին մասի համաձայն «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով», ինչը նշանակում է, որ նրանք իրավասու չեն կատարել հատուկ առաջադրանքներ և վարձատրվել դրա համար: Կառավարության անդամների աշխատանքը ենթադրում է որակ: «Անորակ» աշխատանք կատարող կառավարության անդամները պետք է կրեն քաղաքական պատասխանատվություն:

Կառավարության անդամները քաղաքական գործիչներ են: Քաղաքական գործիչների աշխատանքի գնահատականը տալիս է ընտրողը: Կառավարության անդամների իրավունքների և պարտականությունների շրջանակի հստակեցման, գործունեության արդյունքների գնահատման և աշխատանքի վարձատրության համակարգը արմատական բարեփոխման ենթարկելու փոխարեն կառավարությունն ընտրել է հայեցողական որոշումների միջոցով կուտակված խնդիրներին լուծում տալու ոչ բաց, ոչ թափանցիկ, ոչ հաշվետու, անպատասխանատու, խոցելի և վիճարկելի գործելաոճ:

ԱԺ-ն կարող էր և պետք է քննարկեր հանրային լայն հնչեղություն ունեցող և հանրության մի մասի մոտ դժգոհություն առաջացրած կառավարության անդամների և նրանց տեղակալների «պարզևատրման» հայեցողական որոշման օրինականությունը, նպատակայնությունը և արդյունավետությունը: ՀՀ ԱԺ-ին չի մտահոգում այն հանգամանքը, որ հեղափոխությունից չորս տարի հետո ՀՀ կառավարությունը չի շտկել ՀՀ վարչապետի բնորոշմամբ աշխատավարձերի դեֆորմացված համակարգը:

4. ԱԺ վերահսկողական գործիքները

ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության նպատակով ԱԺ պատգամավորներն իրավասու են.

- 1) ԱԺ իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք ԱԺ ներկայացնելու նպատակով, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, իրավունքի ուժով ձևավորել ԱԺ քննիչ հանձնաժողով կամ ԶՀ (Սահմանադրության հոդված 108): Իր գործունեության արդյունքներով ԶՀ-ն ԱԺ նախագահին է ներկայացնում զեկույց, որը ներառում է ԶՀ ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ եզրահանգումները,
- 2) Ընդունել պետական բյուջեն (հոդված 110), վերահսկողություն իրականացնել պետական բյուջեի կատարման նկատմամբ և քննարկել ու որոշում ընդունել պետական բյուջեի կատարման մասն ՀՀ կառավարության կողմից ներակայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ (հոդված 111): Վերահսկողական գործառույթն ԱԺ-ն իրականացնում է նիստերի և մշտական հանձնաժողովների գործունեության միջոցով (հոդված 106):

ԱԺ մշտական հանձնաժողովները պարտավոր են իրականացնել խորհրդարանական վերահսկողություն: Մշտական հանձնաժողովները վերահսկողություն են իրականացնում օրենքների և ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ (կանոնակարգի հոդված 122),

Բյուջետային գործընթացի համատեքստում որպես գործիքներ են դիտարկվել ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) և ՀՀ հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ ՀՊ) կողմից ԱԺ ներկայացվող եզրակացությունները: ԱԺ պատգամավորներն իրավասու են.

- 1) Բյուջետային քննարկումների ժամանակ օգտագործել ՀՀ պետական բյուջեի նախագծի («Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի մաս 1, Կանոնակարգի հոդված 90) և ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ ԿԲ եզրակացությանը («Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի մաս 1, Կանոնակարգի հոդված 116),
- 2) Բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ օգտագործել ՀՀ պետական բյուջեի կատարման եռամսյակային տեղեկատվության և տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՊ եզրակացությունը («Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 25, մաս 4, Կանոնակարգի հոդված 116),
- 3) Պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդի ստորագրությամբ (Սահմանադրության հոդված 169) օրենքների, ՀՀ նախագահի հրամանների և կարգադրությունների, ԱԺ, կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության, սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերը լուծելու և պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով (Սահմանադրության հոդված 168) դիմել Սահմանադրական դատարան:

Կանոնակարգի համաձայն պատգամավորներն իրավունք ունեն.

4) Գրավոր հարց ուղղել ՀՀ կառավարության անդամներին (հոդված 119):

5) Բանավոր հարց ուղղել ՀՀ կառավարության անդամին (հոդված 120):

Կանոնակարգի համաձայն խմբակցություններն իրավունք ունեն.

6) Գրավոր հարցապնդումներով դիմել ՀՀ կառավարության անդամներին (հոդված 121): Կառավարության անդամը պարտավոր է հարցապնդման պատասխանը ԱԺ նախագահին ուղարկել այն ստանալուց հետո ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում: Հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով խմբակցությունը կարող է առաջարկել ընդունել ՀՀ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը ՀՀ վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին ԱԺ որոշում, կամ առաջարկել անվստահություն հայտնել ՀՀ վարչապետին:

ԱԺ նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովների և խմբակցությունների որոշմամբ.

7) Հրավիրել խորհրդարանական լսումներ (կանոնակարգի հոդված 125):

ԱԺ որոշմամբ կարող են ստեղծվել առանձին օրենքների, ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերը քննարկող և դրանց վերաբերյալ ԱԺ եզրակացություններ ներկայացնող ժամանակավոր հանձնաժողովներ (Սահմանադրության հոդված 107): ԱԺ պատգամավորները կարող են օգտվել Բյուջետային գրասենյակի ծառայություններից:

4.1. Աժ քննիչ հանձնաժողովները

Սահմանադրության հոդված 108-ի համաձայն Աժ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Աժ իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություններ կայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Աժ ներկայացնելու նպատակով ստեղծվում է Աժ քննիչ հանձնաժողով (այսուհետ՝ ԶՅ): ԶՅ-ում տեղերը բաշխվում են Աժ-ում խմբակցությունների համամասնությամբ, իսկ անդամների թիվը որոշում է Աժ-ն: ԶՅ-ում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը: Պաշտպանության և անվտանգության բնագավառներում ԶՅ լիազորություններն իրականացնում է միայն Աժ իրավասու մշտական հանձնաժողովը:

ԶՅ լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է մեկ անգամ երկարաձգվել մինչև վեց ամսով (Կանոնակարգի հոդված 20): ԶՅ-ն իր գործունեության արդյունքով Աժ նախագահին ներկայացնում է զեկույց (հոդված 25), որը ներառում է ԶՅ-ի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ փաստերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ ԶՅ-ի եզրահանգումները: Եթե ԶՅ-ի անդամների առնվազն մեկ քառորդն ունի հատուկ կարծիք, կարող է այն ներկայացնել Աժ-ում զեկույցի քննարկման ընթացքում: Աժ աշխատակազմը ԶՅ-ի զեկույցը մեկ շաբաթվա ընթացքում ուղարկում է դրանում նշված իրավասու մարմիններ և պաշտոնատար անձանց^{xxix}: Պատասխաններն ստանալուց հետո աշխատակազմն այն 24 ժամվա ընթացքում ուղարկում է Աժ նախագահի տեղակալներին, խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ և տեղադրում է Աժ պաշտոնական ինտերնետային կայքում: Հոդված 26-ի համաձայն ԶՅ լիազորությունները ավարտվում են կամ Աժ նիստում նրա զեկույցի քննարկումն ավարտվելու պահից, կամ ԶՅ լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում, եթե զեկույց չի ներկայացվել:

2022թ. փետրվարի 1-ի դրությամբ Աժ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումները ձևավորվել էին 10 ԶՅ (աղյուսակ 2, հավելված 13): «2016թ. ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի» զեկույցը քննարկվել է փակ նիստում (այսուհետ՝ 2016թ. ապրիլյան 4-օրյա պատերազմն ուսումնասիրող ԶՅ): ԶՅ-ն ուսումնասիրել է բանակի ապահովման, թիկունքային սպառազինության, մարտական պատրաստության, մարտական հերթապահության կանոնների կատարման, զորքերի համալրման հարցերը, հակառակորդի գործողությունների կանխմանն ու խափանմանն ուղղված որոշումների համարժեքությունը, դեպքերին տրված զնահատականների հիմնավորվածությունը և օրինականությունը^{xxx}:

Աժ-ն «Ի գիտություն» է ընդունել Ջրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՅ զեկույցը^{xxxi}: Parliament Monitoring-ի համաձայն Հանքարդյունաբերությունն ուսումնասիրող ԶՅ-ն գործնականում չի աշխատել: Ուղևորափոխադրումների կազմակերպումն ուսումնասիրող ԶՅ-ն նույնպես գործնականում չի աշխատել: Երեւանին գույքի փոխանցումն ուսումնասիրող ԶՅ չի գործել, քանի որ «Իմ քայլը» չի մասնակցել անդամների թվի վերաբերյալ որոշման քվեարկությանը^{xxxii}:

Աղյուսակ 2. ՀՀ ԱԺ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների կողմից ստեղծված քննիչ հանձնաժողովները

	Քննիչ հանձնաժողով	Ստեղծվել է	Նախաձեռնող
1	Արդարադատության իրականացման հետ կապված հարցերն ուսումնասիրող ԶՀ ¹	13/09/2018	ՀՀԿ ^{xxiii}
2	Էներգետիկ համակարգի գործունեությունն ուսումնասիրող ԶՀ ²	03/10/2018	ԲՀԿ ^{xxiv}
3	2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմն ուսումնասիրող ԶՀ ³	31/05/2019	«Իմ քայլը»
4	Զրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՀ ⁴	31/05/2019	«Իմ քայլը»
5	Երեւանին գույքի փոխանցումն ուսումնասիրող ԶՀ ⁵	05/12/2019	ԼՀԿ
6	Ուղևորափոխադրումների կազմակերպումն ուսումնասիրող ԶՀ ⁶	19/11/2019	ԲՀԿ
7	Հանքարդյունաբերությունն ուսումնասիրող ԶՀ ⁷	26/09/2019	ԲՀԿ
8	COVID 19 ԶՀ ⁸	02/07/2020	ԲՀԿ
9	«Հայաստան» հիմնադրամի միջոցների օգտագործումն ուսումնասիրող ԶՀ ⁹	22/10/2021	«Հայաստան»
10	Արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերն ուսումնասիրող ԶՀ ¹⁰	25/10/2021	«Հայաստան»

Աղբյուր. ՀՀ Ազգային ժողովի ինտերնետային կայք

¹ Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, արդար դատաքննության իրավունքի եւ հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու փաստերի առնչությամբ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը քննության առարկա դարձնելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողով

² ՀՀ գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման եւ բաշխման համակարգերի գործունեությունը, գազի եւ էլեկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողով

³ 2016թ. ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁴ Արարատի եւ Արմավիրի մարզերում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների եւ ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁵ 2018թ. սեպտեմբերից սկսած տարբեր սուբյեկտների կողմից Երեւան համայնքին տրանսպորտային միջոցների եւ այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաեւ Երեւան համայնքի կողմից դրանց հետ կապված այլ անշարժ կամ շարժական գույքի փոխանցման, այդ թվում՝ գույքային, ինչպես նաեւ ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁶ ՀՀ ցամաքային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը և 2016-2019թթ. ոլորտը սպասարկող, համակարգող և վերահսկող լիազոր մարմինների գործունեությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁷ Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁸ Նոր կորոնավիրուսի (COVID 19) տարածումը կանխելու, այդ վիրուսի դեմ պայքարի՝ համաճարակի հետևանքների մեղմման կամ վերացման ուղղությամբ ՀՀ կառավարության և պարետատան իրականացրած միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև արտակարգ դրության ժամանակահատվածում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների արդյունավետությունն ու իրավաչափությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

⁹ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ ՀՀ պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

¹⁰ Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաեւ Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով

Մեծ ձկնաբուծարանների կառուցած արտեզյան խոշոր հորերի պատճառով Արարատի և Արմավիրի մարզի գյուղերը կանգնած են ջրագրկման վտանգի առջև: Գյուղացիները պնդում էին^{xxxv}, որ ձկնաբուծարանները պատկանում են ԱԺ նախագահին և մեծահարուստ պատգամավորների^{xxxvi}: 2018թ. օգոստոսի 25-ին, «Սեւանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ ընդդիմադիր, սակայն ամենամեծ խմբակցության պատգամավորի^{xxxvii} «ջրի մաֆիա կա՞» հարցին, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Ինեսսա Գաբայանը դրական պատասխան տվեց^{xxxviii}:

Ջրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՀ անդամը^{xxxix} կարծում էր, որ հրատապ է պարզել, թե անցած բոլոր տարիներին ջրօգտագործման ոլորտում ինչքան գումար է փոշիացել^{xxx}: ԶՀ իշխանական անդամը^{xxxi} նշում էր, որ ջրօգտագործողների համակարգն ընտրությունների ժամանակ օգտագործվող հզոր կառույց է^{xxxii}: Նա հայտարարում էր, որ կիրառարակվեն իրավախախտ ընկերությունների, դրանց սեփականատերերի անունները, որ «վիշապային տրամաբանությամբ» օլիգարխների ցանքատարածությունները կամ ձկնաբուծարաններն այնպես են տեղակայված, որ անհնար է առանց վերջիններիս ջուր տալու ջրով ապահովել այլ ջրօգտագործողների և խոստանում էր, որ «Լինելու են Էական բացահայտումներ»: Գործունեության ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության բացակայության մասին հարցին ի պատասխան ԶՀ նախագահը^{xxxiii} հայտնել էր, որ երկրորդ ժամկետում ԶՀ աշխատանքներն ավելի շատ կլուսաբանվեն^{xxxiv}: 6-րդ նիստի արձանագրության համաձայն ԶՀ-ն հանդիպել է ջրային կոմիտեի նախագահ Կարեն Սարգսյանի հետ: Հետագա նիստերի վերաբերյալ տեղեկատվություն հայտնաբերել չի հաջողվել և հայտնի չէ, թե որ նիստում է ընդունվել զեկույցը:

Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն ուսումնասիրող ԶՀ-ի զեկույցի չհրապարակումը հիմնավորել էր ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ), ԱԳՆ և ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) վերապահումներով^{xxxv}: Չնայած 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն ուսումնասիրող ԶՀ-ի գործունեության տեսանելի արդյունքների բացակայությանը, 2022թ. փետրվարի 10-ին հայտարարվեց 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ԶՀ ստեղծելու մասին^{xxxvi}: Եթե 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ԶՀ-ն ուներ ուսումնասիրության երկու, ապա 2020թ. պատերազմի հետ կապված հանգամանքներն ուսումնասիրող ԶՀ-ն ունի ուսումնասիրության 7 առարկա, ինչը ԶՀ գործունեության արդյունքների հետ կապված լրացուցիչ անորոշություններ է ստեղծում: Մինչ Հայաստանում քննում էին 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի հանգամանքները, Ադրբեջանը պատրաստվեց և պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ:

4.2. Բյուջետային գործընթացի նկատմամբ վերահսկողությունը

Ինչպես արդեն նշվել է վերևում ԱԺ-ն վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ և ընդունում է պետական բյուջեն (Սահմանադրության հոդված 88): Եթե կառավարության եզրակացության համաձայն օրենքի նախագիծն էականորեն նվազեցնում է պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում պետության ծախսերը, կառավարության պահանջով այն կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (հոդված 109): ԱԺ-ն բյուջեն ընդունում է կառավարության ներկայացմամբ (հոդված 110): Բյուջեն ներառում է պետության բոլոր եկամուտներն ու ծախսերը: ՀՀ կառավարությունը բյուջեի նախագիծն ԱԺ է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ: Բյուջեն ընդունվում է մինչև տարին սկսվելը, իսկ չընդունվելու դեպքում, մինչև բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: ԱԺ-ն վերահսկողություն է իրականացնում բյուջեի կատարման նկատմամբ (հոդված 111) և Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ որոշում է կայացնում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:

4.2.1. Կանոնական բանկի եզրակացությունները

Կանոնակարգի հոդված 90-ի և հոդված 116-ի համաձայն ԱԺ նիստում պետական բյուջեի մասին օրենքի նախագծի և բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հետ միասին ՀՀ կառավարությունն ԱԺ է ներկայացնում ԿԲ պաշտոնական եզրակացությունը (հավելված 14):

ՀՀ 2022թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացության մեջ ԿԲ խորհուրդը նշել է, որ «պետական բյուջեի ծրագիրը բավականին հավակնոտ է և Կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրի համեմատ ենթադրում է տնտեսական աճի և ներուժի էական արագացում», ինչի համար հիմք են ծառայում մեծածավալ պետական ներդրումները: ԿԲ խորհրդի կարծիքով 2022թ. ՀՀ պետական բյուջեի նախագծով սահմանված հարկաբյուջետային կանոնների պահպանումը կնպաստի ՀՀ պետական պարտքի բեռի նվազեցմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: ԿԲ խորհուրդը կարծիք է հայտնել, «որ պետական և մասնավոր ներդրումների խթանման վրա հենված տնտեսական աճի նախանշող ռազմավարության հավանական շրջադարձելիության դեպքում կարող են էական ռիսկեր առաջանալ պարտքի միջնաժամկետ կայունության տեսակետից»: 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ իր եզրակացության մեջ ԿԲ-ն նույնպես ուշադրություն է հրավիրում միջնաժամկետ հեռանկարում պարտքի կայունության ապահովմանը և տնտեսական կայուն զարգացման հիմքերի ամրապնդմանը: Իր եզրակացություններում ԿԲ-ն մշտապես ուշադրություն է հրավիրում պետական կապիտալ ներդրում նախատեսող ծրագրերը կատարելու անհրաժեշտության վրա:

4.2.2. Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ ՀՊ) գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և

արդյունավետության վերաբերյալ ԱԺ-ին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է^{xxxvii}։ ՀՀ-ն ԱԺ է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում և բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն (օրենքի հոդված 5, կետ 4)։ ՀՀ եռամսյակային ընթացիկ և տարեկան եզրակացություններն ի գիտություն են ընդունվում և ԱԺ կողմից չեն հաստատվում։

ՀՀ ընթացիկ եզրակացությունները հրապարակվում են ՀՀ ինտերնետային կայքում (<http://armsai.am/>) և ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին են տրամադրվում եռամսյակի ավարտից հետո 4 ամսվա ընթացքում։ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ փորձագետները վերլուծում են ընթացիկ եզրակացությունները և դրանց հիման վրա պատրաստում տեղեկանք-ամփոփագրեր, որոնք տրամադրում են հանձնաժողովի նախագահին և անդամներին։ Օրենքն օգտագործում է «անհամապատասխանություն» և «խեղաթյուրում» հասկացությունները, որոնք սահմանվում են աուդիտի միջազգային ստանդարտներով։ «խեղաթյուրում» ասելով հասկանում են այն անհամապատասխանությունները, որոնք պարունակում են գումարային արտահայտություններ կամ ծավալներ։ «Անհամապատասխանություն» ասելով հասկանում են այն գործողությունները, որոնք միտում չեն պարունակում և տարբերությունները նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափերը գերազանցելու, թերանալու կամ սխալմունքի հետևանք են։ Խեղաթյուրումների կամ այլ մտահոգիչ հանգամանքների դեպքում ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը կարող է թեմային առնչվող ոլորտային մշտական հանձնաժողովի հետ կազմակերպել համատեղ աշխատանքային քննարկում՝ հրավիրելով ՀՀ համակարգող անդամին, հաշվեքննություն իրականացնող խմբին, հաշվեքննության օբյեկտին և բյուջետային գլխավոր կարգադրիչի (ԲԳԿ) ներկայացուցիչներին։ Քննարկման ժամանակ կարող են որոշել հարցը ներառել ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստի օրակարգում։ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը որոշումներ չի կայացնում, սակայն նիստի ժամանակ քննարկումների արդյունքներով, կողմերը կարող են համաձայնություն ձեռք բերել թերությունների վերացման ժամանակացույցի շուրջ։ Պրակտիկայում դեռ չի պատահել դեպք, որ ՀՀ-ն և ԲԳԿ-ն համաձայնության չգան։

ԱԺ մնացած մշտական հանձնաժողովները կարող են ծանոթանալ ՀՀ ինտերնետային կայքում հրապարակված ընթացիկ եզրակացություններին և անհրաժեշտության դեպքում կազմակերպել դրանց քննարկում, հրավիրելով ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին։ Սակայն իրական կյանքում չի եղել դեպք, որ ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովից բացի որևէ այլ հանձնաժողով ուսումնասիրի եզրակացությունները և քննարկում նախաձեռնի։

ՀՀ-ն ԱԺ եզրակացություն է ներկայացնում պետական բյուջեի կատարման վերաբերյալ։ Բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը ընթացիկ եզրակացությունների ընթացակարգով ուսումնասիրվում է ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովի փորձագետների կողմից։ Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ եզրակացությունը բաղկացած է բյուջեի կատարման վերաբերյալ կարծիքից և հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվությունից։ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ կարծիքը ներառում է.

Ա. Դրական եզրահանգում, այսինքն, հաշվեքննության համար ստացվել է բավարար տեղեկատվություն, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,

Բ. Ոչ լիարժեք եզրահանգում, ինչը նշանակում է, որ հայտնաբերվել են Եական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, հաշվետվությունները Եականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են Եական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեթևություն իրականացնելու համար,

Գ. Բացասական եզրահանգում, այսինքն հայտնաբերվել են Եական, համատարած հետևանքներ ունեցող խեղաթյուրումներ և հաշվետվություններն Եականորեն խեղաթյուրված են,

Դ. Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, ինչը նշանակում է, որ հայտնաբերվել են Եական, համատարած հետևանքներ ունեցող խեղաթյուրումներ, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեթևության համար:

Վերջին երեք տարիներին ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՊ եզրահանգումները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. ՀՊ եզրահանգումները բյուջեի կատարման վերաբերյալ

Տարին	Եզրահանգում
2020թ.	Դրական
2019թ.	Դրական
2018թ.	Դրական

Աղբյուր: Հաշվեթևիչ պալատ

ԱԺ-ում տարեկան ՀՊ տարեկան հաշվետվությունը քննարկվում է , սակայն որոշում չի ընդունվում: Քննարկման նպատակն անհասկանալի է:

ՀՀ կառավարության գործունեության մի շարք հանգամանքների վերաբերյալ ՀՊ տեսակետը պարզելու և այս հաշվետվության շրջանակներում ներկայացնելու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ հաշվեթևիչ պալատ: Հարցումները վերաբերում էին «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված իրականացվող հաշվեթևությունների կասեցման վերաբերյալ ՀՊ որոշման, նախորդ իշխանությունների կողմից բիզնեսից «օտարված» մոտավորապես 500 մլն ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու, 2018-2020թթ. պաշտպանության բնագավառում կատարված ինժեներական աշխատանքների և 2019թ. պետական բյուջեում վերաբաշխումների մեծության հաշվեթևությանը: ՀՊ-ին հղված գրությունների և վերջինից ստացած պատասխանների պատճենները ներկայացված են հավելված 15-ում:

1) 2014թ. ԱԺ-ն ընդունել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը^{xxxviii}: Օրենքի հոդված 18-ի մաս 3-ի համաձայն «Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է լիազոր մարմինը», իսկ հոդված 24-ի մաս 3-ի համաձայն «Լիազոր մարմինը սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առաջին ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է 2019 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար»: Սա նշանակում է, որ 2020թ. ՀՀ ՖՆ-ն պետք է 2019թ. համար պատրաստեր օրենքով նախատեսված ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի, դրամական հոսքերի, ակտիվներում փոփոխությունների վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացներ դրանց կից ծանոթագրությունները^{xxxix}: 2021թ. ԱԺ-ն փոփոխություն է կատարել օրենքում և 24-րդ հոդվածի 3-րդ մասի «2019» թիվը փոխարինել է «2024» թվով^{xl}: Վերը նշված օրենքի դրույթները տարածվում են 2021թ. մարտի 28-ից հետո ընկած

ժամանակահատվածի վրա: 2020թ. գործող օրենքով ՀՀ կառավարությունը պետք է 2019թ. հաշվետու ժամանակահատվածի համար պատրաստեր և հրապարակեր վերը նշված ֆինանսական հաշվետվությունները, ինչը սակայն չի արել:

Օրենքում փոփոխության նախագիծը քննարկելիս, որպես հարակից զեկուցող հանդես եկող պատգամավորը^{cxii} հայտարարեց, «որ այս փոփոխությունների արդյունքում մենք կունենանք միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվառում պետական համակարգում, նաև հնարավորություն կտանք՝ ներքին աուդիտի և Հաշվեքննիչ պալատի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար ստեղծել բազա»^{cxiii}, սակայն չներկայացրեց, թե ինչու՞ ՀՀ կառավարությունը 2019թ. համար չի պատրաստել օրենքով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները: Նման մոտեցումը թույլ չի տալիս բացահայտել խնդիրները և դրանց պատճառները, կատարելագործել պետական կառավարման համակարգի աշխատանքը:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» եզրակացության մեջ ՀԴ-ն արձանագրել է, որ կատարված փոփոխության արդյունքում ՀԴ-ն հնարավորություն չունի աուդիտի ենթարկել ՀՀ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, սակայն չի արձանագրել ՀՀ կառավարության կողմից օրենքի խախտումը, քանի որ ՀԴ 2022թ. փետրվարի 9-ի ՀԴ-ԳՎ-43 գրության համաձայն պալատը «որակում չի տալիս»:

2) ՀՀ-ում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված իրականացվող հաշվեքննությունների կասեցման հետ կապված ՀԴ-ն տեղեկացրել է, որ պալատի աշխատակիցները կամավորագրվել և մասնակցել են ռազմական գործողություններին:

3) Բիզնեսից օտարված մոտավորապես 500 մլն դոլարի վերաբերյալ հարցերին ՀԴ-ն պատասխանել է, որ իր տարեկան գործունեության ծրագրում ՀՀ վարչապետի կողմից նշված բիզնեսից օտարված միջոցների հաշվեքննություն չի իրականացրել:

4) ՀՀ վարչապետի կողմից 2021թ. մայիսի 5-ին հայտարարված ինժեներական կառույցների ֆինանսավորման համար բյուջեից կատարված հատկացումների նպատակային և արդյունավետ օգտագործման և ինժեներական կառույցների առկայության հաշվեքննություն չի իրականացրել:

ՀՀ որևէ պետական կառույց չի իրականացրել վերահսկողություն ՀՀ վարչապետի կողմից վերը նշված երկու նպատակների՝ բիզնեսից օտարված մոտավորապես 500 մլն դոլարի և ինժեներական կառույցների ֆինանսավորման համար բյուջեից կատարված մի քանի հարյուր միլիարդ դրամ հատկացումների նպատակային, արդյունավետ և ինսյոդական օգտագործման նկատմամբ:

5) 2019թ. ՀՀ պետական բյուջեում կատարված վերաբաշխումների ծավալի օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ հարցին ՀԴ-ն պատասխանել է, որ բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունները կրել են «ձևաչափային էական փոփոխություն» և առաջարկել է ՀՀ բյուջետային օրենսդրության վերաբերյալ պարզաբանումների և հաշվարկների մասով դիմել ՀՀ ՖՆ: Այսինքն, ՀԴ համաձայն վերահսկվողը պետք է մեկնաբանի այն ակտի կատարման օրինականությունը, որի նկատմամբ ՀԴ-ն վերահսկողություն է իրականացնում:

ՀԴ կողմից ԱԺ ներկայացված եզրակացության^{cxliii} մեջ նշված և հանրային ու փորձագիտական շրջանակներում քննարկվող մի շարք կարևոր և հանրային հետաքրքրություններ ներկայացնող տվյալներ ԱԺ կողմից քննարկման առարկա չեն դարձել: 2020թ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ իր եզրակացության մեջ ՀԴ-ն ուշադրություն է հրավիրել ներքին աուդիտի գործառույթի, պետական գնումների, կրթության ֆինանսավորման հետ կապված հարցերի վրա (վերջին դեպքում արձանագրելով գրեթե 2.5 մլրդ ՀՀ դրամ ծավալով հավելյալ ֆինանսավորում): ՀԴ 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության մեջ բարձրաձայնված առանձին խնդիրներ, որոնք կարող էին, սակայն չեն դարձել ԱԺ քննարկման առարկա ներկայացված են դեպքի նկարագրություն N°2-ում: Դեպքի նկարագրություն N°3-ում ներկայացված են ՀԴ բացահայտումները կրթության ոլորտում: Դեպքի նկարագրություն N°4-ում ներկայացված են Վերահսկիչ պալատի (այսուհետ՝ ՎԴ) կողմից 2011-2012թթ. կատարված բացահայտումները, որոնք բացի մամուլի հնչեղ գլխագրեր դառնալը այլ հետևանքներ չեն ունեցել:

Դեպքի նկարագրություն N°2. ՀԴ եզրակացության արձանագրումներ

ՀԴ-ն բարձրաձայնել է ներքին աուդիտի (այսուհետ՝ ՆԱ) հետ կապված մտահոգությունների մասին, նշելով, որ ՆԱ որակն անկում է ապրել, ինչը «տեղի է ունենում ներքին աուդիտի գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու ֆոնին»: ՀԴ-ն արձանագրել է, որ 2018-2020թթ. ընթացքում իրականացվել է ՆԱ «Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ» տեսակի **0 հատ առաջադրանք**: Մինչդեռ, ՀԴ համաձայն, **«Նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) մեկնարկից ի վեր առցանց իրականացվող գործառնությունների թվի էական աճի պայմաններում էապես աճել են կիբերանվտանգության ռիսկերը»**: Չնայած պետական ֆինանսների կառավարման 2019-23 թվականների ռազմավարությամբ սահմանվել է, որ ՆԱ-ների տարեկան ծրագրերի առնվազն 30%-ը պետք է կազմեն կատարողական աուդիտները, 2018թ. և 2019թ. համապատասխանաբար 46 և 55 հատ կատարողական աուդիտների համեմատ 2020թ. իրականացվել է **0 հատ կատարողականի աուդիտ**: ՀԴ-ն արձանագրել է, որ ՆԱ համակարգի այսպիսի աշխատանքի պայմաններում կարող են ժամանակին չբացահայտվել և չկանխարգելվել պետական մարմինների ներքին հսկողության համակարգի թերացումները:

Դեպքի նկարագրություն N°3. ՀԴ կողմից ԿԳՄՍ նախարարությունում հայտնաբերված անհամապատասխանությունները

ՀԴ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» եզրակացության համաձայն 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արդյունքում ամենից շատ՝ 44 անհամապատասխանություն, կամ բոլոր անհամապատասխանությունների 25.73% հայտնաբերվել է ԿԳՄՍ նախարարությունում: ՀԴ համաձայն բանաձևի կիրառման դեպքում 101 դպրոցների 28,827 աշակերտի հաշվով տարեկան ֆինանսավորումը պետք է կազմեր 5.99 մլրդ դրամ: ԿԳՄՍ նախարարության կողմից գործակիցների սխալ կիրառման և «Ավագ դպրոց» ու «Առանձին գործող ավագ դպրոց» հասկացությունների ոչ հստակ սահմանման հետևանքով կազմել է 8.48 մլրդ դրամ, կամ օրենքով նախատեսվածից 2,482,537.7 հազար դրամով ավելի:

Դեպքի նկարագրություն N°4. Գնումների համակարգում իրավիճակի վերաբերյալ ՎՊ բացահայտումները

Արդեն երկար տարիներ փորձագետները, ԶԳ-ները, լրատվամիջոցները, միջազգային կառույցները բարձրաձայնում են Հայաստանի պետական գնումների համակարգում առկա համակարգային խնդիրների մասին: ՀՊ եզրակացության համաձայն 2020թ. կազմակերպված գնումների դեպքում, ըստ ընթացակարգերի միջին մասնակցության ցուցանիշն ունեցել է աղյուսակ 4-ում ներկայացված տեսքը: Պետական մարմինների կնքած գնման պայմանագրերի 39.4%-ը կնքվել է մեկ անձից գնման ձևով (125 միլիարդ 592 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր գումարով):

Չնայած գնումների համակարգի աշխատանքի քննադատությանը և գնման ընթացակարգերում մրցակցության աստիճանը բարձրացնելու ՀՀ կառավարության մշտական ջանքերին^{cxiv} պետական բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները ուշադրության չեն արժանացել: Հարց չի առաջացել, թե օրինակ, ինչու՞ է «Հրատապ բաց մրցույթին» մասնակցության միջին ցուցանիշն ավելի բարձր «Բաց մրցույթին» մասնակցության միջին ցուցանիշից: «Էլեկտրոնային աճուրդին» մասնակցության միջին ցուցանիշը 1.1 է, «Բաց մրցույթին»՝ 2.3 է, «Հրատապ բաց մրցույթին»՝ 3.1:

Աղյուսակ 4. Միջին մասնակցության ցուցանիշն ըստ գնման ձևի

Գնման ձևը	Միջին մասնակցություն	Գնման ձևը	Միջին մասնակցություն
Բաց մրցույթ	2.3	Գնանշում հարցում	2.2
Հրատապ բաց մրցույթ	3.1	Էլեկտրոն աճուրդ	1.1
Երկփուլ մրցույթ	1.0	Մեկ անձ	1.0
Շրջանակային համաձայնագիր	1.0	ԸՆԴԱՄԵՆԸ	1.7

Աղբյուր. ՀՀ Հաշվեքննիչ պալատ, Նշել աղբյուրը լիովին

Գնումների համակարգին անդրադարձել են նաև ՀՊ-ից առաջ գործած ԱԺ վերահսկիչ պալատը և ՀՀ վերահսկիչ պալատը (այսուհետ՝ ՎՊ): 2012թ. ՎՊ Նախագահը հայտարարեց մոտ 1.5 մլրդ դրամի խախտումների հայտնաբերման մասին^{cxiv} և անընդունելի էր համարել ՎՊ-ում քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների ընդգրկումը, քանի որ այն անկախ մարմին է^{cxvi}:

Մեկ տարի հետո ՎՊ Նախագահը խոսեց մեծ վատնումների մասին^{cxlvii} և նշեց, որ իրավիճակը գնումների համակարգում խիստ մտահոգիչ է, քանի որ *խնդիրներն ունեն համակարգային բնույթ*: Ի. Չաքարյանը հայտարարեց, որ ՀՀ ՖՆ-ն «բազմիցս նշել է, որ գնումների ոլորտում առկա ռիսկերն էապես նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել Էլեկտրոնային գնումների համակարգ», որի գծով աշխատանքներն իրականացվում են 2004թ.: Նա նշեց, որ «2011 թվականին Ֆինանսների նախարարությունը պաշտոնապես հայտարարել է, որ Էլեկտրոնային գնումների համակարգը, կարծես թե, չի աշխատում, իսկ ակնկալվող արդյունքները լավագույնը չեն: Այնուամենայնիվ, ուսումնասիրությամբ պարզվել է, որ համակարգը փաստացի չի գործում, եւ նույնիսկ գործընթացում խնդիրները զնալով ավելանում են: Դեռ ավելին, ծրագրի բանալիները՝ կողերը, պարզապես, գոյություն չունեն, եւ ծրագիրը ձախողված է: Այս փաստը 2012 թվականի տարեվերջին պաշտոնապես ընդունվել է նաեւ Ֆինանսների նախարարության կողմից: Այսինքն՝ օգտագործված ռեսուրսները չեն տվել ակնկալվող արդյունքները»: Ի. Չաքարյանը նշում էր, որ ՀՀ ՖՆ-ն մշակել է ՀՀ

Էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների «2013-2015թթ. ճանապարհային քարտեզ», որը նախատեսում է շտկել խափանված համակարգը եւ զարգացնել դրա մնացած հնարավորությունները: ՎՊ նախագահի կարծիքով առանց ծրագրի ծախողմանը պատճառները և հետագայում դրանք չկրկնելու ռիսկերի կառավարման մեխանիզմներն ուսումնասիրելու լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացումը նվազեցնում է պլանավորվող բարեփոխումների հուսալիությունը: Իշխան Չաքարյանը հայտարարում էր, որ «հասել ենք մի եզրագծի, որտեղ հստակ ասել ենք՝ պետական բյուջեի ծախսային մասի 70%-ը, որը վերաբերում է «գնումներ եւ շինարարություն» ոլորտին, որ այս պահին կրում է խիստ ռիսկային, կոռումպացված բնույթ»: Նա նշել էր, որ խանութներում մեկ մետրը 110 դրամով (գումարած 20% ԱԱՀ-ն) վաճառվող մալուխը դատարանների շենքերի կառուցման նախահաշիվներում պլանավորվել է մեկ մետրը 1007 դրամ: Քննարկման ժամանակ ԱԺ իշխանական խմբակցության որոշ անդամների ելույթներ և հայտարարություններ ընդդիմադիր տպավորություն էին թողնում^{cxlviii}: Հունիսի 18-ին ԱԺ-ում ՎՊ հաշվետվության քննարկման ժամանակ, պատասխանելով ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին, Իշխան Չաքարյանն ուղղակի պնդեց. «Եժան, թանկ գումարում ենք, հանում ենք, էլի 200 քանի միլիոն ավել գումար եք տարել էլ յոթ կառույցների հետ կապված»^{cxlix}:

2013թ. հունիսի 29-ին բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված հարցերի շուրջ քննարկման ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիմանեց ՎՊ նախագահին. «Դուք պարզ պետք է հասկանաք, որ որևէ մեկը Ձեր կարծիքը չի ակնկալում լսել: Բոլորի համար մեկ է, թե Դուք ինչ կարծիք ունեք դատախազության մասին կամ մեկ ուրիշի մասին: Դուք հիասթափված եք, ոգևորված եք, դա Ձեր անձնական խնդիրն է: Ձեր տանը կարող եք դրա մասին խոսել: Երբ գաք իմ կաբինետ, իմ կաբինետում կարող եք դրա մասին խոսել: ՎՊ նախագահն ի՞նչ իրավունք ունի այդպիսի հրապարակային արտահայտություններ անել»^{cl}: ՀՀ նախագահը «սխալ և անհեռատես» էր համարել ՎՊ նախագահի հայտարարությունը^{cl}: Սերժ Սարգսյանը նաև հանդիմանել էր դատախազությանը, որ այն 2-3 օրում չի անցել ՎՊ նախագահի հաշվետվության և հայտարարության վրայով և ասել «ՀՀ հարգելի՜ քաղաքացիներ, ՎՊ-ի հաշվետվության մեջ ընդամենը 200 կամ 300 մլն դրամի հափշտակման կասկածանքի դեպքեր կան, մնացած բոլորը հեքիաթներ են»: Սերժ Սարգսյանը չէր հստակեցրել, թե որտեղից է իրեն հայտնի «ընդամենը 200 կամ 300 մլն դրամի հափշտակման կասկածանքի դեպքեր»-ի մասին: ԱԺ պատգամավորները չհետաքրքրվեցին այդ թվերի ճակատագրով: 2015թ. պատգամավոր Նիկոլ Վովայի Փաշինյանը («Հայ ազգային կոնգրես») 2013թ. բացահայտումները բացատրում էր ներհիշխանական պայթարով^{clii}:

ԱԺ իշխանական և ընդդիմադիր պատգամավորները չքննեցին, թե արդյոք վերը նշված հանդիմանանքը կարելի է դիտարկել որպես ճնշում ՎՊ և նրա նախագահի նկատմամբ: 2018թ. օրենսդրական փոփոխություններից հետո ՎՊ-ն վերածվեց ՀՊ-ի, իսկ պալատի նախագահը դադարեց աղմկահարույց հայտարարություններ անել պետական բյուջեից միջոցներ «տանելու» մասին:

Ակնկալվում էր, որ 2018թ. հեղափոխությունից հետո նոր իշխանությունները կվերլուծեն տարբեր ոլորտներում և բնագավառներում կուտակված համակարգային խնդիրները պատճառները և հանրային լայն քննարկում ծավալելով լուծումներ կգտնեն դրանց: Սակայն ինչպես այլ ոլորտներում և բնագավառներում, նոր իշխանությունները չվերլուծեցին նաև գնումների բնագավառում կուտակված համակարգային խնդիրների պատճառները, տեխնոլոգիական աուդիտի չենթարկեցին Էլեկտրոնային գնումների համակարգը, որը ՎՊ

Նախագահի համաձայն 2011-2013թթ. կարծես թե չէր աշխատում: Հեղափոխությունից հետո կայացած միակ Նշանակալի հանրային միջոցառման ժամանակ, 2020թ. փետրվարի 21-ին կազմակերպված «Պետական գնումների համակարգի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով խորհրդարանական լսումների մասնակիցները չարձանագրեցին համակարգային խնդիրները^{cliii}: Լսումները նախագահողը^{cliv} նշեց կառավարության կողմից ներդրված երաշխիքների ինստիտուտի մասին (քանի որ որոշակի խնդիրներ է ստեղծում հատկապես ՓՄՁ-ների համար), առանձնացրեց բողոքներ քննող անձանց հետ կապված հարցերը (սույն անձը համանման բողոքների քննության դեպքում տարբեր որոշումներ է կայացնում), հաշտվողականության և ՓՄՁ-ների կողմից ցածր հետաքրքրվածության մասին^{clv}: «Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արմենուհի Բումնազյանը մշտադիտարկումների արդյունքում արձանագրել էր ոչ մրցակցային գնումների թվի աճ: «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»-ի նախագահ Աշոտ Մելիքյանն անդրադարձել էր քննարկվող ոլորտին վերաբերող տեղեկատվության ազատությանը, կոռուպցիայի դեմ պայքարին եւ հաշվետվողականությանը: Հանրությունը տեղյակ չէ լսումների արդյունքում գնումների համակարգի բարելավման և լավ աշխատանքի մասին:

4.3. Գրավոր հարցեր

Պատգամավորներն իրավունք ունեն գրավոր հարցեր ուղղել ՀՀ կառավարության անդամներին (Կանոնակարգի հոդված 119): Գրավոր հարցերին պետք է պատասխանեն վարչապետը, կամ նրա հանձնարարությամբ ՀՀ կառավարության անդամը: Գրավոր հարցերի պատասխանները տեղադրվում են ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱԺ աշխատակազմն իր 2022թ. փետրվարի 7-ի գրությամբ տեղեկատվություն է տրամադրել ՀՀ կառավարությանը ԱԺ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարման պատգամավորների հղած գրավոր հարցերի մասին (աղյուսակ 5): ՀՀ ԱԺ աշխատակազմի 2022թ. փետրվարի 4-ի գրության համաձայն ԱԺ 8-րդ գումարման պատգամավորներից ՀՀ կառավարությանը գրավոր հարցեր ուղղել են Սեյրան Մուշեղի Օհանյանը («Հայաստան») և Աննա Արայի Մկրտչյանը («Պատիվ ունեմ»): Վերջիններիս գրավոր հարցերի հետ կապված ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար Վ. Նարիբեկյանին հղված իրենց պատասխանում շրջակա միջավայրի (այսուհետ՝ ՇՄ) նախարարը և ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղարը պատասխանել են համապատասխան ջրավազանային կառավարման պլանի փոփոխման և ռազմագերիների ու 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքների հետ կապված հարցերին:

Աղյուսակ 5. ՀՀ կառավարությանը ԱԺ պատգամավորների հղած գրավոր հարցերի քանակն ըստ խմբակցությունների

Խմբակցության անունը	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
ԱԺ վեցերորդ գումարում					
Հայաստանի Հանրապետական կուսակց.		4			
Ծառուկյան	2	6			
Ելք					
ՀՀԴ	3	1			
ԱԺ յոթերորդ գումարում					
Իմ քայլը					
Բարգավաճ Հայաստան				14	
Լուսավոր Հայաստան	5				
ԱԺ ութերորդ գումարում					
Քաղաքացիական պայմանագիր				8	
Հայաստան					1
Պատիվ ունեմ					1

Աղբյուր. ԱԺ աշխատակազմ


ԱԺ-ից ստացված գրությունը առկա է հավելված 16-ում: Տրամադրված տեղեկատվության մեջ ուշադրության են արժանի հետևյալ հանգամանքները.

- (1) ԱԺ 2022թ. փետրվարի 4-ի պատասխանի համաձայն «Ազգային ժողովի 8-րդ գումարման պատգամավորներից Կառավարությանը գրավոր հարցեր ուղղել է երկու պատգամավոր՝ Սեյրան Օհանյանը և Աննա Մկրտչյանը»: Փետրվարի 7-ի պատասխանի մեջ նշվել է, որ ԱԺ 8-րդ գումարման «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները 8 գրավոր հարց են ուղղել ՀՀ կառավարությանը:
- (2) 2020թ. ԱԺ-ում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն չի եղել:
- (3) ԱԺ պատասխանի համաձայն «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորները 2017թ. 5 գրավոր հարցում են հղել ՀՀ կառավարությանն, այն դեպքում, երբ «Լուսավոր Հայաստան»-ը ԱԺ-ում ներկայացված է եղել 2019-2021թթ.:

- (4) «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները գործունեության ամբողջ ընթացքում ՀՀ կառավարությանը ոչ մի գրավոր հարց չեն ուղղել:
- (5) Աժ գրության համաձայն 2019թ. որևէ խմբակցություն կառավարությանը գրավոր հարց չի ուղղել:

Աժ տեղեկատվության ազատության պատասխանատուն հայտնել է, որ «Աժ պատգամավորների՝ կառավարության անդամներին ուղղված գրավոր հարցերի պատասխանները հրապարակվում են <http://www.parliament.am/> կայքի՝ Կառավարությանը գրավոր հարցեր ուղղած պատգամավորների կենսագրությունների էջերում»: Դիտվել են Աժ 7-րդ և 8-րդ գումարումների բոլոր պատգամավորների Աժ կայքում կենսագրությունների էջերը: Գրավոր հարցում ուղարկած երկու պատգամավորների էջերում կառավարությանն ուղղված գրավոր հարցերն առկա են «Հերթական համար», «Ճննդյան թիվ», «Կուսակցություն», «Խմբակցություն», «Անդամակցություն» և «Էլ. փոստ» տողերից հետո, պատգամավորի կենսագրության անմիջապես վերևում (տես պատկեր 3):

Պատկեր 3. ՀՀ կառավարություն գրավոր հարցում ուղարկած 8-րդ գումարման Աժ պատգամավորների ինտերնետային էջերը



Աղբյուր. Աժ ինտերնետային կայք

2022թ. փետրվարի 6-ին («Իմ քայլը») և 7-ին («Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան») Աժ 7-րդ գումարման, փետրվարի 8-ին («Զաղաքացիական պայմանագիր» և «Պատիվ ունենա») և 9-ին («Հայաստան») Աժ 8-րդ գումարման խմբակցությունների պատգամավորների կենսագրությունների էջերի ուսումնասիրության արդյունքում, բացի վերը նշված երկու պատգամավորները, գրավոր հարցերի վերաբերյալ տեղեկատվություն հայտնաբերվել է միայն «Լուսավոր Հայաստան» խմբակցության մեկ պատգամավորի^{clvi} էջում: Նախկին պատգամավորները հայտնել են, որ գրավոր հարցումներ են հղել ՀՀ կառավարությանը: «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորները^{clvii} տրամադրել են իրենց հղած գրությունների և ստացած պատասխանների պատճենները, որոնք Աժ ինտերնետային կայքի կենսագրության էջերում առկա չեն (բացի վերը նշված մեկ դեպքում):

2021թ. նոյեմբերի 3-ին պետական-իրավական և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2022թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ ընդդիմադիր պատգամավորը հայտնել է^{clviii}, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց ստացած պարգևավճարների մասին տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով գրավոր դիմել է ՀՀ ՖՆ և չի ստացել հետաքրքրող հարցի պատասխանը (ՀՀ ՖՆ-ն առաջարկել է ուսումնասիրել հայտարարագրերը): ՀՀ ֆինանսների նախարարը պատասխանում է, որ պարգևավճարների վերաբերյալ անվանական տեղեկատվության տրամադրումը ՀՀ ՖՆ իրավասության սահմաններից դուրս է և որ պատասխան գրությամբ նախարարությունը պատգամավորին

հուշել է, թե ինչպես կարելի է ստանալ այդ տեղեկատվությունը: **Վերը նշվել է, որ տեղեկատվության ազատության պատասխանատուն հայտնել է, որ ԱԺ 8-րդ գումարման պատգամավորներից 33 կառավարությանը գրավոր հարց ուղղել է երկու պատգամավոր (վերը նշվածը հիշատակում է երրորդ գրության վերաբերյալ):**

4.4. Բանավոր հարցեր

Հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում պատգամավորներն իրավունք ունեն բանավոր հարցեր ուղղել ՀՀ կառավարության անդամներին (Կանոնակարգի հոդված 120): Պատգամավորների հարցերի կապակցությամբ ԱԺ-ն որոշումներ չի ընդունում:

Հետագոտության ընթացքում դիտվել են ՀՀ պատգամավորների կողմից հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում բանավոր հարցեր տալու մի քանի ժամ տեսաձայնագրություն: Ուսումնասիրվել է մի քանի նիստի տղագրություն: ՀՀ կառավարության անդամներին տրվող հարցերի քանակի, որակի և ձևի վերաբերյալ պատկերացում կազմելու համար քննարկումներ են եղել նախկին պատգամավորների և լրագրողների հետ: Ուսումնասիրվել են նաև սոցիալական ցանցերում գրառումներն ու հրապարակումները:

-

4.5. ՀՀ կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը

Կանոնակարգի հոդված 121-ի համաձայն խմբակցությունն իրավունք ունի յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում առավելագույնը մեկ անգամ կառավարության անդամին գրավոր հարցապնդում ուղարկել: Հարցապնդմանը տրված պատասխանի քննարկման արդյունքով խմբակցությունը կարող է ՀՀ վարչապետին առաջարկել քննարկել կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը կամ անվստահություն հայտնել վարչապետին: Գրավոր հարցապնդումների քանակի մասին տվյալները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Կանոնակարգի հոդված 121-ի համաձայն ԱԺ խմբակցությունների կողմից ուղարկված հարցապնդումներ

Խմբակցության անունը	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
ԱԺ վեցերորդ գումարում				
Հայաստանի Հանրապետական կուսակց.				
Ծառուկյան				
Ելք				
ՀՅԴ				
ԱԺ յոթերորդ գումարում				
Իմ քայլը				
Բարգավաճ Հայաստան				
Լուսավոր Հայաստան		2		
ԱԺ ութերորդ գումարում				
Քաղաքացիական պայմանագիր				
Հայաստան				1
Պատիվ ունեմ				

Աղբյուր. ԱԺ աշխատակազմ

Աղյուսակ 6-ում ներկայացված տեղեկատվությունը վկայում է.

- 1) ԱԺ աշխատակազմում տեղեկատվության և տվյալների հաշվառման հետ կապված դժվարությունների մասին, քանի որ այս հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն առնվազն երեք անգամ 121 հոդվածի հիմքով որոշման նախագիծ է ներկայացրել ԱԺ: Չի կարելի բացառել, որ եղել են հարցապնդումներ, որոնց հետ կապված նման որոշումների նախագծեր չեն ներկայացվել:
- 2) ԱԺ խմբակցությունները գրեթե չեն օգտվել այս գործիքից:
- 3) ԱԺ իշխանական խմբակցություններն ընդհանրապես չեն օգտվում հարցապնդումների օգնությամբ ՀՀ կառավարության, առանձին նախարարների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի կադրային քաղաքականության վրա ազդելու այս հնարավորությունից:

2019-2020թթ. «Լուսավոր Հայաստան»-ը ՀՀ վարչապետին է ներկայացրել երեք նախարարների պաշտոնավարման հարցը քննարկելու վերաբերյալ առաջարկություն (աղյուսակ 7): Բոլոր երեք դեպքերում ՀՀ ԱԺ-ն չի ընդունել կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը ՀՀ վարչապետին ներկայացնելու վերաբերյալ որոշում:

Աղյուսակ 7. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածով ՀՀ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին դեպքերը

	Առաջարկի քվեարկու- թյան օրը	Պաշտոնից հեռանալու օրը
ՀՀ ֆինանսների նախարար Ա. Չանջուղազյան	18/04/2019	25/04/2021
ՀՀ շրջակա միջավայրի նախարար Է. Գրիգորյան	05/12/2019	05/05/2020
ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյան	17/09/2020	23/11/2020

Աղբյուր. ՀՀ Ազգային ժողով, ՀՀ նախագահի ինտերնետային կայք

Ծանոթություն. ՀՀ ֆինանսների նախարարի դեպքում որպես պաշտոնից հեռանալու օր է դիտարկվել ՀՀ վարչապետի հրաժարականի օրը, քանի որ Ն. Փաշինյանի վերընտրվելուց հետո Ա. Չանջուղազյանը չի վերանշանակվել: ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության դեպքում դիտարկվել է պաշտոնից ապատվելու վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրի օրը:

Որոշումների ընդունմանը դեմ են քվեարկել «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները: ՀՀ ֆինանսների նախարարի վերաբերյալ նախագծի դեպքում «Բարգավաճ Հայաստան» աջակցել է «Լուսավոր Հայաստան»-ին:

Ի տարբերություն իշխանական «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների, ընդդիմադիր պատգամավորները հետաքրքրվել են կառավարության անդամների պաշտոնանկության պատճառներով: 2020թ. մայիսի 6-ին պատասխանելով ընդդիմադիր պատգամավորի^{clix} նախարար Էրիկ Գրիգորյանի պաշտոնից ազատելու պատճառների մասին հարցին ՀՀ վարչապետը պատասխանել է, որ չգիտի գոհ է, թե գոհ չէ նախարարների աշխատանքից և շնորհակալություն հայտնել է. Գրիգորյանին^{clx}: Հանրությունը չտեղեկացավ կառավարության անդամների պաշտոնանկության պատճառները:

2022թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների արանքում, ԱՍՀ նախարարը պատասխանել է հետպատերազմյան շրջանի հետ կապված «Հայաստան» խմբակցության հարցապնդմանը («Հայաստան» խմբակցության պատգամավորները դաիլիճում չէին)^{clxi}: Նախարար Ն. Մկրտչյանի ելույթից հետո հարցեր չեն հնչել և մտքերի փոխանակություն չի եղել:

4.6. Լսումներ

Կանոնակարգի համաձայն խորհրդարանական լսումներ կարող են հրավիրել պատգամավորները (հոդված 4), ԱԺ նախագահը (հոդված 5), խմբակցությունները (հոդված 8) և մշտական հանձնաժողովները (հոդված 12): Լսումների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատվում է լսումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է ԱԺ ինտերնետային կայքում (հոդված 125): ԱԺ աշխատակարգի 90-րդ մասով նախատեսվում է, որ լսումներ հրավիրողը կարող է նախապատրաստել իր հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթ, առաջարկ, եզրակացություն, տեղեկանք և լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ ԱԺ նախագահի համաձայնությամբ:

6-րդ գումարման ԱԺ «ջանքերի» շնորհիվ լսումների արդյունքների հավաքագրմանը և հանրայնացմանը միտված կարգավորումները զրկվել են որոշակիությունից, դարձել հայեցողական և ձևական^{clxii}: Հաջորդ գումարումների ԱԺ-երը չեն ձեռնարկել իրավիճակը շտկելուն միտված գործողություններ:

7-րդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում հրավիրված 5 լսումներից ոչ մեկի դեպքում ոչ միայն չեն հրապարակվել կանոնակարգով նախատեսված նյութերը, այլև անգամ ԱԺ կայքի համապատասխան բաժիններում չեն հրապարակվել լսումների արձանագրությունները^{clxiii}: Չորրորդ նստաշրջանի ընթացքում հրավիրված 6 լսումներից և ոչ մեկի դեպքում ԱԺ պաշտոնական կայքում չեն հրապարակվել դրանց առնչվող գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ կամ լսումների արդյունքներն ամփոփող նյութեր^{clxiv}: Լսումների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակվել է դրանց մասին հրապարակված մամլո հաղորդագրություններով, հանձնաժողովների նիստերի ընթացքում լսումների անցկացման վերաբերյալ որոշման արձանագրությամբ ու անցկացման մասին իրազեկման հայտարարությամբ: Լսումների ինստիտուտի առաջնային նպատակը և արդյունավետության ցուցիչը դրանց ազդեցությունն է, որը գործող կարգավորումներով չափելի չէ^{clxv}: ԱԺ 6-րդ գումարման ընթացքում 2017թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցած «Աղետների ռիսկերի կառավարման բնագավառում ազգային կարողությունների զարգացումը» թեմայով խորհրդարանական լսումների արդյունքներով կազմվել է արձանագրություն: Parliament Monitoring-ի կարծիքով «քաղաքական ուժերը լսումները չեն դիտարկում որպես օրինաստեղծ քաղաքականության առաջնահերթությունները գեներացնելու հնարավորություն»^{clxvi}:

2019թ. հոկտեմբերի 7-ին ԱԺ նախագահը^{clxvii} գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի ոտնահարման խնդիրների թեմայով լսումներ էր կազմակերպել և Հյուսիսային պողոտայի կառուցապատման հետևանքով տուժած քաղաքացիների բողոքներն ուղարկել էր դատախազություն: Չնայած կոռուպցիոն հանցագործությունների մասին ԱԺ նախագահի պնդումներին, լսումներից 2.5 տարի հետո քրեական գործ չի հարուցվել^{clxviii}:

2020թ. փետրվարի 21-ին ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը «Պետական գնումների համակարգի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով խորհրդարանական լսումներ էր կազմակերպել^{clxix}: «Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ն (գործադիր տնօրեն Արմենուհի Բուռնազյան) մշտադիտարկումների արդյունքում արձանագրել էր ոչ մրցակցային գնումների թվի աճ: «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»-ի

Նախագահ Աշոտ Մելիքյանն անդրադարձել էր քննարկվող ոլորտին վերաբերող տեղեկատվության ազատությանը, կոռուպցիայի դեմ պայքարին եւ հաշվետվողականությանը: Լսումների մասնակիցներից մեկը բարձրաձայնեց անցյալ տարի ArmEps-ի սերվերի խափանման և այդ սերվերի հետագա ճակատագրի հետ կապված անորոշության մասին: Լսումների արդյունքները հանրությանն անհայտ մնացին: ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության մասին Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը վկայում է, որ բարձրացված հարցերի զգալի մասը լուծում չի ստացել, ինչը վկայում կուտակված մարտահրավերների խորացող բնույթի մասին:

Որոշ լսումների վերաբերյալ ԱԺ կայքում առկա տեղեկատվության հղումների ցանկը ներկայացված է հավելված 17-ում

4.7. Դիմում Սահմանադրական դատարան

ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ ՍԴ) որոշում է օրենքների, ԱԺ որոշումների, ՀՀ նախագահի հրամանների և կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրության 169-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն, Սահմանադրության 168-րդ հոդված 1-ին կետի հետ կապված ՍԴ կարող է դիմել պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդը: 6-րդ գումարման ԱԺ-ն մեկ անգամ է վիճարկել օրենսդրական ակտի Սահմանադրությունը (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. ԱԺ պատգամավորների ՍԴ ներկայացված դիմումները (հատ)

	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
6-րդ գումարում	1				
7-րդ գումարում			2	1	
8-րդ գումարում				9	5

Աղբյուր. ՀՀ Սահմանադրական դատարան

Համաձայն ՍԴ (հավելված 18) 8-րդ գումարման պատգամավորները դիմումներ են ներկայացվել ԱԺ 2021թ. օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշման^{clxx}, վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 79-րդ և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 287-րդ^{clxxi}, դատական օրենսգրքի 80-րդ, 86-րդ հոդվածների^{clxxii}, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի^{clxxiii}, ՀՀ վարչատարածքային բաժանման մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների^{clxxiv}, Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի^{clxxv}, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի^{clxxvi}, Կանոնակարգի 121-րդ հոդվածի^{clxxvii}, դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի^{clxxviii} Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ: ՍԴ-ն մերժել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և Կանոնակարգի^{clxxix} և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերի^{clxxx} քննությունը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի Սահմանադրության 179-րդ և 181-րդ հոդվածների համապատասխանության վերաբերյալ հարցը որոշելու վերաբերյալ հարցը^{clxxxi} գտնվում է նախնական ուսումնասիրման փուլում:

2022թ. փետրվարի 1-ին ՍԴ-ն որոշում է կայացրել կանոնակարգի 52-րդ^{clxxxii}, քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ և 295-րդ^{clxxxiii}, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենքի 20.1-ին և 22-րդ հոդվածների^{clxxxiv} Սահմանադրության համապատասխանության, իսկ ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի №65-Ն հրամանի մի շարք կետեր Առողջապահության նախարարի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից դուրս լինելու վերաբերյալ:

Եզրակացություն

Պետական բաղաբաղանությունները բարելավելու, փաստերի վրա հիմնված բաղաբաղանությունների համար հիմքեր ձևավորելու փոխարեն **ԶՀ-ները** դարձել են բաղաբաղան պայթարի և ամբոխահաճո ու ականջահաճո գործունեության հերթական

հարթակ, ուր իշխանությունն ու ընդդիմությունն անձնական հարաբերություններ են պարզում: Զաղաքացիների համար կարևորագույն՝ անվտանգության, աշխատատեղերի, կրթության, առողջության, սոցիալական, գնաճի և այլ հարցերի հետ կապված մտահոգությունները չեն փարատվում:

Շարունակական քննարկումների, քննումների և քննությունների շոշափելի արդյունքների բացակայությունը ԱԺ գործունեությունից հանրության մի մասի դժգոհության պատճառ է: ԶՅ-ների աշխատանքի արդյունավետությունը զգալի չափով կախված է ԱԺ մեծամասնության կամքից: Մինչ այժմ ստեղծված ԶՅ-ների գործունեության ուսումնասիրությունը հուշում է, որ ԶՅ անդամների ժամանակը նպատակային և արդյունավետ չի օգտագործվում:

Գրեթե բոլոր ԶՅ-երի անվան մեջ նշվում է, որ այն ստեղծվել է որոշակի հարց ուսումնասիրելու նպատակով: Սակայն ԶՅ-ների կողմից ուսումնասիրվող հարցերի ձևակերպումներն ընդհանրական են: Դժվար է ակնկալել, որ ԶՅ-ն կարող է լուծումներ առաջարկել, երբ խնդիրը լավ չի ձևակերպված: ԱԺ ինտերնետային կայքում հասանելի երկու ԶՅ-ների զեկույցները շատ ընդհանրական են:

Առանձին դեպքերում ԱԺ-ն շտապողականություն է դրսևորում հարցն ուսումնասիրելու գործում և փորձում է ՀՀ կառավարության գործունեությունը քննել դեռևս ընթացքում գտնվող իրադարձությունների ժամանակ: Օրինակ, COVID 19 ԶՅ-ն ստեղծվել է համավարակի ընթացքում, այնինչ համավարակի դեմ պայքարում ՀՀ կառավարության գործողությունների արդյունքները պարզ կլինեն համավարակի ավարտից հետո: Ի լրումն, ԶՅ-երի կողմից քննվող առանձին հարցերի մասնագիտական բնույթը և դրանց վերաբերյալ փորձագիտական աջակցության բացակայությունը կարող է ազդել ԶՅ-ների աշխատանքի վրա:

Սահմանադրության համաձայն պատգամավորը «կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով» (հոդված 94): Հանրության մի մասը չի հավատում ԱԺ և ԱԺ պատգամավորների անկախ գործելուն: Պատգամավորների առանձին հայտարարություններ ավելի են խորացնում այդ կարծիքը: 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն ուսումնասիրող ԶՅ-ի զեկույցի վերաբերյալ ՊՆ, ԱԳՆ և ԱԱԾ վերապահումներ^{clxxxv} ունենալու հիմնավորմամբ այն չհրապարակելը ԱԺ-ի, հանձնաժողովի և անհատ պատգամավորների ոչ բավարար անկախության ցուցիչ է: Ոչ թե վերը նշված մարմինները պետք է սահմանեն ԱԺ մշտական հանձնաժողովի գործունեության կանոնները, այլ ԱԺ-ն է սահմանում պետական մարմինների իրավասությունների շրջանակը և այն սահմանափակումները, որոնց ներքո պետական մարմինները գործում: Նման մոտեցումն հիմնավորում է այս հետազոտության շրջանակներում կայացած քննարկումներից մի քանիսի ընթացքում հնչած այն տեսակետը, որ **ԱԺ մեծամասնությունը ՀՀ կառավարությանը դիտարկում է որպես վերադաս**: Սա հարցականի տակ է դնում ԶՅ-ի անկախ աշխատելու կարողությունը, քանի որ եթե պետական մարմիններն ի գործ են սահմանափակել ԱԺ գործողությունները (այս դեպքում ԶՅ եզրակացության հրապարակումը), ի՞նչ երաշխիքներ կան, որ պետական մարմինները «վերապահում» չունեն այս կամ այն նախկին կամ ներկա պաշտոնյային ԶՅ հրավիրելու, այս կամ այն հարցը տալու, այս կամ այն փաստաթուղթն ուսումնասիրելու հետ կապված:

ԶՅ-ների նկատմամբ վստահության բարելավմանը չի նպաստում վերջինիս գործունեությանը իրավապահ մարմնի բնույթ հաղորդելը: ԶՅ անդամները հայտարարություններ են անում, իրենց կարծիքով, կատարած հանցանքների մասին: Օրինակ, 2016թ. ապրիլյան 4-օրյա պատերազմն ուսումնասիրող ԶՅ անդամները նախկին իշխանությունների

ներկայացուցիչների հասցեին մեղադրանքներ պարունակող հայտարարություններ էին անում: Այս հաշվետվությունը հրապարակելու պահին այդ հայտարարությունները հավաստող դատական որոշումներ առկա չեն: ԶԶ-ները չեն կարող փոխարինել իրավապահ մարմինների կամ առանձին ոլորտներում կատարվող մասնագիտական աշխատանքը (ՁՈւ, ջրային տնտեսություն, առողջապահություն այլ ոլորտներ):

Հանրությունը տեղյակ չէ, թե ինչ եզրահանգումներ է արել 2016թ. ապրիլյան 4-օրյա պատերազմն ուսումնասիրող ԶԶ-ն և արդյոք դրանք օգտագործվում են ՀՀ ՁՈՒ մարտունակությունը բարելավելու և ՀՀ քաղաքացիների անվտանգությունն ամրապնդելու համար:

ԶԶ ստեղծվում է ԱԺ «իրավասության մեջ մտնող» հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք ԱԺ ներկայացնելու նպատակով: 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրող ԶԶ-ն (պատգամավորների գրության մեջ չի նշվում, թե ում կողմից են սանձազերծվել ռազմական գործողությունները) պետք է քննի նաև «զինվորական ղեկավար մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների, ընդունված որոշումների օպերատիվությունը, դրանց համապատասխանությունը և համարժեքությունը ստեղծված օպերատիվ ռազմական իրավիճակին» և կատարի «Չինված ուժերի ապահովման, թիկունքային սպառազինության, մարտական պատրաստության, մարտական հերթապահության կրման կանոնների կատարման, զորքերի համալրման, զորքերի ծառայության, հետախուզական գործունեության վիճակի ուսումնասիրություն»: Անհասկանալի է առնվազն երկու հանգամանք.

(1) Արդյո՞ք ՁՈւ ապահովման, թիկունքային սպառազինության, մարտական պատրաստության, հերթապահության կրման կանոնների, զորքերի համալրման և ծառայության հարցերը ԱԺ իրավասության շրջանակներում են, թե՞ կարգավորվում է ՊՆ կամ ՁՈւ գլխավոր շտաբի պետի կողմից:

(2) Ի՞նչ չափանիշների հիման վրա են քաղաքական գործիչները քննելու «որոշումների օպերատիվությունը, դրանց համապատասխանությունը և համարժեքությունը ստեղծված օպերատիվ ռազմական իրավիճակին», որոնք մասնագիտական հարցեր են:

Չկա որևէ վկայություն, այդ թվում ԶԶ-ների կողմից հրապարակված 2 զեկույցներում, որ ԶԶ կողմից ուսումնասիրվող հարցերը դիտարկվում են պետական քաղաքականության կոնտեքստում: Այդ իսկ պատճառով անհասկանալի է, թե ինչ հետևություններ է անում ՀՀ կառավարությունը և ինչպես են այդ հետևություններն արտացոլվում պաշտոնական փաստաթղթերում: Օրինակ, հասկանալի չէ, թե 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն ուսումնասիրող ԶԶ-ի զեկույցի բացահայտումներն արտացոլվել ՀՀ վարչապետի կողմից 2020թ. նոյեմբերի 18-ին հրապարակված 15 «ամենակարևոր անելիքներից» 8-րդի՝ ՁՈւ բարեփոխումների ծրագրի մշակման ժամանակ:

ՁՈւ բարեփոխումների գործընթացը վերահսկելու, դրա համար անհրաժեշտ օրենսդրական դաշտ ձևավորելու, պաշտպանության բնագավառում պետական գնումների հետ կապված հարցերին անդրադառնալու և Հայաստանը նոր մարտահրավերներին նախապատրաստելու փոխարեն առաջիկա կես տարվա ընթացքում ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովն իր ժամանակի զգալի մասը նվիրելու է որոշակիություն չունեցող հարցերի ուսումնասիրությանն ու դեռևս չձևակերպված հարցերի պատասխաններ փնտրելուն, ինչը Հայաստանի քաղաքացիներին թողնելու է խոցելի վիճակում:

ԱԺ-ն եզրակացություններ է ստանում տարբեր պետական կառույցներից: Միանշանակ չէ, որ այդ եզրակացություններում ներկայացվող տեղեկատվությունը քննադատական վերլուծության է ենթարկվում պատգամավորների կողմից:

Պետական բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հետ ԱԺ ներկայացվող **ԿԲ եզրակացությունները** ՀՀ կառավարության կողմից տարվող հարկաբյուջետային և ֆինանսատնտեսական քաղաքականությունների վերաբերյալ կարևորագույն տեղեկություններ են պարունակում: ԱԺ-ում բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկումների ժամանակ պատգամավորները քիչ տեղ են հատկացնում ԿԲ եզրակացություններին: Դա կարող է պայմանավորված լինել եզրակացությունների տեքստերի երբեմն խիստ մասնագիտական բնույթով և պատգամավորների զգալի մասի տնտեսագիտության բնագավառի անբավարար գիտելիքներով: Պատգամավորները պետք է որոշում կայացնեն անկախ տնտեսագիտության բնագավառում իրենց ունեցած գիտելիքներից: Այդ պայմաններում կարևորվում է Բյուջետային գրասենյակի կարողությունների և լիազորությունների ընդլայնման հարցը: Բյուջետային գրասենյակի կողմից տրամադրվող տեղեկանքները լրացնում են տնտեսագիտության բնագավառում պատգամավորների գիտելիքների բացը, սակայն դա դեռևս բավարար չէ:

ՀՊ եզրակացությունները հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման և արդյունավետության վերաբերյալ բավական օգտակար տեղեկություններ և տվյալներ են պարունակում: ՀՊ եզրակացությունների ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվում է ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովը: Չնայած դրանց թվում լինում են առանձին ոլորտներում իրականացված հաշվեքնությունների հիման վրա պատրաստված եզրակացություններ, դրանք ԱԺ մնացած մշտական հանձնաժողովների մոտ հետաքրքրություն չեն առաջացրել և նրանք չեն զբաղվել դրանց ուսումնասիրությամբ: Օրինակ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը կարող էր ուսումնասիրել կրթության ոլորտում ֆինանսական, այդ թվում վարկային միջոցների օգտագործման նպատակայնությունն ու արդյունավետությունը, գնումների օրենսդրության պահանջների կատարումը և այլ հարցեր: ՀՊ եզրակացությունների հանդեպ մնացած մշտական հանձնաժողովների փոքր հետաքրքրությունը կարող է պայմանավորված լինել ինչպես ոլորտային հանձնաժողովների անդամների ֆինանսական կառավարման բնագավառի սահմանափակ գիտելիքներով, այնպես էլ ցանկության բացակայությամբ:

Տարբեր տարիների պետական բյուջեների կատարման վերաբերյալ ՀՊ եզրակացություններում բարձրաձայնված առանձին խնդիրներ կարող էին դառնալ ԱԺ քննարկման առարկա: Այդպիսի հարցերի թվում են այս հետազոտության շրջանակներում ՀՊ ուղարկված հարցումներում պալատին հղված հարցերը, տեղեկատվական թերթիկներում բարձրաձայնված խնդիրները: Սակայն բացի մամուլում հնչել վերնագրեր դառնալը կատարված եզրակացությունները, եզրահանգումներն ու բացահայտումները այլ հետևանքներ չեն ունեցել:

Արդեն երկու տասնամյակ պետական գնումների համակարգը Հայաստանի պետական ֆինանսական կառավարման համակարգի ափիլեսյան զարշապարն է: Գործող օրենքը չորրորդն է 2000թ. ի վեր: Իշխանությունները ոչ թե փոփոխություններ և լրացումներ են կատարել գործող օրենքում, այլ ընդունել են ամբողջությամբ նոր օրենք: Սակայն համակարգային խնդիրների առկայության շարունակականությունը ազդակ է, որ խնդիրները

կարող են կապված լինել ոչ թե օրենքի, այլ դրա կիրարկման հետ: Չնայած գնումների համակարգում առկա բացերի վերաբերյալ ՀԴ եզրակացություններին և դրանից հանրության մշտական դժգոհություններին ԱԺ 3-8 գումարումները չեն գույքագրել մարտահրավերները և եղել են կառավարության կողմից առաջարկվող օրենքների նախագծերի դակողը: Չնայած ՎՊ 2013թ. գնումների էլեկտրոնային համակարգում առկա լրջագույն թերությունների վերաբերյալ հայտարարությանը, ՀՀ կառավարությունը շարունակում է այն օգտագործվել նույնիսկ 2018թ. հեղափոխությունից հետո առանց աուդիտի կամ ուսումնասիրության ենթարկվելու և ԱԺ-ն դիրքորոշում չի հայտնել այդ հանգամանքի վերաբերյալ:

Պատգամավորների **գրավոր հարցերը** կառավարության նկատմամբ վերահսկողություն կազմակերպելու համար կարևոր տեղեկատվություն են պարունակում: Վերը նշվել է, որ կանոնակարգի 119 հոդվածի համաձայն պատգամավորների գրավոր հարցերին պետք է պատասխանեն վարչապետը, կամ նրա հանձնարարությամբ ՀՀ կառավարության համապատասխան անդամը: Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից (Սահմանադրության հոդված 147): **Նախարարության գլխավոր քարտուղարը ՀՀ կառավարության անդամ չէ և իրավասու չէ պատասխանել պատգամավորի գրավոր հարցին:**

ԱԺ պատգամավորների կողմից ՀՀ կառավարության անդամներին ուղղվող գրավոր հարցերին տրված պատասխանները կարող են օժանդակել խորհրդարանական վերահսկողության իրականացմանը: Հայաստանյան պրակտիկան վկայում է, որ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը սովորաբար հակված է «պաշտպանել» իր ձևավորած կառավարությանը: Այս հետազոտության ժամանակ ուսումնասիրված նյութերը վկայում են, որ ԱԺ իշխանական խմբակցության պատգամավորները համեմատաբար ավելի քիչ գրավոր հարցեր են ուղղում ՀՀ կառավարությանը:

Երեք հիմնական պատճառներով իշխող ուժի պատգամավորները հակված են ավելի քիչ գրավոր հարցեր ուղղել կառավարությանը. (1) նրանց մեծ մասը լավ հարաբերություններ ունի գործադիրի գործընկերների հետ և չի ցանկանում վտանգել այդ հարաբերությունները, (2) նրանց մեծ մասը անհրաժեշտության դեպքում կարողանում է հանդիպել գործադիրի իրենց գործընկերների հետ և իրենց հարցերի պատասխաններն ստանալ առանց դրանք հանրայնացնելու, ըստ էության չօգտագործելով կանոնակարգով նախատեսված խորհրդարանական վերահսկողության կարևոր գործիքներից մեկը, (3) գրավոր հարցերի պատասխանները, դրանք ԱԺ ինտերնետային կայքում հրապարակելու և հանրայնացնելու դեպքում կարող են օգտագործվել ընդդիմադիր ուժերի կողմից:

Մտահոգող հարցեր ունենալու դեպքում իշխանական պատգամավորները անձամբ հանդիպում են նախարարի կամ գերատեսչության ղեկավարի հետ և «ներքին կարգով» քննարկում են իրենց հուզող հարցը: Կուտակված հարցերի «ներքին կարգով» քննարկումը և լուծումը ոչ բաց, ոչ թափանցիկ, ոչ հաշվետու և անպատասխանատու գործունեության դրսևորում է:

Պատգամավորների գրավոր հարցերի հաշվառումը բարելավման կարիք ունի: ԱԺ ղեկավարությունը լավ չի կատարել աշխատակազմի գործունեության նկատմամբ իր վերահսկողական գործառնությունը, ինչը հարցականի տակ է դնում ՀՀ կառավարության գործունեությունը վերահսկելու ունակությունը^{clxxvi}:

Հանդիսանալով խորհրդարանական վերահսկողության կարևոր գործիք, **բանավոր հարցեր** տալու գործընթացը զգալի չափով այլափոխվում է իշխանական ուժերի կողմից և կորցնում է իր արդյունավետությունը: Բանավոր հարցեր տալու համար մեծ թվով պատգամավորներ գրանցելով իշխող ուժն ընդդիմադիրներին խանգարում է դժվար կացության մեջ դնել կառավարությանը, հանրության ուշադրությունը շեղելով սեփական հարցերով, ընդդիմադիրների սուր հարցերը տարրալուծելով սեփական ավելի մեղմ հարցերի մեջ, ընդդիմադիրներին արծազանքելով և իշխանության ներկայացուցիչներին սեփական «նվաճումները» ներկայացնելու հնարավորություն տալով: Իշխող ուժի պատգամավորների մի մասի հարցերը կառավարության գործունեության թերությունները հայտնաբերելու և կուտակված հարցերի պատասխանները փնտրելու փոխարեն պաշտոնյաներին ինքնագովազդելու հնարավորություն տալու նպատակ են հետապնդել: Այսպես կոչված «պայմանավորված» հարցեր տալու գործը սովորաբար «համակարգում» է իշխող ուժի խմբակցության ղեկավարությունը: «Պայմանավորված» հարցերի մասին նշել են ընդդիմադիր պատգամավորները (պատկեր 4):

Պատկեր 4. Գրառում «պայմանավորված» հարցերի վերաբերյալ



Աղբյուր. Յոթերորդ գումարման ԱԺ պատգամավոր Աննա Մայիսի Կոստանյանի («Լուսավոր Հայաստան») ֆեյսբուքյան էջից

Գործադիրի հետ համաձայնեցված, կամ գործադիրի ներկայացուցիչների խնդրանքով տրվող հարցեր նկատվել են առնվազն XX դարում գործած բոլոր գումարումների ԱԺ-երում: Երբեմն, իշխանական խմբակցությունը ներկայացնող հանձնաժողովի նախագահներն իսկապես սուր հարցեր են տվել ոլորտի համար պատասխանատու նախարարին: Սովորաբար դա տեղի է ունեցել այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահը նախարարական հավակնություններ է ունեցել: Մնացած դեպքերում իշխանական խմբակցության պատգամավորները շատ դեպքերում տալիս են «պայմանավորված» հարցեր: Հարցի «պայմանավորված» լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ հարցը տվող պատգամավորը թղթի վրա գրված տեքստը վարժ չի կարդում (այսինքն, խմբակցության ղեկավարներից որևէ մեկից հարցը ստանալուց հետո այն չի ընթերցել), հարցի պատասխանը ստանալուց հետո արծազանք չի ունենում, հարցին պատասխանող կառավարության անդամի ձեռքի տակ ունենում է պատասխանի համար անհրաժեշտ մեծ քանակով թվային տվյալներ, այլ հանգամանքներ: Մի քանի տասնյակ ժամ տեսաձայնագրությունների և մի շարք նիստերի սղագրությունների ուսումնասիրության արդյունքում տպավորություն է ստեղծվել, որ 7-րդ գումարման ԱԺ-ում ՀՀ վարչապետին «պայմանավորված» հարցեր են տվել «Իմ քայլը» խմբակցության մի քանի «կարկառուն» ներկայացուցիչներ («կարկառուն» ձևակերպումը տվել է «Իմ քայլը» նախկին պատգամավորը^{clxxxvii}):

«Իմ քայլը» խմբակցության պատգամավորի^{clxxxviii} հարցերից մի քանիսին պատասխանելիս ՀՀ վարչապետը դրանց պատասխանելու համար անհրաժեշտ տվյալներն ուներ իր հեռախոսում, կամ այդ հարցերը ՀՀ վարչապետին խորհրդարանում ծավալուն ելույթներ ունենալու հնարավորություն են տվել: 2020թ. սեպտեմբերի 16-ին տրված հարցը Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության հետ կապված հանրության

շրջանում եղած մտահոգությունների մասին էր^{cxix}։ Ի պատասխան ՀՀ վարչապետը ծաղրելով հռետորական հարց է տվել «հանրության ներկայացուցիչների» հասցեների և հեռախոսի համարների մասին։ Ապա ՀՀ վարչապետը շարունակել է, որ «Էնպիսի տպավորություն էր, որ հեղափոխության ժամանակ հեղափոխությունը կառավարած կամ ղեկավարած քաղաքական թիմը ընդհանրապես գաղափար չունի հեղափոխության արժեքների մասին և մարդիկ, ովքեր հեղափոխության մասին իմացել են մայիսի 8-ից մի շաբաթ հետո, իրենք դարձել են հեղափոխության արժեքների ջերմեռանդ պաշտպաններ»^{cx}։ ՀՀ վարչապետը նաև հայտարարել է, որ «Սահմանադրական դատարանի շուրջ ճգնաժամը վերջացել ա, փակվել ա»^{cxi}։ Հարցը համաձայնեցված լինելու մասին է վկայում այն, որ պատգամավորը չի օգտվել կանոնակարգով արձագանքելու իրեն տրված հնարավորությունից և վարչապետին առաջարկել է շարունակել իր խոսքը, եթե դեռ ասելիք ունի։ 2021թ. մայիսի 5-ին նույն պատգամավորը ՀՀ վարչապետին հարց է ուղղել պատերազմին պատրաստվելու մասին^{cxi}։ Հայտարարելով, որ «ինչ-որ գաղտնիության էլեմենտներ կան, բայց ես հարկ եմ համարում հրապարակել»^{cxi} ՀՀ վարչապետը հրապարակել է իր կառավարման տարիներին առաջնագծում կատարած ինժեներական աշխատանքների մասին իր հեռախոսում առկա մեծ քանակով տվյալները։ Պատգամավորները չհետաքրքրվեցին, թե ինչու է ՀՀ վարչապետը հրապարակում իր իսկ խոսքով «ինչ-որ գաղտնիության էլեմենտներ» պարունակող տեղեկատվություն և ինչու է այդ տեղեկատվությունը պահում իր բջջային հեռախոսում։ ՀՀ պաշտպանության նախարարությունն իր գրության մեջ նշել է, որ «նշված կառույցները հիմնականում պլանավորվել են 2016-2017 թվականներին, իսկ կառուցումն իրականացվել է 2018-2020 թվականներին»։ ՀՀ վարչապետի առաջարկով ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը 2021թ. նոյեմբերի 5-ին այդ պատգամավորին Գերմանիայում դեսպան նշանակեց^{cxi}։

Չնայած 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասսայականությանը, դրանց հասարակական և քաղաքական մի շարք ուժերի ներգրավվածությանն ու իրականացված միջոցառումների ապակենտրոն բնույթին ՀՀ վարչապետը 2018թ. կատարված հեղափոխությունը վերագրում էր իրեն, ակնարկելով, որ մնացածներն իրավունք չունեն խոսել հեղափոխության արժեքներից։ ՀՀ-ների ներկայացուցիչներն իրենց մտահոգությունն են հայտնել ՀՀ վարչապետի խոսքում հնչած մոտեցումների, տեսակետների հետ կապված և պահանջել են չինչեցնել անհասցե մեղադրանքներ^{cxi}։ «Իրազեկ քաղաքացիների միավորման» համակարգող Դանիել Իոաննիսյանը հետաքրքրվում էր, թե «Հո 37 թվի Կա-Գե-Բե-ն չի՞, որ քննադատողների հասցեներն է ուզում իմանալ»։ Անդրադառնալով Սահմանադրական դատարանի ճգնաժամի լուծման վերաբերյալ հայտարարությանը, Գյումրիի «Ասպարեզ» ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղյանը պնդում էր, որ «Սահմանադրական ճգնաժամը երկրում չի լուծվել։ Սահմանադրական ճգնաժամը երեք հոգու փոխելու խնդիր չէր, խնդիրը դատաիրավական արմատական բարեփոխումներն են, այդ թվում Սահմանադրական դատարանի բարեփոխումը»։ Լեւոն Բարսեղյանը կարծում էր, որ Դատավորների ընդհանուր ժողովի ներկայացրած թեկնածուի համար չքվեարկելով Ազգային ժողովը կարող էր իր քաղաքական կամքը հայտնել^{cxi}։

«Իմ քայլի» նախկին պատգամավորը^{cxi} կարծում է, որ եղել է խաբեություն և իշխանությունը շեղվել է հեղափոխության արժեքներից։ Քաղաքական գործընթացների վրա արվեստագետների ազդեցություն ունենալու և փոփոխություններ բերելու ունակության վերաբերյալ հարցին նախկին պատգամավորը պատասխանում է. «Հիմա չի կարող փոխել [արվեստագետը քաղաքականության մեջ]։ Բայց խնդիրը նա է, որ 18 թվականին ես, ինչպես և դուք, ինչպես և շատ-շատ շատերը, մեծամասնությունը, հավանաբար վստահ էր, որ դա հնարավոր է փոխել, որովհետև մենք ուրիշ արժեքների համար դուրս եկանք փողոց և

բացարձակ ուրիշ տեսլական ունեինք: Ու դրա ջախջախումն է ամենասուկային իրականության մեջ: Այսինքն, այո, եթե եղ արժեքները ... խաբեություն չլիներ արժեքների շուրջ, եղ ամենը հնարավոր կլիներ անել»:

Բանավոր հարցեր ուղղելու հնարավորության ոչ նպատակային օգտագործման դրսևորում են այն դեպքերը, որոնցով պատգամավորները կառավարության անդամներին ինքնագովազդելու հնարավորություն են տալիս: Նման մի շարք դեպքերում պատգամավորներն օգտագործում են «ուզում եմ, որ մեկ անգամ էլ հնչեցնեք» կամ այդպիսի մեկ այլ ձևակերպում^{xcvii}, ինչը նշանակում է, որ կատարված կարևոր աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունն արդեն իսկ հաղորդվել է հանրությանը, սակայն անհրաժեշտ է այդ տեղեկատվությունը ևս մեկ անգամ հնչեցնել ԱԺ ամբիոնից: «Պայմանավորված» հարցերն անցանկալի և անընդունելի են, քանի որ մի քանի վատ ազդակ է հաղորդում հանրությանը.

- «Պայմանավորված» հարցերը պատգամավորի կախվածության ցուցիչ են: Անկախ պատգամավորը գործադիրի ներկայացուցիչներին տալիս է իր ընտրողների, այլ ոչ բարձրաստիճան պաշտոնյաների համար կարևոր հարցեր: Գործադիրից կախվածությունը նշանակում է, որ խորհրդարանը չի իրականացնում իր վերահսկողական գործառույթը և կառավարությունը խորհրդարանական վերահսկողությունից դուրս է:
- Վկայում են, որ պատգամավորը չի աշխատում կամ քիչ է աշխատում: Գործունեության ընթացքում պատգամավորի մոտ կարող են հարցեր առաջանալ կառավարության և նախարարությունների ու գերատեսչությունների գործունեության վերաբերյալ: Երբ պատգամավորը հնչեցնում է գործադիրի համար կարևոր հարցեր, նշանակում է նա չի կատարում իր գործառույթները և այդ պատճառով նրա մոտ սեփական հարցեր չեն առաջանում:

Գործադիրի գովազդով զբաղվող պատգամավորը չի կատարում իր անմիջական պարտականությունները և նրա ստացած աշխատավարձը հարկատուների միջոցների ոչ նպատակային և անարդյունավետ օգտագործում է:

Կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելը կառավարության նկատմամբ վերահսկողության կարևոր գործիքներից մեկն է: 7-րդ գումարման ԱԺ-ում կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու «Լուսավոր Հայաստանի» բոլոր երեք փորձերն արժանացել են իշխող ուժի միասնական դիմադրությանը: Չնայած դրան աղյուսակ 7-ում նշված պաշտոնյաները որոշ ժամանակ հետո ազատվեցին զբաղեցրած պաշտոնից, կամ չընդգրկվեցին Ն. Փաշինյանի ձևավորած հաջորդ կառավարության կազմում: Իշխանական պատգամավորները չհետաքրքրվեցին իրենց գրեթե միահամուռ պաշտպանությանն արժանացած նախարարների պաշտոնանկության կամ չվերանշանակման պատճառներով: Եթե վերը նշված պաշտոնյաները վատ են աշխատել և «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը բացահայտել է դա ու փորձել է պաշտոնանկ անել նրանց, ապա նրանց պաշտոնում պահելով «Իմ քայլը» սատարել է վատ աշխատանքը, ինչի արդյունքում այդ պաշտոնյաները վնաս են հասցրել Հայաստանին: Եթե այդ բարձրաստիճան պաշտոնյաները լավ են աշխատել, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչու են նրանք պաշտոնանկ արվել:

2018թ. մայիս – 2021թ. դեկտեմբեր ընթացքում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կառավարություններում նշանակվել է արտաքին գործերի 3 նախարար և մեկ ժամանակավոր պաշտոնակատար, Էկոնոմիկայի՝ 3, պաշտպանության՝ 4, բարձր

տեխնոլոգիական արդյունաբերության՝ 3 նախարար և մի շարք այլ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներ: ՀՀ վարչապետը հանրությանը չի հայտնում կառավարության անդամների պաշտոնանկության պատճառների մասին: Չնայած Հայաստանն անցել է խորհրդարանական կառավարման, ԱԺ իշխանական խմբակցության պատգամավորները չեն հետաքրքրվում կառավարության անդամների պաշտոնանկության կամ պաշտոնի չվերանշանակվելու, փոխատեղումների և ՀՀ վարչապետի այլ որոշումների հիմնավորումներով:

Խորհրդարանում մեկ ուժի գերիշխանության, իշխող խմբակցության «կոլեկտիվ պաշտպանության» ու իշխող ուժի առաջնորդին անվերապահ աջակցության և հավատարմության պայմաններում կանոնակարգի 121 հոդվածով նախատեսված հարցապնդումները դադարել են լինել խորհրդարանական վերահսկողության աշխատող գործիք:

Խորհրդարանական լսումները պատգամավորներին օգնում են ծանոթանալ օրենքների նախագծերի վերաբերյալ հանրության կարծիքներին: Դրանք կարող են նաև օգնել տեղեկատվություն ստանալ օրենքների կիրարկման վերաբերյալ: Լսումները կարող են խորհրդարանական վերահսկողության գործիք դառնալ, եթե պատգամավորներն արձանագրեն լսումների ժամանակ բարձրաձայնվող խնդիրները և ուսումնասիրեն դրանք:

Իրենց ներկա տեսքով լսումները չեն դիտվում և չեն հանդիսանում խորհրդարանական վերահսկողության շրջանակներում հանրությունից կառավարության նպատակային, արդյունավետ և խնայողաբար գործունեության վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու գործիք: Առկա տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ չէ, թե ինչպես է օգտագործվում լսումների ժամանակ հավաքված տեղեկատվությունը (եթե ընդհանրապես օգտագործվում է): Լսումները դրանց մասնակիցների մի մասի կողմից օգտագործվում է Հայաստանի հանրային, սոցիալական, տնտեսական կյանքի առանձին ոլորտներում և բնագավառներում ստեղծված իրավիճակի վերաբերյալ իրենց դժգոհություններն արտահայտելու համար (այդ թվում կառավարության ներկայացուցիչների կողմից):

Փորձը վկայում է, որ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը սովորաբար հակված է «պաշտպանել» իր ձևավորած կառավարությանը և լսումների ժամանակ հնչած քննադատության հիման վրա քայլեր չի ձեռնարկում: Ավելին, կառավարության ներկայացուցիչները երբեմն իրենք են ընդդիմադիր կեցվածք ընդունում և մամուլի բնորոշմամբ «սուր ելույթ» ունենում: Օրինակ, 2022թ. հունվարի 25-ին կազմակերպված լսումների ժամանակ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը խոսում էր ամեն երրորդ երեխայի կարդալու ոչ բավարար ունակությունների մասին^{xcviii}: ՀՀ-ների ներկայացուցիչները փոխնախարարի բարձրացրած խնդիրն սկսել են ուշադրություն հրավիրել տարիներ առաջ: ՀՀ-ներն այդ խնդրի հետ կապված ՀՀ կառավարությանն ուղղված իրենց հարցերն ավելի սրեցին դարձնել Համաշխարհային բանկի կողմից այդ տեղեկատվությունը 2019թ. հոկտեմբերին հրապարակելուց հետո: Այդ մասին նշվել է 2020թ. գարնանը, փոխնախարարի ելույթից մոտ երկու տարի առաջ հրապարակված հոդվածում^{xcix}: Արդեն գրեթե չորս տարի իշխող քաղաքական ուժի կառավարության անդամի տեղակալի գործը ոչ թե «սուր ելույթ» ունենալն է, այլ՝

- 1) ստեղծված իրավիճակը և խնդիրների պատճառներն ուսումնասիրելը վերլուծելն ու առավել բացասական հետևանք ունեցողները գույքագրելը,
- 2) ապագայի տեսլականը ներկայացնելը,

- 3) առաջնահերթությունները, գերակայություններն ու նպատակները սահմանելը,
- 4) նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առկա մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսները գնահատելը,
- 5) ներկա իրավիճակից դեպի այդ տեսլականը տանող ռազմավարության և ծրագրերի նախագծեր մշակելը,
- 6) մշակված ռազմավարության նախագծի հետ կապված ռիսկերը բացահայտելը, գնահատելը և այդ ռիսկերը կառավարելու համար կառավարությանը հասանելի գործիքներ ստեղծելը,
- 7) մշակված ռազմավարության նախագիծը հրապարակելը և հանրության հետ քննարկելը,
- 8) այդ քննարկումների հիման վրա ռազմավարության նախագիծը ճշգրտելը,
- 9) հանրային քննարկում անցած և հաստատված ռազմավարություններն ու ծրագրերը կառավարության հաստատմանը ներկայացնելը,
- 10) կառավարության կողմից հաստատված ռազմավարության և ծրագրերի կենսագործման համար բարձրակարգ մասնագետներին պատասխանատու նշանակելը,
- 11) ռազմավարությունների և ծրագրերի իրականացման վերաբերյալ հանրությանը ժամանակին, ամբողջական, ընդգրկուն հաշվետվություններ ներկայացնելն է,
- 12) անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ կատարել ծրագրերում:

ԱԺ-ն պետք է որդեգրի իրեն ներկայացված և հասարակության շրջանում մտահոգություն առաջացնող հարցերը պետական քաղաքականությունների և նպատակների ավելի լայն կոնտեքստում դիտելու մոտեցում:

Խորհրդարանի **պատգամավորների մեկ հինգերորդի կողմից Սահմանադրական դատարան դիմելու** հնարավորությունը երկար ժամանակ չի օգտագործվել: 8-րդ գումարման ԱԺ պատգամավորներն ավելի հաճախ են օգտագործում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը: Օրենքների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, նախարարների հրամանների Սահմանադրությանը համապատասխանության հարցով ՍԴ դիմելը ռազմավարական գործիք է, որը կարելի է օգտագործել ՀՀ կառավարության գործունեությունը Սահմանադրության շրջանակներում պահելու համար:

5. ԱԺ պատգամավորները, աշխատակազմը և գործավարությունը

ԱԺ պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում ՀՀ-ում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք (Սահմանադրության հոդված 48): ԱԺ-ն կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորներից (հոդված 89): ԱԺ-ում տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով (հոդված 94):

Կանոնակարգի համաձայն ԱԺ-ն իր ամենօրյա գործունեությունն իրականացնում է հերթական (հոդված 37, 51), արտահերթ (հոդված 41) և հատուկ նիստերի (հոդված 48), խմբակցությունների (հոդված 9) մշտական (հոդված 13, 14) և ժամանակավոր հանձնաժողովների (հոդված 17) և համատեղ նիստերի (հոդված 28), ԱԺ խորհրդի (հոդված 31) նիստերի միջոցով:

Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին որոշման ընդունման դեպքում այն համարվում է հաստատված, իսկ չընդունման դեպքում՝ մերժված (Կանոնակարգի հոդված 118-ի մաս 4): Ի տարբերություն գործող կանոնակարգի, 2002թ. ընդունված կանոնակարգի հոդված 89-ի մաս 5-ի (բ) կետի համաձայն ՀՀ վարչապետը կամ ֆինանսների նախարարը կարող էր «բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու առնչությամբ դնել Կառավարության վստահության հարցը»^{cc}: «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավարը^{cci} նշել էր, որ կատարողականին դեմ քվեարկելն այլևս անիմաստ է, քանի որ ոչ մի հետևանք չունի, և այդ առումով կատարողականի քննարկումը դադարել է մոնիտորինգի մեխանիզմ հանդիսանալ, այն դեպքում, երբ նախկինում ավտոմատ վարչապետի հրաժարականի հարց էր բացվում^{ccii}:

ԱԺ, ԱԺ պատգամավորների, ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկատվության, բյուջետային քննարկումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցեր են ուղղվել ՀՀ Ազգային ժողովին: Ուղղված հարցերը և ստացած պատասխանները ներկայացված են հավելված 19-ում:

5.1. ԱԺ պատգամավորը

Վերջին մի քանի գումարումների ԱԺ պատգամավորների կենսագրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ բացի դասական քաղաքական գործիչները, ԱԺ պատգամավոր են եղել մեծ թվով ազատամարտիկներ, նախկին զինվորականներ, գործարարներ, իրավաբաններ, պատմաբաններ, լրագրողներ: Տնտեսագետների, մշակութային գործիչները ներկայացված են եղել ավելի փոքր թվով: 7-րդ և 8-րդ գումարումների ԱԺ-երում մեծ թիվ են կազմել երիտասարդները:

ԱԺ պատգամավորները մասնակցում և քվեարկում են ամենատարբեր ոլորտներ և բնագավառներ կարգավորող օրենքների օգտին և պետք է վերահսկողություն իրականացնեն ՀՀ կառավարության կողմից օրենքների կատարման և կառավարության գործունեության նկատմամբ: ԱԺ աշխատանքի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ ընտրված պատգամավորի ներկայացրած ծրագիրը, մոտիվացիան, գիտելիքները, կրթությունը, իր հիմնական մասնագիտական գործունեության ոլորտին չվերաբերող հարցերով զբաղվելու պատրաստակամությունը: Ինչպես այս հետազոտության մի շարք այլ հատվածներում, պատգամավորների գործունեությունն ուսումնասիրելու նպատակով դիտարկվել է ոչ թե ԱԺ-ում քաղաքական գործիչների գործունեությունը (քանի որ դա նրանց բնական միջավայրը և գործունեության բնական տեսակը պետք է հանդիսանա), այլ սահմանային դեպքերը, երբ հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվում են այնպիսի մասնագիտությունների տեր մարդիկ, ուր ամենօրյա գործունեությունը կապ չունի քաղաքականության հետ: Այդ նպատակով հետազոտվել է ԱԺ-ում ներկայացված մշակութային գործիչների գործունեության առանձին դրվագներ:

Հայաստանի իշխանությունները մշակույթի գործիչներին մշտապես ներթաշել են քաղաքականություն և իշխող ուժի ցուցակներով դարձրել պատգամավոր: 2018թ. հեղափոխությունից հետո թվում էր, որ Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելու են միայն մարդիկ, ովքեր որոշակի կոնկրետ գաղափարի կրող են, ունեն ծրագրեր և սեփական կամքով քաղաքականություն են մտնում այդ գաղափարներն ու ծրագրերը կյանքի կոչելու համար:

Կուսակցությունները շարունակում են քաղաքականություն ներթաշել մշակույթի գործիչներին: Նարինե Լեւոնի Թուփսիյանը (Խաչատուրյանը), ով 7-րդ գումարման ԱԺ-ում «Իմ քայլը» խմբակցության անդամ էր, պնդում է, որ ինքը քաղաքական անձնավորություն չէ և *քաղաքականություն մտել է իշխող ուժի առաջարկով*. «Ես քաղաքական չեմ եղել: Երբեք: Բայց ես մտել եմ և Ազգային ժողով, այսինքն երբ որ ինձ առաջարկեցին, մտնելով չէր չէ՞, առաջարկելով էր և իմ համաձայնությամբ էր կամ ոչ, և երկու պարագային էլ ես իմ համաձայնությունը տվել եմ մեկ պատկերացում և մեկ նպատակ ունենալով. որ իմ անելիքները միմիայն մշակութային քաղաքականության մեջ է լինելու: Եւ մի անգամ ինձ Նույնիսկ այդ կուսակցության, այսինքն իշխող կուսակցության կարկառուն դեմքերից մեկը ինձ հարցրեց քաղաքականության մասին: Ես ասացի, որ ... այսինքն քաղաքական քաղաքականության մասին: Ես ասացի, որ դա ինձ հետ ընդհանրապես կապ չունի: Դա ի սկզբանե իմացեք: Այսինքն, իմ անելիքը միմիայն պիտի լինի մշակութային քաղաքականության ոլորտում»^{cciii}:

Հասկանալի չէ, թե ինչպես պետք է պատգամավորը վերահսկի կառավարության գործունեությունը, եթե նրա պատկերացմամբ իր «անելիքները միմիայն մշակութային քաղաքականության մեջ է լինելու»: Ինչպե՞ս է Նա որոշել, թե ինչպես պետք է քվեարկի հարկային, տնտեսական, էներգետիկ, գյուղատնտեսական, բնապահպանական և այլ

ոլորտներին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների, Սահմանադրական դատարանի, տնտեսական մրցակցության պաշտպանության և հանրային ծառայությունների հանձնաժողովի անդամների ընտրության դեպքում:

Տիկին Թուֆիկյանը միակը չէ: Սովետական ավանդույթներին հետևելով իշխող խմբակցությունները տարբեր գումարումների ԱԺ-երում իրենց շարքերում ունեցել են մշակութային գործիչներ: Հինգերորդ և վեցերորդ գումարումների ԱԺ-ում մշակութային գործիչներին ներկայացնում էր երգչուհի Շուշան Սամվելի Պետրոսյանը, ով նույնպես քաղաքականություն էր մտել ոչ թե սեփական նախաձեռնությամբ, այլ Հանրապետական կուսակցության առաջարկով^{cciv}: Շուշան Պետրոսյանի համար միևնույնն էր, թե որ կուսակցության օգնությամբ մտներ քաղաքականություն, բայց առաջարկը եղել էր ՀՀԿ-ից^{ccv}: Հնարավոր չէր առանց ՀՀԿ-ին անդամակցելու մտնել քաղաքականություն հարցին, Շուշան Պետրոսյանը պատասխանել էր^{ccvi}. «Ամեն ինչ էլ հնարավոր է, բայց եթե ինձ այդ կուսակցությունից են առաջարկ անում ... թող ուրիշ կուսակցություններից առաջարկ անեին, կմտածեի»:

Առաջին գումարման ԱԺ-ում «Հանրապետություն» խմբակցության կազմում ներգրավված էր անկուսակցական ռեժիսոր Վահե Սուրիկի Շահվերդյանը^{ccvii}:

Չկա որևէ օրենսդրական կարգավորում, ընթացակարգ կամ մեխանիզմ, որ կերաշխավորի, որ պատգամավորը կատարում է ՀՀ օրենսդրությամբ պատգամավորի համար նախատեսված բոլոր գործառույթները: ԱԺ-ն չի ներկայացնում խորհրդարանական վերահսկողության շրջանակներում պատգամավորների, հանձնաժողովների և խմբակցությունների կատարած աշխատանքների վիճակագրական տվյալները:

Դեպքի նկարագրություն N°5. Պատգամավորների մասնակցությունը ոլորտային քաղաքականություններին

Աժ պատգամավորները չեն հետաքրքրվել կրթության ոլորտում հաստատված ծրագրերի հիմնավորվածությամբ և կրթության ծրագրերի արդյունքներով: Պետական մարմինների մամլո հաղորդագրությունների, լուրերի թողարկումների ժամանակ հեռարձակվող ռեպորտաժներից պարզ է դառնում, որ Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը մասնակցում է գործադիրում կայացող քննարկումների մի մասին և ամենայն հավանականությամբ տեղյակ է բարեփոխումների ընթացքի վերաբերյալ^{ccviii}: Սակայն ոչ ՀՀ կառավարությունը, ոչ Աժ-ն պատշաճ կերպով չեն ներկայացնում այն փաստերը, որոնց հիման վրա մշակվում են քաղաքականությունները, չեն տրամադրում հաշվետվություններ ծրագրերի ընթացքի վերաբերյալ, չեն գնահատում իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, արդյունավետությունը և խնայողությունը: Գործադիրում կայացող քննարկումներին պատգամավորների մասնակցությունը կարող է խանգարել պատշաճ վերահսկողություն իրականացնելու գործում: Խնդիրների առաջացման դեպքում պատգամավորի կողմից հարց բարձրացնելիս կառավարությունը կարող է ասել, որ պատգամավորը մասնակցել է քննարկմանը և իր մտահոգությունները պետք է արտահայտեր այդ փուլում:

Քաղաքականությունների մշակմանը մասնակցողները չեն կարող վերահսկողություն իրականացնել իրենց մասնակցությամբ մշակված ծրագրերի նկատմամբ:

5.2. ԱԺ Նիստերը

Կանոնակարգի համաձայն ԱԺ-ն իր ամենօրյա գործունեությունն իրականացնում է հերթական (հոդված 37, 51), արտահերթ (հոդված 41) և հատուկ նիստերի (հոդված 48) նիստերի միջոցով:

ԱԺ նիստում բյուջեի քննարկման ընթացքի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով ուսումնասիրվել է 2021թ. նոյեմբերի 17-ին ԱԺ նիստի տեսագրությունը և սղագրությունը: ՀՀ ֆինանսների նախարարի ելույթից հետո վերջինիս հարց է ուղղել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 4 պատգամավոր^{ccix}. առաջինը հարցրել է կապիտալ ծախսերի թերակատարման պայմաններում 2022թ. դրանց ավելացման հիմնավորվածության, երկրորդը՝ առողջապահության համընդհանուր ապահովագրության ներդրման հետ կապված աշխատանքների, հաշվարկների և ժամկետների, երրորդը՝ հանձնաժողովներում քննարկումների արդյունքում սոցիալական խնդիրներ ունեցող անձանց ուղղված ծրագրերում փոփոխությունների, չորրորդը՝ տնտեսական ակտիվության աճի տեմպի նվազման պատճառների մասին^{ccx}: Նիստը նախագահողը հարցրել է բյուջեի և ծրագրերի ավտոմատ կառավարման համակարգի ներդրման և ոչ ֆինանսական ցուցանիշների էական բարելավման մասին^{ccxi}:

2022թ. բյուջեի նախագծի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնելուց հետո, ԿԲ նախագահ Մարտին Գալստյանին հարց է ուղղել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 4 պատգամավոր. առաջինը հարցրել է պարտքի բեռի նվազեցման քաղաքականության, երկրորդը՝ անկանխիկ գործարքների և առանց բանկային հաշվի հետ կապակցության էլեկտրոնային դրամապանակների, երրորդը՝ գնաճի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունների, չորրորդը՝ ArCA-ի կառուցվածքի և կառավարման համակարգի վերաբերյալ^{ccxii}:

ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի^{ccxiii} ելույթից հետո «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի պատգամավոր հարցրել է ծախսերի արդյունավետության ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում առաջարկներ ներկայացնելու, մյուսը՝ բյուջեի պակասուրդի և անկանխիկ վճարումների համակարգի մասին^{ccxiv}: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներից մեկը^{ccxv} խնդրել է, որպեսզի ԱԺ հանձնաժողովի նախագահը, կամ ֆինանսների նախարարը «հնչեցնեն», քանի որ «շատերը չգիտեն», թե քանի ժամ են տևել բյուջեի քննարկումներ ԱԺ հանձնաժողովներում, ապա առաջարկում է «հնչեցնել, թե վերջին մեկ, մեկուկես տարում պատգամավորները որքան պարզեցված են ստացել»: ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահը շնորհակալություն է հայտնել այդ մասին խոսելու հնարավորության համար և հայտնել, որ ամսական պարզեցատրում պատգամավորները վերջին անգամ ստացել են 2020թ փետրվարին, իսկ «ընթացիկ» պարզեցատրում երկու անգամ ստացել են Անկախության տոնի առթիվ, ինչը, նրա կարծիքով, նորմալ է, քանի որ մասնավոր հատվածում պարզեցատրվում են արդյունքային ցուցանիշների հիման վրա:

Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հարցերի հանձնաժողովի նախագահի^{ccxvi} ելույթից հետո «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորը^{ccxvii} ցանկացել է պարզել «ատկատային» իրավիճակի վերաբերյալ հանձնաժողովի նախագահի գնահատականը, ով նշել է, որ «ատկատ»-ների մակարդակը «0» գնահատել չի կարող, քանի որ ինքը շատ լավ ինֆորմացված է և հայտարարում է, որ բանակում թաքնված կոռուպցիա կա և որ բանակում կոռուպցիայի ամենավտանգավոր դրսևորումը հովանավորչությունն է:

Նիստը նախագահողն հայտարարել է, որ քանի որ մնացած հանձնաժողովները եզրակացություններ չեն ներկայացրել, դրանց ներկայացուցիչները չեն կարող հանդես գալ ելույթով:

Մտքերի փոխանակության համար հերթագրվել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության երկու պատգամավոր, սակայն ելույթ է ունեցել նաև երրորդը^{ccxviii}, ով նշել է, որ բյուջեի նախագիծը քննարկում են առանց ընդդիմության և որ հանձնաժողովներում քննարկումները ևս ակտիվ չեն եղել: Նիստի ժամանակ ելույթ են ունեցել ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը և Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանը: Եզրափակիչ ելույթով հանդես է եկել ՀՀ ֆինանսների նախարարը, ով նշել է, որ մշտական հանձնաժողովների հետ աշխատելու հնարավորություն ունեցել են միայն նախորդող 2-3 շաբաթների ընթացքում և չեն կարողացել ամռանը կազմակերպել բյուջետային գործընթացը կանոնակարգող ՀՀ վարչապետի որոշմամբ ԱԺ մշտական հանձնաժողովների հետ նախատեսված աշխատանքային քննարկումները: Նախարարը դա բացատրել է այն հանգամանքով, որ ամռանը կայացել են խորհրդարանական ընտրություններ, ինչին հետևել է կառավարության ձևավորումը: Նախարարի հավաստիացմամբ հաջորդ տարի այդ տեխնիկական քննարկումները կայանալու են:

ՀՀ կառավարության գործունեության և պետական բյուջեի կատարման հետ կապված մի շարք հարցեր ԱԺ վերահսկողության գործառնության շրջանակներում կարող էին և պետք է ավելի մանրամասն քննարկման և առարկա դառնային: Դեպքի նկարագրություն N°6-ում ներկայացված է պետական բյուջեում կատարվող «վերաբաշխումների» քանակի և ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը: ԱԺ-ն չի ուսումնասիրել այդ «վերաբաշխումների» համապատասխանությունը Սահմանադրությանը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Դեպքի նկարագրություն N°7-ում ներկայացված է չկանխատեսված եկամուտների նկատմամբ մոտեցումը:

Այս հետազոտության տեսակետից չկանխատեսված եկամուտները և վերաբաշխումները տարբեր խնդիրներ են: Եթե այս հետազոտությունը վերաբաշխումները դիտարկում է դրանց քանակի և ծավալի տեսակետից, ապա չկանխատեսված եկամուտները դիտարկվում են Սահմանադրությանը համապատասխանության տեսակետից: Սահմանադրության 110 հոդվածի համաձայն ԱԺ կողմից հաստատված պետական բյուջեն «ներառում է բոլոր եկամուտները և ծախսերը»: Սա նշանակում է, որ եթե որոշ եկամուտներ չեն ներառվել ԱԺ կողմից հաստատված բյուջեում, ապա դրանք չեն կարող ուղղվել բյուջեի ծախսերի ֆինանսավորմանը: Այս հետազոտությունը ելնում է այն ենթադրությունից, որ միայն ԱԺ կողմից հաստատվելուց և բյուջեի մաս դառնալուց հետո, անհրաժեշտության դեպքում, օրենքով նախատեսված սահմանափակումները հաշվի առնելով, ՀՀ կառավարությունը կարող է այդ միջոցներն օգտագործել բյուջետային ծրագրերի ֆինանսավորման համար:

Դեպքի նկարագրություն N°6. ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեի կատարման ընթացքում կատարվող «վերաբաշխումները»

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաստատված բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել պատգամավորների, խմբակցությունների և կառավարության առաջարկությամբ^{ccxix}: Պետական բյուջեի կատարման ընթացքում ՀՀ «կառավարությունը, իր սահմանված կարգով, կարող է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի երեք տոկոսի սահմաններում վերաբաշխել տվյալ օրենքով սահմանված ինչպես ծրագրերի, այնպես էլ ծրագրերի միջոցառումների միջև՝ դրանց գծով օրենքով հաստատված հատկացումների գումարները (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ)»:


Անկախությունից ի վեր ԱԺ-ն ձախողել է պետական սեփականության կառավարման և մասնավորեցման, ինչպես նաև բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը^{ccxx}: 2018թ. հետո իրավիճակը չի փոխվել: Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության կողմից ընդունվող որոշումների զգալի մասը փոփոխություն է նախատեսում նախկինում իր կայացրած որոշումներում: ԱԺ-ն երբևիցե չի հետաքրքրվել ՀՀ կառավարության որոշումներում պարբերաբար և հաճախ կատարվող փոփոխություններով, չնայած դրանց մի մասը կարող է վկայել պետական առանձին մարմինների գործունեության ոչ նպատակային և անարդյունավետ աշխատանքի մասին^{ccxxi}: Կառավարության գործունեության որակի վրա կարող է ազդել նաև առանձին նիստերի ժամանակ առանց քննարկումների ընդունվող որոշումների մեծ քանակը^{ccxxii}:

ՀՀ կառավարությունը մեծ քանակով և ծավալով փոփոխություններ է կատարում ԱԺ ընդունած բյուջեներում: Բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկման ժամանակ պատգամավորների բացարձակ մեծամասնությունը չի հետաքրքրվում դրանց հիմքերի, ծավալների, քանակների, պատճառների, ազդեցության, հատկացված միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործմամբ և այլ հանգամանքներով:

Վերջին տարիներին պետական բյուջեում մեծ քանակով և ծավալով վերաբաշխումներ են կատարվում: Եթե 2006-2009թթ. ՀՀ կառավարությունը տարեկան ընդունում էր 88-122 որոշում, որոնցով վերաբաշխումներ էր նախատեսում ՀՀ պետական բյուջեում, 2011թ.՝ 219, 2012թ.՝ 217, 2013-2018թթ. տարեկան որոշումների թիվը տատանվում էր 246-324 միջակայքում, 2019թ. հասավ 517, 2020թ.՝ 457, իսկ 2021թ.՝ 529 (պատկեր 5):

2022թ. հունվարին, բյուջետային տարվա առաջին ամսում, ՀՀ կառավարությունն իր 4՝ ՀՀ կառավարության 2022թ. հունվարի 13-ի N°43-Ն^{ccxxiii}, հունվարի 27-ի N°76-Ն^{ccxxiv}, N°88-Ն^{ccxxv} և N°96-Ն^{ccxxvi} որոշումներով փոփոխություններ է կատարել 2022թ. ՀՀ պետական բյուջեում:

Պատկեր 5. 2006-2021թթ. ՀՀ պետական բյուջեներում կատարված «վերաբաշխումները» (ձախ առանցք՝ որոշումների թիվը, աջ առանցք՝ տեսակարար կշիռը)



Աղբյուր. www.arlis.am

Ճանաչություն. Փոփոխություններ՝ Պետական բյուջեում փոփոխություն նախատեսող ՀՀ կառավարության որոշումների թիվը: Որոշումներ՝ տվյալ տարում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների թիվը: ՀՀ կառավարության որոշումների ընդհանուր քանակը որոշվել է ելնելով www.arlis.am կայքում նշված կառավարության վերջին որոշման համարից: Կշիռը (%)՝ Պետական բյուջեում փոփոխություն նախատեսող ՀՀ կառավարության որոշումների տեսակարար կշիռը տվյալ տարում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներում:

Ավելացել է բյուջեում փոփոխություն նախատեսող որոշումների ինչպես բացարձակ մեծությունը, այնպես էլ դրանց տեսակարար կշիռը կառավարության կողմից կայացվող բոլոր որոշումներում: Եթե 2006թ. կառավարության ընդունած որոշումների միայն 4.5% էր ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում նախատեսում, ապա 2011-2012թթ.՝ 11.3% - 12.8%, իսկ 2021թ.՝ յուրաքանչյուր չորս որոշումից մեկը: Աժ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հետ հանդիպման ժամանակ վերջինս նշել է, որ ՀՀ կառավարությունը վերաբաշխումներն իրականացնում է իր լիազորությունների շրջանակներում:

Աժ կողմից ընդունված 2019թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված 193 ծրագրերից 108-ի համար նախատեսված հատկացումները ՀՀ կառավարության կողմից ավելացվել են 136.3 մլրդ դրամով, 1408.64 մլրդ ՀՀ դրամից հասնելով 1544.96 մլրդ ՀՀ դրամ: Վերը նշված 136.3 մլրդ դրամը կազմում է 2019թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված 1,855,697,119.5 հազար ծախսերի 7.35%: ՀՀ պետական բյուջեով նախատեսված 36 ծրագրերի համար նախատեսված հատկացումները ՀՀ կառավարության որոշումներով նվազեցվել են 30.4 մլրդ դրամով, կամ բյուջեով հաստատված ծախսերի 1.64% չափով: Բյուջեով հաստատված 49 ծրագրերին կատարված հատկացումները ՀՀ կառավարությունը փոփոխության չի ենթարկել: Տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը 8.9 մլրդ ՀՀ դրամ, կամ բյուջեով հաստատված ծախսերի 0.48% չափով ֆինանսավորում է հատկացրել 12 բյուջետային ծրագրի, որոնք ՀՀ Աժ կողմից հաստատված չեն եղել: Ընդհանուր առմամբ ՀՀ կառավարության որոշումներով 2019թ. ՀՀ պետական բյուջեում 175.62 մլրդ դրամի, կամ բյուջեի ծախսերի 9.46% չափով փոփոխություններ են կատարվել:

Աժ կողմից ընդունված օրենքի համեմատ 2019թ. ՀՀ պետական բյուջեի կատարողականում 77 ծրագրերի գծով փաստացի ծախսերը Աժ կողմից հաստատված մեծությունը գերազանցել են 75.6 մլրդ դրամի չափով, իսկ 121 ծրագրի դեպքում 94.25 մլրդ դրամի ֆինանսավորում չի օգտագործվել: Միայն 7 դեպքում է հատկացված ֆինանսավորումն օգտագործվել 100 տոկոսով: Բյուջեի փաստացի կատարողականի ցուցանիշները Աժ կողմից հաստատվածի համեմատ փոխվել են 9.15 տոկոսով, որից 121 ծրագրի դեպքում հատկացված ֆինանսավորման 5.08 տոկոսը չի օգտագործվել, իսկ 77 ծրագրի դեպքում հատկացվել է Աժ կողմից նախատեսածից 4.08 տոկոսով ավել ֆինանսավորում:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման համար բյուջեում, առանձին հոդվածով նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել պետական բյուջեով նախատեսված ծախսերի 5%-ը և որից հատկացումները կատարվում են կառավարության որոշումների հիման վրա: «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի կետ 20-ի համաձայն պահուստային ֆոնդից կատարվող հատկացումների գումարների չափով նվազեցվում են բյուջեով պահուստային ֆոնդում նախատեսված հատկացումները և «ավելացվում, ըստ նշված հատկացումների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության, պետական բյուջեով նախատեսված այլ ծրագրերով սահմանված հատկացումները», իսկ կետ 21-ը սահմանում է, որ կետ 20-ով նախատեսված փոփոխությունները «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդված 3-րդ մասի իմաստով բյուջետային հատկացումների վերաբաշխումներ չեն համարվում»^{ccxxvii}:

Չնայած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքները չեն նախատեսում բյուջեի այլ տողերի (հոդվածների) նվազեցման հաշվին պահուստային ֆոնդի միջոցների ավելացում, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին բյուջեի մասին օրենքով նախատեսված 8,778.4 մլն դրամ հատկացման պայմաններում «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությանը կից տեղեկանքի համաձայն ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 209 որոշումների հիման վրա կատարվել է 34,752.1 մլն դրամի վերաբաշխում: Դա հնարավոր է, եթե այլ աղբյուրների հաշվին ավելացվել են կառավարության պահուստային ֆոնդին կատարվող հատկացումները: «Վերաբաշխումների» այս մեծ ծավալը չի կարելի բացատրել դրամաշնորհային ծրագրերում կատարվող «վերաբաշխումներով», քանի որ 2019թ. բյուջեի օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերը և միջոցառումները ֆինանսավորվել են 26%-ով, «վերաբաշխումների» ծավալը կազմել է 1.1 մլրդ ՀՀ դրամ, կամ ծախսերի 0.08%-ը:

ՀՀ կառավարությունը սկսում է բյուջեում «վերաբաշխում» կատարել բյուջետային տարին սկսելուց անմիջապես հետո. 2019թ. պետական բյուջեում առաջին փոփոխությունը կատարվել է 2019թ փետրվարի 6-ին (ՀՀ կառավարության №69-Ն որոշում), 2020թ.^{ccxxviii} հունվարի 16-ին (№43-Ն), 2021թ.^{ccxxix} հունվարի 13-ին (№2-Ն), 2022թ.^{ccxxx} հունվարի 13-ին (№43-Ն): 2022թ. փետրվարի 10-ի դրությամբ 2022թ. պետական բյուջեում արդեն իսկ կատարվել է 11 «վերաբաշխում»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության որոշումների նախագծերը պատրաստելը տևում է մի քանի շաբաթ, 2022թ. հունվարի 13-ին

փոփոխություն կատարելը նշանակում է, որ որոշման նախագիծն ամենայն հավանականությամբ պատրաստվել է նախորդ տարվա դեկտեմբերին, պետական բյուջեն հաստատելուց անմիջապես հետո (2021թ. դեկտեմբերի 9-ին):

Դեպքի նկարագրություն №7. «Չկանխատեսված» եկամուտներ

ԱԺ-ն ընդունում է պետական բյուջեն (Սահմանադրություն հոդված 88): ԱԺ-ն պետական բյուջեն ընդունում է կառավարության ներկայացմամբ, որը ներառում է պետության **բոլոր** եկամուտները և ծախսերը (Սահմանադրության հոդված 110): ՀՀ քաղաքացիները միայն ԱԺ-ին են լիազորել տիրապետել, օգտագործել և տնօրինել Հայաստանի Հանրապետության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները: ՀՀ կառավարությունը լիազորված է օրենքով նախատեսված չափաքանակների սահմաններում «վերաբաշխել» պետական բյուջեի միջոցները:

2019թ. մայիսի 22-ին ՀՀ վարչապետը ազդարարեց պետական բյուջեի եկամտային մասի կանխատեսվող 62 մլրդ դրամ գերակատարման մասին և հայտարարեց, որ պետք է քննարկեն, «թե ինչպես պետք է տեղաբաշխել այդ հավելյալ բյուջետային միջոցները»^{CCXXX}: Վարչապետը հայտնել էր, որ կառավարությունն արդեն իսկ որոշել է 17 մլրդ դրամ հատկացնել ճանապարհաշինության, զինվորականների և ուսուցիչների աշխատավարձերի բարձրացման համար և արձանագրել. «Մենք պետք է մնացած միջոցների մասով կայացնենք որոշումներ: Խոսքը մոտավորապես 45 մլրդ դրամի մասին է, որի շուրջ պետք է ճիշտ որոշում կայացնենք, թե ինչպես ծախսել այդ գումարը»:

5.3. Մշտական հանձնաժողովների նիստերը

Կանոնակարգի համաձայն ԱԺ-ն իր գործունեության մի մասն իրականացնում է մշտական (հոդված 13, 14) և ժամանակավոր հանձնաժողովների (հոդված 17) նիստերի: ԱԺ մշտական հանձնաժողովներն ունեն վերահսկողական գործառույթ (Սահմանադրության հոդված 106): Մշտական հանձնաժողովների վերահսկողական գործառույթն ամրագրված է նաև կանոնակարգի հոդված 10-ում (մշտական հանձնաժողովների ստեղծումը) և 12-ում (մշտական հանձնաժողովի լիազորությունները): ԱԺ առաջին նստաշրջանում մշտական հանձնաժողովների ստեղծման մասին ԱԺ որոշման նախագծով ի թիվս այլ գործառույթների սահմանվում է նաև հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակը (հոդված 112): Մշտական հանձնաժողովները խորհրդարանական վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ, ինչպես նաև կարող են տեղեկություններ պահանջել կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ (հոդված 122): Մշտական հանձնաժողովի խորհրդարանական վերահսկողության թեման, ինչպես նաև դրա առնչությամբ իրականացվելիք միջոցառումները սահմանվում են հանձնաժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովի անդամներից բացի, խորհրդարանական վերահսկողության թեմայի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն ԱԺ նախագահը, մշտական հանձնաժողովները և խմբակցությունները: Վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի նիստին և պատասխանել հարցերին: Վերահսկողության արդյունքով իրավասու մշտական հանձնաժողովը կարող է ընդունել գրավոր եզրակացություն և այն ուղարկել ԱԺ մյուս մարմիններ, ինչպես նաև իրավասու մարմիններ և պաշտոնատար անձանց: Այդպիսի եզրակացություններ չեն հայտնաբերվել:

ԱԺ կայքի մշտական հանձնաժողովների ինտերնետային էջերում խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ տեղեկատվությունը խիստ սահմանափակ է: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների ԱԺ բոլոր մշտական հանձնաժողովների նիստերի վերաբերյալ ԱԺ ինտերնետային կայքում առկա տեղեկատվությունը: Աղյուսակ 9-11-ում ներկայացված են 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների ԱԺ բոլոր մշտական հանձնաժողովների նիստերի օրակարգում ընդգրկված պետական բյուջեին և պետական բյուջեին կատարման նկատմամբ վերահսկողությանը վերաբերող հարցերի թվաքանակները:

Աղյուսակ 9. 6-րդ գումարման ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից քննարկված պետական բյուջեին և բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարցերի քանակը (2017թ. մայիսի 18-2019թ. հունվարի 14)

Հանձնաժողով	Նիստերի քանակը	ՊԲԿ-ի նիստում թվաքանակը	ՊԲԿ-ի նիստում թվաքանակը

Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի	21	10	8
Պաշտպանության և անվտանգության հարցերի	21	2	4
Տնտեսական հարցերի	34	4	-
Եվրոպական ինտեգրման հարցերի	5	-	-
Արտաքին հարաբերությունների	21	-	-
Առողջապահության և սոցիալական հարցերի	32	4	-
Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի	14	-	-
Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի	39	-	-
Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի	28	1	-

Աղբյուր. ՀՀ ԱԺ ինտերնետային կայք, սեփական հաշվարկներ

Ծանոթություն

ՊԲԿՀ թվաքանակը՝ նիստի օրակարգում ընդգրկված պետական բյուջեին վերաբերող հարցերի թվաքանակը, ՊԲԿԼԿՀ թվաքանակը՝ նիստի օրակարգում ընդգրկված պետական բյուջեին կատարման նկատմամբ վերահսկողությանը վերաբերող հարցերի թվաքանակը

Հավաքագրված և 9-11 աղյուսակներում ներկայացված քանակական տվյալները վկայում են, որ միայն ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն է ակտիվ վերահսկողություն իրականացնում բյուջեի նկատմամբ: Դա բնական է, քանի որ բյուջետային օրենսդրության, բյուջեների կազմումը, կատարումը և հաշվետվությունների ուսումնասիրությունը այս հանձնաժողովի իրավասության շրջանակներում է: Սակայն պետական բյուջեից ֆինանսավորվում են բոլոր ոլորտները և ոլորտային ռազմավարությունների հետ ոլորտին հատկացվող բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման մասին ավելի լավ պատկերացում կարող են ունենալ ոլորտային հանձնաժողովները: Սակայն ոլորտային մշտական հանձնաժողովների նիստերում բյուջեին ու բյուջեի կատարմանը նվիրված քննարկումները թվաքանակի առումով տարաբնույթ են: Որոշ մշտական հանձնաժողովներ ընդհանրապես չեն անդրադարձել այս թեմաներին:

Աղյուսակ 10. 7-րդ գումարման ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից քննարկված պետական բյուջեին և բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարցերի քանակը (2019թ. հունվարի 14 - 2021թ. օգոստոսի 2)

Հանձնաժողով	Նիստերի քանակը	ՊԲԿՀ միլիոնավոր լ.հ.մ.	ՊԲԿԼԿՀ միլիոնավոր լ.հ.մ.
Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի	55	9	19
Պաշտպանության և անվտանգության հարցերի	43	1	-
Տնտեսական հարցերի	70	-	-
Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի	27	-	-
Եվրոպական ինտեգրման հարցերի	6	-	-

Արտաքին հարաբերությունների	15	-	-
Առողջապահության եւ սոցիալական հարցերի	43	2	-
Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի	26	-	-
Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի	36	1	-
Պետական-իրավական հարցերի	84	3	-
Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի	41	3	1

Աղբյուր. ՀՀ ԱԺ ինտերնետային կայք, սեփական հաշվարկներ

8-րդ գումարման (առաջին նստաշրջան) ԱԺ-ում բյուջեի կատարման վերաբերյալ հանձնաժողովների նիստերում հարցեր են քննարկել միայն ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Արդեն նշվել է, որ ԱԺ մշտական հանձնաժողովները խորհրդարանական վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ, ինչպես նաև կարող են տեղեկություններ պահանջել կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ (կանոնակարգ հոդված 122): Մշտական հանձնաժողովների կարևոր գործառնություն կարող է և պետք է դառնա ոլորտային քաղաքականությունների մշակման, իրականացման և արդյունքների նկատմամբ վերահսկողությունը: Քաղաքականությունները պետք է մշակվեն փաստերի, ոլորտում կուտակված խնդիրների պատճառների բացահայտման հիման վրա, վերջնական արդյունքի ցուցանիշները պետք է լինեն կոնկրետ, չափելի, իրատեսական և հասանելի ծրագրի ավարտին:

Աղյուսակ 11. 8-րդ գումարման ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից քննարկված պետական բյուջեին և բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարցերի քանակը (2021թ. օգոստոսի 2 – 2021թ. դեկտեմբերի 7)

Հանձնաժողով	Նիստերի վիճակ միություն	ԵԻՄԸ միություն թվով	ՊԵԼԻՄԸ միություն թվով
Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի	9	-	6
Պաշտպանության եւ անվտանգության հարցերի	18	-	-
Տնտեսական հարցերի	11	-	-
Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի	4	-	-
Եվրոպական ինտեգրման հարցերի	1	-	-
Արտաքին հարաբերությունների	3	-	-
Առողջապահության հարցերի	3	-	-
Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի	2	-	-
Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի	6	-	-
Աշխատանքի եւ սոցիալական հարցերի	6	-	-

Պետական-իրավական եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի	11	-	-
Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության	10	2	-

Աղբյուր. ԶԳ ԱԺ ինտերնետային կայք, սեփական հաշվարկներ

Դեպքի նկարագրություն N°8. Վերահսկողություն հանրակրթության կառավարման համակարգի փոփոխությունների նկատմամբ

Արդեն գրեթե 25 տարի է կրթության և դպրոցների կառավարման համակարգը ենթարկվում է փոփոխությունների, որոնք սկսվեցին դպրոցներին նոր իրավաբանական կարգավիճակ տալով և կոլեգիալ կառավարման մարմիններ ձևավորելով: 2017թ. զեկույցն արձանագրել էր, որ խորհուրդների որոշումների գործընթացը լիովին արտացոլված չէ նիստերի արձանագրություններում, որոշումները կամ ընդունվում են միաձայն, կամ չի նշվում կողմ և դեմ ձայների քանակը: Ուսումնասիրված 248 արձանագրության համաձայն տնօրենի գործունեությունը խորհուրդը քննադատել է մեկ դեպքում և այլն^{ccxxxi}: 2020թ. ուսումնասիրությունը մեջբերել է Տավուշի մարզի ֆոկլուս-խմբային հարցազրույցի մասնակիցներից մեկի խոսքը, որը նշել է, որ «խորհրդի նիստերի ժամանակ գեղամիջի կանգնած տղեփց ենք կանչում, որ ձևական քվորում ունենանք»^{ccxxxi}: Մեկ այլ դեպքում խորհրդի անդամներից երկուսը «խոսքան» էին մեկնել: Խնդրի պատճառներն ուսումնասիրելու և լուծումների այլընտրանքները հանրության հետ քննարկելու ու փաստերի վրա հիմնված քաղաքականություն մշակելու փոխարեն ԿԳՄՍ նախարարությունը ներմուծել է «միացյալ խորհուրդ» հասկացությունը, որը 3 դպրոցի դեպքում կարող է ունենալ մինչև 19 անդամ: ԿԳՄՍ նախարարությունը չի մեկնաբանել, թե եթե նախկինում, դժվար էր քվորում ապահովել խորհրդում 8 անդամ ունենալու պարագայում, ինչպես են երաշխավորելու 19 անդամ ունեցող խորհրդի աշխատանքը, որի անդամները ապրում են 3 տարբեր բնակավայրերում:

2018թ. հետո դպրոցների և հանրակրթության կառավարման համակարգի փոփոխությունները 2000-ականների սկզբին սկսված «օպտիմալացման» քաղաքականության շարունակությունն է: Այս դեպքում «օպտիմալացվում» է ոչ թե նույն բնակավայրում գտնվող դպրոցների քանակը, այլ տարբեր բնակավայրերում գտնվող դպրոցների կառավարման համակարգը: Ժամանակի ընթացքում այս մոտեցման տրամաբանական շարունակությունը լինելու է դպրոցների թվաքանակի «օպտիմալացումը» և խոշորացված համայնքի առանձին բնակավայրերում դպրոցների փակումը: ԿԳՄՍ նախարարությունը շարունակում է աղճատել դպրոցների կառավարման համակարգը: Կոլեգիալ կառավարման մարմինների «աշխատունակության» թուլացումը կարող է հանգեցնել կրթության և դպրոցների կառավարման համակարգերում պետական և տարածքային կառավարման մարմինների դերի ուժեղացմանը, թուլացնել դպրոցների ինքնակառավարման համակարգը, վիատեցնել ծնողներին և աշակերտներին:

ԿԳՄՍ նախարարությունը չի կատարել խորհուրդներում ներառված անձանց, հատկապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների շահագրգռվածության (մոտիվացիայի) ուսումնասիրություն (ի՞նչն է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին մղում դառնալ խորհրդի անդամ): Նախարարությունը չի ուսումնասիրել խորհրդի նիստերին մասնակցությունը, այլ հանգամանքներ, որոնք կվկայեն անդամի պարտականությունների կատարմանը ոչ ձևական մոտեցումը:

Աժ-ն երբևիցե չի հետաքրքրվել դպրոցների կառավարման համակարգի վերափոխումներով, ինչի արդյունքում ՀՀ կառավարության և ԿԳՄՍ նախարարության առանձին պաշտոնյաներ այն ճկում են իրենց պատկերացումներին համապատասխան:

Այս հետազոտության հաշվետվությունը ամփոփման վերջնական փուլում էր, երբ հայտնի դարձավ, որ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի նախագիծը: Նախագիծն արձանագրում է առերեսվող մարտահրավերների մի մասը, սակայն չի ներկայացնում դրանց պատճառները: Գոյություն ունի ռիսկ, որ առանց խնդիրների պատճառները վերհանելու և խնդիրները ձևակերպելու լուծումները հանգեցնելու են նոր խնդիրների^{CCXXXIII}:

Դեպքի նկարագրություն N°9. Մաքսային սահմանի հատման կանոնների խախտում

2021թ. օգոստոսի 4-ին ՊԵԿ-ի նոր նախագահին ներկայացնելիս վարչապետ Ն. Փաշինյանը խոսել էր մաքսային սահմանի հատման կանոնների խախտման հետ կապված լուրջագույն դեպքերի մասին^{CCXXXIV}. «Մենք, եթե չեմ սխալվում, մեկ-երկու, հնարավոր ա նույնիսկ երեք քրեական գործ ունենք հետևյալի մասին, երբ որ մաքսային կետով բեռներն անցել են այնպես, ինչպես օրինակ կանցնեին, ասենք, Հանրապետության հրապարակով՝ Ամիրյան փողոցից դեպի Տիգրան մեծ պողոտա: Իհարկե, օրենքի և նախաքննության տրամաբանությամբ մենք նախաքննություն ենք վարում, գտնում ենք մեղավորներին, ապացույցներ ենք հետապոտում, հետո պարզում ենք ում մեղավորությունն ա ապացուցված, ում մեղավորությունը ապացուցված չէ, հետո գալիս ենք այն ելրակացության, որ այդ գործի մեջ մեղավոր են այդ օրվա հերթափոխի երկու կամ երեք ծառայող:

Ես ուզում եմ ասեմ, որ Ես տեսակետը կտրականապես չեմ կիսում, որովհետև ես չգիտեմ քրեական դատավարության կամ քրեական օրենսգրքի տրամաբանությամբ ո՞վ է մեղավոր և պատասխանատու, դա այլ հարց է, բայց ես համարում եմ, որ չի կարող էդպես ուղղակի լինել, որ բեռները մտնեն Հայաստանի Հանրապետության տարածք՝ ուղղակի, Եսպես, առանց մաքսային ընթացակարգերի, հետո պարզվի, որ դրա մեղավորը երեք հսկիչ ա կամ, չգիտեմ, թեկուզ հսկիչից մի փոքր ավել: Հույս ունեմ՝ նման դեպքեր չեն կրկնվի, արդեն իսկ տեղի ունեցած դեպքերով պետք է պատասխանատվության շատ ավելի լայն շրջանակ լինի, որովհետև չի կարող այդպես ուղղակի լինել: Սա իմ առաջին պայմանը և պահանջն է, որպեսզի մենք հստակ սա արձանագրենք: Հետևաբար, այն միջավայրը, որում դա ընդհանրապես հնարավոր է որ տեղի ունենա, այդ միջավայրի մեջ է խնդիրը և պիտի լուծվի այդ միջավայրի հարցը առաջին հերթին: Իհարկե, ցավով պիտի նշեմ նաև, որ նաև հարկային ծառայության պարագայում էլ մենք ունենք էլի որոշ բացահայտված դեպքեր»:

Այս զեկույցի հրապարակման պահին դեռ անհայտ է, թե ովքեր են այն երկու-երեք մեղավոր ծառայողները (հավելված 20): Անհայտ մնաց, թե որ տնտեսավարողներին են պատկանում այն բեռները, որոնք մաքսային կետով անցել են այնպես, ինչպես կանցնեին Հանրապետության հրապարակով՝ Ամիրյան փողոցից դեպի Տիգրան մեծ պողոտա: Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմին ուղղված գրության ՊԵԿ-ը հայտնել է, որ «Հիշյալ քրեական գործերով կատարված քննության արդյունքներով պարզվել է մեղավոր անձանց շրջանակը, տրվել է քրեաիրավական համապատասխան գնահատական կատարված արարքներին»: Միևնույն ժամանակ ՊԵԿ-ը հայտնել է, որ վարույթն իրականացնող մարմինը նպատակահարմար չի գտնում քրեական գործերով նախնական քննության տվյալների հրապարակումը:

5.4. Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերը

Պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում (համապատասխանաբար կանոնակարգի հոդված 88 և 117): ՀՀ Սահմանադրության համաձայն «Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը» (հոդված 110): Կանոնակարգի համաձայն «Պետական բյուջեն ներառում է օրենքով սահմանված բյուջետային մուտքերը և ելքերը» (հոդված 87): Ի տարբերություն Սահմանադրության կանոնակարգը չի օգտագործում «բոլոր» բառը և նշում է ոչ թե «եկամուտները և ծախսերը», այլ «մուտքերը և ելքերը», ինչն ընդլայնում է Սահմանադրությամբ նախատեսված գործարքների տեսակների շրջանակը: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը բյուջետային **եկամուտները** պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող և նրանց կողմից տնօրինվող դրամական միջոցներն են, բացառությամբ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցների և բյուջեների պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներին դասվող միջոցների (հոդված 1.2): Բյուջետային **ծախսերը** գործառնությունների ֆինանսական ապահովման նպատակով բյուջեներից ուղղվող դրամական միջոցները, բացառությամբ տրամադրվող վարկերի և փոխառությունների, ներգրավված փոխառում միջոցների մարումների, ինչպես նաև բաժնետոմսերի և կապիտալում մասնակցության և այլ արժեթղթերի ձեռք բերման նպատակով կատարվող հատկացումների: Բյուջեի **մուտքերը** սահմանվում են որպես պետական կամ համայնքների բյուջեներ ստացվող դրամական միջոցները, որոնք ներառում են տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխառությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները: Բյուջետային **ելքերը** Սահմանադրությամբ և օրենքներով պետական և համայնքների բյուջեներից պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանն ուղղվող դրամական միջոցներն են: Բյուջետային ելքերը ներառում են բյուջետային ծախսերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների ձեռքբերումները և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում ՀՀ կառավարությունը ԱԺ է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն (հոդված 23): Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն իր նիստում քննարկում է պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ ՀՀ կառավարության ներկայացրած տեղեկանքը (կանոնակարգի հոդված 114):

Տարիներ շարունակ լրագրողներն արձանագրել են, որ բյուջեի նախագծի կամ կատարողականի, վարկերի և այլ հարցերի վերաբերյալ քննարկումներն ընթանում են կիսադատարկ դահլիճում^{CCXXV}: ԱԺ-ում քննարկումների ժամանակ մի շարք նախարարություններ, ԱԱԾ-ն, ոստիկանությունը և Երևանի քաղաքապետարանը ներկայացնում են ոչ թե ղեկավարները, այլ նրանց տեղակալները, ինչի վրա որևէ մեկը ուշադրություն չի դարձնում, «քանի որ ըստ Էության ընդդիմադիր պատգամավորները ևս հետաքրքրված չէին երկրի թիվ մեկ ֆինանսական փաստաթղթի կատարողականի քննարկմամբ»: Նախարարների բացակայության վերաբերյալ լրագրողների հարցերը

փոխնախարարներից ոմանք անլուրջ էին որակել և չէին մեկնաբանել^{CCXXXVI}: «Ազատություն» ռադիոկայանի համաձայն ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Վովայի Փաշինյանը քննադատում ու հրապարակայնորեն հեզնում էր բյուջեի քննարկմանը չներկայացած բարձրաստիճան պաշտոնյաներին^{CCXXXVII}: Պատգամավորներն սկսեցին բյուջեի նախագծի քննարկումներին Երևանի քաղաքապետի ԱԺ չներկայանալու պատճառներով հետաքրքրվել 2021թ. աշնանը, երբ մամուլի հրապարակումների համաձայն վերջինս կորցրել էր ՀՀ վարչապետի բարեհաճությունը^{CCXXXVIII}:

Վերջին տարիներին բյուջետային գործընթացում կատարվել են կազմակերպական բնույթի փոփոխություններ: Պետական բյուջեի վրա գործընթացի այդ փոփոխությունների ազդեցությունը գնահատելու համար ժամանակ է հարկավոր: Փոփոխություններից մեկի արդյունքում ՀՀ վարչապետը պետական բյուջեի կազմման գործընթացն սկսելու վերաբերյալ որոշումը կայացնում է ոչ թե տվյալ բյուջետային տարին սկսելուց 13-15 ամիս առաջ, այլ նախորդ տարվա հունվարին:

Մյուս փոփոխությունը կապված է բյուջեի նախագիծը պատրաստելու ժամկետների հետ: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ կառավարությունը ՄԺԾ-ն ԱԺ է ներկայացնում մինչև ընթացիկ տարվա հուլիսի 20-ը՝ ի գիտություն: Օրենքի համաձայն առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակումն սկսվում է ոչ ուշ, քան ՄԺԾ հաստատման օրը: Վերջին 3-4 տարիներին ՀՀ կառավարությունը վերանայել է գործընթացը և նախարարություններն ու գերատեսչությունները բյուջեի հաշվարկները ՀՀ ՖՆ են ներկայացնում մարտի կեսերին, ինչի արդյունքում ՀՀ կառավարությունը ՄԺԾ հետ միաժամանակ ԱԺ է ներկայացնում նաև հաջորդ տարվա բյուջեի նախագիծը: Այս պրակտիկան փորձարկվել է մինչև 2019թ., ապա սկսել է կիրառվել 2019թ. սկսած: Կազմվում են պետական բյուջեի նախնական նախագծի բյուջետային ծրագրերի կատարողական հիմնական ցուցանիշների (ԿՀՑ) բարելավման աշխատանքային քննարկումների ժամկետացանկեր: Ստեղծվում են աշխատանքային խմբեր՝ կազմված ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, ոլորտային մշտական հանձնաժողովների, Բյուջետային գրասենյակի փորձագետներից, ինչպես նաև ՀՀ ՖՆ ու ոլորտային գերատեսչության ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբերի նպատակը բյուջետային ծրագրերի և միջոցառումների ԿՀՑ-ների մշակման և Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխան պատշաճ տեսքի բերելն է: Ժամանակաշրջանը ամենահարմարը չէ, քանի որ պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակն ԱԺ է ներկայացվում հուլիսի վերջին, երբ աշխատակիցների և պատգամավորների զգալի մասը արձակուրդ են մեկնում: ԱԺ աշխատակազմը տրամադրել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի աշխատանքային քննարկման ժամկետացանկը: Ժամանակացույցի համաձայն քննարկումները տեղի են ունեցել 2021թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 7-ը: Այսինքն, մինչև օրենսդրությամբ նախատեսված 90 օր առաջ բյուջեի նախագիծը ԱԺ ներկայացնելը, նախարարություններն ու գերատեսչություններն այն նախապես քննարկում են ԱԺ համապատասխան հանձնաժողովների հետ:

Այս քննարկումների վերաբերյալ հանրային տեղեկատվությունը սահմանափակ է, քանի որ քննարկումներն ունեն աշխատանքային բնույթ: 2019թ., 2020թ. պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների ժամանակ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը և Բյուջետային գրասենյակը ներկայացրել են մոտ 270 առաջարկություն: Առաջարկությունների մեծ մասն ընդունվել են կառավարության կողմից:

եղել են դեպքեր, երբ նախնական քննարկումների ժամանակ ընդունված առաջարկությունը պետական բյուջեի նախագծի ԱԺ ներկայացվող վերջնական տարբերակում չի ներառվել: Բյուջեի նախագծի նախնական քննարկումների ժամանակ ԱԺ մնացած մշտական հանձնաժողովների ներգրավվածությունը եղել է խիստ սահմանափակ: Պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակը ԱԺ է ներկայացվում բյուջետային տարվա սկզբից 90 օր առաջ:

2019 թվականին 2020թ. բյուջեի նախագիծն ԱԺ ներկայացնելուց հետո ՀՀ վարչապետն սկսել էր նախարարությունների ղեկավարների հետ քննարկել վերջիններիս բյուջետային հայտերը^{ccxxxix}: հոկտեմբերի 9-ին՝ շրջակա միջավայրի, 14-ին՝ աշխատանքի և սոցիալական հարցերի, 16-ին՝ արտաքին գործերի 22-ին՝ արդարադատության, 23-ին՝ Էկոնոմիկայի, 25-ին՝ արտակարգ իրավիճակների, նոյեմբերի 5-ին՝ առողջապահության նախարարությունների բյուջետային հայտերը: ՀՀ կառավարությունը ԱԺ պետք է ներկայացնի փաստաթղթի վերջնական տարբերակը:

Մշտական հանձնաժողովներն աշխատել են նաև 2020թ. արցախյան պատերազմի օրերին: ՀՀ փոխվարչապետ Միքել Գիրգորյանը և ֆինանսների նախարար Ատոմ Զանցուղազյանը 2020թ. նոյեմբերի 2-ին ներկայացրել են «ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը^{ccxli}: Նույն օրը ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային ու պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել են ոստիկանությանը և արտակարգ իրավիճակների նախարարությանը նախատեսված հատկացումները^{ccxlii}:

Ընդունված պրակտիկայի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, ԱԺ նախագահը, վարչապետի հետ խորհրդակցելով կազմում է գլխադասային և մյուս մշտական հանձնաժողովներում, ինչպես նաև դրանց համատեղ նիստերում պետական բյուջեի տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը և այն ներկայացնում է ԱԺ խորհրդի հաստատմանը (Կանոնակարգի հոդված 117): Պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկման ժամանակ ոչ գլխադասային մշտական հանձնաժողովների ներկայացուցիչներն ԱԺ-ում հաշվետվության քննարկման ընթացքում հարակից զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունեն, եթե հաշվետվությունը նախապես քննարկվել է այդ հանձնաժողովներում, և դրա մասին առկա է հանձնաժողովի որոշում, ինչը ենթադրում է, որ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը կարող է չքննարկվել ոլորտային հանձնաժողովներում: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերը քննարկվում են իրավասու մշտական հանձնաժողովների համատեղ փակ նիստում, որին **կարող են** մասնակցել պատգամավորները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և Կառավարության լիազորված անձինք (Կանոնակարգի հոդված 117): **Կարող են** ձևակերպումը նշանակում է, որ վերը նշված պաշտոնյաները կարող են նաև չմասնակցել: Կարգավորված չէ, թե ում են պատգամավորներն ուղղում հարցերը, եթե ՀՀ կառավարության լիազորված անձինք և Հաշվեքննիչ պալատի նախագահը չեն մասնակցում փակ նիստին:

Այս հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ԱԺ մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների 18 ժամ տևողությամբ տեսաձայնագրություն: Ուսումնասիրվել է 2022թ. բյուջեի նախագծի քննարկման մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի մոտավորապես 30 ժամ տևողությամբ

տեսաձայնագրություն: 2020թ. բյուջեի կատարողականի հաշվետվության քննարկմանը ակտիվ մասնակցել են «Իմ քայլը» խմբակցության երկու, իսկ 2022թ. բյուջեի նախագծի քննարկմանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մեկ պատգամավոր^{ccxlii}:

Քննարկումների ժամանակ պատգամավորները հարցեր են տալիս այնպիսի տվյալների վերաբերյալ, որոնք առկա են հաշվետվության աղյուսակներում: Իշխանական պատգամավորների մի մասն իրենց հարցը տալիս տեղեկացնում է, որ ցանկանում է, որպեսզի կառավարության ներկայացուցիչը ևս մեկ անգամ հնչեցնի, կամ ավելի լավ ներկայացնի իրենց կարծիքով կառավարության գործունեության դրական արդյունքներից որևէ մեկը: Պատգամավորները մշտապես ընդգծում են հանրային միջոցներն «արդյունավետ» ծախսելու անհրաժեշտությունը: Սակայն ուսումնասիրված տեսագրություններում տրված հարցերից գրեթե ոչ մեկը չի օգնել պատկերացում կազմել ծախսերի «արդյունավետության» մասին: Հարցեր չեն եղել նաև COVID-19 համավարակի դեմ պայքարի և դրա հետևանքների մեղմման ուղղված միջոցառումների ֆինանսավորման վերաբերյալ:

Համատեղ նիստերի ժամանակ պատգամավորները հարց տալու հնարավորությունը սովորաբար օգտագործում են պաշտոնյաներին մի քանի հարց տալու համար: Սովորաբար վերջին տարիներին պետական կառավարման համակարգ մտած պաշտոնյաները իրենց տրվող հարցերը գրի չեն առնում, դրանցից մեկը կամ երկուսը մոռանում են և ստիպված են լինում խնդրել պատգամավորին (սովորաբար նիստը վարողներից մեկին) կրկնել հարցը: Այդպիսի դեպքեր են եղել, օրինակ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի գյուղատնտեսության գծով տեղակալի, Երևանի քաղաքապետի տեղակալի, սփյուռքի հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավարի դեպքում: Համեմատաբար փորձառու պետական պաշտոնյաները, ինչպես օրինակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը, գրի են առնում պատգամավորների հարցերը: Երբ ղեկավարի փոխարեն ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում զեկույցը ներկայացնում է տեղակալը, վերջինս կարողանում է պատասխանից խուսափել, հայտարարելով, որ այդ հարցն իր կողմից չի «համակարգվում» (կամ այլ նման ձևակերպմամբ): Օրինակ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր հարցին ի պատասխան Երևանի քաղաքապետի տեղակալը պատասխանում է, որ սոցիալական աշխատողների հետ կապված հարցերն այլ անձ է համակարգում (ինքը կարող է անդրադառնալ ֆինանսական մասին)^{ccxliii}:

ԱԺ պաշտպանության և անվտանգության և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստի ժամանակ համանախագահողը^{ccxliv} ուստիկանապետի տեղակալին առաջարկում էր նույն դաժանությամբ պատասխանել ընդդիմադիր պատգամավորի^{ccxlv} ուստիկանության դաժանությունների մասին հարցին, քանի որ նախկինում շատ ավելի մեծ դաժանություններ են տեսել, օրինակ Սարի թաղում հանված աչք, մարտի 1 և այլն:

Առանձին դեպքերում պատգամավորները քամահրական վերաբերմունք են դրսևորել **վերլուծական** աշխատանքի նկատմամբ: ԱԺ պաշտպանության և անվտանգության և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստի ժամանակ ի պատասխան ընդդիմադիր պատգամավորի^{ccxlii}, առավոտյան ժամերին մի շարք դպրոցների շենքերի դիմաց մեքենաների կուտակումների մասին հարցի, ՀՀ ուստիկանապետի տեղակալը խոստացավ, որ կվերլուծեն այդ հարցը: Նիստի համանախագահը կարծիք հայտնեց, որ դրանք վերլուծություններով չի, որ պիտի

կարգավորվեն, այլ պետք է խստացնել տուգանքները: Նիստը համանախագահողը ԱԱԾ ղեկավարի տեղակալին առաջարկում էր ազենտներին շուտ ոչնչացնել:

Մի քանի դեպքում նախարարի կողմից համակարգվող ոլորտների քանակը թույլ չի տալիս տիրապետել բոլոր ոլորտներում կուտակված մարտահրավերների սրբություններին: Նման դեպքերում նախարարը դիմում է իր տեղակալին, որպեսզի վերջինս պատասխանի հարցերին: ԿԳՄՍ նախարարին խոսք տալուց առաջ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը^{ccxlvii} նախարարին առաջարկեց անհրաժեշտության դեպքում դիմել տեղակալների օգնությանը, քանի որ ոլորտները շատ են և նախարարը կարող է լավ տեղյակ չլինել բոլոր հարցերից: Նախարար Դումանյանը լիարժեք օգտագործեց մշտական հանձնաժողովի նախագահի «օժանդակությունը»: ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում ելույթի ժամանակ նախարար Դումանյանը դափնեցրեց գտնվող իր աշխատակիցներից ճշտում էր, թե արդյոք ելույթի որոշակի հատվածը ճիշտ է շարադրված: 2021թ. հունիսի 8-ի նիստի ժամանակ ԱԺ հանձնաժողովի նախագահն ընդհատեց ԿԳՄՍ նախարարի ելույթը և հայտնեց, որ «որպես կանոն, չա՛տ դետալային մենք չեն ներկայացնում, կարևորագույն արձանագրումները, որովհետև պատգամավորները պարտավոր են ծանոթ լինել ամբողջությամբ փաստաթղթին: Այսինքն, կուզեի որ հիմնական կարևորագույն հատվածներն առանձնացնեիք, ներկայացնեիք, մնացածը արդեն հարցուպատասխանի տեսքով:»

Համատեղ նիստերի ժամանակ պատգամավորները հարցեր չեն տվել մամուլում տեղ գտած հրապարակումների վերաբերյալ: Օրինակ, 2020թ. դեկտեմբերի 24-ին «Հետք»-ը «Կառավարությունը թաքցնում է կորոնավիրուսի օրերին ընկերություններին տրամադրված աջակցության չափերը» վերնագրով հոդված էր հրապարակել^{ccxlviii} (տես տեղեկատվական լրացում №...):

Հայաստանը մարտահրավերներ է առերեսում բոլոր բնագավառներում, այդ թվում այնպիսիք, որոնք պետական բյուջեում արտացոլվում են առանձին ցուցանիշների տեսքով: Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում պետական քաղաքականություններին, դրանց նպատակը սահմանող փաստաթղթերին անդրադարձ չի կատարվում և հասկանալի չէ, թե ինչի հիման վրա են մշակվում բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի ցուցանիշները: Ստորև ներկայացվում են մի քանի դեպքերի նկարագրություններ (դեպքերի նկարագրություններ № ...№), որոնցում նշված որոշումները, հրամանները և պետական մարմինների գործողություններ կարող էին և պետք է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի քննարկման առարկա դառնային:

5.5. ԱԺ աշխատակազմի գործունեությունը

ԱԺ աշխատակազմն ապահովում է ԱԺ-ի և նրա մարմինների լիազորությունների և գործառույթների իրականացմանն ուղղված աջակցությունը, այդ թվում՝ ԱԺ քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև իրականացնում է նրանց քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունը, կազմակերպական հարցերի կարգավորումը և անձնակազմի կառավարումը (կանոնակարգի հոդված 160): Աշխատակազմն ԱԺ նստավայրում խմբակցություններին ապահովում է նրանց աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ միջոցներով (հոդված 161): Խմբակցության գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում են խմբակցության գործավարը և փորձագետները, որոնք աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, ինչպես նաև նրա հանձնարարությամբ աջակցում են խմբակցության աշխատանքին: Մինչև 14 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար և երեք փորձագետ, իսկ 14-ից ավելի անդամ ունեցողը՝ մեկ գործավար և չորս փորձագետ: Աշխատակազմն ԱԺ հանձնաժողովներին ապահովում է նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցներով (հոդված 162): ԱԺ աշխատակազմը գրանցում է նախագծերը և այլ փաստաթղթերը, վարում է ԱԺ-ում շրջանառվող հարցերի ռեեստրը և ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքը (հոդված 164):

ԱԺ աշխատակազմն առանցքային դեր ունի ԱԺ աշխատանքի կազմակերպման հարցում: ԱԺ գործունեության, խմբակցությունների, հանձնաժողովների և պատգամավորների կողմից ՀՀ կառավարությունն հղված հարցապնդումների և հարցումների քանակի և դրանց հաշվառման վերաբերյալ հարցումներ են հղվել ԱԺ աշխատակազմ: Եզրակացությունները ձևավորվել են պատասխանների բովանդակության և տվյալների, ինչպես նաև ԱԺ ինտերնետային կայքի ուսումնասիրության արդյունքում: ԱԺ ինտերնետային կայքում որոշ տվյալներ և տեղեկատվություն գտնելու համար անհրաժեշտ է կատարել 5, 6 և նույնիսկ 7 սեղմում:

5.6. Բյուջետային գրասենյակի աշխատանքը

ԱԺ վերահսկողական լիազորությունների և այլ գործառնությունների արդյունավետ իրականացման համար կազմավորվում է Բյուջետային գրասենյակ (կանոնակարգի հոդված 163): Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը և մշտադիտարկումն իրականացնում է ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովը (հոդված 163), իսկ գրասենյակի փորձագետներին ներկայացվող պահանջները և նրանց պաշտոնների նկարագրերը հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է ԱԺ նախագահը (հոդված 5): Բյուջետային գրասենյակի փորձագետը կարող ներկա լինել մշտական հանձնաժողովների հրապարակային նիստերին (հոդված 14): Բյուջետային գրասենյակի աշխատակարգը, փորձագետների պաշտոնավարման պայմանների, ընտրության (նշանակման), փորձագետներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է ԱԺ խորհուրդը (հոդված 28):

Բյուջետային գրասենյակը տրամադրում է տեղեկանքներ պետական բյուջեի նախագծում, բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում մուտքերը և ելքերը ծրագրային կամ այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի և մի շարք այլ տվյալների և տեղեկությունների վերաբերյալ, ԱԺ մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման նպատակով կազմակերպում է դասընթացներ ծրագրային բյուջետավորման վերաբերյալ, կատարում է մի շարք այլ աշխատանքներ, որոնց ցանկը ներկայացված է ԱԺ ինտերնետային կայքում^{ccxlix}:

ԱԺ ինտերնետային կայքի համաձայն արդեն երկար ժամանակ Բյուջետային գրասենյակի 5 հաստիքներից համալրված են 2-ը^{cd}: ԱԺ ինտերնետային կայքում Բյուջետային գրասենյակին վերաբերող էջում նորությունների բաժնին վերաբերող վերջին տեղեկատվությունը թվագրված է 2019թ. նոյեմբերով^{cdi}, ինչը կարելի է բացատրել համավարակով: Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստված տեղեկանքները և հաշվետվությունները հասանելի են կայքում և գրասենյակի ղեկավարի կողմից տարածվում են սոցիալական ցանցերի միջոցով:

Դեպքի նկարագրություն № 10. Կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին միջոցառման շրջանակներում հատկացումների տվյալները

Բանկային և առևտրային գաղտնիքին հղում կատարելով ՀՀ կառավարությունը հրաժարվել է «Հետք»-ին տրամադրել կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին միջոցառման շրջանակներում 5.3 մլրդ դրամ գումարներով հատկացումների տվյալները (տրամադրել էին շահառուների անունները, սակայն ոչ հատկացված մեծությունների տվյալները): Ըստ «Հետք»-ի, առանձին ընկերությունների անուններ, ինչպես օրինակ «Ալեքս տեքստիլ», «Ալեքս հոլդինգ», «Ալեքս ընդ հոլդինգ» և «Սիթի» ՍՊԸ-ների անունները ցանկում հանդիպում են երեք անգամ: «Հետք»-ին պարզ չէր, թե դա «ցանկը կազմողների ու հրապարակողների անփութության արդյունքն է, թե՞ այդ ընկերությունները երեք անգամ են օգտվել ծրագրից»: «Հետք»-ի հարցը հեռտրական չէ և նրան պատասխանելը կօգնի հասկանալ, թե արդյոք «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրի» համար նախատեսված հատկացումների օգտագործումը եղել է նպատակային^{cciii}: Ցուցակում ընկերությունների անունների երեք անգամ հանդիպելը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ցուցակը կազմողներն առևտրային բանկերից ստացել են օժանդակություն ստացած կազմակերպությունների ցուցակները և դրանք ուղղակի միացրել են իրար: Դա նշանակում է, որ նույն կազմակերպությունը կարող էր օժանդակություն ստանալ մի քանի բանկից: Չի կարելի բացառել, որ ՀՀ կառավարությունից օժանդակություն են ստացել ընկերություններ, որոնք կովիդով պայմանավորված խնդիրներ չեն առերեսել և օժանդակությունն օգտագործել են իրենց ֆինանսական վիճակը բարելավելու, վարկային պարտավորությունների կառուցվածքը փոխելու նպատակով: Միջազգային բյուջետային գործընկերության (այսուհետ՝ ՄԲԳ) հաշվետվողականության համաշխարհային գնահատումը համատարած թերություններ էր վեր հանել կորոնավիրուսի հաղթահարման համար հատկացված աջակցության ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականության հարցում^{cciii}: Երկրների ավելի քան երկու երրորդում իշխանությունը հաշվետվություն չի ներկայացրել COVID-ի հաղթահարման համար նախատեսված աջակցության վերաբերյալ, չի ապահովել գնումների թափանցիկությունը, երկրների համարյա կեսում աջակցության փաթեթները մշակվել և ընդունվել են առանց օրենսդիր իշխանության, միայն մեկ քառորդում է ազգային հաշվեթննիչ մարմինը հրապարակել ընթացիկ հաշվեթննիչ զեկույցներ:

Դեպքի նկարագրություն № 11. Վերահսկողություն հանրակրթության ոլորտի բաղաբաղանության նկատմամբ

2019թ. Հայաստանի 10 տարեկան երեխաների 30^{ccdiv} և 19-20 տարեկան երիտասարդների 10^{cciv} տոկոսը կարդալու և կարդացածը հասկանալու հետ կապված խնդիր ուներ: 2022թ. հունվարի 25-ին ԱԺ-ում կազմակերպված լսումների ժամանակ ԿԳՄՍՆ փոխնախարարը ընդդիմադիրին բնորոշ «սուր ելույթ»-ում անդրադարձել էր այդ հարցին^{ccivi}: Վերջին 2-3 տասնամյակների ընթացքում հանրակրթությունում կուտակված խնդիրների, հանրության շրջանում հանրակրթությունից առկա դժգոհությունների մասին գործնական խոսակցություն ծավալելու փոխարեն ԱԺ-ն կազմակերպում է լսումներ, որտեղ փաստերի փոխարեն գերիշխում է պաթոսը:

Չկա տեղեկատվություն, որ կվկայի, որ ԱԺ-ն և ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը հետաքրքրվել է ոլորտում կուտակված խնդիրների համակարգային գույքագրմամբ, նպատակներին հանգեցնող ծրագրերի և միջոցառումների, բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային, նյութական, տեխնիկական, տեխնոլոգիական և այլ կարողությունների առկայությամբ, ծրագրերի իրականացմանը խանգարող ռիսկերի բացահայտմամբ և գնահատմամբ և այդ ռիսկերը կառավարելու համար անհրաժեշտ գործիքների առկայությամբ, իրավիճակի վերաբերյալ պարբերական և ամբողջական հաշվետվությունների հրապարակմամբ և այլ տեղեկությունների, տվյալների ու գործողությունների մասին:

Չնայած 10 տարեկան երեխաների մոտ 30% կարդալու հետ կապված խնդիրների մասին հայտնի էր դեռ 2019թ., Հայաստանի իշխանություններից 3 տարի պահանջվեց այն արձագանքելու համար: Վերջին 4 տարիների պետական բյուջեներում, որպես կառավարության նպատակ սահմանվել է «ընդգրկվածության» բարելավումը (աղյուսակ 12): 2019թ. 12-ամյա պարտադիր կրթական երեք մակարդակներում ընդգրկվածությունը համապատասխանաբար 86, 91.3 և 90.1 տոկոս էր: 2020թ. համար սահմանված նպատակը բոլոր 3 մակարդակների համար՝ 99%: 2020-2021թթ. իրավիճակը չի փոխվել, այսինքն կառավարությունը չի հասել իր սահմանած նպատակներին: Ավելին, 2022թ. պետական բյուջեի մասին օրենքում 12-ամյա պարտադիր կրթական համակարգում ընդգրկվածության անկում է արձանագրել՝ 2021թ. 86%-ից 83.2%: Չնայած ՀՀ կառավարությունը ոչ մի անգամ չի հասել իր իսկ սահմանած նպատակին, պատգամավորները չեն հետաքրքրվել, թե արդյոք խնդիրը պայմանավորված է չափորոշիչով, ցուցանիշով, թե այլ հանգամանքներով:

Աղյուսակ 12. Տարբեր տարիների ՀՀ պետական բյուջեներում հանրակրթության ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշները

		2019			2020			2021			2022		
		ցուցանիշ 2		Թիրախային ժամկետ	ցուցանիշ		Թիրախային ժամկետ	ցուցանիշ		Թիրախային ժամկետ	ցուցանիշ		Թիրախային ժամկետ
		Ելակետային	Թիրախային		Ելակետային	Թիրախային		Ելակետային	Թիրախային		Ելակետային	Թիրախային	
1	12-ամյա պարտադիր կրթ. համակարգում ընդգրկվածություն, %	86	99	2020	86	99	2021	86	99	2023	83.2	99	2024
2	Պարտադիր կրթ. առաջին մակարդակում ընդգրկվածություն, %	91.3	99	2020	91.3	99	2021	91.3	99	2023	92.9	99	2024
3	Պարտադիր կրթ. երկրորդ մակարդակում ընդգրկվածություն, %	90.1	99	2020	90.1	99	2021	90.1	99	2023	90	99	2024
4	Սովորողների համամասնութ. տարրական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից՝ %										86.8	100	2024
5	Սովորողների համամասնութ. հիմնական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից՝ %										87.7	100	2024
6	3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում, %										61.3	70	2024

Դեպքի նկարագրություն № 12. Վերահսկողություն իրականացվող փորձնական (պիլոտային) ծրագրերի նկատմամբ

Լայնամասշտաբ ծրագրեր նախաձեռնող պետական և մասնավոր կառույցները դրանք ներդնելուց առաջ սովորաբար իրականացնում են փորձնական (պիլոտային) ծրագիր: Հիմնական ծրագրերի ներդրումը սովորաբար սկսվում է պիլոտային ծրագրի արդյունքների գնահատման հիման վրա վերջնական ծրագրում ճշգրտումներ կատարելուց հետո:

Կրթության և դպրոցների կառավարման համակարգի փոփոխությունները բավարար թափանցիկ չեն: ՀՀ վարչապետի 2021թ. հուլիսի 26-ի №790-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման փորձնական ծրագիրը: Սովորաբար փորձնական ծրագրեր իրականացնում են վերջնական ծրագրի ներդրման հետ կապված ռիսկերը գնահատելու և ներդրման հնարավորությունները գնահատելու համար: Առանց փորձնական ծրագրի գնահատման ՀՀ վարչապետը 2021թ. նոյեմբերի 4-ի №1250-Լ իր որոշմամբ հաստատել է ՀՀ Սյունիքի մարզում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագիրը: ՀՀ վարչապետի նոյեմբերի 4-ի №1250-Լ որոշման հիմնավորումները գրեթե ամբողջությամբ կրկնում են հուլիսի 26-ի №790-Լ որոշման հիմնավորումները: Դա նշանակում է, որ փորձնական ծրագրի իրականացման ընթացքում լրացուցիչ տվյալներ չեն հավաքագրվել և չեն վերլուծվել: ՀՀ վարչապետի հուլիսի 26-ի №790-Լ որոշմամբ հաստատված փորձնական ծրագրի գնահատման հաշվետվությունը և նոյեմբերի 4-ի №1250-Լ որոշմամբ հաստատված ծրագրի որոշ ցուցանիշների վերաբերյալ տվյալներ տրամադրելու խնդրանքով 2021թ. նոյեմբերի 27-ին և նոյեմբերի 30-ին գրություններ են հղվել ԿԳՄՍ նախարարություն: Երկու գրությունների դեպքում էլ ԿԳՄՍ նախարարությունը անհրաժեշտ տեղեկատվությունը չի տրամադրել (ամենայն հավանականությամբ առկա չլինելու պատճառով): ԿԳՄՍ նախարարություն հղված գրությունների և նախարարությունից ստացած պատասխանների պատճենները ներկայացված են հավելված 21-ում:

Ստեղծված իրավիճակը վկայում է, որ ՀՀ վարչապետի երկու որոշումները հիմնված չեն փաստերի վրա: Չկա որևէ վկայություն, որ վարչապետի ու կառավարության հանրակրթության ոլորտին վերաբերող մնացած որոշումները հիմնված են փաստերի վրա, ինչը միջնաժամկետ և երկարաժամկետ կայունության տեսակետից խնդրահարույց է դարձնում հանրակրթության բնագավառում տարվող պետական քաղաքականությունը:

Դեպքի նկարագրություն № 13. Վերահսկողություն հանրակրթության ոլորտի ֆինանսական կառավարման նկատմամբ

ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի №1262-Ն որոշումը սահմանում է դպրոցների ֆինանսավորման բանաձևը^{cclvii}: ԿԳՄՍ նախարարությունը փորձում է գտնել այն «հրաշք» բանաձևը, որը կլուծի դպրոցների ֆինանսավորման հարցը և թույլ կտա գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմիններին հեռու պահել հայեցողական որոշումներից: 2019թ. հոկտեմբերի 31-ի №1503 որոշմամբ կառավարությունը փոխեց հանրակրթության ֆինանսավորման բանաձևը և վերացրեց ԿԳՄՍ նախարարության, մարզպետների և Երևանի քաղաքապետին վերապահված ուսումնական հաստատությունների հատկացումներում հայեցողական վերաբաշխում կատարելու լիազորությունը: Նախագծի հանրային քննարկման ժամանակ Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը կարծիք էր հայտնել, որ բանաձևի առաջարկվող փոփոխությունը չի լուծում ԿԳՄՍ նախարարության կողմից առերեսվող խնդիրը և առաջարկել էր հանրությանը ներկայացնել բոլոր դպրոցների հետ կապված հաշվարկները: ԿԳՄՍ նախարարությունը պատասխանել էր, որ «Գործող կարգով դպրոցների ֆինանսավորման ծավալների համապատասխանեցումը դպրոցի կարիքներին ապահովվում է մարզի մակարդակում կատարվող վերաբաշխումների շնորհիվ: Նոր կարգով դրա անհրաժեշտությունը վերանում է»:

Ընդամենը 4 ամիս հետո, 2020թ. մարտի 5-ին ԿԳՄՍ նախարարության առաջարկով ՀՀ կառավարությունը վերականգնեց ԿԳՄՍ նախարարության, մարզպետների և Երևանի քաղաքապետի ուսումնական հաստատությունների ֆինանսական հատկացումներում վերաբաշխում կատարելու լիազորությունը, քանի որ «դեռևս չի վերացել վերաբաշխումների անհրաժեշտությունը»:

ՀՀ կառավարությունը և ԿԳՄՍ նախարարությունը երբեք չեն հրապարակել 2006թ. օգոստոսի 24-ի №1262-Ն որոշման հիման վրա կատարված հաշվարկների և կատարվող վերաբաշխումների ծավալի և քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով հայտնի չէ, թե ինչպես է «աշխատում» բանաձևը և «վերաբաշխման» ինչ ծավալի վրա է հիմնված ԿԳՄՍ նախարարության «դեռևս չի վերացել վերաբաշխումների անհրաժեշտությունը» արտահայտությունը: Այդ ծավալը գնահատելու նպատակով պատրաստվել են աղյուսակներ և գրություններ են ուղարկվել ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քաղաքապետարան և 10 մարզպետարաններ: ԿԳՄՍ նախարարությունից ստացած պատասխանում ներկայացված տվյալները վերլուծության համար պիտանի չեն: Երևանի քաղաքապետարանի և Լոռու մարզից ստացած տվյալները հետագա ճշտման և հստակեցման կարիք ունեն:

Ընդհանրապես, կրթության կառավարման համակարգի վերաբերյալ որակյալ տվյալներ և տեղեկատվություն կարելի է ստանալ ԿԳՄՍ նախարարության բարի կամքի և բաց, թափանցիկ գործունեության արդյունքում: Ավագ, ԿԳՄՍ նախարարության ղեկավարության մոտ բարի կամք և բաց, թափանցիկ, հաշվետու և պատասխանատու աշխատելու ցանկություն առկա չէ: 2021թ. նոյեմբերի վերջից սկսած ԿԳՄՍ նախարարությանը հղված 4 հարցումներից 3-ի պատասխանը բովանդակային առումով չէր համապատասխանում տրված հարցին (հղված գրությունները և ստացած պատասխանները ներկայացված են հավելված 21-ում և 22-ում): Միակ բովանդակային պատասխանը վերաբերում էր 2022թ. բյուջեի նախագծման գործընթացում ԿԳՄՍ նախարարության ներկայացրած բյուջետային հայտի հանրային քննարկմանը, որին ԿԳՄՍ նախարարությունը պատասխանել էր, որ

հանրության հետ քննարկում չի եղել: Նախարարության համաձայն բյուջետային հայտը տեղադրվել է Նախարարության կայքում, սակայն չի հետաքրքրել հանրությանը: Հայաստանում կան բազմաթիվ անհատներ և ՔՀԿ-ներ, որոնք հետաքրքրված են կրթության հետ կապված հարցերով և տեղեկատվության առկայության պայմաններում կներգրավվեն քննարկումներում: Չի կարելի բացառել, որ հանրության մի մասը վիատվել է քննարկումներն անպտուղ խոսակցության վերածելու ԿԳՄՍ Նախարարության պրակտիկայից:

Այս հետազոտությունը ստիպված է ինքնուրույն հավաքել վերլուծության համար անհրաժեշտ տվյալները, որոնք մեթոդաբանական առումով կուռ չեն: Ավելի որակյալ տվյալներ ստանալու համար անհրաժեշտ է մեթոդաբանական ավելի երկար աշխատանք և հարակից բացատրություններ տվյալները գրանցողների համար: Այլ տվյալների բացակայության պայմաններում ուսումնասիրվել են այն տվյալներով, որոնք հասու են:

Ստացված տվյալները չեն օգտագործվել և չեն օգտագործվում ԿԳՄՍ Նախարարության, Երևանի քաղաքապետարանի կամ որևէ մարզապետարանի աշխատանքը գնահատելու համար: Ստացված տվյալներն օգտագործվում են միայն և միայն օգտագործվող բանաձևի պիտանիությունը գնահատելու համար: Ստացված տվյալները ներկայացված են աղյուսակ 13-ում և վկայում են, որ վերաբաշխումները կրում են համակարգային բնույթ: Դա նշանակում է, որ ֆինանսավորումը կատարվում է ոչ թե օբյեկտիվ չափանիշի՝ բանաձևի հիման վրա, այլ ունի հայեցողական բնույթ, ինչը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

Բանաձևի ներդրումը ժամանակին հիմնավորվում էր «բնական ընտրությամբ»: Ենթադրվում էր, որ ծնողները կընտրեն ավելի որակյալ կրթություն ապահովվող դպրոցները, ինչի արդյունքում աշակերտների թվով հաշվարկված ֆինանսները կհոսեն այդ դպրոցներ: Մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնք անհրաժեշտ է վերլուծել (այդ հարցի ուսումնասիրությունը դուրս է այս հետազոտության շրջանակներից) այդ տրամաբանությունը չաշխատեց: Նախկին իշխանություններին այդ հարցը չէր հետաքրքրում: Ակնկալվում էր, որ 2018թ. հեղափոխությունից հետո նոր իշխանությունները կվերլուծեն պատճառները և այդ վերլուծության հիման վրա կրթության և դպրոցների կառավարման և ֆինանսավորման համակարգի նոր մոդելը կքննարկեն հանրության լայն շրջանակների հետ: Սակայն դա տեղի չունեցավ:

Աղյուսակ 13. Հանրակրթական ուսումնական հաստատություններին ֆինանսական հատկացումներում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տվյալները

	Դպրոցների թիվը	Ֆինանսավորումը		Ֆինանսավորման ծախսը (մլրդ դրամ)	Վերաբաշխված միջոցների տեսակարար կշիռը (ֆինանս)
		կրճատված դպրոցների ի թիվը	ավելացած դպրոցների ի թիվը		
ԿԳՄՍՆ	Չի տրամադրել վերլուծության համար պիտանի տվյալներ				
Երևան	153	-	39	17.2	1.5
Արագածոտն	118	53	64	5.9	3.4
Արարատ	107	46	50	7.8	3.2
Արմավիր	111	4	1	7.6	0.02

Գեղարքունիք	117	17	22	7.3	0.5
Լոռի	149	0	94	7.7	3.0
Կոտայք	89	34	18	7.2	0.6
Շիրակ	147	56	89	7.0	2.5
Վայոց Ձոր	Առաջարկել են ուսումնասիրել ինտերնետային կայքը				
Սյունիք	111	36	53	5.4	5.3
Տավուշ	76	5	68	4.3	1.0

Աղբյուր. ԿԳՄՍ նախարարությունից, Երևանի քաղաքապետարանից և

մարզպետարաններից ստացած գրություններ

Շիրակի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ին հասկացում նախատեսված չի եղել, բայց հասկացվել է 16մլն դրամ: Երևանի քաղաքապետարանի և Լոռու մարզի ներկայացրած տվյալների համաձայն վերաբաշխումների ընթացքում դպրոցներին կատարվող հասկացումների մեծությունը միայն ավելացել է: Արագածոտնի դեպքում նվազեցումները մոտ 4 անգամ գերազանցում են ավելացումները: Մի քանի մարզային դպրոցի տնօրեն հայտնել է, որ «վերաբաշխում» կատարվում է ոչ թե տարվա ընթացքում, այլ տարվա սկզբին:

Արդյունքում, հին մոդելը չի գործում, իսկ ներդրված «նոր» մոդելը շարունակում է կրել հին մոդելի արատները: Մասնավորապես, հին մոդելի տրամաբանության համաձայն աշակերտների մեծ մասը հաճախում է կրթության բարձր որակ ապահովող դպրոցներ: «Վերաբաշխումների» ժամանակ կրճատվում է աշակերտների մեծ թվաքանակ ունեցող, այսինքն, ենթադրաբար որակյալ կրթություն ապահովող դպրոցների ֆինանսավորումը: Աշակերտների փոքր թվաքանակ ունեցող դպրոցների ֆինանսավորումը նվազեցվել չի կարող, քան որ այն առանց այդ էլ փոքր է, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ ֆինանսավորումը կատարվում է ոչ թե աշակերտների թվով, այլ դասարան-կոմպլեկտավորումներով:

ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N°1262-Ն որոշմամբ հաստատված բանաձևը կրում է ձևական բնույթ և որոշումների կայացումը ենթակա է կոռուպցիոն ռիսկերի: ԱԺ-ն երբևիցե չի հետաքրքրվել բանաձևի պրակտիկ կիրառման և կատարվող վերաբաշխումներով:

Ելրակացություն

Անկախ գործունեության ոլորտից, Հայաստանի Հանրապետության ցանկացած բաղաբացի իրավունք ունի զբաղվել բաղաբազկան գործունեությամբ: Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և ցանկացած այլ ոլորտում և բնագավառում գործունեություն ծավալող բաղաբազկները պետք է բաղաբազկանությամբ զբաղվելու հնարավորություն ունենան: Սակայն ընտրություններին մասնակցող կուսակցությունները և դաշինքները զգալի աշխատանք ունեն կատարելու, որպեսզի երաշխավորեն, որ համամասնական ընտրակարգի պայմաններում պատգամավորության թեկնածուների ցուցակներում լինեն մարդիկ, ովքեր ունեն կոնկրետ գաղափարներ, ծրագրեր և դրանք կյանքի կոչելու ցանկություն, դիրքորոշում հասարակական-բաղաբազկան-տնտեսական կյանքի տարբեր հարցերի և մարտահրավերների վերաբերյալ, ինչպես նաև կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պատրաստակամություն և կարողություն:

Աժ և հանձնաժողովների նիստերի, ինչպես նաև հանձնաժողովների համատեղ նիստերի ժամանակ պատգամավորները բավարար չափով չեն կատարում Աժ վերահսկողական գործառույթը:

Նիստերի ժամանակ իշխանական պատգամավորների առանձին ելույթն իրենց և կառավարության գործունեությունը գովազդելու նպատակ են հետապնդում: Դա են վկայում, օրինակ, «Բաղաբազկական պայմանագիր» խմբակցության պատգամավորների այն հարցերը, որոնց ժամանակ նրանք իրենց պատգամավոր գործընկերներին կամ կառավարության ներկայացուցիչներին խնդրում են «հնչեցնել», քանի որ «շատերը չգիտեն», կամ «ոչ բոլորը դա գիտեն» կառավարության և իշխանական պատգամավորների կատարած այս կամ այն աշխատանքների և նվաճումների մասին: «Հնչեցնելու» վերաբերյալ այդպիսի խնդրանքներից մեկին ի պատասխան իշխանական խմբակցությունը ներկայացնող հանձնաժողովի նախագահը հայտնում է, որ ամսական պարզևատրում պատգամավորները վերջին անգամ ստացել են 2020թ փետրվարին, իսկ «ընթացիկ» պարզևատրում երկու անգամ ստացել են Անկախության տոնի առթիվ: Նա ներկայացնում է մասնավոր հատվածի օրինակը, որտեղ աշխատակիցները պարզևատրվում են արդյունքային ցուցանիշների հիման վրա, առանց հստակեցնելու, թե ինչպես է պատգամավորների աշխատանքի դեպքում Անկախության տոնը հանդիսանում արդյունքային ցուցանիշ:

Ի պատասխան բանակում «ատկատ»-ների վերաբերյալ հարցի, Աժ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը պատասխանում է, որ դրանց մակարդակը «0» գնահատել չի կարող, քանի որ ինքը շատ լավ ինֆորմացված է, որ բանակում թաքսված կոռուպցիա կա և որ բանակում կոռուպցիայի ամենավտանգավոր դրսևորումը հովանավորչությունն է: Մշտական հանձնաժողովի նախագահը չի հայտնում, թե ինչպես է իրեն հայտնի դառնում բանակում կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվությունը և ինչ է իր դեկավարած հանձնաժողովն անում բանակում կոռուպցիան և դրա ամենավտանգավոր դրսևորում հանդիսացող հովանավորչությունը արմատախիլ անելու ուղղությամբ: Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հարցերի հանձնաժողովի նախագահին հարց տալու պատգամավորի ցանկությունը դադարում թեթև ծիծաղ առաջացրեց:

2022թ. պետական բյուջեի նախագծի քննարկման նիստի ժամանակ իր եզրափակիչ ելույթում ՀՀ ֆինանսների նախարարը նշել է, որ մշտական հանձնաժողովների հետ աշխատելու հնարավորություն ունեցել են միայն նախորդող 2-3 շաբաթների ընթացքում և չեն կարողացել ամռանը կազմակերպել բյուջետային գործընթացը կանոնակարգող ՀՀ

վարչապետի որոշմամբ նախատեսված ԱԺ մշտական հանձնաժողովների հետ աշխատանքային քննարկումները: Ըստ էության դա նշանակում է, որ պետական մարմինները չեն կատարել ՀՀ վարչապետի որոշման պահանջը:

ԱԺ նիստը նախագահողն արձանագրել է, որ բացի ֆինանսավարկային և բյուջետային և պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովները, մնացած հանձնաժողովներից մեկական ներկայացուցիչ կարող էին ելույթով հանդես գալ, եթե ներկայացրած լինեին եզրակացություն: Անհասկանալի է, թե ինչու՞ մնացած հանձնաժողովները եզրակացություն չեն ներկայացրել. որովհետև համաձայն են բյուջեի նախագծի հետ, որովհետև ծանոթ չեն բյուջեի նախագծին, որովհետև հետաքրքրված չեն, կամ այլ պատճառով:

Տեսաձայնագրությունները և մամուլի հրապարակումները վկայում են, որ ո՛չ իշխանական, ո՛չ ընդդիմադիր պատգամավորների զգալի մասը չի մասնակցում բյուջեի կատարողականի կամ հաջորդ տարվա բյուջեի նախագծի քննարկման նպատակով կազմակերպվող մշտական հանձնաժողովների համատեղ նիստերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա այդ փաստաթղթերի քննարկման հիմնական հարթակն է, այս հանգամանքը կասկածի տակ է դնում խորհրդարանական վերահսկողության իրականացման որակը:

ԱԺ-ում քննարկումներին նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարների չներկայանալուն և իրենց փոխարեն տեղակալներին կամ այլ պաշտոնյաների ուղարկելու հանգամանքին իշխանական պատգամավորներն սկսում են ուշադրություն դարձնել, երբ տվյալ նախարարը կորցնում է երկրի բարձրագույն ղեկավարության բարեհաճությունը: Կարգավորված չէ, թե ում են պատգամավորներն ուղղում հարցերը, եթե կառավարության լիազորված անձինք և ՀԴ նախագահը չեն մասնակցում փակ նիստին (կարող են մասնակցել):

Պետական բյուջեի կատարման հաշվետվությունը քննարկվում է հանձնաժողովների համատեղ նիստում, որոնց ժամանակ որոշումներ չեն կայացվում: Հասկանալի չէ, թե ինչպես են մշտական հանձնաժողովները դիրքորոշում արտահայտում առանձին ոլորտներին կատարվող հատկացումների մեծության և նպատակայնության վերաբերյալ, ինչպես են արտահայտում իրենց համաձայնությունը, որ կատարվող հատկացումներն ուղղվում են առաջնահերթ ծրագրերի ֆինանսավորմանը: Այս մոտեցումը նվազեցնում է բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության քննարկումներում հանձնաժողովների դերը:

Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի արձանագրություններ, սղագրություններ և որոշումներ չեն հայտնաբերվել: ԱԺ աշխատակազմի ղեկավարի տեղակալի գրության համաձայն դրանք գոյություն չունեն: Արդյունքում անհասկանալի է, թե ինչպես են հանձնաժողովները համաձայնություն տալիս բյուջեի նախագծին կամ բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությանը:

Ի տարբերություն պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքների ՀԴ ընթացիկ եզրակացությունների ուսումնասիրության արդյունքում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը կարող է որոշում կայացնել հանձնաժողովի նիստ, այդ թվում ոլորտային հանձնաժողովի հետ համատեղ նիստ հրավիրելու մասին: Կանոնակարգը չի հստակեցնում հանձնաժողովի կամ երկու հանձնաժողովների համատեղ նիստի իրավասությունները:

Գնաժամային իրավիճակներում, օրինակ համավարակի կամ պատերազմի ժամանակ ՀՀ կառավարությունն ընդունում է ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ անհետաձգելի որոշումներ: Արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտությամբ

պայմանավորված ֆինանսական հատկացումները կարող են լինել պակաս նպատակային, արդյունավետ և խնայողական: Աժ-ն պետք է ավելի ակտիվ ներգրավված լինի այդ միջոցների հատկացման վերաբերյալ որոշումների կայացման և դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողության գործում: Վերահսկողության արդյունքում ի հայտ եկած տվյալներն ու տեղեկատվությունը պետք է օգտագործվեն ճգնաժամային պայմաններում պետական մարմինների աշխատանքն ավելի կանոնակարգված, նպատակային, արդյունավետ և խնայողական դարձնելու համար:

Բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության քննարկման ժամանակ իշխանական պատգամավորների նպատակը երբեմն ոչ թե վերահսկելը, այլ պաշտոնյաներին հանրությանն ավելի լավ ներկայանալու հարցում օգնելն է^{cclviii}: Այս դեպքում պատգամավորը ոչ թե իր վերահսկողական գործառույթն է իրականացնում, փորձելով պարզել պետական բյուջեից նախատեսվող հատկացումների նպատակայնության, արդյունավետության և խնայողաբար օգտագործման հետ կապված հարցեր, այլ օգնում է գովազդվել կառավարությանը և կառավարության անդամին: Հարց տալու հնարավորությունն առանձին պատգամավորներ օգտագործել են սեփական կերպարը գովազդելու և պատգամավորների եկամուտների, վարքագծի հետ կապված հանրության շրջանում կուտակված դժգոհություններին անդրադառնալու նպատակով^{cclix}:

Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային տեղեկանքները քննարկվում են Աժ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի կողմից, սակայն կանոնակարգը չի նախատեսում այդ քննարկմանը հետևող որևէ գործողություն:

Սահմանադրությունը, կանոնակարգը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը չեն տալիս «հաշվետվություն» և «տեղեկանք» հասկացությունների սահմանումը: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»^{cclx} «հաշվետվություն» բառը (հատոր 3, էջ 300) սահմանում է որպես (1) հաշիվ տալը, հաշիվները քննության ներկայացնելը, (2) զեկուցում գործունեության մասին: Այս սահմանումը, ինչպես և միջազգային պրակտիկայում «հաշվետվությունը» ենթադրում է որոշակի ծրագրային կամ նպատակային ցուցանիշների հետ փաստացի ցուցանիշների համեմատականը ներկայացնող փաստաթուղթ: Նույն բառարանը «տեղեկանք» բառը (հատոր 4, էջ 483) սահմանում է որպես (1) որևէ բանի մասին գրավոր կամ բանավոր անհրաժեշտ տեղեկություն՝ հաղորդում, (2) պաշտոնական գրություն, փաստաթուղթ, որը պարունակում է որևէ մեկի կամ որևէ բանի մասին անհրաժեշտ տեղեկություններ: Ի տարբերություն հաշվետվության, տեղեկանքը չի պարունակում ծրագրային կամ նպատակային ցուցանիշներ: Տեղեկանքի հիման վրա անհնար է անել եզրակացություն, թե արդյոք բյուջեն և դրա առանձին ծրագրերն ընթանում են համաձայն ծրագրի: Անհրաժեշտ է, որպեսզի բյուջետային օրենսդրությունը հստակեցնի «հաշվետվություն» և «տեղեկանք» հասկացությունների սահմանումները: Պետական բյուջեի ընթացքի վերաբերյալ եռամսյակային «տեղեկանքներ» ներկայացնելու պրակտիկան վերանայման կարիք ունի: Անհրաժեշտ է դրանք փոխարինել լիարժեք հաշվետվությամբ և կանոնակարգում հստակեցնել բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունների քննարկմանը հետևող Աժ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հնարավոր գործողությունները:

Բացի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերից ՀՀ պետական բյուջեից կատարվող մնացած բոլոր հատկացումները չեն կարող

գաղտնի լինել: Ցանկացած այլ դեպքում պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը: Պետական բյուջեից կատարվող առանձին հատկացումներ ՀՀ կառավարության կողմից «գաղտնի» դասակարգումը հանդուրժելու դեպքում ապագայում այն կարող է գաղտնիքների թվին դասել նաև պետական գնումների շրջանակներում ընկերություններին վճարվող գումարների մեծության վերաբերյալ տեղեկատվությունը: Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի տեսագրություններում չեն արձանագրվել պատգամավորների կողմից հանրությանը հետաքրքրող և մամուլում հրապարակված այդ և նման տվյալները բացահայտելու և հանրությանը հասանելի դարձնելու ջանքեր:

ՀՀ կառավարության ներկայացուցիչներն անհարգալից վերաբերմունք են դրսևորում ԱԺ վերահսկողական գործառույթի հանդեպ: Այդ անհարգալից վերաբերմունքն ունի մի քանի դրսևորում:

- ՀՀ կառավարության ներկայացուցիչները գրի չեն առնում պատգամավորների տված հարցերը, ինչի արդյունքում մոռանում են դրանք, ապա պատգամավորներին խնդրում են կրկնել հարցը:
- Հանձնաժողովների համատեղ նիստերին ուղարկում են իրենց տեղակալներին: Մի քանի դեպքում վերջիններս խուսափել են առանձին հարցերի պատասխանելուց, քանի որ հարցը վերաբերում է այլ տեղակալի կողմից համակարգվող ոլորտին: «Համակարգել»-«չհամակարգելու» հիմնավորումներով հարցերին պատասխանելուց խուսափելու լավագույն տարբերակը միայն ղեկավարների զեկույցներն ու հաշվետվությունները լսելն ու ընդունելն է:
- ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում ելույթի ժամանակ ԿԳՄՍ նախարարը դափնեմեղ համարում իր աշխատակիցներից ճշտում էր, թե արդյոք ելույթի որոշակի հատվածը ճիշտ է շարադրված: Նախարարը ծանոթ չէր զեկույցի տեքստին և լավ չէր պատրաստվել նիստին:
- Բյուջեի նախագծի ոչ վերջնական տարբերակը ԱԺ ներկայացնելը: ՀՀ կառավարությունը ԱԺ պետք է ներկայացնի փաստաթղթի վերջնական տարբերակը: Այլապես, ԱԺ-ն քննարկում է մի փաստաթուղթ, իսկ քվեարկության կարող է դրվել մեկ ուրիշը:
- Գործադիրի ներկայացուցիչները հաճախ օգտագործում են «հավատացե՛ք ինձ», «ես ձեզ հավաստիացնում եմ», «ես ձեզ վստահեցնում եմ», և նման տիպի այլ արտահայտություններ: Դա նշանակում է, որ նրանց փաստարկները բավարար համոզիչ չեն: Պատգամավորները չեն պահանջում, որպեսզի ՀՀ կառավարության ներկայացուցիչները «հավաստիացումների» փոխարեն փաստեր ներկայացնեն:

Վերը նշվածները ԱԺ, որպես ՀՀ քաղաքացիներին անմիջապես ներկայացնող, առաջնային մանդատ ունեցող մարմնի հանդեպ ոչ բավարար հարգանքի դրսևորումներ են: Նման դեպքերն ընդգծում են, որ գործադիր իշխանության ներկայացուցիչները լուրջ չեն վերաբերվում ԱԺ վերահսկողական գործառույթին: Պետական բյուջեի կատարման հաշվետվությունը քաղաքական գործունեության վերաբերյալ հաշվետվություն է և այն պետք է ներկայացնի ոլորտում քաղաքականության համար պատասխանատու մարմնի

ամենաբարձր պաշտոնն զբաղեցնող անձը, այլ ոչ նրա տեղակալները, կամ վարչության պետերը (ինչպես եղավ ԱԳՆ դեպքում):

Մի քանի դեպքում նախարարի կողմից համակարգվող ոլորտների քանակը թույլ չի տալիս տիրապետել բոլոր ոլորտներում կուտակված մարտահրավերների նրբություններին: Նման դեպքերում նախարարը դիմում է իր տեղակալին, որպեսզի վերջինս պատասխանի հարցերին: Այսպիսի դրվագները ցայտուն կերպով ի ցույց են դնում նախարարությունների և գերատեսչությունների միավորման հետ կապված խնդիրներից մեկը. առանձին նախարարների կողմից համակարգվող ոլորտների շրջանակն այնքան մեծ է, որ նրանք լիարժեք կերպով չեն կարողանում տիրապետել բոլոր ոլորտներին: Չնայած պատգամավորները տեսնում և արձանագրում են առանձին նախարարների կողմից համակարգվող ոլորտների մեծ քանակը, չեն առաջարկում փոխել կառավարության կառուցվածքը:

Կառավարության մի շարք անդամների և նրանց տեղակալների խոսքը կրում է «պիտի սա անել» կամ «պիտի նա անել» ձևակերպումը: Ընդդիմադիրները, փորձագետները, լրագրողները և ՀԿ-ների ներկայացուցիչները, սակայն ոչ կառավարության անդամներն ու նրանց տեղակալները կարող են ասել, թե ինչ է պետք է անել: Կառավարության անդամների և նրանց տեղակալների անելիքները ձևակերպված է կառավարության ծրագրում և պաշտոնական այլ փաստաթղթերում և նրանք պետք է ներկայացնեն թե ինչ են արել կամ ինչպես են պատրաստվում կյանքի կոչել ՀՀ կառավարության ծրագրի իրենց պատասխանատվության ներքո գտնվող նպատակները: Ժողովրդավարական հասարակությունում կուսակցություններն առաջարկում են ծրագրեր (ասում են, թե ինչ է պետք անել), քաղաքացիները ծայր են տալիս իրենց նախընտրած քաղաքական ուժին: Իշխանության եկած ուժը կյանքի է կոչում իր խոստացած ծրագիրը, իսկ ընդդիմությունը, անհրաժեշտության դեպքում, քննադատում է իշխանությանը, ասելով, թե **ինչ է պետք անել**, կամ **ինչ կաներ ինքը իշխանությունն ինելու դեպքում**: Այսինքն, թե ինչ է պետք անել, իշխանությունն ասում է մինչև ընտրությունները:

Իշխանական առանձին պատգամավորների կողմից նախկին պրակտիկային շարունակաբար կատարվող հղումների արդյունքում բավարար ուշադրության չեն արժանանում ներկայում տեղի ունեցող և ուշադրության արժանի առանձին մտահոգիչ իրադարձություններին: Եթե նախկինում անպատիժ մնացած դաժանություններ են եղել, ԱԺ-ն կարող է քննել և իրավապահ մարմիններից պահանջել համապատասխան գնահատական տալ դրանց:

Մտահոգիչ է **վերլուծական** աշխատանքի հանդեպ պատգամավորների քամահրական վերաբերմունքը: Դա կասկածի տակ է դնում փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակումը, հաստատումը և իրականացումը:

Պատգամավորները, այդ թվում որոշ մշտական հանձնաժողովների նախագահները հետաքրքրություն չեն դրսևորում և չեն մասնակցում ոլորտային հարցերի քննարկմանը: Պատգամավորների մեծ մասի, այդ թվում մի շարք մշտական հանձնաժողովների նախագահների մոտ բյուջեն և դրա հաշտությունները հետաքրքրություն չեն առաջացնում և վերջիններս զեկուցող պաշտոնյաներին հարցեր չեն տալիս: Դա նշանակում է, որ նրանք կամ (1) տեղյակ են ամեն ինչից և հարցեր չունեն (2) ծանոթ չեն հաշվետվությանը, կամ (3) իրենց այդ ոլորտը չի հետաքրքրում^{ccxi}:

Բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության քննարկման ժամանակ պատգամավորների մի մասն անպատրաստ է ներկայանում մշտական հանձնաժողովների

համատեղ նիստերին: Պատգամավորները հարցեր են տալիս այնպիսի տվյալների վերաբերյալ, որոնք առկա են պետական բյուջեի աղյուսակներում: Աժ մշտական հանձնաժողովների համատեղ նիստերին պատգամավորների ներկայությունը և քննարկումներին մասնակցության մակարդակը նշան է, որ պատգամավորները փաստաթղթին ծանոթ չեն:

Մի շարք դեպքում պատգամավորներն իրենց հարցերը կառուցվում են միայն կառավարության անդամների և նրանց տեղակալների ելույթներում հնչած տեղեկատվության հիման վրա: Դա նշանակում է, որ պատգամավորները ծանոթ չեն ներկայացված հաշվետվությանը: Կարելի է դիտարկել ելույթները բացառելու տարբերակը: Այդ դեպքում պատգամավորները ստիպված կլինեն մինչև նիստին ներկայանալը կարդալ և ծանոթանալ բյուջետային փաստաթղթերի համապատասխան հատվածներին: Կարելի է նաև վերլուծությունը և պատգամավորներին ներկայացումը հանձնարարել մշտական հանձնաժողովների աշխատակազմերին, կամ «Բյուջետային գրասենյակին»: Ենթադրաբար, այդ դեպքում պատգամավորները կառավարության ներկայացուցիչներին կուղղեն միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման վերաբերյալ հարցեր:

Նախորդ տարվա պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկման ժամանակ պետք է մանրամասն ուսումնասիրվեն, վերլուծվեն և քննարկվեն նախորդ տարի հատկացված միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման հետ կապված հարցերը: Որոշ պատգամավորներ պետական բյուջեի կատարողականի, հատկացված միջոցների ոչ նպատակային, ոչ արդյունավետ և ոչ խնայողական օգտագործման դեպքերը վերհանելուն նպատակաուղղված հարցերի փոխարեն պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության քննարկման ժամանակ զեկուցողներին հարցեր էին տալիս «Երազանքների» վերաբերյալ: Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավար տիկին Սառա Անջարգոյանի 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ զեկույցից հետո պատգամավորները չտվեցին հարցեր այս կամ այն ծրագրին կատարված հատկացումների օգտագործման ցուցանիշների վերաբերյալ (օրինակ, թե որքան գումար է հատկացվել «Իգործ» ծրագրին, միջին հաշվով որքան ծախս է կատարվել ծրագրի մեկ անդամի հաշվով, ինչ արձանագրված արդյունքներ կան և այլն): Փոխարենը պատգամավորը^{cdxii} հետաքրքրվում էր սփյուռքի ներուժն օգտագործելու նպատակով երկպալատ խորհրդարան ձևավորելու և վերին պալատում սփյուռքին ներգրավելու հնարավորության մասին հարցով: Հարցը կապ չունի Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի նախորդ տարի կատարած աշխատանքի հետ: Նախորդ տարվա պետական բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ ապագայի վերաբերյալ քննարկումների ծավալումը ամենասուղ ռեսուրսի՝ պատգամավորի ժամանակի անարդյունավետ օգտագործում է: Նման հարցը տեղին կլինի բարձրացնել հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: «Երազանքների» և տեսլականների վերաբերյալ խոսակցությունն ավելի հարիր են հաջորդ տարվա բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ: Հաջորդ տարվա պետական բյուջեն քննարկելիս կարելի է և պետք է անդրադառնալ ապագայի ծրագրերին և հատկացվող ֆինանսական միջոցների դիմաց պետական մարմիններից ակնկալվող արդյունքներին: Նախորդ տարվա պետական բյուջեի կատարման հաշվետվությանը հատկացվող ժամանակը հարկավոր է հատկացված ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործումից շեղման դեպքերը բացահայտելուն:

ԱԺ-ն, ԱԺ ղեկավարությունը և հանձնաժողովները չեն արձագանքում առանձին պատգամավորների բյուջետային հատկացումների անարդյունավետ օգտագործման մասին պնդումներին և հայտարարություններին: 2021թ. հունիսի 2-ին ԱԺ տնտեսական հարցերի և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստի ժամանակ պատգամավորը^{ccclxiii} հայտարարեց, որ բանկերում աշխատող իր ընկերները պնդում են, որ կառավարության տրամադրած միջոցներն իրենց նպատակին չեն ծառայում, իսկ բանկը շահագրգռված չէ դրանց նպատակայնության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում: ԱԺ-ն հետաքրքրություն չդրսևորեց հայտարարության իսկությունը քննելու հարցում:

Առանձին պատգամավորներ «խիստ» հետաքրքրված են բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի ցուցանիշներով, սակայն չեն հետաքրքրվում, թե ՀՀ կառավարության գործունեության որ նպատակին հասնելուն է ուղղված այդ ծրագիրը և ինչ փաստաթղթով է հաստատվել վերջնական արդյունքը: Վերջին տարիների պետական բյուջեներում ներառված վերջնական արդյունքի մի շարք ցուցանիշների «ծագման աղբյուրը» հայտնի չէ:

ՀՀ Սահմանադրությունը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքը տարբեր կերպ են սահմանում պետական բյուջեն (մի դեպքում եկամուտներ և ծախսեր, մյուս դեպքում ելքեր և մուտքեր): Անհրաժեշտ է միասնականացնել պետական բյուջեի սահմանումը:

Ելույթ ունեցող պատգամավորները մշտապես ընդգծում են հանրային միջոցներն «արդյունավետ» կերպով օգտագործելու անհրաժեշտությունը: Սակայն ուսումնասիրված տեսագրություններում տրված հարցերից գրեթե ոչ մեկը չի օգնել պատկերացում կազմել ծախսերի «արդյունավետության» մասին: Հարցեր չեն եղել նաև COVID-19 համավարակի դեմ պայքարի և դրա հետևանքների մեղմման ուղղված միջոցառումների ֆինանսավորման վերաբերյալ:

Անհրաժեշտ է ավելի նպատակային և արդյունավետ դարձնել մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի աշխատանքը և հրապարակել նիստերի սղագրությունը: Նիստերի իրավասության և համատեղ նիստի կողմից ընդունվող որոշումների շրջանակի հստակեցումը կօգնի բարելավել ԱԺ, մշտական հանձնաժողովների և մշտական հանձնաժողովների համատեղ նիստերի աշխատանքի նպատակայնությունը:

Կանոնակարգը չի նշում ԱԺ մշտական հանձնաժողովներին հասու վերահսկողական գործիքները: Չնայած կանոնակարգը չի սահմանում, ի լրումն պաշտոնատար անձանց հանձնաժողովի նիստեր հրավիրելու և նրանց հարցեր տալու, ենթադրաբար ԱԺ մշտական հանձնաժողովը կարող է պետական մարմիններից պարբերական և ըստ անհրաժեշտության (ad hoc) հաշվետվություններ և զեկույցներ պահանջել օրենքների կատարման ընթացքի վերաբերյալ և ընդունել դրանցից բխող որոշումներ: Օրենսդրությունը նաև չի հստակեցնում, թե ինչ գործողություններ են կատարում ԱԺ մյուս մարմինները և պաշտոնատար անձինք ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից պետական մարմիններից ստացած տեղեկությունների հիման վրա մշտական հանձնաժողովի ընդունված գրավոր եզրակացությունը ստանալուց հետո:

Կանոնակարգի համաձայն խմբակցություններն իրավունք ունեն գրավոր հարցապնդումներով դիմելու ՀՀ կառավարության անդամներին, որին տրված պատասխանի քննարկման արդյունքներով խմբակցությունը կարող է առաջարկել ընդունել ՀՀ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին ԱԺ որոշում: Մշտական հանձնաժողովը նման

լիազորություններով օժտված չէ և կարող է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմել հարցումներով, որոնցից ստացած պատասխանի հիման վրա գործողություններ սախատեսված չեն: Անհրաժեշտ է ուժեղացնել ՀՀ կառավարության անդամներին և նրանց տեղակալներին քաղաքական պատասխանատվության ենթարկելու ԱԺ մշտական հանձնաժողովների լիազորությունը:

Մշտական հանձնաժողովների նիստերի ժամանակ հիմնականում քննարկվում են օրենքների նախագծեր: ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստերը նվիրված բյուջեի նախագծին և բյուջեի կատարմանը, որոնք պարտադիր կերպով կազմակերպվում են բոլոր մշտական հանձնաժողովների կողմից, որպես մշտական հանձնաժողովների նիստեր չեն արձանագրվում: Չնայած օրենքով տրված հնարավորություններին, ոլորտային մշտական հանձնաժողովները բավարար չափով ներգրավված չեն բյուջետային քննարկումներում: Մշտական հանձնաժողովների աշխատանքային ծանրաբեռնվածությունը համաչափ չէ (այդ հարցը սույն ուսումնասիրության առարկա չի հանդիսանում):

Օրենքներում, կանոնակարգում և աշխատակարգում նպատակային փոփոխությունները կարող են խթանել բյուջետային գործընթացում մշտական հանձնաժողովների ակտիվությունը, ինչն անհրաժեշտ է, որպեսզի ոլորտային քաղաքականությունների իրագործման կարևորագույն գործիքներից մեկը հանդիսացող խորհրդարանական բյուջետային վերահսկողությունը իրականացվի ըստ էության ու համակողմանի:

Բյուջետային գրասենյակը չունի բավարար կարողություններ և ԱԺ-ին ու մշտական հանձնաժողովներին վերջիններիս վերահսկողական գործառնություն օժանդակելու համար անհրաժեշտ լիազորություններ: Բյուջետային գրասենյակը հիմնականում պատրաստում է տեղեկանքներ պետական բյուջեի կատարման վերաբերյալ: ԱԺ վերահսկողական գործառնություններին օժանդակող վերլուծական նյութերի կարիք կա:


ԱԺ-ն Հայաստանի Հանրապետության կարևորագույն ներկայացուցչական մարմինն է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: ԱԺ աշխատակազմն առանցքային դեր ունի ԱԺ կողմից գործադիրի նկատմամբ վերահսկողության իրականացման գործում: Կախված այն հանգամանքից, թե ինչպես է ԱԺ ղեկավարությունը կազմակերպում ԱԺ աշխատակազմի աշխատանքը կարելի է պատկերացում կազմել թե ինչպես է ԱԺ-ն վերահսկողություն իրականացնում գործադիրի նկատմամբ: Այս հետազոտությունը եզրակացրել է, որ.

- Ռեեստրների և ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքի վարումը բարելավման կարիք ունի:
- ԶԶ-ների գործունեության ընթացքում կազմակերպվող քննարկումների, պատրաստվող փաստաթղթերի և զեկույցների և կատարվող աշխատանքների վերաբերյալ ԱԺ ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկատվությունը բարելավման կարիք ունի: ԱԺ ինտերնետային կայքում առկա Ջրային տնտեսությունն ուսումնասիրող ԶԶ գործունեության վերաբերյալ հրապարակումների Էկրանի պատկերները (screenshot) ներկայացված են ստորև (պատկեր 6): «Արխիվ» գրառման տակ տարիները և ամիսները փոխելով կարելի է գտնել կոնկրետ տարում կամ կոնկրետ ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԱԺ աշխատակազմը տրամադրել է Մետադական հանքարդյունաբերությունն ուսումնասիրող ԶԶ-ի զեկույցի հղումը: ԱԺ ինտերնետային կայքի այս ԶԶ-ի գործունեությանը վերաբերող էջում առկա չէ տեղեկատվություն 2020թ. հունիսի 11-ից հետո կայացած

Նիստերի վերաբերյալ: 2020թ. հունիսի 11-ի Նիստում որոշվել է, որ «Քննիչ հանձնաժողովի հերթական Նիստը տեղի կունենա հաջորդ շաբաթ»^{cclxiv}:


Պատկեր 6. ԱԺ կայքում առկա Զրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՀ գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը



Աղբյուր. ԱԺ ինտերնետային կայք

ԱԺ աշխատակազմը կարող է խմբակցություններին և հանձնաժողովներին օժանդակել իրենց աշխատանքում հետևողական լինելու հարցում: Մետաղական հանքարդյունաբերությունն ուսումնասիրող ԶՀ գործունեության արդյունքների վերաբերյալ զեկույցը հաստատվել է 2020թ. հունիսի 18-ի փակ նիստի ժամանակ: Չեկույցը ստորագրել է ԶՀ 11 անդամներից 5-ը^{cclxv}: ԱԺ կողմից զեկույցն ընդունելու վերաբերյալ տեղեկատվություն ԱԺ ինտերնետային կայքի «Նախագծեր» էջում տեղեկատվություն առկա չէ ո՛չ «Օրակարգում ընդգրկված», ո՛չ «Դեռևս չընդգրկված» և ոչ էլ «Ամբողջությամբ ընդգրկված» հղումներով (պատկեր 7):

Պատկեր 7. ԱԺ ինտերնետային կայքում առկա Մետաղական հանքարդյունաբերությունն ուսումնասիրող ԶՀ գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը




Աղբյուր. ԱԺ ինտերնետային կայք

Անհրաժեշտ է, որպեսզի ԱԺ աշխատակազմում լինի մասնագետ, ով հատուկ ուշադրություն կդարձնի ԶԶ ստեղծելու մասին և այլ հարցերի վերաբերյալ պատգամավորների, խմբակցությունների և հանձնաժողովների կողմից ներկայացվող դիմումների և զեկույցների լեզվին: Յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում անհատ պատգամավոր, ունի սխալվելու իրավունք: Սակայն պետական կարևորագույն հաստատության՝ ԱԺ կողմից ընդունված և նրա կայքում հրապարակվող փաստաթղթերը պետք է ձևակերպված լինեն գրական և գրագետ հայերենով: ԱԺ-ն որպես պետական կարևորագույն հաստատություն պետք է դրա համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի և մեխանիզմներ ստեղծի:

Զրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՅ ստեղծելու մասին «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների դիմումում, որի առանձին հատվածներ ներկայացված են պատկեր 8-ում առկա են վրիպակներ:

Ամենայն հավանականությամբ դիմումը ստորագրած «Իմ քայլ»-ի պատգամավորները, որոնց մեջ մեծ թիվ են կազմում բանասերները՝ լրագրողներ և գրականագետներ, չեն կարողացել դիմումի տեքստը, ինչը կարող է ազդակ հանդիսանալ, որ պատգամավորների մի մասը բավարար չափով չի արժևորում պատգամավորի կարգավիճակը և դրանից բխող պարտականությունները:

Պատկեր 8. Զննիչ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ պատգամավորների դիմումի տեքստի վրիպակները



ՔՆԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Որպես քննիչ հանձնաժողովի քննության առարկա նախատեսվում է Արարատի և Արմավիրի մարզերում էԵՐԲՆ Ջրային կոմիտեի, որն կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ էԵՐԲՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության ՕԴ-ի գործունեությունը, հիմնավորվածությունը և ապա-
խաղընթերցը:

ՔԱՒԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ Է:

Որպես քննիչ հանձնաժողովի իրավաբանական ոլորտ նախատեսվում է բնության Արարատի և Արմավիրի մարզերում ԷԵԲՄԸ Ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ ԷԵԲՄԸ Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության ՄԻԴ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

Որպես քննիչ հանձնաժողովի նախագահ է առաջարկվում ՀՀ ԱԺ պատգամավոր Մովսեսյան Վարդանյանը:

Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը սահմանել քննիչ հանձնաժողովի ստեղծման պահից սկսած 6 ամիս:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանել տասնվեց:

Քննիչ հանձնաժողովի կազմը սահմանել հետևյալ համամասնությամբ՝

«Բարձրագույն Հայաստան» խմբակցություն-3 անդամ


«Լուսավոր Հայաստան» խմբակցություն-2 անդամ

Wk 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

- 3) Frank Franklin Frank 078
4) Frank Frank Frank 032
5) Frank Frank Frank 082

խոչընդոտող փաստերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով»-ի անվանման մեջ, չնայած, ԶՅ ստեղծելու վերաբերյալ 30 պատգամավորների կողմից ստորագրված գրության մեջ այդպիսի վրիպակ առկա չէ (պատկեր 9)^{cdxvi}:

Պատկեր 9. Քննիչ հանձնաժողովի անվանումները ԱԺ ինտերնետային կայքում



Աղբյուր. ԱԺ ինտերնետային կայք

Էական բարելավման կարող է ենթարկվել ոչ միայն ինտերնետային կայքի վարումը, այլ վերջինիս կառուցվածքը: Նպատակին ծառայում են այն կայքը, որի օգտագործողը կարող է պահանջվող տեղեկատվությունը գտնել 2-3 սեղմումով: Ջրային տնտեսությունն ուսումնասիրող ԶՅ-ի զեկույցը գտնելու համար անհրաժեշտ է բացել ԱԺ կայքի «Նախագծեր» էջը, ընտրել «Ամբողջությամբ ընդունվածներ»-ը, բացվող ցանկից (dropdown menu) ընտրել «ԱԺ յոթերորդ գումարում»-ը, «Հանձնաժողովներ»-ի ցանկից ընտրել ԶՅ-ն, ապա «Փաստաթղթի կող»-ը, որից հետո ընտրել «Կարդալ այստեղ» հղումը (ընդամենը 6 քայլ):

Այս հետազոտության շրջանակներում կայացած քննարկումների ժամանակ կարծիք է հնչել, որ երկու հիմնական պատճառներով 2022թ. պետական բյուջեի նախագծի քննարկումը ներկայացուցչական չէ և պետք չէ եզրակացություններ անել դրա հիման վրա: Քննադատների կարծիքով սա առաջին դեպքն էր, երբ պետական բյուջեի նախագիծը քննարկվում էր ընդդիմության կողմից հայտարարված բոյկոտի պայմաններում: Ընդդիմության բոյկոտը կապված չէր բյուջեի նախագծի հետ: Երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ նախագիծը մշակվել էր ֆինանսների նախկին նախարարի՝ Ատոմ Չանջուղազյան կողմից, իսկ ներկայացնում էր նոր նախարարը՝ Տիգրան Խաչատրյանը: Քննադատների կարծիքով Տիգրան Խաչատրյանը շատ քիչ էր տեղյակ նախագծից և դա հաշվի առնելով, կարծես թե, ԶԴ-ական պատգամավորները, ըմբռնելով իրավիճակը, շատ չէին «նեղում» նախարարին:

Այս հետազոտության տրամաբանության համաձայն վերը նշված երկու գործոնները ոչ թե խանգարող հանգամանքներ են, այլ ավելի են ընդգծում խորհրդարանական վերահսկողության կարևորությունը:

Առաջին, պետական բյուջեի նախագիծը ԱԺ ներկայացնում է ՀՀ կառավարությունը, որն էլ պատասխանատվություն է կրում դրա բովանդակության համար: Կոնկրետ թե որ նախարարի օրոք է պատրաստվել բյուջեի նախագիծը և ով է ԱԺ-ում այն ներկայացնում կառավարության խնդիրն է: Սահմանադրությունը և կանոնակարգը նախարարի փոփոխության դեպքում չեն նախատեսում ԱԺ կողմից մեղմ մոտեցման դրսևորում: Եթե նախարարի փոփոխությունը դառնա մեղմացուցիչ հանգամանք, վարչապետը կարող է ԱԺ «մեղմ» վերաբերմունքին արժանանալու համար ամեն տարի փոխել վերջինին: Այդպիսի մոտեցումը հատկապես ռիսկային է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակության մի մասի կարծիքով նախարարների նշանակումը «թաղաքական որոշում է» և վարչապետն այդ հարցով ոչ մեկին հաշվետու չէ:

Երկրորդ, կառավարության գործունեության վերահսկողությունը հատկապես կարևորվում է ընդդիմության կողմից բոյկոտի ժամանակ, անկախ բոյկոտի պատճառներից: Չնայած Սահմանադրության համաձայն ԱԺ-ն վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ (հոդված 88), այս հետազոտությունում ներկայացված առանձին դեպքերը վկայում են, որ իշխանական պատգամավորների մի մասի կարծիքով վերահսկողությունը ԱԺ ընդդիմության գործառույթն է: Այդ տրամաբանությունը կիրառելու դեպքում ստացվում է, որ ընդդիմության բոյկոտի ժամանակ կառավարությունը դուրս է մնում ԱԺ վերահսկողությունից: Այսինքն, ընդդիմության բոյկոտի դեպքում, իշխանական պատգամավորներն ավելի ջանասիրաբար պետք է կատարեն գործադիրի նկատմամբ վերահսկողության սահմանադրական պահանջը, այլապես գործադիրը կհայտնվի ԱԺ վերահսկողությունից դուրս:

Սահմանադրության, կանոնակարգի, այլ օրենքների և ընթացակարգերի գործունեությունը հարկավոր է ստուգել հատկապես նման ծայրահեղ սահմանային դեպքերում (stress test կատարել):

2016թ. ընդունված և 2017թ. մայիսին ուժի մեջ մտած ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքն էականորեն նվազեցրել է ՀՀ կառավարության նկատմամբ ԱԺ ազդեցության լծակները: ԱԺ կողմից բյուջեի կատարման հաշվետվության չընդունումը որևէ ազդեցություն չունի ՀՀ կառավարության գործունեության վրա: Դա նշանակում է, որ օրենսդրությունը քաղաքական պատասխանատվություն չի ենթադրում ՀՀ կառավարության բյուջեի կատարման հաշվետվության չընդունելու դեպքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեն օրենք է, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության չընդունումն ըստ էության նշանակում է, որ ՀՀ կառավարությունը խախտել է օրենքը:

Նիստի ժամանակ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հարցերի հանձնաժողովի նախագահը հայտնում է^{ccxvii}, որ փակ մասի քննարկմանը մասնակցել են ընդդիմության այն ներկայացուցիչները, ովքեր ունեն գաղտնի փաստաթղթերի հետ աշխատելու իրավունք: Հետագա հստակեցման կարիք ունի, թե արդյոք իշխանությունը կարող է գաղտնի փաստաթղթերի հետ աշխատելու թույլտվություն չտալով ընդդիմության ներկայացուցիչներին զրկել փակ ռեժիմով քննարկումների մասնակցելու հնարավորությունից և այդպիսով, ըստ էության սահմանափակել գաղտնիություն ունեցող ծախսերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ԱԺ պատգամավորների մի մասի հնարավորությունը:

ՀԴ ընթացիկ եզրակացությունների ուսումնասիրության արդյունքում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը կարող է որոշում կայացնել հանձնաժողովի նիստ, այդ թվում ոլորտային հանձնաժողովի հետ համատեղ նիստ

հրավիրելու մասին: Կանոնակարգը չի հստակեցնում հանձնաժողովի կամ երկու հանձնաժողովների համատեղ նիստի իրավասությունները: Ի՞նչ որոշում կարող է ընդունել ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովը կամ ոլորտային հանձնաժողովի հետ համատեղ նիստը, կամ ի՞նչ գործողություններ կարող են հետևել համատեղ նիստին:

Վերջին տարիներին ԱԺ-ն ՀՀ կառավարությանը պետական բյուջեում «վերաբաշխումներ» կատարելու լայն լիազորություններ է տվել, ինչի արդյունքում ՀՀ կառավարությունը մեծ ծավալներով և քանակով վերաբաշխումներ է կատարում: ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի դիտարկումը, որ ՀՀ կառավարությունը վերաբաշխումներն իրականացնում է իրեն տրված լիազորությունների շրջանակներում, կարող է նշանակել, որ ԱԺ-ն չի վերահսկում վերաբաշխումները: Այս հետազոտությունը չի հայտնաբերել որևէ վկայություն, ԱԺ-ն վերահսկողություն է իրականացնում ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ: ՀՀ պետական բյուջեում կատարվող վերաբաշխումները կարող են բյուջեի նախագծման փուլում առկա լրջագույն խնդիրների ցուցիչ հանդիսանալ: Բյուջեում վերաբաշխում նախատեսող ՀՀ կառավարության որոշումների շեշտակի աճը կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքով:

- 1) Ընկել է բյուջեի «որակը», ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում տարվա ընթացքում կատարել ավելի մեծ թվով ճշգրտումներ:
- 2) Կառավարությունն ավելի «հանդուրժող» է դարձել և ավելի հեշտ է համաձայնվում փոփոխություններ կատարել: Դրանով պայմանավորված, պետական մարմինները պակաս ջանք են գործադրում բյուջեի նախագծման փուլում (ինչու՞ ջանք գործադրել ֆինանսավորման ծավալները և ուղղություններն ավելի լավ պլանավորելու համար, եթե կարելի է հեշտությամբ անհրաժեշտ «ճշգրտումները» կատարել բյուջետային տարվա ընթացքում):
- 3) ՀՀ Ազգային ժողովն ավելի շատ իրավունքներ, ավելի շատ ճկունություն է տվել ՀՀ կառավարությանը պետական բյուջեի կատարման ժամանակ:

Չնայած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը սահմանափակում է պետական բյուջեում կատարվող վերաբաշխումների ծավալը, «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությունը չի ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքում կատարված «վերաբաշխումների» ծավալը և քանակը և չի ներկայացնում վերլուծություն, որը ցույց կտար սահմանափակումների հետ համեմատությունը: Բյուջետային ծրագրերի իրականացման, դրանցում կատարվող փոփոխությունների համար պատասխանատվության շրջանակը հստակ չէ և լրոգված է կոլեգիալ (ան)պատասխանատվությամբ: Բյուջեի կատարման ընթացքում կատարվող «վերաբաշխումների» առանձին անդրադարձ չկա նաև ՀՀ հաշվեթևի պալատի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» եզրակացության մեջ:

Բյուջետային տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեում կատարվող վերաբաշխումները հսկողությունից դուրս են:

Հրաչյա Աճառյանի անվան լեզվի Ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» վերաբաշխել բառը բացատրում է որպես «Նորից՝ վերստին բաշխել, մի անգամ բաշխածը կրկին բաշխել»^{cclxviii}: Ի տարբերություն «վերաբաշխման», որի դեպքում ՀՀ

կառավարությունը վերստին բաշխում, կամ վերաբաշխում նախկինում արդեն իսկ բաշխվածը, բյուջեի «հավելյալ» կամ «չկանխատեսված» եկամուտները ԱԺ կողմից չեն բաշխվել և հետևաբար, ՀՀ կառավարության կողմից դրանց վերաբերյալ որոշումների ընդունումը խնդրահարույց է:

ԱԺ հատուկ ուշադրության առարկա պետք է դառնա բյուջեի «հավելյալ» կամ «չկանխատեսված» եկամուտների օգտագործման վերաբերյալ որոշում ընդունելու իրավագործականը: Դեպքի նկարագրություն N°6-ում ներկայացվել է ՀՀ վարչապետի կողմից 2019թ. մայիսին Նշած 62 մլրդ դրամի «հավելյալ» կամ «չկանխատեսված» եկամուտների վերաբերյալ ԱԺ-ն որոշում չի ընդունել, չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության համաձայն ԱԺ-ն ընդունում է պետական բյուջեն, որը ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը: Եթե ՀՀ կառավարությունն իրավասու է ինքնուրույն որոշել «հավելյալ» միջոցների ճակատագիրը, ապա ոչինչ վերջինիս չի խանգարում ԱԺ հաստատմանը ներկայացնել «փոքր» բյուջեի նախագիծ, ապա ինքնուրույն, առանց ԱԺ համաձայնության, որոշումներ կայացնել պետական բյուջեի «հավելյալ» եկամուտների կառավարման վերաբերյալ^{ccxix}: Դրանով ԱԺ-ն կզրկվի ժողովրդավարական հասարակությունում ընդհանրապես և խորհրդարանական հանրապետությունում մասնավորապես սահմանադրությամբ իրեն վերապահված կարևորագույն լիազորությունից՝ որոշել, թե ինչպես պետք է կառավարվեն պետական միջոցները: Պետական բյուջեի կատարումը որոշակի ճկունություն է պահանջում: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը ՀՀ կառավարությանը տալիս է «վերաբաշխումներ» կատարելու սահմանափակ իրավունք: ՀՀ կառավարությունը կարող է «վերաբաշխել» միայն «բաշխված» միջոցները: Սահմանադրության համաձայն միայն ԱԺ-ն ունի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ որոշում ընդունելու բացառիկ իրավունք: Սահմանադրության համաձայն ԱԺ-ն որոշում պետք է ընդունի **բոլոր** եկամուտների վերաբերյալ:

ՀՀ վարչապետը, կառավարության անդամները և նրանց տեղակալները, պատգամավորները հայտարարություն են կատարում լրջագույն առերևույթ հանցագործությունների վերաբերյալ: Մաքսային սահմանի հատման կանոնների խախտման վերաբերյալ վերը նշված լրջագույն դեպքի վերաբերյալ ՀՀ վարչապետի հայտարարությունը պետք է գրավեր ԱԺ մի քանի մշտական հանձնաժողովների ուշադրությունը: Մասնավորապես.

Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը կարող էր և պետք է հետաքրքրվեր առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով ապրանքների ներմուծման փաստով: Մասնավորապես. ի՞նչ ապրանքներ են ներմուծվել, ինչու՞ էին փորձել այդ ապրանքները Հայաստան ներմուծել մաքսային սահմանի հատման կանոնները խախտելով (ապրանքների մաքսային գնի, քվոտայի սահմանափակումների, թե այլ պատճառով), ի՞նչ ազդեցություն կարող էին մաքսային սահմանների հատման կանոնների խախտմամբ Հայաստան ներմուծված ապրանքներն ունենալ ներքին շուկայում, այլ հարցեր:

Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը կարող էր հետաքրքրվել, թե ի՞նչ ծավալի եկամուտներից կզրկվեր պետական բյուջեն, եթե տվյալ ապրանքների սեփականատերերին հաջողվեր դրանք Հայաստան ներմուծել թաքցնելով մաքսային հսկողությունից:

Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը կարող էր հետաքրքրվել սահմանների հուսալիությամբ, ինչպես նաև ներկրվող ապրանքների օրինականությամբ (արդյոք Հայաստանի պետական և մաքսային սահմանը հուսալիորեն

պաշտպանված են, արդյոք հնարավոր է թույլ մաքսային հսկողության պատճառով Հայաստան զենք, թմրանյութ և այլ վտանգավոր ապրանքներ ներմուծել, ի՞նչ երաշխիքներ կան, որ այդ նույն «խողովակով» Հայաստան արդեն իսկ չեն ներկրվել զենք, թմրանյութեր, կամ այլ ապրանքներ:

Պետական իրավական հարցերի մշտական հանձնաժողովը կարող էր հետաքրքրվել ՊԵԿ-ի կառավարման համակարգում առկա բացերով: ԱԺ-ն չի փորձել պարզել այս և նման մի շարք այլ հարցերի պատասխաններ: Արդյունքում պարզ չէ, թե արդյոք Հայաստանի իշխանությունները լիարժեք վերահսկում են մաքսային սահմանը:


Դեպքի նկարագրություն № 14. «Պարտքից պետք չէ վախենալ»

2021թ. մայիսի 10-ին ՀՀ ԱԺ-ում վարչապետի ընտրության հատուկ նիստում իր ելույթի ժամանակ վարչապետի պաշտոնակատար Փաշինյանը հայտարարեց^{cclxx}. «Պարտքից պետք չէ վախենալ, ուրիշ բան. եթե երկրին վստահում են, պարտք են տալիս, դա նշանակում է՝ վստահում են, ...»: Դրանից երեք տարի առաջ, 2018թ. հունիսի 20-ի մամուլի ասուլիսի ժամանակ վարչապետ Փաշինյանն ասել էր. «Մեզ համար շատ կարևոր է, որ մենք ամփոփենք որոշակի փուլ և այնպիսի որոշում կայացնենք, որը մեզ չի ստիպի Հայաստանի արտաքին և ընդհանրապես պետական պարտքը ավելացնել: Սա շատ կարևոր մոտեցում է: Դուք գիտեք, որ մեր պետական պարտքը արդեն հատել է, հատում է մեր օրենքով նախատեսված վերին սանդղակը և ես չեմ կարծում, թե մանավանդ վարկերի ծախսման այս պատմությունը թողած, անարդյունավետ ծախսման պատմությունը թողած, մենք պետք է նոր վարկեր ներգրավենք»^{cclxxi}:

Պատմությանը հայտնի են մի շարք դեպքեր, երբ «անվախ» կերպով պարտք կուտակող, նախապես բարվոք վիճակում գտնվող, ռիսկերը բավարար չափով չբացահայտող, չգնահատող և չկառավարող, ներքին և արտաքին ցնցումների ենթակա երկիրը պարտքի մարման և սպասարկման հետ կապված դժվարություններ է առերեսել պարտք/ՀՆԱ հարաբերակցության շատ ավելի ցածր մակարդակում և անցել է պարտքային ճգնաժամերի միջով: 1800-ականներից ի վեր հինգ տարի անընդմեջ ՀՆԱ 90% և ավելի պարտք ունեցող զարգացած երկրներում տնտեսական աճը 1.2% ավելի ցածր է եղել, քան մնացած ժամանակ: Ուսումնասիրված 26 դեպքերից 20-ում իրավիճակը ձգվել է 10 տարի և ավելի, իսկ համեմատաբար կարճ վեց դեպքերից հինգը եղել է համաշխարհային պատերազմներից հետո^{cclxxii}: Աճի վրա բացասական ազդեցությունն զգալի է եղել Նույնիսկ, երբ երկրները կարողացել են համեմատաբար ցածր տոկոսադրույքներով պարտք ներգրավել ֆինանսական շուկաներից: 93 զարգացող երկրներում տնտեսական աճի վրա արտաքին պարտքի ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միջին հաշվով պարտքն սկսում է բացասական ազդեցություն ունենալ, երբ հասնում է արտահանման 160-170% և ՀՆԱ 35-40%^{cclxxiii}:

ՀՀ պետական պարտքի վերաբերյալ 2013թ. հետազոտությունը եզրակացրել էր^{cclxxiv}, որ պարտքի ներկա ծավալների պայմաններում արտաքին աշխարհում տեղի ունեցող ցնցումները կարող են ավելի ծանր հետևանքներ ունենալ ՀՀ տնտեսության համար: Չնայած 2008-2013թթ. ընդունված քաղաքական որոշումների արդյունքում ՀՀ պետական պարտքը շեշտակիորեն ավելացել է, տնտեսությունը համապատասխան չափով որակական և քանակական առաջընթաց չի արձանագրել: Պարտքի մարումն ու սպասարկումը մեծ ծավալով ֆինանսական միջոցներ են պահանջում, որոնք կարող էին օգտագործվել տարբեր ոլորտներում ծառացած խնդիրները լուծելու համար: 1995-2021թթ. ՀՀ պետական պարտքի կուտակման վերաբերյալ տվյալները ներկայացված են պատկեր 10-ում:


Պատկեր 10. Հայաստանի պետական պարտքի բացարձակ և հարաբերական մեծությունները (մլրդ. ՀՀ դրամ՝ ծախ առանցք, պարտքը որպես ՀՆԱ տոկոս՝ աջ առանցք)



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն, վիճակագրական կոմիտե

2003-2007թթ. բարելավվումը տեղի է ունեցել ոչ թե պարտքի բացարձակ մեծության կրճատման, այլ ազգային արժույթի կտրուկ արժևորման և պաշտոնական վիճակագրության կողմից տնտեսական աճի երկնիշ ցուցանիշների արձանագրման արդյունքում: 2016թ. հետազոտությունն արձանագրել էր, որ «Եթե կառավարությունն իրավիճակը շտկելու միջոցներ չձեռնարկի՝ բյուջեի պակասուրդն անմիջապես նվազեցնելով մինչև ՀՆԱ-ի առավելագույնը 1.5-2.0 տոկոսը և առաջիկա տարիներին չպահի այդ մակարդակում, կարող է սկսվել իրավիճակի անկանոն ճշգրտում, ինչի արդյունքում կտուժեն հասարակության խոցելի խմբերը»^{ccxxv}: Վերջին 10 տարիներին ներքին պարտքի տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում գրեթե կրկնապատկվել է, կազմելով 28% (պատկեր 11):

Պատկեր 11. Հայաստանի պետական պարտքի կառուցվածքը (մլրդ ՀՀ դրամ)




Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն, վիճակագրական կոմիտե

Բացարձակ մեծությամբ ներքին պարտքը գրեթե կրկնապատկվել է, 2017թ. վերջի 620 միլիարդից 2021թ. վերջում հասնելով 1237 մլրդ ՀՀ դրամի: Նույն տարիներին արտաքին պարտքի ծավալը դրամային արտահայտությամբ ավելացել է մոտավորապես 20%, 2660

մյուր ՀՀ դրամից հասնելով 3192 մյուր ՀՀ դրամի: Պետական բյուջեի տեսակետից ներքին պարտքի սպասարկումն ավելի կանխատեսելի է, քանի որ այն չի կրում ազգային արժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը: Պարտքի դիմաց վճարվող տոկոսների ծավալը ՀՆԱ համեմատ ավելացել է (պատկեր 12): Նախահեղափոխական 2017թ. ՀՆԱ 2.2% համեմատ պարտքի տոկոսավճարները 2021թ. կազմել են ՀՆԱ 2.8%: Պարտքի սպասարկումը ավելի մեծ ռեսուրսներ է կլանում բյուջեից:

Պատկեր 12. Պետական պարտքի դիմաց վճարվող տոկոսների բացարձակ և հարաբերական մեծությունները (մյուր ՀՀ դրամ՝ ծախ առանցք, ՀՆԱ տոկոս՝ աջ առանցք)



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն, վիճակագրական կոմիտե

Վերը նշված 2016թ. հրապարակված հետազոտության մեջ նշվել էր, որ պարտքը բեռ է դառնում չհավասարակշռված բյուջետային քաղաքականության արդյունքում:


Աճող պարտքի և դրա սպասարկման, բյուջեում դրանց և «պարտադիր» ծախսերի (որի սահմանումը տրվել է ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 18-ի №35-Ա որոշման մեջ) տեսակարար կշիռը պատգամավորներին չեն մտահոգել: Մինչդեռ, ժամանակ առ ժամանակ, պատգամավորների հուզական ելույթներում և հարցազրույցների ժամանակ, սակայն ոչ ԱԺ լիազուրմար նիստերի կամ հանձնաժողովներում աշխատանքի ժամանակ (եթե կան, ապա դրանք պատշաճ արձանագրված չեն հանձնաժողովների նիստերի արձանագրություններում), հանրային դաշտ են արտահոսում խնդիրների վերաբերյալ մտահոգություններ: Օրինակ, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Սարգսի Տիգրանյանի («Քաղաքացիական պայմանագիր») համաձայն «Սոցիալական ապահովության ենթակառուցվածքն ուղղակի ճկվում է բեռի տակ»^{cdxxvi}: Տիգրանյանը խոսում է ինդեքսավորման անհրաժեշտության մասին, թերահավատորեն վերաբերվելով հաշվարկման բանաձևին: Սակայն պատգամավորը չի անդրադարձնում հնարավոր սղաճային պարույրին (inflation spiral), որն առաջանում է, երբ առանց աշխատանքի արտադրողականության աճի, պետությունը գործատուներին ստիպում է բարձրացնել աշխատավարձերը, ինչի արդյունքում ավելանում են վերջիններիս ծախսերը, որոնք էլ իրենց հերթին, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ավելի բարձր գների տեսքով դրանք նորից փոխանցում են սպառողներին:

Պարտադիր ծախսերի մեծությունը պետական բյուջեի «ծանրաբեռնվածությունը» բնութագրող կարևոր ցուցանիշ է: Բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի վերջին տարիների որոշումների համաձայն «պարտադիր ծախսեր» են հանդիսանում ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված՝ հանրային ապրանքների և ծառայությունների մատուցման կամ պետության միջամտության այլ ձևերի հետ կապված պարտավորությունների իրականացման համար պահանջվող ծախսեր: «Հայեցողական ծախսեր» են հանդիսանում ՀՀ կառավարության որոշումներով կամ գերատեսչությունների կողմից սահմանված՝ հանրային ապրանքների և ծառայությունների մատուցման կամ պետության միջամտության այլ ձևերի հետ կապված պարտավորությունների իրականացման համար պահանջվող ծախսերը: «Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ» են հանդիսանում նախորդ միջնաժամկետ ծախսային ծրագրով կամ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով հաստատված պարտադիր և հայեցողական ծախսային պարտավորությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա կարևորագույն ցուցանիշ է և այն հատուկ սահմանված է ՀՀ վարչապետի որոշման մեջ, միանշանակ է, որ ՀՀ ՖՆ-ն հավաքում է պարտադիր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը և «հսկում» է դրա մեծությունը: Պարտադիր ծախսերով պետական բյուջեի «ծանրաբեռնվածությունը» գնահատելու և սույն հետազոտության շրջանակներում դրա վրա ուշադրություն հրավիրելու նպատակով 2019-2022թթ. պարտադիր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու խնդրանքով գրություն է ուղարկվել ՀՀ ՖՆ (հավելված 23): ՀՀ ՖՆ-ն պատասխանել է, որ «բյուջետային ծրագրերի յուրաքանչյուր միջոցառման գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններն՝ ըստ պարտադիր կամ հայեցողական բնույթի բաղադրիչների առանձնացված բացվածքի, Հայտատու մարմինների կողմից ՀՀ ՖՆ ներկայացվում են Հայտատու մարմինների բյուջետային ֆինանսավորման հայտերով, որոնք բյուջետային գործընթացի շրջանակում օգտագործվում են ծառայողական նպատակներով և համապատասխան տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով կամ պետական բյուջեի առանձին հավելվածով ըստ առանձին բաղադրիչների խմբավորված չեն ամփոփվում»: Չամփոփվելու վերաբերյալ պատասխանը մտահոգիչ է, քանի որ այդ դեպքում անհասկանալի է այդ կարևորագույն ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքելու նպատակը: Միաժամանակ, ՀՀ ՖՆ-ն առաջարկում է այդ տեղեկատվությունը հավաքել հայտատու մարմինների ինտերնետային կայքերից: ՀՀ ՖՆ-ն չի ցանկացել տրամադրել 2019-2022թթ. պարտադիր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը, ենթադրաբար, քանի որ դրանք կտրուկ աճել են: Աժ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Սարգսի Տիգրանյանի («Զաղաքացիական պայմանագիր») սոցիալական ապահովության ենթակառուցվածքի ծախսերի բեռի տակ բյուջեի ճկվելու վերաբերյալ հայտարարությունը համահունչ է այս ենթադրության հետ:

Եթե պարտադիր ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի կառուցվածքում մեծ է, ապա արտարժույթով գնանշված, բարձր տոկոսադրույթներով, կարճաժամկետ աճող պարտքը կարող է խնդիր դառնալ պետական բյուջեի համար, նույնիսկ եթե այն չի գերազանցում ՀՆԱ 60%-ը:

Պարտքի սպասարկման ծախսերն ավելի մեծ բեռ են դարձել և առաջիկա տարիներին դրանք պետական բյուջեից ավելի մեծ ռեսուրսներ են կլանելու: Եթե պարտքը բեռ չդառնա բյուջեի համար, սպասարկմանն ուղղվող այդ լրացուցիչ միջոցները կարող էին ուղղվել պաշտպանության, կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտներ: Եթե 2007թ. սպասարկման ծախսերի մեծությունը հավասար էր պետական բյուջեի եկամուտների 1.5%, ապա 2018թ. դրանք կազմում էին պետական բյուջեի եկամուտների 11% (պատկեր 13):


Պատկեր 13. Պետական պարտքի սպասարկման ծախսերը որպես պետական բյուջեի եկամուտների տոկոս



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Թավշյա հեղափոխությունից հետո նկատվեց և ստվերային տնտեսության կրճատման և պետական բյուջեի եկամուտների ավելացմամբ պայմանավորված ակնկալվում էր պարտքի սպասարկման ծախսերի նվազում: Սակայն պարտքի սպասարկման ծախսերն ավելանալու են և համաձայն ՄԺԾՏ2022-2024 կազմելու են համապատասխանաբար 215.7, 243.5 և 268.1 մլրդ ՀՀ դրամ^{ccclxxvii}, կամ որպես պետական բյուջեի եկամուտների տոկոս, համապատասխանաբար կազմելով 11.8%, 12.4% և 12.5%: ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ որպես ՀՆԱ տոկոս պակասուրդը նվազելու է (պատկեր 14):

Պատկեր 14. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պակասուրդը 2007-2021թթ. և 2022-2024թթ. կանխատեսումը (ՀՆԱ տոկոս)



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն, վիճակագրական կոմիտե

Նույնիսկ մակերեսային վերլուծությունը ցույց է տալիս Հայաստանի տնտեսության, բյուջեի և դրա պակասուրդի մեծության զգայունությունը արտաքին աշխարհի զարգացումներին: ՀՀ

պետական բյուջեի պակասուրդն աճել է այն ժամանակ, երբ ընկել են պղնձի համաշխարհային գները և նվազել է, երբ պղնձի համաշխարհային գներն աճել են (տես պատկեր 15): ՀՀ պետական բյուջեի պակասուրդն աճել է 2009թ., 2016թ. և 2020թ.: Պղնձի միջազգային գները 2008թ. վերջում նվազել էին վերջին 15 տարվա մեջ մինչև պատմական նվազագույն արժեքը, նաև լոկալ նվազագույն ցուցանիշներ են գրանցել 2016թ. և 2020թ.:

Պատկեր 15. Պղնձի գները (ԱՄՆ դոլար մեկ ֆունտի կամ 452 գրամի համար)



Աղբյուր. <https://www.macrotrends.net/1476/copper-prices-historical-chart-data>

Վերջին 15 տարիներին տարվող քաղաքականության արդյունքում Հայաստանում ստեղծվել է մի վիճակ, որ եթե 2008թ. պետական պարտքի գծով տոկոսների վճարմանն էր ուղղվում պետական բյուջեի 100 դրամ եկամուտներից 1.5 դրամը, ապա ՄԺԾ2022-2024-ի համաձայն 2024թ.՝ 12.5 դրամը: Սա նշանակում է, որ ՀՀ կառավարության կանխատեսումների համաձայն 100 դրամից 11-ը հասանելի չի լինելու ազգային անվտանգության, պաշտպանության, կրթության, առողջապահության և այլ ծախսերի համար: Արտաքին ցնցումների և տնտեսական անբարենպաստ զարգացումների դեպքում ՀՀ կառավարության խուսանավելու հնարավորությունները նվազելու են: Այս միտումների պահպանման դեպքում առաջիկա տարիներին Հայաստանի տնտեսությունն ավելի խոցելի կլինի:

Այս հետազոտությունը հիմնվում է պետական պարտքի կայունության հետևյալ սահմանման վրա.

Պետական պարտքը կայուն է, եթե կառավարությունն ի վիճակի է առանց տնտեսական և ֆինանսական քաղաքականությունն էական փոփոխության ենթարկելու ժամանակին և ամբողջ ծավալով կատարել պարտքի դիմաց վճարումները: Տնտեսական և ֆինանսական քաղաքականության էական փոփոխություններ են համարվում.

- հարկերի և վճարների դրույքաչափերի բարձրացումը,
- նոր հարկերի և վճարների ներմուծումը,
- հանրային ծառայությունների սակագների փոփոխությունները,
- կառավարության ռազմավարական ծրագրերով նախատեսված պետական ֆինանսավորման ծավալների բացարձակ կամ հարաբերական կրճատումը:

ՀՀ Ազգային ժողովը պետական պարտքի կառավարման, ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրի և պետական ֆինանսական կառավարման ու Հայաստանի Հանրապետության ֆինանսատնտեսական իրավիճակի վրա պետական պարտքի կառավարման ազդեցության և դրա հետ կապված այլ հարցեր չի քննարկել և այդ հարցերի վերաբերյալ լուրջ հետաքրքրություն հանդես չի բերել: Խնդիրը ոչ թե պարտքի բացարձակ կամ հարաբերական մեծության մեջ է, այլ նրանում, թե որ գործոնները կարող են այնպես փոխել պարտքի մեծությունը և կառուցվածքը և ինչ կարող են ՀՀ իշխանություններն անել այդ գործոնների բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:

Այս հաշվետվությունը չի հավակնում պնդել, որ Հայաստանի տնտեսությունը կամ պետական բյուջեի պակասուրդը զգայուն են սոսկ պոնժի միջազգային գների նկատմամբ: Այն նպատակ ունի ցույց տալ գոյություն ունեցող կապերից մեկը և պնդել, որ Հայաստանի քաղաքացիների բարեկեցությունը և սոցիալ-տնտեսական անվտանգությունն ապահովվելու համար ԱԺ-ն պետք է զբաղվի ՀՀ կառավարության կողմից մշակված, փաստերի վրա հիմնված ոլորտային քաղաքականությունները քննադատական վերլուծության ենթարկելով:

Դեպքի նկարագրություն № 15. Տոնյանի «դոկտրինան»

2016թ. փետրվարի 16-17-ին, ապրիլյան քառօրյայից մեկուկես ամիս առաջ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնյանը Վիենայում ներկայացրել է «սանձահարման-զսպման» հայեցակարգը^{cclxxviii}: Տոնյանի կարծիքով նախկին «ստատիկ պաշտպանության» հայեցակարգը «հակառակորդի կողմից կարող էր դիտարկվել որպես անբավարար հզորության վկայական»՝ քաջալերելով նրան ձեռնարկել սադրիչ գործողություններ:

2018թ. հուլիսին իր տեսլականը ներկայացնելիս ՀՀ պաշտպանության նախարար Տոնյանը խոսել էր *պարտականության զգացողությունը առաքելության զգացողությամբ փոխարինելու* անհրաժեշտության մասին^{cclxxix}: 2019թ. մարտին Նյու Յորքում նախարարը հայտարարել էր, որ ինքը «տարածքներ՝ խաղաղության դիմաց» ձևաչափը վերաձևակերպել է «նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց» ձևաչափով^{cclxxx}: Նա նշել էր ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելու ունակ ստորաբաժանումների քանակն ավելացնելու մասին: «Սադրանքի դեպքում հակառակորդի հետ առերեսվելու ենք իր տարածքում», ասել էր Տոնյանը և շարունակել. «Անհրաժեշտության դեպքում մեր գրոհային խմբերը կարող են քառս ստեղծել հակառակորդի թիկունքում»^{cclxxxi}: Վերլուծաբանները ձևակերպել էին «Տոնյանի դոկտրին» հասկացությունը^{cclxxxii}:

Ըստ Տոնյանի պաշտպանության բնագավառում կոռուպցիան «կապված է գնումների հետ՝ փակ համակարգերում ռիսկայնությունը սովորաբար բարձր է լինում»^{cclxxxiii}: Նա հայտարարում էր, «որ գնումներին վերաբերող օրենսդրությունը կոռուպցիոն դրսևորումների համար մեծ հնարավորություններ է ստեղծում»:

2020թ. Արցախյան պատերազմից հետո հայ հասարակության մի ստվար մասի համար անվտանգությունը դարձել է առաջնային խնդիր: 2020թ. նոյեմբերի 18-ին Ն. Փաշինյանի հրապարակած 15 «ամենակարևոր անելիքների» ցանկի 8-րդ կետը Չինված ուժերի բարեփոխումների ծրագիրը հաստատելու մասին էր: Պատերազմի ավարտից գրեթե 15 ամիս անց Չինված ուժերի 30-ին նվիրված ռեպորտաժում «Չինուժ» հաղորդումը հիշատակում էր ոչ թե ձեռք բերված զենքի և զինատեսակների, զորավարությունների և նախկինում բանակը ներկայացնելիս այլ սովորական հարցերի մասին, այլ անդրադառնում էր «կարիքներին»^{cclxxxiv}:

IHS հետազոտական կենտրոնի ավագ վերլուծաբանի համար «խիստ անհանգստացնող է, թե ինչ է կատարվում «բանակի բարեփոխումներ» անվան տակ, ինչպես է բանակը բարեփոխվում, ովքեր են բարեփոխողները, ինչ դեր ունի այդ բարեփոխումների մեջ Ռուսաստանը, ինչպիսի սպառազինությունների ծրագիր է ունենալու Հայաստանը»^{cclxxxv}: ՀՀ վարչապետի հայտարարությունները համադրելով վերլուծաբանը եզրակացնում է, որ հայկական բանակը ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որոնք թուլացնելու են նրա մարտունակությունը, քանի որ Հայաստանի ղեկավարությունը միմյանցից տարանջատում է բանակի հարձակողական և պաշտպանողական կարողությունները, մինչդեռ ցանկացած բանակ պետք է ունենա և՛ պաշտպանողականություն, և՛ հարձակողականություն:

Չնայած նախարարի, փակ համակարգում ռիսկայնության և կոռուպցիոն ռիսկեր ստեղծող գնումների օրենսդրության մասին նախարարի պնդումներին նախարարության կամ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչները ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի 2020թ. փետրվարի 21-ին նախաձեռնած «Պետական գնումների համակարգի հիմնախնդիրները եւ դրանց լուծման ուղիները» թեմայով խորհրդարանական

լսումները չօգտագործեցին նախարարի բարձրաձայնած խնդիրները քննարկելու համար^{cclxxxvi}:

Ոչ մինչև 2020թ. Արցախյան պատերազմը, ոչ դրանից հետո պատգամավորները չհետաքրքրվեցին գնումների օրենսդրության բացերով և ինչ կարող է ԱԺ-ն անել դրանք նվազեցնելու համար, չհետաքրքրվեցին «Տոնոյանի դոկտրինայի» ճակատագրով (ինչպես այն գործեց 2020թ. սեպտեմբերին Ադրբեյջանի կողմից սանձազերծած պատերազմի ժամանակ, կարողացա՞ն արդյոք հատուկ ստորաբաժանումները ռազմական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք և քառս ստեղծել հակառակորդի թիկունքում), «Տոնոյանի դոկտրինայի» ներդրման և Հայաստանի ու Արցախի քաղաքացիների պաշտպանության ու անվտանգության համար կատարված ծախսերի նպատակայնությամբ, արդյունավետությամբ և խնայողությամբ:

Հայ հասարակությունը չի լսել ՀՀ ՁՈւ արդիականացման որևէ ծրագրի հաստատման մասին, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ հերթական անգամ, կարևորագույն հարցում ՀՀ իշխանությունները չունեն համակարգված մոտեցում: Նույնն են վկայում նաև ՀԿ-ների ուսումնասիրությունները^{cclxxxvii}:

2020թ. Արցախյան պատերազմից հետո պաշտպանության բնագավառում կոռուպցիոն մի քանի գործարքների հետ կապված քննություն սկսվեց: Սակայն անհայտ է նախկինում բարձրաձայնված կասկածելի գործարքների ճակատագիրը: Օրինակ, 2019-2020թթ. «Ազատություն»-ը^{cclxxxviii}, «Ֆակտորը»^{cclxxxix} և «Սիվիլները»^{ccxc} գրել են ջերմատեսիլ սարքերի գնման գործընթացում ի հայտ եկած խնդիրների մասին: Հանրությանն անհայտ մնաց ինչպես ջերմատեսիլ սարքերի ձեռքբերման, այնպես էլ այլ խնդրահարույց գործերի ճակատագիրը:

2022թ. հունվարի սկսվեց «անպիտան հրթիռների» գործով դատը, որի շրջանակներում քննվում է 4.6 միլիոն դոլարի յուրացման գործը^{ccxi}: Սակայն, եթե բանակին իսկապես «անպիտան հրթիռներ» են մատակարարվել, ապա իրական վնասը ոչ միայն 4.6 միլիոն դոլարի յուրացումն է, այլ այն կյանքները, որոնք կորսվել են մարտի դաշտում, քանի որ «հրթիռները» չեն ոչնչացրել հակառակորդի այն կրակային հզորությունները, որոնք հետագայում սպանել են հայ զինվորին:

Կառավարությունը^{ccxcii} և ՀԿ-ներն^{ccxciii} ուսումնասիրում են բանակում խաղաղ պայմաններում մահվան դեպքերի հարցը, ինչից ԱԺ-ն հեռու է մնում: Շարունակում են մտահոգել ոչ կանոնադրական հարաբերությունների, զինվորականների անհետանալու հետ կապված դեպքերը: 2021թ. նոյեմբերի 12-ից անհետ կորած զինվորի վերաբերյալ տեղեկատվությունը կառավարությունը չի հրապարակել^{ccxciv}:

6. Եզրակացություններ

Հետազոտությունը նպատակը սահմանված է այս հաշվետվության մեթոդաբանության բաժնում: Մասնավորապես.

Արդյոք ԱԺ-ն ունի՞ անհրաժեշտ լիազորություններ և բավարար կարողություններ ու գործիքներ իր վերահսկողական գործառույթն իրականացնելու համար:

Հայաստանը փորձում է վերափոխել մինչև 2018թ. գոյություն հունցող «կիսակոնսոլիդացված ավտորիտար կառավարման» համակարգը և դառնալ լիարժեք ժողովրդավարական երկիր: Ներկա պահին Հայաստանը հանդիսանում է անցումային՝ հիբրիդային ռեժիմ ունեցող երկիր և դեռևս չի կարողանում երաշխավորել իր բոլոր քաղաքացիների, այդ թվում պատգամավորների անկախությունն ու ազատությունը: Ոչ անկախ, ճնշման ենթարկվող պատգամավորները չեն կարող իրականացնել ԱԺ վերահսկողական գործառույթը: ԱԺ ամենաազդեցիկ մշտական հանձնաժողովի նախագահի, պետական մարմինների «վերապահում» ունենալու պատճառով ԱԺ փաստաթղթի չիրապարակում (մամուլի համաձայն «չեն թողնում հրապարակել») անկախության սահմանափակության նշան է: Ոչ թե պետական մարմիններն են սահմանում ԱԺ իրավունքները, այլ ԱԺ-ն է սահմանում պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Խորհրդարանի և պատգամավորների անկախությունը մարտահրավեր է, որ պետք է առերեսել:

Չնայած Սահմանադրությունը շեշտում է, որ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով և պետք է առաջնորդվի իր խղճով և համոզմունքներով, սակայն պատգամավորները, հատկապես ընտրական ցուցակում ցածր տեղ զբաղեցնողները, հիմնականում հետևում են խմբակցության որոշումներին և հանրային դաշտում չեն վիճարկում առաջնորդների որոշումները, գործողությունները և հայտարարությունները: Եթե պատգամավորների պետք է ենթարկվեն խմբակցության որոշումներին, ապա մեծ թվով պատգամավորներ կարիք չկա, այլ կարելի է խմբակցության ղեկավարների ձայնին տալ պատգամավորների ընդհանուր թվում այդ խմբակցության պատգամավորների թվին համապատասխան կշիռ: Հատկապես խնդրահարույց է այն հանգամանքը, որ ԱԺ որոշ պատգամավորներ գործադիրը դիտարկում են որպես «վերադաս»:

Սահմանադրությունն ու կանոնակարգը սահմանում են խորհրդարանական վերահսկողության գործում ԱԺ և ԱԺ մշտական հանձնաժողովների դերը, սակայն խմբակցությունների դերը պարզ չէ:

Սահմանադրությունը սահմանում է, որ ԱԺ-ն խորհրդարանական վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: ՀՀ օրենսդրությունը չի դիտարկում «իշխանական» կամ «ընդդիմադիր» խմբակցությունների վերահսկողությունը: Խմբակցություններից որևէ մեկի կողմից իր վերահսկողական գործառույթից հրաժարվելը նշանակում է, որ ԱԺ-ն լավ չի կատարում իր վերահսկողական գործառույթը: ԱԺ ամենամեծ խմբակցության կողմից վերահսկողական գործառույթի ոչ պատշաճ կատարումը նշանակում է, որ ՀՀ կառավարությունը դուրս է խորհրդարանական վերահսկողությունից:

ԱԺ պատգամավորները չեն կարող անաչառ կերպով կատարել իրենց վերահսկողական գործառույթը, եթե մասնակցել են ՀՀ կառավարությունում և պետական մարմիններում կայացող քննարկումներին և որոշումների ընդունմանը:

ԱԺ-ն և ԱԺ մշտական հանձնաժողովները ուշադրություն չեն դարձրել ՀՀ կառավարության կողմից օրենքների ակնհայտ խախտումներին, ինչպես օրինակ, «Նորմատիվ իրավական

ակտերի մասին» օրենքով նախատեսված օրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկում կազմակերպելու պահանջի կատարմանը: Նմանապես, ԱԺ-ն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ չնայած ՀՀ վարչապետն իր որոշմամբ հստակ սահմանել է, որ նախարարություններն ու գերատեսչությունները պետք է բյուջետային հայտերի քննարկումներ կազմակերպեն ԶԿ-ների հետ, վերջիններիս բացարձակ մեծամասնությունն այդպիսի քննարկումներ չեն կազմակերպել:

Հայաստանի քաղաքական դաշտում գործող ուժերի պահվածքը հանգեցրել է ծայրահեղական դիրքորոշումների որդեգրման, ինչի արդյունքում նվազել է ընտրությունների միջոցով խորհրդարան անցնող քաղաքական ուժերի թիվը: Դրա արդյունքում նվազել է խորհրդարանում հայտնված քաղաքական ուժերի մանևրելու հնարավորությունները, քաղաքական ուժերին մղելով ծայրահեղական և ընդդիմախոսների հետ անհաշտ դիրքեր: ԱԺ-ում քաղաքակիրթ քաղաքական բանավեճին չի նպաստում նաև պատգամավորների մի մասի կողմից օգտագործվող և երկրի քաղաքական №1 ամբիոնին ոչ հարիր բառամթերքը, պատգամավորին ոչ վայել վարքագիծը: Մի շարք դեպքում ԱԺ-ն դարձել է բռնության թատերաբեմում:

Չնայած ՀՀ կառավարության անդամների և նրանց տեղակալների կողմից կայացվող խնդրահարույց որոշումներին, արձակվող հրամաններին, կատարվող հայտարարություններին և գործողություններին, ԱԺ-ն չի ուսումնասիրել դրանց օրինականությունը, համապատասխանությունը կառավարության ծրագրերին և ռազմավարություններին:

ԱԺ կողմից ձևավորված ԶԿ-ները կամ չեն գործել, կամ հանրությանը հայտնի չեն նրանց իրականացրած քննությունների արդյունքները: Գործող կարգավորումների համաձայն իշխող ուժը կարող է տապալել ԶԿ-ի ձևավորումը կամ դրա աշխատանքը, դրանց ձևավորման կամ դրանցում իր ներկայացուցիչներն ունենալուն դեմ քվեարկելով:

Բյուջետային գործընթացի նկատմամբ վերահսկողությունը խիստ թույլ է: Բացի ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը մնացած հանձնաժողովներն ըստ էության չեն զբաղվում բյուջետային հարցերով: Չնայած բյուջետային միջոցներն արդյունավետ կերպով օգտագործելու անհրաժեշտության վերաբերյալ մշտական հիշատակումներին պատգամավորները չեն բացահայտել անարդյունավետ հատկացումների կամ օգտագործման դեպքեր և չի ձեռնարկել միջոցներ պետական ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը, արդյունավետությունը և խնայողությունը բարելավելու ուղղությամբ: ԱԺ մշտական հանձնաժողովներն ու պատգամավորները քիչ ուշադրություն են դարձնում պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ԿԲ կամ դրա կատարման վերաբերյալ ԿԲ կամ ՀԴ եզրակացություններին:

Պատգամավորների տված գրավոր հարցերը կարող են գործադիրի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործիք դառնալ: Սակայն իշխանական պատգամավորները գրեթե չեն օգտագործում այդ գործիքը և իրենց համար կարևոր հարցերը գործադիրի գործընկերների հետ քննարկում են անձնական հանդիպումների ժամանակ, ինչը ոչ բաց, ոչ թափանցիկ, ոչ հաշվետու և անպատասխանատու գործելաոճ է: Պատգամավորների գրավոր հարցերը և ստացած պատասխաններն ԱԺ ինտերնետային կայքում հրապարակելու օրենսդրական պահանջը միշտ չէ որ կատարվում է: Չնայած օրենսդրությունը պահանջում է, որպեսզի պատգամավորի գրավոր հարցին պատասխանի կառավարության անդամը, առանձին դեպքում պատգամավորի գրությանը պատասխանել է

Նախարարության գլխավոր քարտուղարը, ով կառավարության անդամ (կամ կառավարության անդամի տեղակալ) չի հանդիսանում:

Բանավոր հարցեր տալու համար մեծ թվով պատգամավորներ գրանցելով իշխող ուժն ընդդիմադիրներին խանգարում է դժվար կացության մեջ դնել կառավարության անդամներին, հանրության ուշադրությունը շեղում է սեփական հարցերով, ընդդիմադիրների սուր հարցերը տարրալուծում է սեփական ավելի մեղմ հարցերի մեջ, բանավոր հարց տալու հնարավորությունն օգտագործում է ընդդիմադիրներին արձագանքելու համար (չնայած նպատակը կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալը պետք է լինի) և իշխանության ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս ներկայացնել սեփական «նվաճումները»: Իշխանական պատգամավորները երբեմն կառավարության անդամների հետ Նախապես համաձայնեցված, կամ «պայմանավորված» հարցեր են տալիս վերջիններս, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները ՀՀ վարչապետը պատրաստ ուներ իր հեռախոսում, կամ այդ հարցերը ՀՀ վարչապետին խորհրդարանում ծավալուն «ծրագրային» ելույթներ ունենալու հնարավորություն են տվել:

Խմբակցության կողմից կառավարության անդամին գրավոր հարցապնդմանը ստացած գրավոր պատասխանի քննարկման արդյունքով ՀՀ վարչապետին կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը կամ վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկություն քննարկելու հարց ԱԺ-ում ներկայացրել է միայն «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը: Իշխող ուժի պատգամավորները չեն հետաքրքրվել իրենց միահամուռ պաշտպանության արժանացած Նախարարների որոշ ժամանակ հետո վարչապետի կողմից պաշտոնանկ արվելու կամ նոր ձևավորվող կառավարության կազմում չընդգրկվելու պատճառների մասին:

6-րդ գումարման ԱԺ «ջանքերի» շնորհիվ լսումների արդյունքների հավաքագրմանը և հանրայնացմանը միտված կարգավորումները զրկվել են որոշակիությունից, դարձել հայեցողական և ձևական: Չեն հրապարակվել լսումների վերաբերյալ այն նյութերը, որոնք Նախատեսված են կանոնակարգով: ԱԺ կայքի համապատասխան բաժիններում չեն հրապարակվել լսումների արձանագրությունները, ինչը ևս օրենսդրության պահանջ է: Չկա որևէ վկայություն, որ 6-րդ, 7-րդ և 8-րդ գումարումների ԱԺ-երի կողմից կազմակերպված լսումները ծառայել են որևէ կոնկրետ նպատակի:

8-րդ գումարման ԱԺ պատգամավորներն ավելի հաճախ են սկսել օգտագործել պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդի կողմից ՄԴ դիմելու հնարավորությունը: Այս գործիքի օգտագործումը դեռևս մասնագիտական ուսումնասիրության կարիք ունի:

Անկախ գործունեության ոլորտից, Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացի իրավունք ունի զբաղվել քաղաքական գործունեությամբ: Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և ցանկացած այլ ոլորտում և բնագավառում գործունեություն ծավալող քաղաքացիները պետք է քաղաքականությամբ զբաղվելու հնարավորություն ունենան: Սակայն ընտրություններին մասնակցող կուսակցությունները և դաշինքները պետք է երաշխավորեն, որ համամասնական ընտրակարգի պայմաններում պատգամավորության թեկնածուների ցուցակներում լինեն մարդիկ, ովքեր ունեն կոնկրետ գաղափարներ, ծրագրեր և դրանք կյանքի կոչելու ցանկություն, դիրքորոշում հասարակական-քաղաքական-տնտեսական կյանքի տարբեր հարցերի և մարտահրավերների վերաբերյալ, ինչպես նաև կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պատրաստակամություն և կարողություն:

Ո՛չ իշխանական, ո՛չ ընդդիմադիր պատգամավորների զգալի մասը չի մասնակցում բյուջեի կատարողականի կամ հաջորդ տարվա բյուջեի նախագծի քննարկման նպատակով կազմակերպվող մշտական հանձնաժողովների համատեղ նիստերին: Նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները չեն ներկայանում ԱԺ-ում ընթացող բյուջետային քննարկումներին և իրենց փոխարեն տեղակալներին կամ այլ պաշտոնյաների են ուղարկում: Դա ԱԺ հանդեպ անհարգալից վերաբերմունք: ԱԺ հանդեպ անհարգալից վերաբերմունքն ունի մի շարք այլ դրսևորումներ:

Մշտական հանձնաժողովների համատեղ նիստերը չեն արձանագրվում, սղագրություններ առկա չեն և նիստերի ժամանակ որոշումներ չեն կայացվում: Անհասկանալի է, թե ինչպես են հանձնաժողովները համաձայնություն տալիս բյուջեի նախագծին կամ բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությանը:

Ճգնաժամային իրավիճակներում, օրինակ համավարակի կամ պատերազմի ժամանակ ՀՀ կառավարությունն ընդունում է ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ անհետաձգելի և շտապ կայացված որոշումներ: Արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված ֆինանսական հատկացումները կարող են լինել պակաս նպատակային, արդյունավետ և խնայողական: Նման որոշումների հանդեպ ավելի ուշադիր լինելու փոխարեն (որպեսզի հղկվի ճգնաժամային իրավիճակներում կառավարության կողմից կայացնող որոշումների օրենսդրությունը, մեխանիզմները և ընթացակարգերը) ԱԺ-ն ավելի «մեղմ» մոտեցում է հանդես բերում այդ որոշումների ուսումնասիրությանը:

Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների փոխարեն ՀՀ կառավարությունը տեղեկանքներ է ներկայացնում ԱԺ: Անհրաժեշտ է փոփոխել օրենսդրությունը, տեղեկանքները լիարժեք հաշվետվություններով փոխարինելու համար:

Բյուջետային գրասենյակը չունի բավարար կարողություններ և ԱԺ-ին ու մշտական հանձնաժողովներին վերջիններիս վերահսկողական գործառնությունն օժանդակելու համար անհրաժեշտ լիազորություններ: Բյուջետային գրասենյակը կարողությունների զարգացման կարիք ունի:

ԱԺ-ն բավարար ուշադրություն չի դարձնում ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեում կատարվող վերաբաշխումներին և պետական բյուջեի չկանխատեսված եկամուտների օգտագործմանը: Բյուջետային ծրագրերի իրականացման, դրանցում կատարվող փոփոխությունների համար պատասխանատվության շրջանակը հստակ չէ և «լողված» է կոլեգիալ (ան)պատասխանատվությամբ: Հայաստանի կառավարությունը և առանձին պաշտոնյաներ քաղաքական պատասխանատվություն չեն կրում պետական բյուջեն չկատարելու, բյուջեի ծրագրերը ձախողելու, անպատասխանատու հայտարարությունների և այլ գործողությունների համար:

Պատգամավորները հետամուտ չեն այս հետազոտության մեթոդաբանության բաժնում ներկայացված պետական քաղաքականությունների շրջանակներում ռազմավարությունների մշակման, իրականացման և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման աշխատանքի փուլերի հետևողական իրականացման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացմանը հարցում: Արդյունքում օրենքներում կատարվող փոփոխությունները կրում են չհամակարգված, հախուռն բնույթ և կատարվում են պահի ազդեցության տակ: Հասկանալի չէ, թե ինչի հիման վրա են կառավարության անդամներն ու նրանց տեղակալները հայտարարություններ անում

պետական կառավարման տարբեր ոլորտների և բնագավառների հետ կապված, եթե առկա չեն փաստաթղթավորված ռազմավարություններ և ծրագրեր: Պետական բյուջեից կատարվող հատկացումների զգալի մասը կրում պահային որոշումների դրոշմը և ակնհայտ չէ դրանց կապը ոլորտային ռազմավարությունների հետ:

Առանձին նախարարությունների, գերատեսչությունների, ոլորտների և բնագավառների հատկացումների և կատարողականների կոնտեքստում ԱԺ պատգամավորները ոչ թե դիտարկում են տարվող քաղաքականությունները, իրականացվող ծրագրերը և միջոցառումները, այլ հիմնականում կենտրոնանում են աշխատավարձերի ու պարգևավճարների և նյութական, տեխնիկական, տեխնոլոգիական հագեցվածության խնդիրների վրա, առանց խորանալու և վերլուծելու, թե ինչպես կարող է ավելի բարձր աշխատավարձը, նոր նյութական տեխնիկական և տեխնոլոգիական միջոցները օգնել հասնել ՀՀ կառավարության սահմանած նպատակներին, առանց քննարկելու առաջնահերթությունները և պետական սուղ միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման հետ կապված խնդիրները: Սահմանադրությամբ և օրենքներով ԱԺ-ին հիմնականում վերապահված են անհրաժեշտ լիազորություններ պետական քաղաքականությունների մշակման և իրականացման գործում: ՀՀ կառավարությանը ռազմավարական մոտեցում ցուցաբերել պարտադրելու համար: Օրենսդրությունը բարելավման կարիք ունի ԱԺ որոշ գործիքներ ավելի ուժեղացնելու առումով: Օրինակ, օրենսդրությունը կարող է պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն ԱԺ կողմից չընդունելու դեպքում ՀՀ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն նախատեսել:

Վերջին 20-25 տարիներին ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ ԱԺ վերահսկողությունը թույլ է: ԱԺ-ն կառավարությանն ընդդիմացել է 1997թ. հունիսի 11-ին, երբ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Չինապարտության մասին» օրենքում առաջարկվող փոփոխություններին ԱԺ կողմից հավանությունից հետո պատգամավորների վրա կողմնակի ազդեցության մասին ակնարկելով^{CCXCV} հրաժարական տվեց խորհրդարանի նախագահը^{CCXCVI}:

Այս հետազոտության շրջանակներում վերլուծված տեղեկատվությունը, տվյալները, դեպքերը, իրադարձությունները, ելույթները և այլ հանգամանքներ հիմք են տալիս եզրակացնելու, որ ԱԺ-ն չունի բավարար կարողություններ վերը նշված գործառնությունները կատարելու համար: Կարողությունների բացակայությունը հանգեցրել է ԱԺ կառավարման հետ կապված դժվարությունների, ինչի հետևանքով օրենսդրությամբ նախատեսված որոշ պահանջներ լիարժեք չեն կատարվում: Օրինակ, ԱԺ ինտերնետային կայքում առկա չեն մի շարք պատգամավորների ՀՀ կառավարությանը հղած գրավոր հարցերը և ստացած պատասխանները, ինչը նախատեսված է կանոնակարգով:

Կարողությունների բացակայությունը պայմանավորված է ոչ միայն զուտ ԱԺ հետ կապված հանգամանքներով, այլ նաև վերջին 30 տարիներին Հայաստանի Հանրապետությունում կրթական ցնեզի անկմամբ: Այս հանգամանքը Հայաստանի Հանրապետության համար մարտահրավերներ է առաջացնում պետական կառավարման համակարգի և մասնավոր հատվածի բոլոր ոլորտներում:

ԱԺ վերահսկողական գործառնության իրականացումը զգալի բարելավման կարիք ունի: ՀՀ կառավարության, վարչապետի, փոխվարչապետների, նախարարների և գերատեսչությունների ղեկավարների գործունեությունը դուրս է ինչպես ԱԺ, այնպես էլ բոլոր այլ վերահսկողական գործառնություններ իրականացնող մարմինների դաշտից: ԱԺ կողմից իր

վերահսկողական գործառնության թերի իրականացումը զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանական խմբակցության պատգամավորները համարում են, որ կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելը ընդդիմության աշխատանքն է: Այնինչ, գործադիր իշխանության նկատմամբ ԱԺ վերահսկողության պարտականությունը սահմանելիս Սահմանադրությունն իշխանական խմբակցության վերահսկողությունը չի տարանջատում ընդդիմադիր խմբակցությունների վերահսկողությունից: Եթե համարենք, որ վերահսկողությունը ընդդիմադիր խմբակցությունների գործառնության հանդիսանալու վերաբերյալ իշխանական պատգամավորների տեսակետը հիմնավոր է, ապա քաղաքական պայթյալի ծայրահեղ դրսևորումների դեպքում, այսինքն, երբ ընդդիմությունը բոլորտի ԱԺ աշխատանքները և դադարեցնի գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը, կառավարությունը կարող է հայտնվել վերահսկողությունից դուրս: Ներկա և ապագա գումարումների ԱԺ իշխանական խմբակցությունները պետք է դիտարկեն ինչպես գործադիրի նկատմամբ վերահսկողության հարցում ընդդիմադիր գործընկերներին օժանդակելու մեխանիզմները կատարելագործելու, այնպես էլ բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու, ներառական և մասնակցային կառավարման պահանջներին համապատասխան, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման համար սեփական չափորոշիչներն ու մեխանիզմներն ունենալու հնարավորություններ: Այդ մեխանիզմը պետք է անդրադառնա փաստերի վրա հիմնված ոլորտային ռազմավարություններին, ներկայացնի կարողությունները, բացահայտի և գնահատի ռիսկերը և իշխանություններին հասու ռիսկերի կառավարման գործիքները, հսկողական և վերահսկողական մեխանիզմներն ու դրանց համար պատասխանատուներին, հաշվետվությունների ներկայացման ժամկետները և հաշվետվությունների բովանդակությունը, այլ ընթացակարգեր և մեխանիզմներ:

ԱԺ-ն չի կարող իրականացնել իր վերահսկողական գործառնությունների միջև թշնամանքի հասնող հակասությունների պատճառով: Խորհրդարանական խմբակցությունների միջև թշնամանքի մթնոլորտ ձևավորվել է օգտագործվող հռետորաբանության, ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների փոքր թվի (ինչը նվազեցրել է բոլոր ուժերի մասնաբաժնի հնարավորությունները) և մի քանի այլ հանգամանքների պատճառով: Այդ հանգամանքների ավելի մանրամասն ուսումնասիրությունն այս հետազոտության նպատակների շրջանակից դուրս է:

Կառավարության անդամների ելույթներից, հարցազրույցներից և այլ ձևաչափով հանրային միջավայրում ներկայացված խոսքից տպավորություն է ստեղծվում, որ վերջիններս կարծում են, թե նախկինում անարդյունավետությունը պայմանավորված էր միայն գողությամբ և կոռուպցիայով և ցանկացած ծրագիր և միջոցառում, որն իրականացվում է կաշառքից զերծ միջավայրում արդեն իսկ արդյունավետ է: Համաձայն լինելով այն պնդման հետ, որ կոռուպցիան, իր ցանկացած դրսևորումով զգալի և էական վնաս է հասցնում պետությանը և հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ կառավարման (փոշիացման), կոռուպցիան արդյունավետության վրա բացասաբար ազդող գործոններից միայն մեկն է: Կուտակված մարտահրավերների համակարգված ախտորոշում չիրականացնելը, առաջնահերթությունները չսահմանելը կարող է հանգեցնել ֆինանսական հատկացումների վերաբերյալ պատահական որոշումների և դրանից բխող անարդյունավետ ծախսերի:

Իշխանական պատգամավորները իրենց հուզող հարցերը լուծում են կառավարության անդամների կամ նրանց տեղակալների հետ հանդիպումների ժամանակ: Այդպիսի գործելաոճը թափանցիկ չէ, քանի որ հանրությունը տեղյակ չի լինում, թե պատգամավորների կարծիքով որ հարցերն են առաջնահերթ և ինչ լուծումներ են տրվում: Այդպիսի գործելաոճը

չի նպաստում ԱԺ կարողությունների զարգացմանը և ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործմանը: Իշխանական պատգամավորների նման գործելաոճի արդյունքում պետական մարմինների ղեկավարները գրավոր հարցում ուղարկող քաղաքացիներին դիտարկում են որպես ախոյան, հակառակորդ կամ նույնիսկ թշնամի: Նախարարություններին, գերատեսչություններին և մարզպետարաններին հղված գրություններին վերջիններից ստացած պատասխանները վկայում են, որ պետական մարմինների, հատկապես մարզպետարանների աշխատակիցները պատրաստ են աշխատել սակայն (1) հաճախ չեն ստանում հստակ առաջադրանք, և (2) գործում են չգրված սահմանափակումներ և արգելքներ:

Հեղափոխության արդյունքում իշխանության եկած ուժը շարունակում է օգտագործել նախահեղափոխական Հայաստանում ձևավորված օրենսդրությունը, մեխանիզմները և գործընթացները: Հետհեղափոխական կառավարությունների գործունեության տրամաբանությունը հիմնվում է այն տեսակետի վրա, որ նախկինները վատն էին, ամեն ինչ վատ էին անում, մենք լավն ենք և ավելի լավ ենք անելու: Սակայն իշխանության կողմից օգտագործվող նախկին «վատ» իշխանությունների կողմից ձևավորված օրենսդրությունը, մեխանիզմները, գործընթացներն ու պրակտիկան կաշկանդում և սահմանափակում են պետական կառավարման հետագա զարգացումը: Նախկին համակարգը ձևավորվել էր գործող իշխանություններին հասու ռեսուրսների նկատմամբ նախարարների և գերատեսչությունների ղեկավարների կողմից հզոր վերահսկողություն ունենալու տրամաբանությամբ: Նոր իշխանությունը շարունակում է գործել նույն տրամաբանությամբ: Ժամանակակից աշխարհում պետական կառավարման նպատակները փոխվում են, վերահսկողություն սահմանելուն փոխարինելու են գալիս հստակ նպատակների սահմանումը, առկա ռեսուրսների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման համար պատասխանատվության ստանձնումը: Դրա փոխարեն, պետական բյուջեի կազմման, ընդունման, կատարման, հաշվետվությունների ներկայացման և դրանց ընդունման գործընթացը ենթարկվել է զուտ կոսմետիկ փոփոխությունների և հիմնվում է նախկինների ձևավորած «տրամաբանության» վրա, ինչի արդյունքում ծրագրային բյուջեի ներդրումը կրում է զուտ ձևական բնույթ, իսկ ՀՀ օրենսդրության առանձին պահանջներ ընդհանրապես չեն կատարվում:

Այս եզրակացությունների արդյունքում ձևավորվել է առաջարկությունների փաթեթ, որոնց կյանքի կոչումը կնպաստի Հայաստանի իշխանությունների կողմից փաստերի հիման վրա քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, Հայաստանի քաղաքական, դիվանագիտական, ռազմական և տնտեսական անվտանգության, քաղաքացիների բարեկեցության բարելավմանը:

7. Առաջարկություններ

Իր վերահսկողական գործառնությունով խորհրդարանը կարող է դառնալ կառավարության առանձին ստորաբաժանումների՝ նախարարությունների ու գերատեսչությունների գործունեության նկատմամբ վերահսկողության գործում ՀՀ վարչապետի դաշնակիցը: Անհրաժեշտ է.

1) Սահմանադրությամբ ամրապնդել Ազգային ժողովի և անհատ պատգամավորների անկախությունն ու պատասխանատվությունը:

Նախկին և ներկա պատգամավորների, փորձագետների և լրագրողների կարծիքով, թե՛ նախահեղափոխական, թե՛ հետհեղափոխական ԱԺ-ում պատգամավորների զգալի մասը հետաքրքրված չէ պատգամավորական գործունեությամբ և չի կատարում իր անմիջական պարտականությունները: Եթե նախկինում դա հիմնականում գործարարությամբ զբաղվող պատգամավորներն էին, ապա հեղափոխությունից հետո դա իշխող ուժի առաջնորդների հովանավորչությամբ ԱԺ անցած պատգամավորներն են, որոնց մեծ մասին հանրությունը չի ճանաչում: Մի քանի բավական երիտասարդ պատգամավորի աշխատանքային կենսագրությունն սկսում է 2018թ. մայիսից:

Խորհրդարանական վերահսկողությունը կարող է ԱԺ-ին և կառավարությանը օգնել հղկել պետական քաղաքականությունները: ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը նշել է, որ «կառավարության եւ անձամբ իմ շահագրգռությունն է, որ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմներն առավել գործունե լինեն, որովհետեւ դա, ըստ երկայնի, օգտակար է նաեւ կառավարության ղեկավարության համար, որպեսզի մենք լիարժեք տիրապետենք, թե ինչ է տեղի ունենում պետական կառավարման համակարգում»: Սակայն խոսքերը գործ չեն դարձել: Հանրությունը չի տեսել ՀՀ վարչապետի նշած խորհրդարանական վերահսկողության առավել գործունե մեխանիզմներ: Պետական կառավարման բնագավառում ձախողումները վկայում են, որ ԱԺ-ն չունի լիարժեք վերահսկողություն պետական կառավարման համակարգի նկատմամբ:

2) Վերականգնել բյուջեն չկատարելու և(կամ) զգալի շեղումներով և(կամ) խախտումներով կատարելու համար ՀՀ կառավարության քաղաքական պատասխանատվությունը կանչելու հնարավորությունը:

Գործող կանոնակարգի համաձայն պետական բյուջեի կատարման հաշվետվության մասին որոշման ընդունման դեպքում հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ չընդունման դեպքում՝ մերժված: Անհրաժեշտ է Սահմանադրությամբ և կանոնակարգով հստակ սահմանել, որ բյուջեի չկատարումը կամ բյուջեի մասին օրենքի խախտումներով կատարումը քաղաքական հետևանքներ ունի:

3) Դիտարկել տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում կատարելու ՀՀ կառավարության լիազորությունն ավելի հստակ սահմանելու հնարավորությունը, յուրաքանչյուր տարի ստանալ հաշվետվություն և համոզվել, որ վերաբաշխումները չեն գերազանցում օրենքով թույլատրված սահմանափակները:

ՀՀ կառավարությունը չի ներկայացնում հաշվետվություն պետական բյուջեի կատարման ընթացքում կատարված վերաբաշխումների և ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանության մասին: ՀՀ եզրակացությունները ևս չեն ներառում

տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից կատարված վերաբաշխումների ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ գնահատական:

ՀՀ կառավարությանը պետք է ազատել վերաբաշխումների համար պատասխանատվությունից: Որոշակի ծավալը չգերազանցող և նույն նախարարության կողմից իրականացվող տարբեր ծրագրերի միջև վերաբաշխման իրավունքը, պարտականությունը և պատասխանատվությունը պետք է դնել նախարարի վրա: Տարեկան բյուջեի հաշվետվությունը ներկայացնելիս նախարարը պետք է հաշվետվություն ներկայացնի իր կողմից արտոնված վերաբաշխումների համար, ներկայացնելով ինչպես հիմնավորումները, այնպես էլ վերաբաշխումների ազդեցությունը ֆինանսավորման կրճատման և ավելացման ենթարկվող ծրագրերի հետագա ընթացքի, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում սահմանված նպատակները բնութագրող ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների և նախարարության ռազմավարության վրա:

4) Սահմանադրությամբ նախատեսել դրույթ, որի համաձայն, իր գործունեության առաջին տարում ԱԺ-ն կարող է օրենքով սահմանել հերթական ընտրությունների միջոցով ձևավորված հաջորդ գումարման ԱԺ պատգամավորների և նրանց ձևավորած կառավարության անդամների ու նրանց տեղակալների աշխատանքի վարձատրության մեծությունը, որը ենթակա չէ փոփոխության տվյալ գումարման ԱԺ հետագա գործունեության ընթացքում:

ԱԺ պատգամավորներին պետք է զրկել իրենց և իրենց ձևավորած կառավարության անդամների աշխատանքի վարձատրության և կատարած ծախսերի հատուցման առավելագույն մեծությունը սահմանելու իրավունքից: Յուրաքանչյուր գումարման ԱԺ պետք է իրավունք ունենա իր գործունեության առաջին տարում սահմանելու հերթական ընտրությունների արդյունքում ձևավորված հաջորդ գումարման ԱԺ պատգամավորների և նրանց ձևավորած կառավարության անդամների ու նրանց տեղակալների աշխատավարձը: Եթե պատգամավորները և կառավարությունը լավ են աշխատել, ապա ընտրողը նրանց նորից «կգործուղի» ԱԺ և նրանք կստանան իրենց սահմանած բարձր աշխատավարձը: Եթե պատգամավորները և կառավարությունը վատ են աշխատել, ապա բարձր աշխատավարձ կստանան այն պաշտոնյաները, ում կվստահի ընտրողը: Հաջորդ գումարման ԱԺ պատգամավորների և նրանց ձևավորած կառավարության անդամների և նրանց տեղակալների աշխատավարձի ավելի բարձր մակարդակ սահմանելու մասին որոշումը հերթական գումարման ԱԺ-ն պետք է կայացնի իր գործունեության առաջին տարում, որպեսզի այդ որոշումը կախված չլինի վերջին պահին ԱԺ և (կամ) կառավարության արձանագրած «հաջողություններից» կամ «անհաջողություններից»:

Բարձր աշխատավարձը պետք է կիրառվի միայն հերթական ընտրությունների միջոցով ձևավորված ԱԺ դեպքում, որպեսզի իշխող ուժը գայթակղված չլինի հաջողություններ արձանագրած պահին կազմակերպել արտահերթ ընտրություններ: ԱԺ պատգամավորները, կառավարության անդամները և նրանց տեղակալները, որպես քաղաքական գործիչներ, չպետք է ստանան պարզևավճար, քանի որ քաղաքական գործչի պարզևը ընտրողի վստահությունն է:

5) Պատգամավորներին պետք է ներգրավել բյուջետային ծրագրերի նախագծման, իրականացման և դրանց ընթացքի ու կատարման վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրության գործում:

Բյուջեի և բյուջետային գործընթացի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը կբարելավվի, եթե յուրաքանչյուր պատգամավոր ներգրավված լինի բյուջեի կազմման, մշտադիտարկման և հաշվետվությունների ուսումնասիրման գործընթացում: Յուրաքանչյուր պատգամավոր կարող է ներգրավված լինել և իր գործընկերների ու հանրության առաջ պատասխանատվություն կրել առնվազն մեկ բյուջետային ծրագրի կազմման, իրականացման ընթացքի ու կատարման հաշվետվության ներկայացման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար: Ոլորտային հանձնաժողովների անդամները կարող են կենտրոնական իրենց ոլորտների առավել խոշոր բյուջետային ծրագրերի նախագծման, իրականացման և դրանց ընթացքի ու կատարման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ուսումնասիրության վրա: Ընդդիմադիր պատգամավորներին պետք է իրավունք վերապահել վերահսկվող ծրագիրն առաջինն ընտրելու իրավունք: Բյուջետային առանձին ծրագրերի հետ կապված աշխատանքը հանձնաժողովների անդամների միջև բաշխումը պատգամավորներին հնարավորություն կտա մասնագիտանալ այդ ծրագրերի հետ կապված հարցերում, դառնալով այդ ծրագրերի կատարման ընթացքի մշտադիտարկման և հանձնաժողովում ու ԱԺ-ում իր իշխանական և ընդդիմադիր գործընկերների տեղեկատվության կարևոր աղբյուր: Պատգամավորները կարող են ԱԺ-ին և հանձնաժողովներին այլընտրանքային տեսակետ և կարծիք ներկայացնել բյուջետային ծրագրերի վերաբերյալ: Այդպիսով պատգամավորները նաև ձեռք կբերեն պետական ֆինանսական կառավարման վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, որոնք կարող են օգտագործել ինչպես իրենց կողմից, այնպես էլ այլ պատգամավորների կողմից «վերահսկվող» ծրագրերի քննարկման ժամանակ: Այսպիսի աշխատանքը կպահանջի Բյուջետային գրասենյակի ակտիվ ներգրավվածություն և վերջինս կարողությունների զարգացում:

6) *Յստակ սահմանել, որ խորհրդարանական վերահսկողությունը հետամուտ է քաղաքական պատասխանատվության և այդ առումով միանշանակ տարբեր է և չպետք է փորձի կրկնօրինակել իրավապահ մարմինների կողմից իրականացվող քրեական հետապնդումը:*

Խորհրդարանական վերահսկողությունը ենթադրում է քաղաքական պատասխանատվությունը: Քրեական հանցագործության տարրերի նշաններ պարունակող դեպքերը պետք է փոխանցվեն իրավապահ մարմիններին:

7) *Անհրաժեշտ է տարանջատել իշխանական և ընդդիմադիր պատգամավորների ՅՅ կառավարության անդամներին հարցեր տալու գործընթացները:*

Ընդդիմադիր պատգամավորներին սուր հարցեր տալու հնարավորությունից զրկելու, կամ ընդդիմադիրների տված սուր հարցերը տարրալուծելու նպատակով իշխանական խմբակցությունը սովորաբար տարբեր տակտիկական հնարքներ է օգտագործում: Իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների տակտիկական պայքարից տուժում է ԱԺ կողմից կառավարության վերահսկողությունը:

Կառավարությունը իշխանական պատգամավորների «զավակն է»: Իշխանական պատգամավորները կարող են կառավարության գործունեության վրա ազդել վերջինիս անդամների հետ իրենց անձնական կապերի միջոցով: Բացի այդ, իշխանական պատգամավորները կարող են տալ և առերևույթ տալիս են այնպիսի

հարցեր, որոնք կառավարության անդամներին «ինքնագովազդվելու» հնարավորություն են տալիս:

8) ***ՀՀ պետական բյուջեի նախագիծը կամ ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունը ԱԺ լիազումար նիստում պետք է քննարկվի միայն դրանց տարբեր բաժինների վերաբերյալ խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովների որոշումների առկայության դեպքում քննարկելու հնարավորություն:***

Ներկայում, ՀՀ պետական բյուջեի նախագիծը կամ ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունը քննարկվում է մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում, սակայն որոշում չի կայացվում, ինչը նշանակում է, որ հանձնաժողովը քաղաքական պատասխանատվություն չի ստանձնում:

